Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԱԲԲԱ ԴՐԵՎՈ

„ՀԱՅԱՍՏԱՆ"

L'ABBÉ PRÉVOST

HISTOIRE DE

MANON LESCAUT

E T D U
CHEVALIER
DES GRIEUX

Editions
Hayastan.
Erévan 1966

ԱԲԲԱ ՊՐԵՎՈ

ՄԱՆՈՆ ԼԵՍԿՈՅԻ

ԵՎ ԱՍՊԵՏ
ԴԵ ԳՐԻՅՈՅԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ֆրանս. թարգմանեց
Կ. ԳՐԻԼԱՆՅԱՆ

Հայաստան.
Հրատարակչություն
Երևան 1966

Н (Зг)
Ф 92

7—3—4

Аббат Прево

Манон Леско

(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1966

43309

ՀԵՂԻՆԱԿԻ ՆԱԽԱԲԱՆԸ

Թեպետև ես կարող էի իմ «Հիշատակարան»-ում[1] զետեղել ասպետ դե Գրիյոյի արկածների պատմությունը, բայց քանի որ դրանց միջև ոչ մի առնչություն չկա, ուստի ինձ թվաց, որ ընթերցողին ավելի հաճելի կլինի կարդալ այն առանձին։ Իսկ մյուս կողմից էլ այդքան երկարաշունչ պատմությունը տևականորեն կընդհատեր իմ սեփական վիպերգության թելը։ Որքան էլ հեռու լինեմ իսկական գրող կոչվելու հավակնությունից, այնուամենայնիվ ես լավ գիտեմ, որ պատմվածքը զերծ պետք է լինի այն բոլոր միջադեպերից, որոնք խճճում ու ծանրաբեռնում են երկը. տակավին Հորացիոսն է ասել,

Ut jam nunc dicat jam nunc debentia dici,
Pleraque differat, ac praesens in tempus omitta!

Այս պարզ ճշմարտությունն ապացուցելու համար բնավ հարկ չկա դիմելու այդպիսի մի խոշոր հեղինակության, քանզի լրջամիտ դատողությունը սույն կանոնի սկզբնաղբյուրն է։

Եթե ընթերցողը հետաքրքրական և ուշագրավ է համարել իմ կյանքի պատմությունը, ապա ես համարձակվում եմ խոստանալու, որ սույն հավելումը պակաս հաճույք չի պատճառի նրան։ Պարոն դե Գրիյոյի վարքի մեջ ընթերցողը կտեսնի

[1] Ծանոթությունները վերջում։

Գ. Մաշտոցի անվ. Հանրապետական գրադարան ՊՈԱԿ
Республиканская библиотека им. М. Маштоца ГНО

ամենաղոր կրքի ցնցող մի օրինակ։ Ես պատրաստվում եմ նկարագրել կրքից կուրացած մի պատանու, որը հրաժարվում է երջանկությունից և իրեն հոժարակամ մատնում ծայրահեղ թշվառության. մի պատանու, որն օժտված լինելով այն բոլոր բարեմասնություններով, որոնք ամենափայլուն հասարակական դիրք էին ապահովում իր համար, այնուամենայնիվ, աննախանձ ու թափառական կյանքը գերադասում է հարգության և բնության պարգևած առավելությունից, նա, որը նախատեսում է իր դժբախտությունն ու չի ջանում խուսափել դրանից և, գիտակցելով հանդերձ այդ դժբախտությունը, տանում է դրանք, սակայն առանց գործադրելու անդադար իրեն առաջարկված այն միջոցները, որոնք կարող էին ամեն վայրկյան վերջ տալ այդ ամենին։ Վերջապես ես պատրաստվում եմ պատկերել հակասական մի բնավորություն, որը առաքինությունների և մոլությունների մի խառնուրդ է, բարի հակումների և վատ արարքների մշտական մի հակադրություն։ Այսպիսին է եմ [illegible] պատկերի բովանդակությունը։

Ողջամիտ մարդիկ, անշուշտ, այսօրինակ երկը ապարդյուն գործ չպետք է համարեն։ Բացի ընթերցման հաճույքից, նրանք այստեղ կտեսնեն ոչ սակավաթիվ իրադարձություններ, որոնք կծառայեն իբրև բարոյական խրատներ, իսկ զվարճացնելով խրատել—դա, ըստ իս, նշանակում է ընթերցողին բացառիկ ծառայություն մատուցել։

Բարոյական սկզբունքների շուրջը խորհրդածելիս, մենք չենք կարող չզարմանալ, տեսնելով, որ մարդիկ դրանք թե՛ հարգում են և թե՛ արհամարհում։ Հարց է ծագում. ինչո՞վ բացատրել մարդկային սրտի այն քմայքը, որը, բարու և կատարելության գաղափարները ճաշակելով հանդերձ, միևնույն ժամանակ հրաժարվում է դրանցից։ Եթե որոշ մտայնության ու կրթության տեր մարդիկ կամենան հետազոտել, թե որն է իրենց զրույցների կամ նույնիսկ ինքնամտորումների ամենասովորական առարկան, ապա հեշտությամբ կնկատեն, որ դա գրեթե միշտ պտտվում է որևէ բարոյական դատողության շուրջը։ Իրենց կյանքի ամենաքաղցր բոպեները նրանք մենակ են ապրում կամ մի մտերիմ բարեկամի հետ՝ սրտաբաց խոսակցելով առաքինության հրապույրների, բարեկամության քաղցրության, երջանկության հասնելու միջոցների, երջանկությունից մեզ հեռացնող մեր բնավորության թուլությունների և այդ թուլությունները հաղթահարելու միջոցների մասին։

Հորացիոսը և Բուալոն այդպիսի զրույցը համարում են երջանիկ կյանքի իրենց ստեղծած պատկերի լավագույն գծերից մեկը։ Արդ, ինչպե՞ս է պատահում, որ մենք այնքան հեշտ գահավիժում ենք այդ խոհերի բարձունքից և իսկույն իջնում մինչ սովորական մարդկանց մակարդակը։ Ես սխալված կլինեմ, եթե ստորև նշած իմ փաստերը պատշաճորեն չբացատրեն մեր գաղափարների ու արարքների միջև գոյություն ունեցող հակասությունը։ Իսկ որովհետև բարոյականության բոլոր պատվերները լոկ ընդհանուր սկզբունքներ են, ապա միանգամայն դժվար է դրանք մասնակիորեն կիրառել այս կամ այն բարքերի ու արարքների նկատմամբ։ Ապացուցենք օրինակով։ Բարեծին հոգիները զգում են, որ հեզությունն ու մարդկայնությունը վսեմ առաքինություններ են, ուստի և նրանք ձգտում են դրանք կիրառել իրենց կյանքում։ Սակայն հենց այն բոպեին, երբ պետք է իրականացնել այդ առաքինությունները, հաճախ նրանց կենսագործումը խափանվում է։ Հիրավի, արդյոք հարմա՞ր է առիթը։ Ի՞նչ չափով անհրաժեշտ է առաքինությունների ցուցաբերումը։ Չե՞նք սխալվում արդյոք տվյալ անձի նկատմամբ։

Հազար ու մի տարակուսանք կաշկանդում է մարդուն։ Նա վախենում է խաբվել, երբ կամենում է բարերար ու առատաձեռն լինել. համարվել թուլամորթ, երբ իրեն ցույց է տալիս չափազանց մեղմ ու զգայուն. մի խոսքով՝ սահմանից դուրս գալ կամ ըստ հարկի չկատարել այն պարտականությունները, որոնք ծայր աստիճան անհամատեղելի են հեզություն ու մարդկայնություն հասկացողություններին։ Այդպիսի տատանման պահին միայն փորձն ու օրինակը կարող են ճշտիվ որոշել սրտի հակումը։ Սակայն փորձն այնպիսի մի շնորհք չէ, որին յուրաքանչյուր ոք ի վիճակի լինի տիրանալու. դա կախում ունի զանազան դրությունների, որոնց մեջ գտնվում է մարդս ճակատագրի բերմամբ։ Հետևաբար, մնում է սոսկ

օրինակը, որն իրրև կանոն ունակ է ծառայելու այն բազմաթիվ մարդկանց, որոնք իրագործում են առաքինությունը։

Հենց այդպիսի ընթերցողի համար նմանօրինակ երկերը կարող են վերին աստիճանի շահեկան լինել, եթե միայն դրանք գրել է ազնվաբարո ու ողջամիտ մի մարդ։ Ամեն մի իրադարձություն, որի մասին այստեղ խոսվում է, իրենից ներկայացնում է լույսի մի նշույլ, մի խրատ, որը փոխարինում է փորձին. ամեն արկած՝ մի նմուշ, որի համեմատ մարդը կազմավորվում է բարոյապես։ Մնում է միայն այս ամենը կիրառել այն հանգամանքներում, որոնց մեջ գտնվում են մարդիկ։ Մեր ամբողջ երկը մի բարոյական տրակտատ է՝ վերածված ուշագրավ անցքերի։

Խստապահանջ ընթերցողը, թերևս, հանդիմանի ինձ, որ իմ տարիքում ես վերստին գրիչ եմ վերցնում՝ բախտախնդիր ու սիրային արկածներ գրելու համար։ Սակայն, եթե վերևում նշած իմ խորհրդածությունը ճիշտ է, դա արդարացնում է ինձ. իսկ եթե դա սխալ է, ապա հենց այդ սխալը կլինի իմ նեղրումը։

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

Ես ատիպված եմ խնդրել ընթերցողին՝ վերադառնալ դեպի իմ կյանքի այն շրջանը, երբ առաջին անգամ հանդիպեցի ասպետ դե Գրիյոյին։ Այդ դեպքը պատահեց իմ՝ Իսպանիա մեկնելուց մոտ վեց ամիս առաջ։ Թեև ես հազվադեպ էի դուրս գալիս իմ մենությունից, սակայն դեպի դստերս տածած գուրգուրանքը հարկադրում էր ինձ երբեմն կատարել զանազան փոքր ճանապարհորդություններ, որոնք ես կրճատում էի կարելույն չափ։

Մի անգամ ես վերադառնում էի Ռույենից, ուր գնացել էի նրա խնդրանքով դիմելու Նորմանդիայի պառլամենտին՝ մի քանի կալվածների ժառանգության գործով։ Այդ ժառանգության իրավունքը ես ստացել էի մորական պապիցս և իմ հերթին զիջել աղջկաս։ Ես ուղևորվեցի դեպի Էվրյո, ուր անցկացրի առաջին գիշերը, իսկ հետևյալ օրը ճաշին հասա Պասսի, որը այդտեղից հինգ-վեց մղոն հեռավորության վրա է գտնվում։ Այդ ավանը մտնելիս ինձ զարմացրեց բնակիչների բուռն իրարանցումը։ Նրանք դուրս էին թափվել տներից ու խուռն բազմությամբ վազում էին դեպի մի խղճուկ պանդոկի դարպասը, որի առաջ կանգնած էին երկու ծածկված սայլակներ։ Տոթից ու հոգնածությունից շնչասպառ ձիերը տակավին չէին արձակված։ Երևում էր, որ սայլակները նոր են եկել։

Մի բոպե ես կանգ առա՝ իրարանցման պատճառը պար-

գելու համար։ Սակայն քիչ բան կարողացա իմանալ հետաքրքրությամբ տարված այդ ամբոխից, որը ոչ մի ուշադրություն չէր դարձնում իմ հարցերին և մեծ խառնաշփոթությամբ միմյանց բոթելով շարունակում էր վազել դեպի պանդոկ։ Վերջապես դարպասի մոտ երևաց մի հրացանաձիգ՝ ուսին մուշկետ, մեջքին՝ սուսերակալ։ Ես ձեռքով նշան արեցի նրան, որ մոտենա ինձ և խնդրեցի բացատրել այդ իրարանցման պատճառը։ «Դատարկ բան է, պարոն,— ասաց նա ինձ։ —Ես ու ընկերներս տասներկու անառակ աղջիկ ենք տանում Հավր-դե-Կրաս, որտեղից նավով պիտի ճանապարհ դնենք դեպի Ամերիկա։ Նրանցից մի քանիսը գեղեցիկ են և, ըստ երևույթին, դա է, որ հարուցում է այս բարեսիրտ գյուղացիների հետաքրքրությունը»։

Այս բացատրությունից հետո ես պատրաստ էի շարունակել ճանապարհս, եթե իմ ուշադրությունը չգրավեին պանդոկից դուրս եկող մի պառավի բացականչությունները. նա՝ ձեռքերը երկինք պարզած՝ գոչում էր, թե դա բարբարոսություն է, սարսափելի դաժանություն, կարեկցանք շարժող անգթություն։

— Ի՞նչ է պատահել,— հարցրի ես նրան։

— Ա՜խ, պարոն,— պատասխանեց նա։— Ներս մտեք և տեսեք, արդյոք կարո՞ղ է այսպիսի մի տեսարան չխոցել մարդու սիրտը։

Հետաքրքրությունն ինձ ստիպեց իջնել ձիուց։ Ես ձիս հանձնեցի ձիապանիս խնամքին և, ամբոխը ճեղքելով, դժվարությամբ ներս մտա։ Հիրավի, իմ աչքի առաջ բացվեց սրտաճմլիկ մի տեսարան։

Մեջքերից վեց-վեց իրար շղթայված այդ տասներկու աղջիկների մեջ կար մեկը, որի դեմքն ու արտաքինն այնքան քիչ էին համապատասխանում իր ներկա դրությանը, որ այլ պայմաններում ես նրան հասարակության բարձր շրջանի կին կհամարեի։ Դեմքի թախիծը, կեղտոտ սպիտակեղենն ու զգեստներն այնքան քիչ էին տգեղացնում նրան, որ տեսքը հարգանք ու կարեկցանք ներշնչեց ինձ։ Այստուհանդերձ, աղջիկը ճգնում էր, որքան այդ թույլ էր տալիս շղթան, մի կողմ շրջվել հանդիսականներից՝ իր դեմքը նրանցից թաքցնելու

համար։ Նրա թաքնվելու այդ ճիգը վերին աստիճանի բնական էր և թվում էր, թե պարկեշտության զգացումից է բխում։

Այդ անբախտ խմբին ուղեկցող վեց պահակները ևս նույն սենյակումն էին։ Ես մի կողմ կանչեցի նրանց ավագին և խնդրեցի փոքր-ինչ լուսաբանել այդ գեղեցիկ աղջկա վիճակը։

Նա միայն ընդհանուր տեղեկություններ կարողացավ տալ։

— Մենք այդ աղջկան վերցրինք բանտից ոստիկանության գլխավոր պետի հրամանով,— պատասխանեց ավագը։— Պարզ է, աղջիկն այնտեղ բանտարկված էր ոչ իր բարի գործերի համար։ Ճանապարհին բազմիցս հարցուփորձ արի, սակայն նա համառորեն լռում էր։ Թեև ես ոչ մի հրաման չեմ ստացել լավ վարվելու այդ աղջկա հետ, քան մյուսների, այնուամենայնիվ, որոշ սիրալիրություն եմ ցույց տալիս, որովհետև ինձ թվում է, թե նա ավելի արժանավոր է, քան իր ընկերուհիները։ Ահա այս երիտասարդ աղամարդը,— ավելացրեց հրացանաձիգը,— կարող է ինձնից լավ ձեզ բացատրել նրա դժբախտության պատճառը։ Սկսած Փարիզից, երիտասարդն ուղեկցում է այդ աղջկան և գրեթե ոչ մի րոպե չի դադարում արտասվելուց։ Թերևս նրա եղբայրն է կամ սիրեկանը։

Ես շրջվեցի դեպի այն անկյունը, ուր նստած էր այդ երիտասարդը. նա կարծես ընկղմված էր խոր մտածմունքի մեջ։ Կյանքումս ես երբեք չէի տեսել վշտի ավելի կենդանի մի պատկեր։ Նա վերին աստիճանի պարզ էր հագնված, սակայն առաջին իսկ հայացքից երևում էր, որ ազնվազարմ ու բարեկիրթ մի մարդ է։ Մոտեցա նրան։ Նա ոտքի կանգնեց, և ես նրա աչքերում, դեմքի և բոլոր շարժումների մեջ այնքան նրբություն, ազնվություն նկատեցի, որ սիրտս բնականաբար համակվեց բարյացակամ զգացումով դեպի նա։

— Արդյոք չե՞մ խանգարում ձեզ,— ասացի նրան, նստելով կողքին։ —Ես կցանկանայի իմանալ այս գեղեցիկ կնոջ պատմությունը։ Կարահանե՞ք բավարարել իմ հետաքրքրությունը։ Ինձ թվում է, նա ծնված չէ այն տխուր վիճակի համար, որի մեջ տեսնում եմ նրան։

Նա անկեղծորեն պատասխանեց, որ չի կարող ինձ ասել, թե ով է այդ կինը, առանց մատնելու միևնույն ժամանակ և իր ով լինելը։ Այնինչ նա լուրջ պատճառներ ունի անհայտ մնալու։

Կարող եմ այնուհանդերձ ասել ձեզ այն, ինչ հայտնի է այս թշվառականներին,— ավելացրեց նա, մատնացույց անելով հրացանաձիգներին.— ես սիրում եմ այդ աղջկան այնպիսի բուռն սիրով, որ դրա համար դարձել եմ աշխարհիս ամենաանբախտ մարդը։ Փարիզում ես բոլոր հնարները գործադրեցի նրան ազատելու համար, սակայն ինձ չօգնեց ո՛չ աղերսանքը, ո՛չ հնարամտությունը և ո՛չ էլ ուժը։ Ի վերջո որոշեցի հետևել նրան թեկուզ մինչև աշխարհի ծայրը։ Ես նրա հետ նավ կնստեմ և կգնամ Ամերիկա։ Սակայն ամենամեծ անգթությունն այն է, որ սույն ստոր սրիկաները,— շարունակեց նա, խոսելով հրացանաձիգների մասին,— թույլ չեն տալիս, որ մոտենամ նրան։ Փարիզից մի քանի մղոն հեռանալուց հետո ես մտադիր էի ուղղակի հարձակվել նրանց վրա։ Այդ նպատակով ես պայմանավորվել էի չորս մարդու հետ, որոնք մի խոշոր գումարի դիմաց փոստացել էին ինձ իրենց աջակցությունը։ Սակայն ապիկարները կռվի պահին լքեցին ինձ և, դրամս առած, փախան։ Ուժով իմ նպատակին հասնելու անզորությունս ստիպեց ինձ զինաթափ լինել։ Հրացանաձիգներին որոշ վարձատրություն առաջարկելով, ես խնդրեցի գոնե թույլ տալ հետևելու իրենց։ Շահի տենչը նրանց ստիպեց համաձայնել։ Ամեն անգամ, երբ ինձ թույլատրում էին խոսել սիրուհուս հետ, նրանք ինձանից վճար էին պահանջում։ Քսակը շուտով դատարկվեց, իսկ այժմ, երբ գրպանումս ոչ մի սուս այլևս չկա, նրանք բարբարոսային կոպտությամբ խսկույն ինձ ետ են հրում, հենց որ նրան մոտենալու մի քայլ եմ անում։ Ընդամենը մի բոպե առաջ, երբ ես, չնայած նրանց սպառնալիքներին, համարձակվեցի մոտենալ, նրանք հանդգնեցին հրացան ուղղել ինձ վրա։ Այժմ նրանց ագահությունը բավարարելու և ճանապարհս շարունակելու համար ես ստիպված եմ ծախել իմ անպետք ձին, որով եկել եմ մինչև այս ավանը։

Թեև կարծես այս ամենը նա պատմեց բավական հան-

գարտ, սակայն երբ խոսքը վերջացրեց, արտասուքները կաթիլ-կաթիլ գլորվում էին նրա աչքերից։ Այս իրադեպը ինձ վերին աստիճանի արտասվոր և հուզիչ թվաց։

— Ես չեմ պահանջում, որ դուք ինձ հայտնեք ձեր գաղտնիքը,— ասացի ես նրան,— սակայն, եթե կարող եմ ձեզ որևէ բանում օգտակար լինել, հաճությամբ պատրաստ եմ ձեզ ծառայելու։

— Ավա՜ղ,— պատասխանեց նա,— հույսի նշույլ անգամ չեմ տեսնում։ Ես հարկադրված եմ ամբողջովին համակերպվել իմ դաժան բախտին։ Ես կգնամ Ամերիկա, ուր գոնե ազատ կարող եմ սիրել։ Ես գրել եմ իմ բարեկամներից մեկին, և նա ինձ մի քիչ կօգնի Հավր-դե-Կրասում։ Ինձ մատատանջում է միայն մինչև այնտեղ հասնելու դժվարությունները և այս անբախտ արարածի,— ավելացրեց նա, թախծանքով նայելով իր սիրուհուն,— ճանապարհը գեթ մի քիչ թեթևացնելու անկարողությունս։

— Եթե այդպես է,— պատասխանեցի նրան,— ես ուզում եմ վերջ դնել ձեր մատատանջությանը։ Ահա ձեզ մի փոքր գումար. խնդրում եմ ընդունեք. շատ եմ ցավում, որ այլ կերպ չեմ կարող ձեզ օգնել։

Պահակներից թաքուն ես նրան չորս ոսկի տվի, լավ գիտենալով, որ եթե իմանան այդ գումարի մասին, ապա ավելի թանկ կծախեն իրենց մատուցած ծառայությունը։ Ես նույնիսկ մտածեցի սակարկել նրանց հետ, որպեսզի ապահովեմ երիտասարդ սիրեկանին մինչև Հավր իր սիրուհու հետ անընդհատ խոսակցելու թույլտվությունը։ Նշան անելով, որ պահակապետը մոտենա ինձ, ես համապատասխան առաջարկ արի։ Չնայած նա բավական անպատկառն էր, բայց, ըստ երևույթին, ամաչեց.

— Մենք, պարոն, նրան չենք արգելում խոսելու աղջկա հետ,— պատասխանեց նա շփոթված,— բայց երիտասարդը կամենում է միշտ նրա մոտ լինել, իսկ դա մեզ անհանգստացնում է. միանգամայն արդարացի է, որ նա վճարի պատճառած անհանգստության համար։

— Լավ, թող այդպես լինի,— ասացի նրան,— իսկ որ-

քա՞ն պետք է վճարել, որպեսզի դուք այդ անհանգստությունը չզգաք։

Նա հանդգնություն ունեցավ ինձնից երկու ոսկի պահանջելու։ Ես իսկույն վճարեցի։

— Սակայն տեսեք, հա,— ավելացրի ես,— միայն թե առանց խարդախության։ Ես իմ հասցեն թողնում եմ այս երիտասարդին, որպեսզի նա ամեն ինչի մասին իրազեկ պահի ինձ, և հավատացնում եմ, որ ի վիճակի կլինեմ հարկ եղած դեպքում ձեզ պատժել տալ։

Այս հանդիպումն ինձնից խլեց վեց ոսկի։

Այն արժանավայել և ջերմ երախտագիտությունը, որով երիտասարդ անծանոթն արտահայտեց իր շնորհակալությունը, վերջնականապես համոզեց ինձ, որ նա մեծատոհմիկ մի մարդ է՝ արժանի իմ առատաձեռնությանը։ Մեկնելուց առաջ ես մի քանի խոսք ուղղեցի նրա սիրուհուն։ Վերջինս ինձ պատասխանեց այնպիսի քնքուշ ու հմայիչ համեստությամբ, որ սենյակից դուրս գալիս ես հազար ու մի խորհրդածություն արի կանանց անիմանալի բնության մասին։

Ես վերադարձա դեպի իմ մենությունը, և այս արկածի շարունակությունն անհայտ մնաց ինձ։ Անցավ մոտ երկու տարի, և ես բոլորովին մոռացել էի այն, երբ մի երջանիկ պատահականությամբ առիթ ունեցա ծանոթանալու այդ պատմության բոլոր հանգամանքների հետ։

Լոնդոնից նոր էի հասել Կալե իմ աշակերտ մարկիզ դը...-ի հետ։ Մենք իջևանեցինք, եթե չեմ սխալվում, «Ոսկե Առյուծ» կոչված հյուրանոցում, ուր, ինչ-որ պատճառներից ստիպված, անցկացրինք ամբողջ օրը և հետևյալ գիշերը։ Ճաշից հետո փողոցներում զբոսնելիս ինձ թվաց, թե ես տեսնում եմ նույն երիտասարդին, որին հանդիպել էի Պարսիում։ Նա շափազանց վատ էր հագնված և շատ ավելի դալկադեմ էր, քան մեր առաջին տեսակցության պահին։ Թևի տակ մի հին ուղեպարկ ուներ. երևի նոր էր ժամանել քաղաք։ Սակայն որովհետև նա շափազանց գեղեցկատես էր, ապա հեշտ էր նրան ճանաչելը, և ես իսկույն իմացա, որ այդ նա է։

— Մոտենանք այս պատանուն,— ասացի ես մարկիզին։

Անկարելի է նկարագրել պատանու ուրախությունը, երբ իր հերթին նա էլ ինձ ճանաչեց։

— Ա՜խ, պարոն,— բացականչեց նա ձեռս համբուրելով,— ուրեմն ես կարող եմ մի անգամ ևս ձեզ հայտնել իմ անմոռաց երախտագիտությունը։

Ես նրան հարցրի, թե որտեղից է գալիս։ Նա պատասխանեց, որ ծովով է եկել Հավր-դե-Կրասից. իսկ այնտեղ ժամանել է Ամերիկայից մի քանի օր առաջ։

— Ինձ թվում է, դուք դրամի կարիք ունեք,— ասացի ես նրան։— Գնացեք «Ոսկե Առյուծ» հյուրանոցը, ուր իջևանել եմ, հենց հիմա ինքս էլ կգամ։

Ես անմիջապես վերադարձա հյուրանոց, որպեսզի իսկույն իմանամ նրա դժբախտ վիճակի մանրամասնությունները և Ամերիկայի ճանապարհորդության հանգամանքները։ Գուրգուրիչ ուշադրությամբ ես պատեցի նրան և կարգադրություն արի, որ նա ոչ մի բանի պակասություն չզգա։ Նա շսպասեց, որ խնդրեմ իրեն՝ իր կյանքի պատմությունը անելու համար։

— Պարոն,— ասաց նա,— դուք այնքան ազնիվ եղաք դեպի ինձ, որ ես ստոր ապերախտության մեջ կհանդիմանեի ինձ, եթե որևէ բան թաքցնեի ձեզանից։ Ես ձեզ կպատմեմ ոչ միայն իմ դժբախտության ու տառապանքների, այլ նաև իմ անառակ կյանքի և ամենաամոթալի թուլությունների մասին։ Հավատացած եմ, որ դատապարտելով հանդերձ, դուք չեք կարող ինձ չկարեկցել։

Այստեղ ուզում եմ ընթերցողին նախազգուշացնել, որ նրա պատմությունը ես գրի առա այն լսելուց անմիջապես հետո, հետևաբար, կարելի է միանգամայն վստահ լինել դրա ճշգրտությանն ու իսկությանը։ Հավատիացնում եմ, որ ճշգրտությունը պահպանել եմ մինչև իսկ այն տեղերում, ուր խոսում եմ խորհրդածությունների և զգացումների մասին, որ երիտասարդ թափառաշրջիկը արտահայտում էր մեծ շնորհքով ու նրբությամբ։

Ահա նրա պատմությունը, որին ես մի բառ անգամ չեմ ավելացնելու մինչև վերջը։

Ես տասնյոթ տարեկան էի և Ամիյենում արդեն ավար-

տում էի փիլիսոփայության դասընթացը, ուր ինձ ուղարկել էին ծնողներս, որոնք Պ.-ի լավագույն ընտանիքներից մեկին էին պատկանում։ Ես վերին աստիճանի խելոք ու բարեբարո կյանք էի վարում, և իմ ուսուցիչներն ամբողջ ուսումնարանում ինձ մատնանշում էին իբրև օրինակելի աշակերտ, թեև ոչ մի արտակարգ ճիգ չէի թափում, որպեսզի արժանանամ այդ գովեստին. բայց ի բնե մեղմ ու խաղաղ բնավորություն ունեի և մեծ հակում դեպի ուսումը, այնպես որ ինձ վերագրում էին առաքինություններ, որոնք հետևանք էին դեպի մոլությունը տածած իմ բնական խորշանքի։ Շնորհիվ իմ ծագման, ուսման մեջ ունեցած հաջողությունների և որոշ արտաքին գրավչության՝ քաղաքում բոլոր աղնվաբարո մարդիկ ինձ ճանաչում և հարգում էին։

Հրապարակային քննությունները ես վերջացրի այնպիսի փայլուն հաջողությամբ և ընդհանուրի հավանությամբ, որ այնտեղ ներկա գտնվող եպիսկոպոսը ինձ առաջարկեց հոգևոր դաս մտնել, ուր կարող էի նրա կարծիքով ավելի խոշոր փառքի հասնել, քան Մալտայի ասպետական կարգում, որի համար ինձ կանխորոշել էին իմ ծնողները։ Նրանց կամքի համաձայն, ես արդեն կրում էի այդ կարգի խաչը և ասպետ դե Գրիյո անունը։ Արձակուրդները մոտենում էին, և ես պատրաստվում էի վերադառնալ հորս մոտ, որը խոստացել էր շուտով ինձ ակադեմիա ուղարկել։

Ամիյենից հեռանալիս միայն մի բան էր ինձ վշտացնում. այնտեղ ես թողնում էի մի բարեկամ, որի հետ կապված էի մշտական ու քնքուշ մտերմությամբ։ Նա մի քանի տարով ինձնից մեծ էր։ Մենք միասին էինք դաստիարակվել. բայց լինելով աղքատ ընտանիքից, նա ստիպված էր հոգևորական դառնալ և մնալ Ամիյենում՝ այդ աստիճանին պատշաճ դասընթացներին հետևելու համար։ Նա բազմաթիվ արժանիքներ ուներ։ Դուք նրան կհանդիպեք իմ պատմության ընթացքում, ուր նա այնպիսի խանդաղատանք ու վեհանձնություն է ցուցաբերում մեր բարեկամության մեջ, որոնք գերազանցում են հնադարյան ամենափառապանծ օրինակները։ Եթե այն ժամանակ ես հետաձգ լինեի նրա խորհուրդներին, միշտ ողջամիտ ու երջանիկ կլինեի։ Եթե գեթ լսած լինեի նրա խրատնե-

ը, ապա թեկուզ այն անդունդից, ուր ինձ նետել էին իմ կրքերը, ես կարող էի փրկել իմ կարողության գոնե ինչ-որ մի մասը և իմ բարի համբավը։ Սակայն նա իր հոգատարությունից ոչ մի օգուտ չքաղեց, նա զգաց միայն դրանց անօգուտ տեսնելու ցավը։ Նա նույնիսկ կծու խոսքերի էր արժանանում երախտամոռիս կողմից, որը նրա հոգածությունը ընդունում էր որպես վիրավորանք և համարում անպատեհ։

Ես նախօրոք որոշել էի իմ՝ Ամիյենից մեկնելու ժամը։ Ավա՜ղ, ինչո՞ւ մի օր առաջ չնշանակեցի։ Անաղարտ անմեղությամբ ես վերադարձած կլինեի իմ հոր տունը։ Քաղաքից հեռանալու հենց նախօրյակին, երբ ես զբոսնում էի բարեկամիս հետ, որին Տիբերժ էին կոչում, մենք պատահեցինք Սրբասից եկող հանրակառքին և դրան հետևեցինք մինչև պանդոկ, ուր իջևանում էին ուղևորները։ Մենք այդ արինք պարզապես հետաքրքրությունից դրդված։ Կառքից դուրս եկան մի քանի կանայք և իսկույն մտան հյուրանոց։ Մեկը միայն, մի բոլորովին դեռատի աղջիկ, մնաց բակում, քանի դեռ հասակավոր մի մարդ, երևի նրան ուղեկցող սպասավորը, աշխատում էր կառքից իջեցնել նրա իրերը։ Այդ աղջիկը վերին աստիճանի գեղեցիկ երևաց ինձ, և ես, որ մինչ այդ երբեք չէի մտածել սեռերի տարբերության մասին, չէի նայել քիչ թե շատ ուշադրությամբ որևէ աղջկա վրա, ես, ասում եմ, որի ժուժկալությունը և համեստությունը ընդհանուրի հիացմունքի առարկան էին, մի ակնթարթում բռնկվեցի սիրատենչ զգացումով։ Ես մի մեծ պակասություն ունեի. շափից դուրս երկչոտ էի ու ամոթխած։ Սակայն այդ բոպեին իմ այդ թուլությունը չկասեցրեց ինձ, և ես քայլեցի դեպի իմ սրտի տիրուհին։

Թեև նա ինձնից փոքր էր, սակայն իմ սիրալիր ուշադրությունն ընդունեց կարծես առանց շփոթվելու։ Ես նրան հարցրի, թե ի՞նչ առիթով է եկել Ամիյեն և քաղաքում ո՞վ ունի ծանոթ։ Նա պատասխանեց անկեղծորեն, որ նրան ուղարկել են ծնողները՝ կուսանոց մտնելու համար։

Սերն այնպես էր լուսավորել միտքս այն բոպեից, ինչ նա գրավել էր իմ սիրտը, որ ես իսկույն այդ դիտավորությունը համարեցի մահացու մի հարված իմ տենչերին։

Խոսելուս եղանակից նա հասկացավ, թե ինչպիսի զգա

43309

Մ. Մաշտոցի անվ. Հանրապետական գրադարան
Республик-я библиотека

մ ումներով եմ համակված, որովհետև նա ինձնից շատ ավելի փորձված էր։ Նրան կուսանոց էին ուղարկում հակառակ իր կամքի, անշուշտ, դեպի հաճույքն ունեցած նրա հակումը սանձահարելու նկատառումով, մի հակում, որն արդեն երևան էր եկել և որը հետագայում դարձավ իմ և նրա թշվառությունների պատճառը։ Ես ծառացա նրա ծնողների մտադրության դեմ և դա վիճարկեցի այն բոլոր ապացույցներով, որ ինձ ներշնչեցին նոր փթթող սերս ու զգրոցական պերճախոսությունս։ Նա շարտահայտեց ոչ խստաբարոյություն, ոչ էլ արհամարհանք։ Մի վայրկյան լռելուց հետո ասաց, որ ինքն էլ կանխատեսում է իր ապագա դժբախտ կյանքը, բայց երևի այդպես է վիճակված ի վերուստ, քանի որ ոչ մի միջոց չկա դրանից խույս տալու։ Նրա հայացքի քնքշությունը, սույն խոսքերն արտասանելու թախծոտ զրավչությունը կամ ավելի շուտ մի ճակատագրական ուժ, որն ինձ դեպի իմ կործանումն էր մղում, թույլ չտվին, որ մի բոպե անգամ տատանվեմ իմ պատասխանի մեջ։ Սկսեցի նրան համոզել, որ եթե ապավինի իմ պատվին և այն անսահման քնքշությանը, որն արդեն ներշնչել է ինձ, ես կզոհաբերեմ իմ ամբողջ կյանքը՝ նրան իր ծնողների բռնակալությունից ազատելու և երջանկացնելու համար։

Հետագայում այդ մասին մտածելիս ես միշտ զարմացել եմ, թե այն ժամանակ ո՞րտեղից էր ինձ այնքան կորովն ու արտահայտվելու դյուրությունը։ Սակայն սերը երբեք աստվածություն չէին համարի, եթե նա հաճախ հրաշքներ չգործեր։ Ես ուրիշ շատ կրակոտ և համոզիչ խոսքեր ասացի նրան։

Գեղանի անծանոթուհիս լավ գիտեր, որ իմ հասակում մարդ չի խաբում. նա խոստովանեց, որ, հիրավի, եթե ես կարողանամ որևէ միջոց գտնել նրան ազատելու, նա իրեն պարտավորված պիտի համարի իմ հանդեպ՝ կյանքից առավել թանկագին մի բանով։ Ես կրկնեցի, որ պատրաստ եմ դիմելու ամեն մի քայլի։ Սակայն չունենալով բավականին փորձառություն, որպեսզի անհապաղ միջոցներ գտնեմ նրան աջակցելու, ես բավականացա այս ընդհանուր հավաստիացումով, որից ոչ մի օգուտ չկար ո՛չ ինձ և ո՛չ էլ նրան։ Մինչ այդ, նրա

ծեր սպասավորը մոտեցավ մեզ, և ես մտածեցի, թե բոլոր իմ հույսերը պիտի խորտակվեն, եթե նրա հնարամտությունը չօգներ մտքիս անկարությանը։ Ես ապշած մնացի, երբ ծերունու մոտենալու միջոցին նա ինձ անվանեց հորեղբոր որդի և, առանց շփոթության նշույլ անգամ ցույց տալու, ասաց, որ շատ ուրախ է ինձ Ամիյենում հանդիպելու համար, և որ այդ առթիվ նա վազվան է թողնում կուսանոց մտնելը, որպեսզի իրեն շշրկի ինձ հետ ընթրելու հաճույքից։ Ես լավ հասկացա այս խորամանկության իմաստը։ Նրան առաջարկեցի իջևանել մի հյուրանոցում, որի տերը Ամիյեն փոխադրվելուց առաջ երկար ժամանակ հորս կառապանն էր եղել, իսկ այժմ միանգամայն հավատարիմ էր ինձ։

Ես ինքս ուղեկցեցի նրան հյուրանոց։ Մեր սպասավորն ասես փնթփնթում էր քթի տակ, իսկ իմ բարեկամ Տիբերժը ոչինչ չհասկանալով այս անցուդարձից, առանց մի խոսք արտասանելու, հետևում էր ինձ։ Նա մեր խոսակցությունը չէր լսում, շարունակում էր ման գալ բակում, երբ ես սիրաբանում էի իմ գեղեցիկ տիրուհու հետ։

Կախենալով Տիբերժի խոհեմությունից, ես ուզեցի ազատվել նրա ներկայությունից և խնդրեցի, որ կատարի իմ մի հանձնարարությունը։ Այսպիսով, երբ մենք հասանք հյուրանոց, ես բախտ ունեցա առանձին՝ երես առ երես խոսակցելու սրտիս թագուհու հետ։

Շատ շուտ համոզվեցի, որ ես այնքան էլ երեխա չէի, որքան կարծում էի։ Իմ սիրտը բացվեց բյուր քաղցրատենչ զգացումների հանդեպ, որոնց մասին մինչև այդ գաղափար անգամ չունեի։ Իմ երակներով մի անուշ ջերմության հոսանք անցավ։ Ես գտնվում էի մի հոգեզմայլ վիճակում, որը միաժամանակ ինձ զրկեց խոսելու կարողությունից և որը արտացոլվում էր միմիայն աչքերիս մեջ։

Օրիորդ Մանոն Լեսկոն,— նա ինձ ասաց, որ այսպես են կոչում իրեն,— մեծապես գոհ մնաց իր հմայքի ներգործությունից։ Ես նկատեցի, որ նա ինձնից պակաս հուզված չէ։ Մանոնը խոստովանեց, որ ես իրեն դուր եմ գալիս, և ինքը շատ ուրախ է, որ ինձ է պարտական իր փրկությունը։ Նա

ցանկացավ իմանալ, թե ով եմ ես և, ստանալով իմ պատասխանը, ավելի ուրախացավ, որովհետև, լինելով հասարակ բնատանիքից, առավել ես հրճվեց, որ տիրացել է ինձ պես սիրեկանի սրտին։ Մենք սկսեցինք խորհել միմյանց պատկանելու միջոցների մասին։

Երկար խորհրդածությունից հետո մենք այլ հնար չգտանք, քան փախուստը։ Անհրաժեշտ էր մի կերպ թմրեցնել նրան ուղեկցող սպասավորի զգոնությունը, որը թեպետ սոսկ ծառա էր, բայց անվտանգ էր ոչ ամենևին։ Որոշեցինք, որ ես այդ գիշեր պատրաստ կպահեմ մի փոստատար կ տոր և վաղ առավոտյան, մինչև նրա ուղեկցի արթնանալը, կվերադառնամ պանդոկ, որտեղից մենք գաղտնի կփախչենք և ուղղակի կգնանք Փարիզ, ուր անմիջապես կամուսնանանք։ Մոտս ընդամենը հիսուն էկյու ունեի՝ իմ մանր խնայողությունների արդյունքը. իսկ Մանոնը՝ մոտավորապես երկու անգամ ավելի։ Սակայն որպես անփորձ պատանիներ, մենք կարծում էինք, թե այդ գումարն անսպառ կլինի. բացի դրանից, մենք քիչ հույս չէինք դնում մեր այլ ձեռնարկությունների հաջողության վրա։

Մինչ այդ ինձ համար աննախընթաց բավականությամբ ընթրելուց հետո՝ ես հեռացա մեր ծրագիրն իրագործելու համար։ Իմ անելիքը հեշտանում էր շնորհիվ այն բանի, որ հետևյալ օրը ես մտադիր էի տուն վերադառնալ և դրա համար արդեն պատրաստել էի իմ համեստ ճամպրուկը։ Ուստի, առանց դժվարության, այն փոխադրել տվի պանդոկ և պատվիրեցի, որ կառքը պատրաստ լինի առավոտյան ժամը հինգին, քաղաքի դռները բացվելու ժամին։ Սակայն մնում էր միայն մի խոչընդոտ, որի մասին չէի մտածել և որը քիչ մնաց խորտակեր իմ ամբողջ ծրագիրը։

Տիբերժը թեպետ երեք տարով էր միայն ինձնից մեծ, բայց հասունացած ողջամտության և խստաբարո վարքի տեր մի պատանի էր։ Նա ինձ սիրում էր արտասովոր քնքշությամբ։ Այնքան գեղեցիկ աղջկա տեսքը, ինչպիսին Մանոնն էր, նրան ուղեկցելու իմ բուռն ցանկությունը և իրենից աղատվելու իմ ջանքերը նրա մեջ կասկած էին հարուցել իմ սիրո մասին։ Նա չէր համարձակվել վերադառնալ

պանդոկ, ուր ինձ թողել էր, երկյուղելով, թե դրանով կվիրավորի. սակայն վճռել էր իմ բնակարանում սպասել, որտեղ և վերադարձիս նրան գտա, չնայած որ արդեն երեկոյան ժամը տասն էր։ Նրա ներկայությունն ինձ վշտացրեց։ Եվ ինքը այդ նկատեց իսկույն։

— Ես հավատացած եմ,— անկեղծորեն ասաց նա,— որ դուք մտադիր եք ինչ-որ բան անել, որն ուզում եք ինձնից թաքցնել. այդ ես տեսնում եմ ձեր դեմքից։

Ես բավականին խիստ պատասխանեցի, որ պարտավոր չեմ իմ յուրաքանչյուր դիտավորության մասին հաշիվ տալ նրան։

— Անշուշտ,— վրա բերեց նա,— բայց դուք միշտ ինձ վերաբերվել եք իբրև բարեկամի, իսկ դա պայմանավորված է որոշ վստահությամբ և անկեղծությամբ։

Նա այնքան համառ և երկար խնդրեց հայտնել իմ գաղտնիքը, որ ես միշտ մտերիմ լինելով նրան, այս անգամ էլ վստահեցի պատմելու իմ բուռն հրապուրանքի մասին։ Իմ խոստովանությունը նա ընդունեց այնպիսի բացահայտ դժգոհությամբ, որ ես սարսռեցի։ Ես զղջացի, մանավանդ որ հայտնեցի նրան իմ փախուստի ծրագիրը։ Նա ասաց, որ տածելով դեպի ինձ ամենասերտ բարեկամություն, չի կարող հակառակ չլինել իմ մտադրություններին. որ ուզում է նախ մատնանշել այն ամենը, ինչ կարող է ինձ կասեցնել. սակայն, եթե այս ամենից հետո ես դարձյալ չհրաժարվեմ իմ չարաբաստիկ որոշումից, ապա նա այդ մասին պիտի նախազգուշացնի այն անձանց, որոնք անվրեպ կարող են հիմնովին խափանել իմ դիտավորությունը։ Այնուհետև նա մի լուրջ ճառ ասաց, որը տևեց քառորդ ժամից ավելի և վերջացրեց սպառնալիքով, թե ինձ կմատնի, եթե խոսք չտամ ավելի խելոք ու զգույշ լինել։

Վհատությունն ինձ պատեց, որ այսպես անտեղի մատնեցի ինձ։ Սակայն սերը, որ վերջին երկու-երեք ժամվա ընթացքում ծայր աստիճան լուսավորել էր իմ միտքը, օգնեց ինձ գլխի ընկնելու, որ նրան դեռ չեմ հայտնել, թե իմ ծրագիրը պիտի գործադրեմ հետևյալ առավոտ, և ես որոշեցի խորամանկությամբ մոլորեցնել նրան։

— Տիրերժ,— ասացի նրան,— մինչև այսօր ես ձեզ համարում էի իմ բարեկամը և իմ խոստովանությամբ ուզեցի փորձել ձեզ։ Ճիշտ է, որ ես սիրում եմ, չեմ խաբել ձեզ, սակայն ինչ վերաբերում է իմ փախուստին, դա այնպիսի մի քայլ չէ, որին կարելի լինի դիմել թեթևամտությամբ։ Վաղը՝ առավոտյան ժամը իններին եկեք ինձ մոտ, ես ձեզ կծանոթացնեմ, եթե հնարավոր լինի, իմ սիրուհու հետ, և դուք ինքներդ կդատեք, թե արդյոք նա արժանի՞ է իմ որոշմանը։

Նա հեռացավ ինձնից իր մտերմության մասին հազար ու մի հավաստիացումներ անելով։ Այդ ամբողջ գիշերը ես անցկացրի կարգի բերելով իմ գործերը և առավոտյան, հենց որ լույսը բացվեց, գնացի պանդոկ, ուր Մանոնն արդեն սպասում էր ինձ։ Նա կանգնած էր դեպի փողոց նայող լուսամուտի առաջ և ինձ տեսնելուն պես ինքն անձամբ բացեց դուռը։

Մենք դուրս եկանք առանց աղմուկի։ Նրա վերցրածը միայն սպիտակեղենն էր, որը ինքս էի բռնել։ Կառքը պատրաստ էր մեկնելու, և մենք իսկույն հեռացանք քաղաքից։

Հետագայում ես ձեզ կպատմեմ, թե ինչ էր արել Տիրերժը, երբ իմացել էր, որ ես խաբել եմ իրեն։ Նրա հոգատար վերաբերմունքը դեպի ինձ դրանից չնվազեց։ Դուք կտեսնեք, թե նա ինչ ծայրահեղության հասցրեց այն, և ինչքան եմ ես արցունք թափել, երբ մտածել եմ, թե որն է եղել նրա հատուցումը։

Մենք այնպես արագ էինք ընթանում, որ մինչև մութն ընկնելը հասանք Սեն-Դընի։ Չի նստած՝ ես սուրում էի կառքի կողքից, այնպես որ միայն երիվարները փոխելու ժամանակ կարող էինք միմյանց հետ զրուցել։ Բայց, երբ տեսանք, որ մոտենում ենք Փարիզին, այսինքն՝ գրեթե ապահով գրության մեջ ենք գտնվում, կանգ առանք մի բան ուտելու, որովհետև Ամիյենից մեկնելուց հետո ոչինչ չէինք կերել։ Որքան էլ ես բուռն էի սիրահարված նրան, այնուամենայնիվ Մանոնը կարողացավ համոզել ինձ, որ ինքը ևս սիրում է ինձ ոչ պակաս ուժգնությամբ։ Մենք ծայր աստիճան անզուսպ էինք մեր փաղաքշանքների մեջ և համբերություն չունեինք սպասելու, որ առանձին լիներք։ Փոստատարները և պանդոկապետները հիացմունքով էին դիտում մեզ, և ես նկատեցի, որ

նրանք զարմացած էին, տեսնելով մեր տարիքի երկու պատանիների, որոնք այնպես մոլեգին սիրում են միմյանց։

Սեն-Դընիում մենք մոռացանք մեր ամուսնանալու դիտավորությունը և, խախտելով եկեղեցու իրավունքները, ամուսիններ դարձանք, առանց մինչև իսկ մտածելու այդ մասին։ Կասկած չկա, որ ես, ի բնե օժտված լինելով քնքուշ և կայուն բնավորությամբ, իմ ողջ կյանքում երջանիկ կլինեի, եթե Մանոնն ինձ հավատարիմ մնար։ Որքան ավելի էի ճանաչում նրան, այնքան առավել նոր և հրապուրիչ հատկություններ էի գտնում նրա մեջ։ Նրա խելքը, սիրտը, քնքշությունն ու գեղեցկությունն այնպիսի մի հաստատուն և հիասքանչ շղթա էին կազմում, որ ես իմ ամբողջ երջանկությունը կզոհաբերեի՝ հավիտյան նրա գերին լինելու համար։ Օ՜, սարսափելի դու դարձ։ Այն, ինչ այժմ իմ հուսահատության պատճառն է, կարող էր իմ երջանկության առարկան լինել։ Ես ինձ համարում եմ ամենաանբախտ մարդը, շնորհիվ հենց իմ սիրո կայունության, որից ես պետք է սպասեի ամենաքաղցր վիճակը և ամենակատարյալ բարիքները։

Փարիզում մենք մի կահավորված բնակարան վարձեցինք Վ... փողոցում, դժբախտաբար, հայանի կապալառու պարոն դը Բ.-ի տան մոտ։ Անցավ երեք շաբաթ, որոնց ընթացքում ես այնքան էի տարված իմ կրքով, որ շատ քիչ էի մտածում իմ ընտանիքի և այն վշտի մասին, որ հայրս կրած կլիներ բացակայությանս հետևանքով։ Սակայն, որովհետև վարմունքիս մեջ անկարգության հետք անգամ չկար, և Մանոնը նույնպես իրեն շատ համեստ էր պահում, այսպես անդորր ընթացող մեր կյանքը իմ մեջ աստիճանաբար հարուցեց պարտականության գիտակցությունը։ Ես որոշեցի հաշտվել հորս հետ, եթե դա հնարավոր է։ Իմ սիրուհին այնպես չքնաղ էր, որ ես բնավ չէի կասկածում, թե նա հաճելի կլինի հորս, եթե միայն կարողանայի միջոցներ գտնել ծնողիս ապացուցելու նրա ողջամտությունն ու պարկեշտությունը։ Մի խոսքով, ես հույս ունեի նրանից ստանալ Մանոնի հետ ամուսնանալու թույլտվությունը, որովհետև առանց նրա համաձայնության դա իրագործելն ինձ հուսահատություն պետք է պատճառեր։ Իմ մտադրությունը ես հայտնեցի Մանոնին և

հասկացրի նրան, որ բացի սիրո պարտականության զրպարտանքներից, պետք է այստեղ նկատի առնել նաև անհրաժեշտությունը, որովհետև մեր միջոցները չափազանց համեստ են, և ես սկսել եմ հրաժարվել այն մտքից, որ դրանք անսպառ են։

Մանոնն իմ այս առաջարկությունն ընդունեց սառնությամբ։ Սակայն ինձ թվում էր, թե նրա հարուցած դժվարությունները ծագում էին իր իսկ սիրալիր քնքշությունից և ինձ կորցնելու վախից, եթե հայրս՝ իմանալով հանդերձ մեր ապաստարանի տեղը, չտա իր հավանությունը մեր մտադրությունն իրագործելու համար։ Ես բնավ չկասկածեցի այն վտանգը, որն արդեն պետք է ինձ հարվածեր։ Անհրաժեշտության մասին ասված իմ պատճառաբանությանը նա պատասխանեց, որ մեր միջոցները տակավին կբավականացնեն մի քանի շաբաթ ևս ապրելու, և թե այնուհետև նա հույս ունի, որ կօգնեն իրեն սիրող գավառացի մի քանի ազգականներ, որոնց ուղում է դիմել նամակով։ Նա իր մերժումը քաղցրացրեց այնպիսի քնքուշ և տարփալի գգվանքներով, որ ես, շնչելով սոսկ նրանով և բնավ չտարակուսելով նրա սրտաբուխ անկեղծությանը, ուրախությամբ համաձայնեցի նրա բոլոր առարկումներին և որոշումներին։

Ես նրան էի հանձնել մեր դրամապանակի տնօրինությունը և առօրյա ծախսերը վճարելու հոգսը։ Քիչ ժամանակ անց նկատեցի, որ մեր սեղանը հետզհետե ճոխանում է, և որ Մանոնն իր համար մի քանի թանկագին հագուստներ է ձեռք բերել։ Գիտենալով, որ մեր դրամից հազիվ տասներկուտասնհինգ պիստոլ կարող է մնացած լինել, ես նրան հայտնեցի իմ զարմանքը՝ մեր կարողության ակնհայտ աճի առթիվ։ Ժպիտը երեսին՝ նա խնդրեց ինձ չանհանգստանալ։

— Քեզ չխոստացա՞,— ասաց նա,— որ ձեռք կբերեմ պետք եղած միջոցները։

— Ես նրան սիրում էի պատանեկան կատարյալ պարզությամբ, ուստի և դյուրությամբ տագնապահար չեղա։

Մի անգամ, կեսօրից հետո, ես դուրս էի եկել տնից, նախազգուշացնելով Մանոնին, թե կվերադառնամ սովորականից ուշ։ Վերադարձիս ինձ զարմացրեց այն հանգամանքը, որ դռան մոտ երկու-երեք բոպե ինձ սպասել տվին։ Մեզ ապաստարկում էր մի դեռատի աղջիկ, որը մոտավորապես մեր տարիքն ուներ։ Երբ նա դուռը բացեց, ես հարցրի, թե ինչու էր նա ինձ այդքան երկար սպասել տալիս։ Շփոթված՝ նա պատասխանեց, թե չի լսել, որ դուռը բախել են։ Ես դուռը ծեծել էի միայն մի անգամ, ուստի և նկատեցի։

— Եթե չեք լսել, ապա ինչո՞ւ բացեցիք։

Իմ հարցն այն աստիճան շփոթեցրեց նրան, որ նա, անընդունակ մի բան հնարելու, սկսեց լաց լինել և ինձ վստահեցնել, որ ինքը ոչ մի բանում մեղավոր չէ, այլ տիկինն է նրան արգելել դուռը բանալու, քանի դեռ պարոն դը Բ.-ն չի հեռացել մյուս սանդուղքով, որը դեպի տիկնոջ առանձնասենյակն է տանում։

Իմ հուզումն այնքան մեծ էր, որ ես ուժ չունեցա բնակարան մտնելու։ Ես որոշեցի դուրս գալ՝ պատրվակելով ինչ-որ մի գործ և հրամայեցի աղջկան տիկնոջը հայտնել, որ մի բուռն հետո կվերադառնամ, սակայն արգելեցի խոստովանել, թե ինձ հետ խոսել է պարոն դը Բ.-ի մասին։

Այնպիսի մի սուր վիշտ համակեց ինձ, որ երբ իջնում էի սանդուղքի աստիճաններով, արտասուքները հոսում էին իմ աչքերից, առանց իմանալու տակավին, թե ինչ զգացումներից են դրանք հորդել։

Ես մտա առաջին պատահած սրճարանը, նստեցի սեղանի մոտ և, գլուխս առած ափերիս մեջ, սկսեցի խորհել, թե ինչ է կատարվում իմ սրտում։ Ես չէի համարձակվում մտաբերել այն, ինչ հենց նոր լսել էի։ Ես ուզում էի դա մի պատրանք համարել և մի քանի անգամ պատրաստվեցի տուն վերադառնալ, առանց ցույց տալու Մանոնին, թե որևէ բան նկատել եմ։ Այն աստիճան անհնարին էր թվում, թե Մանոնը դավաճանած կլինի ինձ, որ վախենում էի իմ կասկածով վիրավորել նրան։ Ես նրան պաշտում էի, դա անտարակուսելի էր. ես նրանից շատ ավելի սիրո ապացույցներ էի ստացել, քան ինքս էի տվել։ Արդ, ի՞նչպես կարող էի մեղադրել նրան, որ նա ինձնից նվազ անկեղծ է և նվազ կայուն՝ իր սիրո մեջ։ Նա ի՞նչ շարժառիթ ուներ ինձ խաբելու։ Դեռ երեք ժամ սրանից առաջ նա ամենաքնքուշ փայփայանքներով էր պատել

ինձ և զմայլանքով ընդունել իմ փոխադարձ գուրգուրանքը. իմ սեփական սիրտը նրա սրտից ավելի լավ չէի ճանաչում։ «Ո՛չ, ո՛չ,— ասացի ինքս ինձ,— անհնար է, որ Մանոնն ինձ գավաճանած լինի։ Նա լավ գիտե, որ ես նրանով եմ ապրում. նա բնավ չի կասկածում, որ ես պաշտում եմ իրեն. իսկ դա առելու շարժառիթ չի կարող ծառայել»։

Այնուամենայնիվ, պարոն դը Բ.-ի այցը և գողունի փախուստը պղտորել էին մտքերս։ Ես հիշեցի նաև Մանոնի մանր-մունր գնումները, որոնք իմ կարծիքով գերազանցում էին մեր կարողությունը։ Սա կարծես վկայում էր նոր սիրեկանի առատաձեռնությունը։ Եվ ի՞նչ էր նշանակում նրա վստահությունը դեպի այն դրամական միջոցները, որոնք անհայտ էին ինձ։ Այս բոլոր առեղծվածներին ես չկարողացա տալ այն բավարար լուծումը, որպիսին տենչում էր իմ սիրտը։ Մյուս կողմից, Փարիզ փոխադրվելուց հետո ոչ մի րոպե նրան չէի հեռացրել իմ աչքից։ Զբոսնելիս, զվարճանալիս, զբաղվելիս մենք միշտ միասին ենք եղել։ Աստվա՜ծ իմ, մի րոպեի անջատումը մեզ անչափ վիշտ կարող էր պատճառել։ Մեզ անհրաժեշտ էր անդադար կրկնել, որ սիրում ենք միմյանց. առանց այս խոստովանության մենք վշտից կմեռնեինք։ Ուստի ես մի րոպե անգամ չէի կարող երևակայել, որ Մանոնն ինձնից բացի, ուրիշ մեկով տարված լինի։

Ի վերջո, ինձ թվաց, որ գտել եմ այս գաղտնիքի լուծումը։ «Պարոն դը Բ.-ն,— ասացի ինքս ինձ,— մեծ գործերով է զբաղվում և լայն կապեր ունի. երևի Մանոնի ծնողները նրա միջոցով Մանոնին որոշ գումար են փոխադրել։ Միգուցե նա արդեն նրանից դրամ է ստացել. այսօր էլ այդ պարոնը, երևի, եկել էր կրկին մի բան հանձնելու։ Անշուշտ, Մանոնը դիտմամբ է ինձնից թաքցրել այդ, որպեսզի հանկարծակիի բերի ինձ հաճելի անակնկալությամբ։ Եվ, թերևս, նա այդ մասին կպատմեր ինձ, եթե ես, սովորականի պես, մտած լինեի տուն, փոխանակ գալու այստեղ և վշտի մեջ թաղվելու։ Համենայն դեպս, նա ոչինչ չի թաքցնի ինձնից, եթե ինքս այդ մասին սկսեմ հարցնել»։

Ես այն աստիճան հափշտակվեցի այդ մտքով, որ դա խ.ստ մեղմացրեց վիշտս։ Անմիջապես տուն վերադարձա և

սովորական քնքշությամբ գրկեցի Մանոնին։ Նա քաղցրությամբ ընդունեց ինձ, սկզբում մտածեցի նրան հաղորդել իմ կասկածները, որոնք այժմ միանգամայն ստույգ էին թվում ինձ, սակայն այդ շարեցի, հուսալով, թե միգուցե նա կկանխի ինձ, պատմելով այն բոլորը, ինչ պատահել է։

Ընթրիքը մատուցեցին։ Ես սեղան նստեցի շատ ուրախ տրամադրված. սակայն իմ և Մանոնի միջև դրված մոմի լույսի տակ ինձ թվաց, թե թախիծ եմ տեսնում թանկագին սիրուհուս երեսին և աչքերի մեջ։ Նրա թախիծը համակեց և ինձ։ Ես նկատեցի, որ սովորականից տարբեր է ինձ վրա ուղղված նրա հայացքը։ Ես չէի կարողանում հասկանալ, թե ինչ է արտահայտում դա՝ սեր թե՞ կարեկցանք, թեև այդ ինձ թվում էր իբրև շոյող և քնքշանվաղ մի զգացում։ Այնուամենայնիվ, ես նույն ուշադրությամբ նայում էի նրան. թերևս նրա համար նույնպես հեշտ չէր դատել իմ սրտի վիճակի մասին, տեսնելով իմ հայացքը։ Մենք անկարող էինք ոչ խոսել և ոչ էլ ուտել։ Վերջապես արտասուքները հոսեցին նրա հիասքանչ աչքերից. կեղծ ու նենգ արտասուքներ։

— Ա՜խ, ասված իմ,— բացականչեցի ես,— դու լալիս ես, անգին Մանոն. դու վշտացած ես մինչ արտասվելու չափ և ինձ մի խոսք անգամ չես ասում քո ցավերի մասին։

Նա ինձ պատասխանեց միայն մի քանի հառաչանքներով, որոնք է՛լ ավելի սաստկացրին իմ անհանգստությունը։ Դողալով ոտքի կանգնեցի։ Իմ սիրո ամբողջ կորովով թախանձեցի նրան հայտնել ինձ իր արտասուքների պատճառը։ Դրանք սրբելիս ինքս էլ արտասվեցի։ Ես ավելի շուտ մեռած էի, քան կենդանի։ Բարբարոսն անգամ կզգացվեր իմ այդ վիշտն ու ա.հը տեսնելիս։

Այն միջոցին, երբ ես ամբողջապես զբաղված էի նրանով, լսեցի սանդուղքով բարձրացող մի քանի մարդկանց ոտնաձայն։ Դուռը թեթև բախեցին։ Մանոնը շտապ համբուրեց ինձ և, իմ գրկից դուրս պրծնելով, արագ իր սենյակը մտավ և իսկույն փակեց դուռը։ Ես կարծեցի, թե նա ուզում է եկող կողմնակի մարդկանցից թաքնվել՝ փոքր-ինչ անփույթ հագնված լինելու պատճառով։ Ինքս ոտացի բացելու։

Հազիվ էի դուռը բացել, երբ երեք մարդ ինձ բռնեցին.

խսկույն ճանաչեցի, որ դրանք իմ հոր սպասավորներն են։ Նրանք ինձ վրա բռնություն գործ չդրեցին, սակայն մինչ երկուսը բռնել էին իմ ձեռքերը, երրորդը խուզարկեց գրպաններս և այնտեղից հանեց մի փոքրիկ դանակ, որը իմ մոտ եղած միակ զենքն էր։ Նրանք ներողություն խնդրեցին, որ հարկադրված են ինձ հետ անբաղաքավարի վերաբերվելու և բացատրեցին, որ, հարկավ, այդ անում են հորս կարգադրությամբ։ Հետո ավելացրին, որ ներքևում կառքի մեջ ինձ սպասում է իմ մեծ եղբայրը։ Ես այնքան էի հուզված, որ առանց դիմադրության և առարկության թույլ տվի ինձ տանեն նրա մոտ։ Եղբայրս, իրոք, սպասում էր դրսում։ Ինձ նրա հետ կառք նստեցրին, և կառապանը, նախօրոք ստացած հրամանի համաձայն, ձիերը սրընթաց քշեց մինչև Սեն-Դրնի։ Եղբայրս քնքշանքով համբուրեց ինձ, սակայն մի խոսք անգամ չարտասանեց, այնպես որ ես միանգամայն ազատ կարող էի խորհել իմ դժբախտ վիճակի մասին։

Սկզբում ամեն ինչ ինձ ծայր աստիճան մթին ու անհասկանալի թվաց, և ես անկարող եղա որևէ ենթադրություն անել։ Դաժանաբար դավաճանել էին ինձ։ Սակայն ո՞վ։ Ամենից առաջ մտքովս անցավ Տիբերժը։ «Դավաճան,— ասացի ես,— բանդ բուրդ է, եթե կասկածներս արդարանան»։ Ես մտածեցի, որ նա չգիտե մեր բնակավայրի տեղը, ուստի և նրանից չէին կարող իմանալ, թե մենք Փարիզում ենք։ Մանոնին մեղադրել, սակայն իմ սիրտը չէր հանդգնում այդպիսի մեղադրանք անելու։ Թեև նրա արտասվոր տխրությունը, որից ասես նա ընկճված էր, նրա արտասուքները, սենյակ քաշվելուց առաջ ինձ տված քնքուշ համբույրը առեղծվածային էին թվում ինձ, սակայն ես պատրաստ էի այդ բոլորը բացատրել մեր երկուսի մոտալուտ դժբախտության նախազգացումով. մինչ ես հուսաբեկ մորմոքում էի շարաբաստիկ պատահականությունից, որն ինձ անջատել էր Մանոնից, բայց տակավին դյուրահավատությամբ երևակայում էի, թե նա ավելի շատ է կարոտ կարեկցության, քան ես։

Իմ մտորումները ինձ բերին այն համոզման, որ Փարիզի փողոցներում ինձ տեսել են ինչ-որ ծանոթ մարդիկ և հաղորդել հորս։ Այս միտքն ինձ սփոփեց։ Ես հույս ունեի պրծնել

սուսկ կշտամբանքներով կամ այլ թեթև պատժով, որ պետք է կրեի հանուն հայրական հեղինակության։

Որոշեցի ամեն ինչ տանել համբերությամբ և խոստանալ այն, ինչ ինձնից կպահանջեն, որպեսզի, երբ առիթը ներկայանա, առանց դժվարության, արագ վերադառնամ Փարիզ՝ իմ կյանքն ու երջանկությունը սիրելի Մանոնին նվիրաբերելու։

Մենք շատ շուտ հասանք Սեն-Դրնի։ Զարմացած իմ լռությունից, եղբայրս կարծել էր, թե դա հետևանք է վախի։ Նա սկսեց ինձ մխիթարել, հավատացնելով, թե կարող եմ չվախենալ հորս խստասրտությունից, միայն անհրաժեշտ է, որ ես սակավ առ սակավ գիտակցեմ իմ որդիական պարտականությունները և ջանամ արժանի լինել հորս՝ դեպի ինձ տածած սիրուն։ Եղբայրս կարգադրեց, որ գիշերն անցկացնենք Սեն-Դրնիում և զգուշության համար երեք սպասավորներին էլ հրամայեց քնել իմ սենյակում։

Ես սուր ցավ զգացի, երբ նորից ինձ գտա հենց այն պանդոկում, ուր իջևանել էինք Մանոնի հետ Ամիյենից Փարիզ գնալիս։ Պանդոկապետը և սպասավորներն ինձ ճանաչեցին և միևնույն ժամանակ զուշակեցին իմ արկածախնդրության ճիշտ պատմությունը։ Ես լսեցի, թե ինչպես սպասավորներից մեկն ասում էր տիրոջը. «Ա՜խ, սա այն գեղեցիկ պարոնն է, որ վեց շաբաթ սրանից առաջ այստեղից անցնում էր մի սիրունիկ օրիորդի հետ։ Որքա՜ն նա սիրում էր նրան։ Որքա՜ն հրաշագեղ էր այն աղջիկը։ Խե՜ղճ երեխաներ, ինչպես էին նրանք զուրգուրում միմյանց։ Աստված վկա, շատ ցավալի է, որ նրանց անջատել են»։ Ես այնպես ձևացրի, թե ոչինչ չեմ լսում և աշխատեցի հնարավորին չափ քիչ երևալ մարդկանց աչքին։

Սեն-Դրնիում եղբորս սպասում էր երկտեղանի մի կառեթ, մենք մեկնեցինք վաղ առավոտյան և մյուս օրը երեկոյան դեմ հասանք տուն։ Եղբայրս ինձնից առաջ տեսակցեց հորս հետ, երևի նրան հոգուտ ինձ տրամադրելու համար, պատմելով, թե ինչպիսի հեղությամբ ու առանց դիմադրության ես թույլ եմ տվել, որ ինձ տուն տանեն։ Հայրս ինձ ընդունեց նվազ խստությամբ, քան ես սպասում էի։ Նա բավա-

կանացավ սովորական հանդիմանանքով իմ պարտադանգրությունն և առանց իր թույլտվության տնից բացակայած լինելու համար։ Իսկ իմ սիրուհու մասին ասաց, որ ինձ հետ պատահածն արժանի հատուցումն է եղել այն բանի համար, որ ես անզգուշորեն հրապուրվել եմ անծանոթ աղջկանով։ Նա ավելացրեց, թե առաջ ավելի լավ կարծիք ուներ իմ խոհեմության մասին։ սակայն հույսով է, որ այս փոքրիկ արկածից հետո ես ավելի կկենտրոնանամ։ Նրա խոսքերին ես տվի իմ դիտավորություններին համապատասխանող նշանակություն։ Ես շնորհակալություն հայտնեցի հորս՝ ինձ ներելու բարեսրտության համար և խոստացա ապագայում ավելի հեզ ու վայելուչ վարք ունենալ։ Սրտիս խորքում ես ցնծում էի, որովհետև իրերի ընթացքից բնավ չէի կասկածում, որ նույն գիշերն ևեթ լուսաբացից առաջ հնարավորություն պիտի ունենամ տնից անհետանալու։

Սեղանը պատրաստ էր, և մենք նստեցինք ընթրիքի։ Սկսեցին ինձ ծաղրել՝ Ամիյենում տարած հաղթությանս և իմ հավատարիմ սիրուհու հետ փախչելուս համար։ Ես սիրալիր ներողամտությամբ ընդունեցի հարվածները. նույնիսկ անչափ գոհ էի, որ ինձ թույլտվություն է ընձեռվում զրուցելու միտքս անդադար զբաղեցնող առարկայի մասին։ Սակայն հորս շրթներից թռած մի քանի խոսքեր ստիպեցին ինձ միանգամայն լարել ուշադրությունս։ Նա փոսեց նենգության և պարոն դը Բ.-ի շահախնդիր ծառայության մասին։ Ես շշմեցի, երբ հորիցս լսեցի այս խոսքերը և խոնարհաբար խնդրեցի ավելի պարզ բացատրել, թե նա ինչ է ուզում ասել։ Դառնալով դեպի եղբայրս, նա հարցրեց, մի՞թե ինձ չի պատմել ողջ եղելությունը։ Եղբայրս պատասխանեց, որ ես ճանապարհին այն ատիճան հանգիստ եմ պահել ինձ, որ նա մտածել է, թե բնավ կարիք չկա դիմելու այդ միջոցին՝ ինձ իմ անմտությունից բուժելու համար։ Նկատեցի, որ հայրս երկընտրանքի մեջ է. պե՞տք է արդյոք ամեն ինչ պարզել, թե ոչ։ Սակայն ես այնպես թախանձագին խնդրեցի նրան, որ նա բավարարեց իմ հետաքրքրությունը կամ, ավելի շուտ, անգթորեն ինձ ոչնչացրեց ամենասարսափելի մի պատմությամբ։

Նախ՝ նա հարցրեց մի՞թե ես միշտ միամտորեն հավատացել եմ, թե սիրուհիս հավատարիմ է ինձ։ Ես ամենայն համարձակությամբ պատասխանեցի, որ դրանում այն ատիճան վստահ եմ, որ ոչ մի բան չի կարող ամենաթեթև կասկածն անգամ հարուցել իմ մեջ։

— Հա՞, հա՞, հա՞, սքանչելի է,—բացականչեց հայրս անդուսպ քրքիջով,— որքան միամիտ ես ու դյուրահավատ։ Զվարճալի ես քո զգացումներով։ Զափազանց ցավալի է, իմ խեղճ ասպետ, որ կոչված ես Մալտայի կարգը մտնելու, քանի որ բավական հակում ես ցույց տալիս համբերատար ու հարմարվող ամուսին լինելու։— Եվ այսպիսի անգութ խոսքերով նա դեռ երկար ծաղրեց իմ հիմարությունն ու դյուրահավատությունը, ինչպես ինքն էր ասում։

Վերջապես, տեսնելով, որ ես համառում եմ լռության մեջ, նա շարունակեց ինձ բացատրել, որ իմ Ամիյենից մեկնելուց հետո անցած ժամանակի հաշվի համաձայն, Մանոնն ինձ սիրած պիտի լինի մոտավորապես տասներկու օր։

— Որովհետև,— ավելացրեց նա,— գիտեմ, որ Ամիյենից դու մեկնեցիր անցյալ ամսի 28-ին. այսօր ամսի 29-ն է. պարոն դը Բ.-ի նամակը ես ստացել եմ տասնմեկ օր առաջ. ենթադրում եմ, որ նրան ութ օր էր պետք, որպեսզի կարողանար ծանոթանալ քո սիրուհու հետ։ Այսպես, ուրեմն, եթե ութը և տասնմեկը հանենք երեսունմեկից,— մի ամսի 28-ից մինչև մյուս ամսի 29-ը տեսած ժամանակը,— կմնա տասներկու կամ մոտավորապես այդքան։— Այս խոսքերից հետո քրքիջի պոռթկումները էլ ավելի սաստկացան։

Այս բոլորը լսելիս սիրտս ճմլվում էր, և ես վախենում էի, թե այլևս ի վիճակի չեմ լինի դիմանալու մինչև սույն տխուր կատակերգության վերջը։

— Իմացիր ուրեմն,— շարունակեց հայրս,— եթե ինքդ չգիտես, որ պարոն դը Բ.-ն նվաճել է քո իշխանուհու սիրտը։ Իհարկե, նա ծաղրում է ինձ, երբ ուզում է համոզել, որ կամեցել է քեզնից հափշտակել սիրուհուդ՝ ինձ ծառայություն մատուցելու անշահախնդիր ցանկությունից միայն դրդված։ Այդպիսի մի մարդուց, որը նույնիսկ անծանոթ է ինձ, չպետք է սպասել այդքան վեհ զգացումներ։ Նա քո սի-

բուհուց իմացել է, որ դու իմ որդին ես, և որպեսզի ազատվի քո անցանկալի ներկայությունից, ինձ գրել է բնակավայրիդ հասցեն և քո անկարգ կյանքի մասին, միաժամանակ հասկացնելով, որ անհրաժեշտ է խիստ միջոցներ գործադրել քեզ այնտեղից բռնի հեռացնելու համար։ Նա ինձ առաջարկում էր իր աջակցությունը՝ քեզ ձերբակալելու միջոցները դյուրացնելու համար և միայն նրա և քո սիրուհու ցուցմունքների շնորհիվ եղբորդ հաջողվեց քեզ հանկարծակիի բերել և տուն վերադարձնել։ Դու կարող ես այժմ շնորհավորել քեզ՝ տարածդ հաղթանակի տակականության առթիվ։ Դու ընդունակ ես մեծ արագությամբ հաղթություն տանելու, ասպետս։ Սակայն չես կարող քո նվաճումները պահպանել։

Ես չկարողացա ավելի երկար տանել հորս ճառախոսությունը, որի յուրաքանչյուր խոսքը խոցում էր սիրտս։ Սեղանից վեր կացա և հազիվ շորս քայլ էի արել՝ սենյակից դուրս գալու համար, երբ ուշաթափ ու անզգա ընկա հատակին։ Շնորհիվ ցույց տված արագ օգնության, ես շուտով ուշքի եկա։ Բացեցի աչքերս, որ արցունքի հեղեղներ թափեմ, բերանս՝ որ վշտագին ու սրտառուչ տրտունջներ ասեմ։ Հայրը, որ միշտ կաթոգին սիրել էր ինձ, ամենայն քնքշանքով աշխատում էր մխիթարել։ Ես լսում էի նրան, սակայն չէի հասկանում արտասանած խոսքերը։ Ես ծունկ չոքեցի նրա առջև և, ձեռքերս վեր բարձրացրած, աղերսեցի թույլատրել գնալ Փարիզ՝ պարոն դը Բ.-ին սրախողխող անելու։

— Ոչ,— ասում էի ես,— նա չի նվաճել Մանոնի սիրտը, նա բռնություն է գործ դրել նրա վրա, հրապուրել է նրան որևէ կախարդանքով կամ թույնով, թերևս կոպտությամբ բռնաբարել է նրան։ Մանոնն ինձ է սիրում։ Մի՞թե ես չգիտեմ այդ։ Պարոն դը Բ.-ն դաշույնը ձեռին սպառնացել է նրան, որպեսզի հարկադրի ինձ լքելու։ Նա ամեն մի միջոցի դիմած կլինի՝ ինձնից հափշտակելու իմ անմման սիրուհուն։ Ախ, ասվա՜ծ իմ, ասվա՜ծ իմ, մի՞թե կարելի է, որ Մանոնն ինձ դավաճանած լինի և սիրելուց դադարած։

Ես անընդհատ կրկնում էի, թե ուզում եմ շուտափույթ վերադառնալ Փարիզ, և նույնիսկ ամեն անգամ այդ ասելիս տեղիցս վեր էի կենում։ Հայրս համոզվեց, որ այդպես մո-

լեգնած ես ոչ մի միջոցի առաջ կանգ չեմ առնի։ Տան վերնահարկում նա ինձ մի սենյակ հատկացրեց և մոտս թողեց երկու սպասավորների, որպեսզի աչալուրջ հսկեն։ Այլևս ինձ չէի տիրապետում։ Ես պատրաստ էի հաղար կյանք զոհաբերելու, միայն թե քառորդ ժամով Փարիզում գտնվեմ։ Հասկացա, որ այդքան բացահայտ իմ դիտավորությունը հայտնելուց հետո ինձ հեշտությամբ թույլ չեն տա սենյակից դուրս գալու։ Ես աչքով չափեցի լուսամուտների բարձրությունը և, երբ տեսա, որ այս կերպ ոչ մի հնար չկա փախչելու, մեղմությամբ խոսեցի իմ պահակների հետ։ Հազար երդումներով նրանց խոստացա հետագայում առատաձեռն վարձատրել, եթե արգելք չլինեն իմ փախուստին։ Աղաչեցի, հորդորեցի, սպառնացի, սակայն իմ այս փորձն էլ անօգուտ անցավ։ Սրանից հետո ես կտրեցի ամեն հույս։ Որոշեցի մեռնել և ինձ անկողին նետեցի՝ միայն մահիցս հետո այն թողնելու մտադրությամբ։ Այս դրության մեջ անցկացրի գիշերը և հետևյալ օրը։ Մյուս առավոտ ինձ բերած կերակրից հրաժարվեցի։

Կեսօրից հետո հայրս եկավ ինձ տեսնելու։ Նա բարեսրտությամբ աշխատեց ամենաքաղցր մխիթարական խոսքերով մեղմացնել իմ տառապանքները։ Նա այնպես վճռականորեն հրամայեց մի բան ուտել, որ ես հնազանդվեցի՝ հարգանքից դրդված։ Մի քանի օր ես սնունդ էի ընդունում միայն հորս ներկայությամբ և նրան հնազանդվելու համար։ Նա անդադար շարունակում էր պատճառաբանություններ առաջ բերել, որոնք ի վիճակի լինեին վերադարձնել իմ առողջ դատողությունը և արհամարհանք ներշնչել ինձ դեպի անհավատարիմ Մանոնը։ Ճիշտ է, ես այլևս Մանոնին չէի հարգում. ինչպե՞ս կարող էի հարգել բոլոր արարածներից ամենաթեթևամտին, ամենանենգին։ Սակայն նրա պատկերը, հմայուն դիմագծերը, որոնք կրում էի սրտիս խորքում, նախկինի պես հարատևում էին այնտեղ։ «Թող ես մեռնեմ,— ասում էի ինքս ինձ,— դա նույնիսկ անհրաժեշտ է այսքան ամոթից և տառապանքներից հետո. ես կարող եմ հազար մահ տանել, բայց չպիտի կարողանամ մոռանալ ապերախտ Մանոնին»։

Հայրս զարմացած էր, տեսնելով, որ ես տոչորվում եմ

խորտակված սիրով։ Նա գիտեր իմ սկզբունքները պատվի խնդրում և չկասկածելով, որ Մանոնի դավաճանությունը պիտի ստիպի ինձ արհամարհել նրան, նա կարծեց, թե իմ սիրո հարատևությունը առաջ է գալիս ոչ թե այն մասնավոր կըրքից, որ ես տածում եմ դեպի Մանոնը, այլ ընդհանրապես դեպի կանայք ունեցած իմ հակումից։ Նա այն աստիճան հաստատուն կառչեց այս մտքին, որ դրված դեպի ինձ տածած քնքուշ զգացումից, մի անգամ մոտս եկավ այդ կարծիքն ինձ հաղորդելու։

— Ասպետս,— ասաց նա,— մինչև հիմա ես փափագում էի, որ դու կրես Մալտայի խաչը, սակայն տեսնում եմ, որ դու ուրիշ հակումներ ունես։ Դու սիրում ես գեղեցիկ կանայք, ես պատրաստ եմ գտնել մեկը, որը դուր գա քեզ։ Ասա անկեղծորեն, ինչ ես մտածում այս մասին։

Ես նրան պատասխանեցի, որ այլևս ոչ մի տարբերություն չեմ տեսնում կանանց միջև, և ինձ հետ պատահած դժբախտությունից հետո նրանց բոլորովին հավասարապես արհամարհում եմ։

— Ես քեզ համար կգտնեմ մեկը,— ժպտերես շարունակեց հայրս,— որ Մանոնին նման լինի, բայց լինի նաև ավելի հավատարիմ։

— Ա՜խ, եթե դուք սիրում եք ինձ և բարիք եք կամենում,— ասացի ես նրան,— ապա վերադարձրեք ինձ իմ Մանոնին, միայն նրան։ Հավատացնում եմ ձեզ, սիրելի հայր, որ նա ինձ չի դավաճանել, նա անընդունակ է այդքան անգութ ու դաժան ստորության։ Մեզ բոլորիս՝ ձեզ, ինձ, Մանոնին, խաբում է Ենենգամիտ պարոն դը Բ.-ն։ Եթե միայն դուք գիտենայիք, թե որքան քնքուշ ու անկեղծ է Մանոնը, եթե դուք նրան ճանաչեք, ինքներդ կսիրեք նրան։

— Դու դեռ երեխա ես,— առարկեց հայրս։— Ինչպես կարող ես այդ աստիճան կուրացած լինել այն ամենից հետո, ինչ ես պատմեցի նրա մասին։ Հենց նա ինքն է քեզ հանձնել քո եղբորը։ Դու պետք է մոռանաս նրան, մոռանաս նրա անունն անգամ, և ջանաս, եթե ողջախոհ ես, օգտվել քո հանդեպ ունեցած իմ ներողամտությունից։

Ինձ համար միանգամայն ակներև էր, որ հայրս իրա-

վացի է։ Սոսկ անդիտակցական մի զգացում էր ինձ դրդում պաշտպանել դավաճան սիրուհուս։

— Ավա՜ղ,— բացականչեցի ես, վայրկենական լռությունից հետո,— միանգամայն անտարակույս է, որ ես ամենատոր դավաճանության դժբախտ զոհն եմ։ Այո,— շարունակեցի ես, զայրույթից հորդառատ արցունքներ թափելով,— տեսնում եմ, որ տակավին երեխա եմ։ Նրանց համար բնավ դժվար չէր խաբել իմ դյուրահավատությունը։ Սակայն ես այժմ գիտեմ, թե ինչ պետք է անեմ, որպեսզի նրանցից առնեմ իմ վրեժը։

Հայրս կամեցավ իմանալ իմ մտադրությունը։

— Կգնամ Փարիզ,— ասացի ես,— կհրդեհեմ դը Բ.-ի տունը և նրան նենգ Մանոնի հետ միասին կայրեմ ողջ-ողջ։

Իմ բարկության պոռթկումը ծիծաղ պատճառեց հորս և միայն ափի եղավ, որ ինձ սենյակում առավել խստությամբ հսկեն։

Այնտեղ արգելափակված մնացի վեց ամիս, առաջին ամսում մտադրություններս մեծ փոփոխություններ չկրեցին։ Իմ բոլոր զգացումները սոսկ ատելության ու սիրո, հույսի ու վհատության մի անընդհատ շղթա էին կազմում, նայած թե ես մտքումս ինչպես էի պատկերացնում Մանոնին։ Մերթ ես նրան պատկերացնում էի որպես բոլոր աղջիկներից ամենահմայիչը և այրվում էի նրան տեսնելու ցանկությունից, մերթ՝ իբրև ստոր ու նենգ մի սիրուհի և երդվում էի գտնել նրան՝ միայն պատժելու նպատակով։

Ինձ գրքեր տվին, որոնք փոքր-ինչ նպաստեցին հոգուս անդորրությանը։ Ես նորից կարդացի իմ սիրած բոլոր հեղինակների երկերը, ծանոթացա նոր հեղինակների հետ, նորից անսահման սեր զգացի դեպի ուսումը։ Դուք կտեսնեք, թե այս պարագան ինչպես օգնեց ինձ հետագայում։ Սերը հաշակած, ես պարզ ըմբռնեցի Հորացիոսի և Վիրգիլիոսի ստեղծագործությունների բազմաթիվ հատվածներ, որոնք մինչ այդ ինձ համար անհասկանալի էին։

Ես սիրային մեկնաբանություն շարադրեցի «Էնեականի» չորրորդ գլխի մասին։ Որոշել եմ հրատարակել և հույս ունեմ, որ ընթերցողները գոհունակությամբ կընդունեն այն։

— Ավա՜ղ, ասում էի ես այդ շարադրելիս, —հավատարիմ Դիգոնին իմ սրտի նման սիրտ էր պետք։

Մի անգամ իմ արգելարանում ինձ այցելելու եկավ Տիբերժը։ Ես զարմացա, տեսնելով այն ցնծությունը, որով նա գրկախառնվեց ինձ հետ։ Մինչ այդ՝ դեպի ինձ տածած նրա սիրո մասին ես ուրիշ ապացույցներ չունեի, որոնք դրդեին ինձ այն ընդունել ոչ իբրև հասարակ դպրոցական մտերմություն, ինչպիսին հաստատվում է մոտավորապես միևնույն տարիքի պատանիների միջև։ Նա այն աստիճան փոխված և առնացած էր անցած հինգ կամ վեց ամսվա ընթացքում, որ նրա դեմքն ու խոսելու եղանակն ինձ հարգանք ներշնչեցին։ Նա ինձ հետ խոսեց ավելի շուտ որպես իմաստուն խորհրդատու, քան դպրոցական բարեկամ։ Ցավ հայտնեց իմ մոլորության առթիվ. շնորհավորեց իմ ամոթոտությունը, որը բարեհաջող էր համարում։ Վերջապես նա ինձ հորդորեց օգուտ քաղել իմ պատանեկան մոլությունից, աչքերս բանալով հաճույքների ունայնության առաջ։ Ես զարմանքով էի նայում նրան։ Տիբերժն այդ նկատեց։

— Սիրելի ասպետս,— դարձավ նա ինձ,— ձեզ այնպիսի բան չեմ ասում, որ կատարելապես ճշմարիտ չլինի և որի ստուգության մեջ ինքս համոզված չլինեմ լուրջ ինքնաքննությամբ։ Ես ձեզանից նվազ հակում չեմ ունեցել դեպի զգայասիրությունը, սակայն երկինքը ինձ շնորհել է միևնույն ժամանակ և առաքինության սեր։ Ես դիմեցի իմ բանականությանը, որպեսզի համեմատեմ թե՛ մեկի և թե՛ մյուսի տված օգուտը։ Ես առանց հապաղելու ճանաչեցի նրանց տարբերությունը։ Երկինքը միացրեց իր օգնությունն իմ խորհրդածություններին։ Դեպի աշխարհն իմ մեջ ծագեց մի արհամարհանք, որը գերազանց է ամեն բանից։ Ասեմ ձեզ, թե ինչն է ինձ ստիպում մնալ այստեղ,— ավելացրեց նա,— և ինչն է ինձ արգելք հանդիսանում նվիրելու ինձ մենակյաց կյանքին։ Միմիայն զեղի ձեզ տածած քնքուշ բարեկամությունս։ Ես ճանաչում եմ ձեր սրտի և մտքի վսեմ հատկությունները։ Չկա այնպիսի բարություն, որը դուք ընդունակ չլինեք կատարելու Հաճույքի թույնը ձեզ մոլորեցրել է ուղիղ ճանապարհից. ինչպիսի՞ կորուստ առաքինության համար։ Ամիյենից ձեր

փախուստն այնքա՞ն վիշտ պատճառեց ինձ, որ այդ օրից ի վեր մի ուրախ րոպե չեմ ունեցել։ Այդ մասին դուք կարող եք դատել իմ ձեռնարկած քայլերից։

Նա ինձ պատմեց, որ երբ նկատել է իմ նրան խաբելն ու սիրուհուս հետ փախչելը, ձի է նստել ինձ հետևելու, բայց որովհետև ես չորս-հինգ ժամ նրանից առաջ էի մեկնել, չի կարողացել հասնել ինձ։ Այնուամենայնիվ, նա Սեն-Դրնի է հասել իմ այնտեղից մեկնելուց կես ժամ հետո, հավատացած լինելով, որ կիջևանեմ Փարիզում։ Փարիզում նա մնացել է վեց շաբաթ՝ ինձ ապարդյուն որոնելով։ Եղել է այն բոլոր վայրերում, ուր հույս է ունեցել ինձ հանդիպել և վերջապես մի անգամ թատրոնում ճանաչել է իմ սիրուհուն. նրան տեսել է այնպիսի շքեղ զգեստներով, որ մտածել է, թե նա գրանք պարտական է մի նոր սիրեկանի։ Նա հետևել է նրա կառքին մինչև տուն և այնտեղ ծառայից իմացել, որ Մանոնն ապրում է պարոն դը Բ.-ի շնորհներով։

— Ես դրանով չբավարարվեցի,— շարունակեց նա,— հետևյալ օրը նորից վերադարձա, որպեսզի իրենից իմանամ, թե ինչ է պատահել ձեզ։ Նա իսկույն հեռացավ ինձնից, հենց որ լսեց ձեր անունը, և ես ստիպված եղա առանց որևէ տեղեկության վերադառնալ գավառ։ Այնտեղ ես իմացա ձեր արկածի և այն վհատության մասին, որի մեջ ընկել եք։ Սակայն ես չէի ցանկանում ձեզ տեսնել, մինչև չհամոզվեի, որ ձեզ կգտնեմ մի ավելի անդորր վիճակում։

— Ուրեմն դուք տեսե՞լ եք Մանոնին,— ասացի ես հառաչանքով։— Ավա՜ղ, դուք ինձնից երջանիկ եք, որովհետև ես դատապարտված եմ երբեք չտեսնելու նրան։ Տիբերժն ինձ հանդիմանեց իմ հառաչանքի համար, որովհետև դա վկայում էր տակավին Մանոնի հանդեպ ունեցած իմ թուլությունը։ Նա այնպիսի մի ճարպիկ փափկանկատությամբ շոյեց իմ հեզահամբույր բնավորությունն ու բարի հակումները, որ այդ առաջին իսկ այցից հետո իմ մեջ բուռն ցանկություն ծագեց՝ նրա պես հրաժարվել աշխարհի բոլոր վայելքներից և անցնել հոգևոր դասը։

Այս միտքն այն աստիճան գրավեց ինձ, որ երբ մենակ էի մնում, այլևս ուրիշ բանի մասին չէի մտածում։ Վերհիշեցի

Ամիյենի եպիսկոպոսի խոսքերը, երբ նա ինձ նույն խորհուրդն էր տալիս և երջանիկ ապագա կանխատեսում՝ հոգևոր աստիճան ընդունելու դեպքում։ Բարեպաշտությունը նույնպես նպաստեց իմ դիտավորությանը։ «Հելոթ ու քրիստոնիային վայել կյանք կվարեմ,— ասում էի ինքս ինձ,— կնվիրվեմ ուսմանն ու կրոնին, և այս պարագան ինձ թույլ չի տա մտածելու սիրո վտանգալից վայելքների մասին։ Ես կարհամարհեմ այն ամենը, ինչ գայթակղեցնում է հասարակ մարդկանց, որովհետև զգում եմ, որ իմ սիրտը պիտի տենչա միայն այն, ինչ հարգելի է. ես կունենամ նույնքան քիչ հոգսեր, որքան և ցանկություններ»։

Ընդամին կանխօրոք մի անդորր ու մենակյաց կյանքի ծրագիր կազմեցի։ Դա ես պատկերացնում էի որպես մեկուսացած մի տնակ՝ պարտեզի ետևում պուրակով ու ջինջ առվակով. մի գրադարան՝ ընտիր գրքերով. մի քանի առաքինի ու ողջամիտ բարեկամների մտերիմ խմբակ. մաքուր, սակայն չափավոր ու պարզ սնունդ։ Այս ծրագրին ես միացնում էի նամակագրություն Փարիզում ապրող մի բարեկամի հետ, որը պիտի հաղորդեր ինձ հասարակական նորություններ ոչ այնքան իմ հետաքրքրությունը բավարարելու, որքան մարդկանց անմիտ հույզերով ինձ զվարճացնելու նպատակով։ «Մի՞թե երջանիկ չպիտի լինեմ,— ավելացրի ես։— Մի՞թե իմ բոլոր տենչերը չպիտի իրագործվեն»։ Անկասկած այս ծրագիրը չափից դուրս շոյում էր իմ հակումները։ Սակայն այդքան խելոք իմ ապագա կյանքի պատկերը կառուցելուց հետո ես զգում էի, որ սիրտս անձկում է դեռ մի ուրիշ բան էլ, և որպեսզի իմ գերազանցորեն հմայիչ մենության մեջ ոչ մի բանի պակասություն չզգամ, ինձ անհրաժեշտ էր հետս տանել և Մանոնին։

Մինչ Տիբերժը շարունակում էր հաճախ այցելել ինձ, ամրացնելու համար իմ այդ դիտավորությունը, որ նա էր ներշնչել, ես այդ մասին մի անգամ հաղորդեցի հորս։ Նա ասաց, որ իր սկզբունքն է որդիների ազատ կամքին թողնել իրենց ապագա վիճակի ընտրությունը, և ինչ էլ որ լինի իմ դիտավորությունը, նա իրեն վերապահում է միայն խորհուրդներով ինձ օգնելու իրավունքը։ Նա մի քանի վերին

աստիճանի իմաստալից խրատներ տվեց, որոնց նպատակն էր ոչ այնքան ինձ ետ պահել իմ մտադրությունից, որքան դրդել՝ այն իրագործել գիտակցաբար։

Ուսումնական տարվա սկիզբը մոտենում էր։ Տիբերժի հետ մենք պայմանավորվեցինք միասին Սեն-Սյուլպիս սեմինարիա մտնել— նա՝ իր աստվածաբանական ուսումը ավարտելու, իսկ ես՝ իմը սկսելու համար։ Նրա արժանիքները հայտնի էին թեմական եպիսկոպոսին, և դրանց շնորհիվ Տիբերժը դեռ մեր մեկնումից առաջ մեծ բենեֆիցիա ստացավ այդ պրելատից։

Հայրս, ենթադրելով, որ ես բոլորովին ապաքինվել եմ կրքից, առանց դժվարության ինձ թույլ տվեց մեկնելու։ Մենք ժամանեցինք Փարիզ։ Հոգևոր հանդերձը փոխարինեց Մալտայի խաչին և աբբա դե Գրիյո անունը՝ ասպետի կոչմանը։ Ես այնպիսի ջանասիրությամբ սկսեցի սովորել, որ մի քանի ամսվա ընթացքում արտակարգ առաջադիմություն ցույց տվի։ Մասամբ գիշերներն էլ էի զբաղվում, իսկ օրվա մեջ մի րոպե անգամ ապարդյուն չէի կորցնում։ Իմ համբավը այնպիսի մեծ աղմուկ հանեց, որ ինձ արդեն շնորհավորում էին ապագա բարձր աստիճանի համար, որը, անկասկած, ստանալու էի։ Առանց իմ խնդրատվության, անունս մտցվեց բենեֆիցիաների ցանկը։ Բարեպաշտությունն էլ ես աչքաթող չէի արել. խանդավառությամբ կատարում էի ամեն մի կարգ ու կանոն։ Տիբերժը զմայլված էր՝ իր ջանքերին վերագրելով այս ամենը, և ես բաղմիցս նկատեցի, որ նա արտասուք է թափում, իրեն շնորհավորելով, ինչպես ինքն էր ասում, ինձ դավանադարձ անելու առիթով։

Որ մարդկային դիտավորությունները ենթակա են փոփոխության, դա ինձ երբեք չի զարմացրել. մի կիրք հարուցում է նրանց, մինչդեռ մյուսը կարող է ոչնչացնել։ Սակայն, երբ մտածում եմ իմ դիտավորությունների սրբության մասին, որոնք ինձ առաջնորդել էին Սեն-Սյուլպիս, և այն խոր բերկրանքի մասին, որ երկինքն ինձ ճաշակել էր տալիս դրանց իրագործման առթիվ, ես սարսում եմ, թե որքան դյուրությամբ կարողացա դրանք խորտակել։ Եթե ճշմարիտ է, որ երկնային օգնությունը յուրաքանչյուր րոպեում համաչափ է

կրքերի ուժին, ապա թող ինձ բացատրեն, թե ինչ չարաբաստիկ ներգործությամբ են մարդիկ խուսափում իրենց ճշմարիտ պարտականությունից, առանց դիմադրություն ցույց տալու և առանց ամենաաննշան խղճի խայթ անգամ զգալու։

Ես ենթադրում էի, թե միանգամայն ազատվել եմ դեպի սերն ունեցած իմ թուլություններից։ Ինձ թվում էր, թե այսուհետև ես սուրբ Ավգուստինոսի երկերից մի էջ կարդալը կամ քառորդ ժամ քրիստոնեական մտորումների մեջ խորասուզվելը կդերադասեմ զգայական բոլոր հաճույքներից, չբացառելով և այնպիսիները, որոնք կարող էր ինձ պատճառել Մանոնը։ Սակայն մի չարաբաստիկ ակնթարթ ինձ նետեց անդունդը, և իմ անկումը առավել ևս անդարձ եղավ։ Այսպիսով, հանկարծ ինձ գտնելով նույն խորության մեջ, որից դուրս էի եկել, ես նոր և ավելի մեծ մոլորությունների մեջ ընկա, որոնք ինձ անդունդի ամենախորքը նետեցին։

Մոտ մի տարի ես անցկացրի Փարիզում, առանց Մանոնի մասին տեղեկանալու։ Սկզբում ինձ համար դժվար էր մաքառել փորձության դեմ։ Սակայն Տիբերժի մշտական խորհուրդներն ու իմ սեփական խորհրդածություններն ինձ օգնեցին հաղթանակելու։ Վերջին ամիսներն այնքան անվրդով էին սահել, որ թվում էր, թե շուտով ես առհավետ կմոռանամ այն չքնաղ ու նենգ աքարածին։ Հասավ ժամանակը, երբ պարտավոր էի հրապարակական քննություն տալու աստվածաբանության դպրանոցում։ Ես դիմեցի մի քանի ականավոր մարդկանց, խնդրելով, որ իրենց ներկայությամբ մեծարեն իմ քննությունները։ Այսպիսով, իմ անունը տարածվեց Փարիզի բոլոր թաղամասերում և հասավ ուխտադրուժ սիրուհուս ականջին։ Նա միանգամից ստուգությամբ չճանաչեց այն՝ արբա տիտղոսի անվան տակ. սակայն բոլորովին չսպասված հետաքրքրությունը կամ թերևս ինձ դավաճանած լինելու զգացումը (երբեք չեմ կարողացել իմանալ, թե այս զգացումներից իրոք որ մեկը) դրդեց նրան հետաքրքրվել մի անունով, որն այնքան նման էր իմ անվան։ Ուրիշ մի քանի տիկինների հետ նա էլ եկավ Սորբոն։ Նա ներկա գտնվեց իմ քննությանը և, անկասկած, առանց դժվարության ճանաչեց ինձ։

Ես ոչինչ չգիտեի նրա այցի մասին։ Բոլորին հայտնի է, որ

Սորբոնի քննության դահլիճներում առանձին խուցեր են հատկացվում կանանց, որոնք մյուս հանդիսատեսներից թաքնված՝ նստում են շերտափեղկերի հետևը։ Ես դպրանոց վերադարձա փառքով պսակված և բարեմաղթությունների ու հաճույախոսությունների տարափի տակ։ Երեկոյան ժամը վեցն էր։ Մի քիչ անց ինձ հայտնեցին, թե մի տիկին կամենում է ինձ տեսնել։ Իսկույն գնացի ընդունարան։ Աստվա՜ծ իմ, ի՜նչ անսպասելի հանդիպում. Մանոնն էր այնտեղ։ Դա նա էր, սակայն ավելի քնքուշ, ավելի գեղանի, քան երբևէ տեսել էի նրան։ Նա նոր էր թեակոխել իր տասնութ տարին։ Անկարելի էր նկարագրել նրա գրավչությունը. նա վերին աստիճանի նրբակերտ էր, քնքուշ և հմայիչ. իսկ և իսկ ինքը Սերը. նրա ողջ կերպարանքն ինձ կախարդական թվաց։

Նրա ներկայությունը բոլորովին շշմեցրեց ինձ և, չկարողանալով դուշակել նրա այցի նպատակը, զողզոջուն և աչքերս գետին հառած, սպասում էի, որ նա խոսի։ Մի բոպե նա ինձնից նվազ շփոթված չէր։ Սակայն երբ տեսավ, որ ես շարունակում եմ լռել, ձեռք տարավ դեպի աչքերը արցունքները թաքցնելու համար։ Երկչոտ ձայնով ասաց, որ խոստովանում է, թե իր անհավատարմությամբ արժանի է իմ ատելությանը։ Սակայն, եթե ճշմարիտ է, որ ես երբևիցե որևէ քնքշություն եմ տածել դեպի ինքը, ապա նվազ անգթություն չէ իմ վիճակի մասին երկու տարվա ընթացքում և ոչ մի լուր նրան չհաղորդելը և առավել ևս անգթություն է՝ այժմ նրա հետ հանդիպելով ու տեսնելով նրա հուզումնալից վիճակը, չասել նրան և ոչ մի խոսք։ Անհնարին է արտահայտել իմ հոգու ալեկոծումը, երբ լսեցի նրա այս խոսքերը։

Նա նստեց։ Ես մնացի ոտի վրա՝ նրանից կիսով չափ շրջված, որովհետև չէի համարձակվում շեշտակի նայել նրա երեսին։ Բազմիցս փորձեցի պատասխանել նրան, սակայն ամեն անգամ ուժ չէի ունենում խոսքս ավարտելու։ Վերջապես մի ճիգ ես արեցի և ցավագին բացականչեցի.

— Նենգ Մանոն։ Ա՜խ, նե՛նգ, նե՛նգ։

Նա կրկնեց, ջերմ արցունքներ թափելով, որ բնավ մտադիր էլ չէ արդարացնելու իր նենգությունը։

— Այդ դեպքում ի՞նչ ես կամենում,— գոչեցի ես նորից։

— Ես կամենում եմ մեռնել,— պատասխանեց նա,— եթե դու չվերադարձնես ինձ քո սիրտը, առանց որի ինձ անհնար է ապրելը։

— Այդ դեպքում պահանջիր իմ կյանքը, ուխտադրուժ,— բացականչեցի ես, ինքս նույնպես արցունքներ թափելով, չնայած ճգնում էի զսպել,— պահանջիր իմ կյանքը, այն միակ բանը, որը ես դեռ չեմ զոհաբերել քեզ համար, որովհետև իմ սիրտը երբեք չի դադարել քեզ պատկանելուց։

Հազիվ ես կարողացա արտասանել այս խոսքերը, երբ նա տեղից վեր կացավ և, հոգեզմայլ, նետվեց գիրկս։ Նա ողողեց ինձ իր տարփալի փաղաքշանքներով։ Նա ինձ տվեց այն բոլոր անունները, որ սերն ստեղծում է իր ամենավառ քնքշություններն արտահայտելու համար։ Ես տակավին զուսպ ու թույլ էի արձագանքում։ Հիրավի, ի՞նչ անցում այն անդորր դրությունից, որի մեջ գտնվում էի, դեպի հոգեկան այն հուզմունքի շարժումները, որոնք վերակենդանանում էին իմ մեջ։ Սարսափն ինձ պատեց։ Ես դողում էի, ինչպես դողում է մարդը, երբ գիշեր ժամանակ գտնվում է որևէ հեռու, անբնակ վայրում, երբ թվում է, թե փոխադրված ես մի ինչ-որ նոր իրադրության մեջ. այդտեղ քեզ համակում է մի ինչ-որ զաղտնի սարսափ, որից ազատվում ես միայն այն ժամանակ, երբ երկար և ուշիմ քննում ես շրջապատդ։

Մենք նստեցինք կողք-կողքի։ Նրա ձեռքերը ես առա իմ ձեռքերի մեջ։

— Ա՜խ, Մանոն,— ասացի նրան,— երբեք քեզնից չէի սպասում այն սև դավաճանությունը, որը դու ցույց տվիր ինձ ի հատուցումն իմ սիրու։ Քեզ համար հեշտ էր խաբել մի սիրտ, որի բացարձակ վեհապետուհին դու էիր, որի ողջ երանությունը քեզ հաճոյանալն ու հնազանդվելն էր։ Ասա հիմա ինձ, ուրիշ մեկի մոտ դու գտա՞ր արդյոք նույնքան սիրող, նույնքան հլու մի սիրտ, որքան իմ սիրտն էր։ Ո՛չ, ո՛չ. բնությունը հաճախ չի ստեղծում իմ սրտի նմանը։ Գեթ ասա ինձ, երբևիցե ափսոսացե՞լ ես այն կորցնելու համար։ Ինչ հավատ կարող եմ ընծայել այն բարի զգացման նկատմամբ, որը դրդել է քեզ գալ ինձ սփոփելու։ Ես լավ տեսնում եմ, որ դու ավելի հմայիչ ես, քան երբևէ, սակայն հանուն այն բոլոր

տառապանքների, որ ես կրեցի քեզ համար, չքնաղ Մանոն, ասա ինձ, կլինե՞ս այսուհետև ավելի հավատարիմ։

Ի պատասխան ինձ՝ նա այնպիսի սրտառուչ խոսքեր ասաց իր զղջման մասին և այնպիսի հավաստիացումներով ու երդումներով պարտավորվեց հավատարիմ մնալ, որ իմ սիրտն անասելի փափկեց։

— Թանկագին Մանոն,— ասացի նրան, իրար միացնելով սիրային և աստվածաբանական արտահայտությունները,— հասարակ արարածի համար դու չափազանց գեղեցիկ ես։ Ես զգում եմ, թե ինչպես է իմ սիրտը տոգորվում հաղթական քաղցրությամբ։ Այն ամենը, ինչ սեմինարիայում ճառում են կամքի ազատության մասին, դա միայն բանդագուշանք է։ Քո սիրո համար ես պետք է կորցնեմ իմ կարողությունն ու բարի համբավը, ես այդ լավ եմ կանխատեսում. իմ ճակատագիրը կարդում եմ քո հրաշագեղ աչքերում. սակայն այդ բոլոր կորուստները կմխիթարվեն քո սիրով։ Հարբստության առավելությունները ինձ չեն հրապուրում։ Փառքն ինձ թվում է իրրև ծուխ։ Կղերական կյանքի իմ բոլոր ծրագրերը՝ ցնորք։ Վերջապես այն բոլոր բարիքները, որոնք տարբեր են քեզնից ակնկալած վայելքից, արհամարհելի են ինձ, որովհետև դրանք մի ակնթարթ անգամ չեն կարող մնալ իմ սրտում՝ սոսկ քո մեկ նայվածքի հանդեպ։

Խոստանալով նրա հանցանքները լիովին մոռացության տալ, այնուամենայնիվ ես ուզեցի իմանալ, թե նա ինչպես է հարպուրվել պարոն դը Բ.-ով։ Նա պատմեց, որ դը Բ.-ն իրեն տեսել է լուսամուտի առաջ ու սիրահարվել։ Այդ պարոնը հայտնել է նրան իր սերը որպես կապալառու, այսինքն՝ նամակով գրել է, թե վարձատրությունը համապատասխան կլինի նրա զգվանքներին։ Ինքը զիջել է, սակայն միայն այն նպատակով, որ նրանից մի խոշոր գումար կորզի, որը հնարավորություն տա մեզ ապահով ապրելու։ Պարոն դը Բ.-ն այնպիսի հրապուրող խոսքերով է շլացրել նրան, որ նա աստիճանաբար բոլորովին անձնատուր է եղել։

Զղջո՞ւմ էր արդյոք նա։ Այդ մասին ես կարող եմ դատել միայն այն ցավից, որ ինքը արտահայտեց մեր բաժանման նախօրյակին։ Եվ չնայած այն փարթամությանը, որով նա

շրջապատված էր, այնուամենայնիվ երբեք Բ.-ի հետ երջանկություն չի վայելել, ոչ միայն այն պատճառով, որ ինքը նրա մոտ չի գտել,— ասաց նա ինձ,— իմ զգացմունքների քնքշությունն ու վերաբերմունքի թաղցր թովչանքը, այլ նրա համար, որ նույնիսկ անվերջ իրեն պատճառած հաճույքների մեջ իր սրտի խորքում նա անշեջ կրել է իմ սիրո հիշատակը և իր անհավատարմության խայթը։ Նա խոսեց Տիրերժի և այն մեծ շփոթության մասին, որ իրեն պատճառել է նրա այցելությունը։

— Սուսերի հարվածն իմ սրտում, —ավելացրեց նա,— ավելի քիչ խոցած կլիներ ինձ։ Ես հեռացա նրանից, չկարողանալով մի ակնթարթ անգամ տանել նրա ներկայությունը։

Հետո նա պատմեց, թե ինչպես է իմացել, որ ես Փարիզում եմ ապրում, ինչպես է իմացել իմ վիճակի փոփոխության և Սորբոնի քննությունների մասին։ Նա հավատացրեց, որ շատ հուզվել է հարցաքննության միջոցին։ Շատ ճիգեր է թափել ոչ միայն արցունքները, այլ նույնիսկ հառաչանքները և ճիչերը զսպելու համար, որոնք բազմիցս սեղմում էին նրան փղձկալ։ Վերջապես նա ասաց, որ ինքը դահլիճից դուրս է եկել բոլորից հետո, որպեսզի թաքցնի իր հուզմունքը, և միայն սրտի մղման և զգացմունքների ուժգնության շնորհիվ է, որ ուղղակի եկել է սեմինարիա, այստեղ մեռնելու որոշումով, թե ինձ չտեսնի ներելու պատրաստակամ։

Կարելի՞ է արդյոք գտնել մի բարբարոս, որին չհուզեր այսքան վառ ու քնքուշ զղջումը։ Ինչ ինձ է վերաբերում, ես այն բոպեին զգացի, որ Մանոնի սիրուն պատրաստ էի զոհաբերելու քրիստոնյա աշխարհի բովանդակ թիմերը։ Ես հարցրի նրա կարծիքը մեր անելիքի մասին։ Նա պատասխանեց, որ անհապաղ պետք է դուրս գալ սեմինարիայից և աշխատել մի ավելի ապահով ապաստարան գտնելու։ Ես առանց առարկելու համաձայնեցի նրա բոլոր թելադրանքներին։ Նա նստեց իր կառեթը, որպեսզի մեկնի և փողոցի անկյունում ինձ սպասի։ Փոքր-ինչ հետո ես էլ դռնապանից աննկատելի հեռացա։ Մենք ուղևորվեցինք դեպի պատրաստի զգեստի խանութը։ Ես նորից հագա ասպետի բաճկոնս և կապեցի սուսերս։ Մանոնը վճարեց դրանց արժեքը, որովհետև ես մի գրոշ անգամ չու-

նեի. նա չկամեցավ, որ ես, թեկուզ մի վայրկյան, վերադառնամ իմ փուչը դրամ վերցնելու համար, վախենալով, թե մի դուցե որևէ բան արգելք հանդիսանա իմ փախուստին։ Բացի դրանից, իմ ունեցածը չնչին գումար էր, իսկ նա, շնորհիվ Բ.-ի առատաձեռնության, բավական հարուստ էր, այնպես որ նրա հրամանով թողած հարստությանս ափսոսալու առթիվ չկար։ Մենք հենց խանութում որոշեցինք մեր անելիքը։

Որպեսզի ես ավելի գնահատեմ ի սեր ինձ արած իր զոհաբերությունը, նա որոշեց խզել իր բոլոր կապերը Բ.-ի հետ։

— Ես ուզում եմ կահկարասիքը թողնել նրան,— ասաց նա ինձ,— դա նրան է պատկանում. սակայն միանգամայն արդարացի է, որ վերցնեմ բոլոր գոհարները և մոտ վաթսուն հազար ֆրանկ, որ «կորզել» եմ նրանից երկու տարվա ընթացքում։ Նա ոչ մի իրավունք չունի իմ նկատմամբ,— ավելացրեց Մանոնը,—այնպես որ մենք աներկյուղ կարող ենք մնալ Փարիզում և վարձել մի հարմար տուն, որտեղ և կապրենք երջանիկ։

Ես նրան առարկեցի, որ եթե նրա համար ոչ մի վտանգ չկա, ինձ համար վտանգը մեծ է, որովհետև վաղ թե ուշ քաղաքում կճանաչեն, և ինձ շարունակ կսպառնա դժբախտությունը, որ մի անգամ արդեն կրել եմ։

Նա ինձ հասկացրեց, որ նրա համար դժվար է հեռանալ Փարիզից։ Ես այն ատոհման էի վախենում նրան վշտացնելուց, որ չկար և ոչ մի վտանգ, որ շարհամարհեի, միայն թե հաճելի լինեմ նրան։ Այնուամենայնիվ, մենք գտանք մի միջին խելացի ելք, այն է, մի տուն վարձել Փարիզի շրջակա որևէ գյուղում, որտեղից հեշտ կլիներ գալ քաղաք ամեն անգամ, երբ մեր բարի ցանկությունը կամ անհրաժեշտ կարիքը կթելադրեր մեզ։ Մենք ընտրեցինք Շայոն, որը գտնվում էր քաղաքից ոչ հեռու։ Մանոնն անմիջապես մեկնեց իր բնակարանը, իսկ ես Տյուլերիի այգու դռնակի մոտ մնացի նրան սպասելու։

Մի ժամ հետո նա վերադարձավ վարձու կառքով. հետը վերցրել էր իրեն սպասարկող աղախնուն և մի քանի պայուսակներ, որոնց մեջ նրա զգեստներն ու թանկագին իրերն էին։

Մենք շատ շուտ հասանք Շայու։ Գիշերն անցկացրինք հյուրանոցում, որպեսզի ժամանակ ունենանք մեզ համար մի տուն կամ գոնե մի հարմար բնակարան փնտրելու։ Հաջորդ օրն ևեթ վարձեցինք մեր ուզած տունը։

Սկզբում ինձ թվաց, թե իմ երջանկությունը միանգամայն հաստատուն է։ Մանոն ինքնին քնքշություն ու սիրալիրություն էր։ Նա այնպիսի քաղցր ու սիրալիր ուշադրությամբ էր վերաբերվում ինձ, որ ես կարծեցի, թե իմ ամբողջ տառապանքների փոխարեն ստացել եմ լիակատար հատուցում։ Երկուսս էլ բավական փորձառություն էինք ձեռք բերել, ուստի և ի վիճակի էինք կշռադատելու մեր կարողության մեծությունը։ Վաթսուն հազար ֆրանկը, որը մեր հարստության հիմքն էր, այնպիսի մի մեծ դումար չէր, որ բավարարեր մեր ամբողջ կյանքի ընթացքում։ Բացի այդ, մենք տրամադիր չէինք մեր ծախսերը զգալիորեն կրճատելու։ Խնայողությունը ոչ Մանոնի և ոչ էլ իմ գլխավոր առաքինությունն էր։ Ես նրան հետևյալ ծրագիրն առաջարկեցի։

Վաթսուն հազար ֆրանկը կարող է մեր գոյությունն ապահովել տասը տարի։ Եթե մենք շարունակենք ապրել Շայոյում, երկու հազար էկյուն մեզ մի տարի կբավարարի։ Մենք այստեղ կվարենք պատվավոր, սակայն համեստ կյանք։ Մեր միակ ծախսը կլինի թատրոնը և կառեթ պահելը։ Մենք կապրենք մեր միջոցների համեմատ։ Դու սիրում ես օպերա։ Շաբաթը երկու անգամ կհաճախենք։ Թղթախաղում այնպես կսահմանափակենք մեզ, որ մեր կորուստը երբեք երկու պիստոլից ավելի չլինի։ Անկարելի է, որ տասը տարվա ընթացքում իմ ընտանեկան կյանքում ոչ մի փոփոխություն չպատահի։ Հայրս ծեր է և կարող է շուտով մեռնել։ Ես կստանամ ժառանգության ինձ հասանելիք մասը, և այն ժամանակ մենք կհաղթահարենք մեր մտավախությունը և կհարթենք մնացած բոլոր դժվարությունները։

Այս կարգադրությունն իմ կյանքի ամենաանմիտ արարքը չէր լինի, եթե մենք բավականաչափ խելոք գտնվեինք մշտապես նրան հարմարվելու։ Սակայն մեր որոշումը տևեց միայն մի ամիս։ Մանոնը հաճույք էր սիրում, իսկ ես պաշտում էի նրան։ Ամեն բոպե դրամ ծախսելու նոր առիթներ էին ծագում,

և ես ոչ միայն չէի ափսոսում այն գումարները, որ նա վատնում էր երբեմն մեծ շռայլությամբ, այլ ընդհակառակը, ինքս առաջինը պատրաստ էի նրան տալու այն ամենը, ինչ կարող էր հաճելի լինել։ Շայոյում մեր կյանքը արդեն տաղտկալի էր դառնում նրա համար։

Ձմեռը մոտենում էր. բոլորը վերադառնում էին քաղաքգյուղն ամայանում էր։ Նա առաջարկեց նորից Փարիզ տեղափոխվել։ Ես չհամաձայնեցի. սակայն, որպեսզի մի կերպ բավարարած լինեմ նրան, ասացի, որ կարելի է քաղաքում մի կահավորված բնակարան վարձել, որտեղ կարող կլինենք գիշերն անցկացնել, երբ երկար կնստենք ժողովարանում, ուր շաբաթը մի քանի անգամ լինում էինք, որովհետև նա գիշերն ուշ վերադառնալու անհարմարություններ էր բերում իրեն պատրվակ՝ Շայոյից հեռանալու համար։ Այսպիսով մենք ունեցանք երկու բնակարան. մեկը՝ քաղաքում, իսկ մյուսը գյուղում։ Սույն փոփոխությունը շուտով մեծ շփոթ առաջացրեց մեր գործերում, հարուցելով երկու արկած, որոնք և պատճառ եղան մեր կործանմանը։

Մանոնը մի եղբայր ուներ, որը գվարդիայի զինվոր էր։ Մեր շար բախտից պարզվեց, որ նա ևս ապրում է Փարիզում և հենց մեր փողոցում։ Եվ ահա նա ճանաչում է իր քրոջը, և հենց մի առավոտ նրան տեսնում է լուսամուտի առաջ, և անմիջապես վազում է մեզ մոտ։ Նա կոպիտ և պատվազուրկ մարդ էր։ Սոսկալի հայհոյանքներով մտնում է մեր սենյակը, և, որովհետև մասամբ իմացել է քրոջ արկածները, ապա անզուսպ հիշոցներ ու հանդիմանություններ է տեղում նրա գլխին։

Սենյակից ես դուրս էի եկել դրանից փոքր-ինչ առաջ, անկասկած նրա ու իմ բախտից, որովհետև ես բնավ տրամադիր չէի վիրավորանքներ տանելու։ Տուն վերադարձա նրա հեռանալուց հետո։ Մանոնի տրամադրությունից ես կռահեցի, որ իմ բացակայության ժամանակ մի արտասովոր բան է պատահել։ Նա ինձ պատմեց եղբոր հետ ունեցած անախորժ խոսակցության և նրա կոպիտ սպառնալիքների մասին։ Ես այնպիսի զայրույթ զգացի, որ ուզում էի անմիջապես գնալ

պատճառած վիրավորանքի վրեժն առնելու, բայց Մանոնի արտասուքներն ինձ զսպեցին։

Երբ ես սույն արկածի մասին խոսում էի սիրուհուս հետ, գվարդիականն առանց դուռը բախելու նորից մտավ մեր սենյակը։ Եթե ես նրան ճանաչեի, ապա չէի ընդունի այնքան սիրալիր քաղաքավարությամբ։ Սակայն մեզ ուրախ բարևելուց հետո նա ժամանակ գտավ ասելու Մանոնին, որ եկել է նրանից ներողություն խնդրելու իր դյուրաբորբոքության համար։ Նա ասաց, որ ինքը կարծել է, թե իր քույրն անառակ կյանք է վարում, և այդ միտքը հարուցել է նրա զայրույթը։ Բայց, երբ մեր ծառաներից իմացել է իմ ով լինելը և ուրիշ շատ բարենպաստ տեղեկություններ, այժմ կամենում է մեզ հետ հաշտ ապրել և մտերմություն հաստատել։

Թեև մեր սպասավորներից իմ մասին ստացված այս տեղեկությունն ինքնին տարօրինակ ու վիրավորական էր, այնուամենայնիվ, ես քաղաքավարությամբ ընդունեցի նրա բարը։ Ինձ թվում էր, որ այդպիսով հաճույք կպատճառեմ Մանոնին. նա հիացած էր, որ իր եղբայրը հաշտության է տրամադրված։ Մենք նրան այդ օրը ճաշի հրավիրեցինք։

Նա շուտով մեզ հետ այնքան մտերմացավ, որ երբ լսեց մեր՝ Շայո վերադառնալու մասին, ուզեց անպայման ուղեկցել մեզ։ Մենք հարկադրվեցինք նրան ևս տեղավորել մեր կառքում։ Այդպիսով նա իր տիրակալությունը հաստատեց մեր կյանքի վրա, որովհետև կարճ ժամանակից հետո սովորություն դարձրեց մեզ այցելել այնպիսի հաճույքով, որ, ի վերջո, իրեն զգաց ինչպես իր տանը և դարձավ կատարյալ տնօրենն այն ամենի, ինչ մեզ էր պատկանում։ Նա ինձ եղբայր էր անվանում և եղբայրական ազատությամբ իր բոլոր բարեկամներին սկսեց հրավիրել Շայո՝ մեր տուն և մեր հաշվին հյուրասիրել։ Նա իր համար շքեղ զգեստ կարեց մեր ծախսով և մինչև իսկ ստիպեց մեզ վճարելու իր պարտքերը։ Ես աչքերս փակում էի այդ բռնակալության հանդեպ՝ Մանոնին չվշտացնելու համար և նույնիսկ ձևացնում էի, թե չեմ տեսնում, ինչպես նա ժամանակ առ ժամանակ փոշոր դումարներ է կորզում իր քրոջից։ Ճիշտ է, լինելով մեծ խաղամոլ, նա այնքան աղնվություն ուներ, որ երբեմն վերադարձնում էր

ստացած դումարները, երբ բախտը նպաստում էր։ Սակայն մեր կարողությունը չափազանց աննշան էր, որպեսզի հնարավոր լիներ երկար ժամանակ հոգալու նրա այդ կարգի ծախսերը։

Ես արդեն պատրաստվել էի ամենայն խստությամբ բացատրվել նրա հետ իր անհարգության համար, երբ մի շարաբաստիկ դիպված ազատեց ինձ այդ հոգսից, նետելով մեզ մի ուրիշ դժբախտության գիրկը, որը մեզ անվերադարձ կործանեց։

Մի անգամ, ինչպես դա հաճախ էր պատահում, մենք մնացել էինք Փարիզում՝ գիշերն այնտեղ անցկացնելու համար։ Աղախինը, որն այն ժամերին մենակ էր մնում Շայոյում, առավոտյան եկավ ինձ հաղորդելու, որ մեր տանը հրդեհ է բռնկվել, որը մեծ դժվարությամբ են հանգցրել։ Ես նրան հարցրի, թե մեր կահ-կարասիքը չի՞ վնասվել արդյոք։ Նա պատասխանեց, որ շնորհիվ օգնության եկած բազմաթիվ անծանոթ մարդկանց այնպիսի մի իրարանցում է եղել այնտեղ, որ նա ոչ մի բան դրականապես պնդել չի կարող։ Ես սարսափ զգացի, մտածելով փոքր արկղում գտնվող մեր գրամի մասին։ Անմիջապես Շայո վերադարձա։ Զո՞ւր աճապարանք. արկղիկն անհետացել էր։

Ես միայն այն ժամանակ հասկացա, որ կարելի է դրամը սիրել և ժլատ չլինել։ Այս կորուստն այնպիսի մի սուր ցավով համակեց ինձ, որ կարծեցի, թե խելագարվում եմ։ Անմիջապես պատկերացրի, թե ինչ նոր դժբախտությունների պիտի ենթարկվեմ. չքավորությունը դրանցից փոքրագույնն էր։ Ես լավ էի ճանաչում Մանոնին. իմ մորթու վրա արդեն զգացել էի, որ նա որքան էլ հավատարիմ է ու նվիրված ինձ, երբ բախտը ժպտում է մեզ, այնուամենայնիվ, դժբախտության դեպքում նրա վրա հույս դնել չի կարելի, նա չափից դուրս սիրում էր փարթամությունն ու հաճույքները, որպեսզի ի վիճակի լիներ դրանք զոհաբերելու իմ սիրուն։ «Կկորցնե՞մ նրան,— բացականչեցի ես։— Անբախտ ասպետ, դու վերստին կկորցնես նրան, ում սիրում ես»։ Այս միտքն այնպիսի սարսափելի տագնապի մեջ ձգեց ինձ, որ մի քանի բոպե տա-

տանվում էի, թե լավ չի՞ լինի արդյոք միանգամից վերջ դնել իմ բոլոր տառապանքներին, դիմելով անձնասպանության։

Բայց և այնպես հոգով դեռ բավականին արի էի, որպեսզի կարողանայի նախապես քննել, թե չկա՞ արդյոք որևէ այլ միջոց՝ աղետի հետևանքները կանխելու։ Երկինքն ինձ ներշնչեց մի միտք, որը փրկեց ինձ հուսալքությունից. մտածեցի, թե արդյոք չե՞մ կարող մեր կորուստը թաքցնել Մանոնից։ Շնորհիվ իմ հնարամտության կամ մի երջանիկ պատահականության ես ի վիճակի կլինեմ նրան ապահովել պատվավոր ու բարեկեցիկ մի կյանք, որպեսզի նա շղջա կարիքի բերը։

— Ես հաշվել էի,— ասացի ինձ մխիթարելու համար,— որ քսան հազար էկյուն մեզ կբավականացնի տասը տարի։ այժմ ենթադրենք, թե այդ տասը տարին արդեն անցել է. մինչդեռ իմ ընտանիքում չի կատարվել սպասած փոփոխությունը։ Ի՞նչ պիտի անեի ավյալ հանգամանքներում, այդ լավ չգիտեմ. սակայն ի՞նչն է ինձ արգելում հիմա անել այն, ինչ ես պիտի անեի այդ դեպքում։ Փարիզում որքան մարդիկ են ապրում, որոնք ոչ իմ խելքն ունեն և ոչ էլ բնատուր ձիրքերս, սակայն որոնք իրենց ապրուստը հայթայթում են սեփական ընդունակությունների համեմատ։

«Մի՞թե նախախնամությունը կատարյալ իմաստությամբ չի դասավորել աշխարհի բաները,— ավելացրի ես, խորհրդածելով տարբեր հասարակական դիրքերի մասին։— Հարուստ և մեծանուն մարդկանց մեծամասնությունը տխմարներ են. սա ակներև է յուրաքանչյուր մարդու համար, ով քիչ թե շատ ճանաչում է աշխարհը։ Արդ, այստեղ զարմանալի արդարություն է նախատեսված։ Եթե այդ մարդկանց իրենց հարստության հետ տրված լիներ նաև խելք, նրանք շափից դուրս երջանիկ պիտի լինեին, իսկ մնացած մարդիկ՝ շափազանց անբախտ. այս վերջիններիս էլ տրված են մարմնի և հոգու ունակությունները, որպես թշվառության ու չքավորության դեմ մաքառելու միջոցներ։ Ոմանք վայելում են մեծերի հարստությունը՝ սպասարկելով նրանց հաճույքներին և նրանց իրենց խաբեության զոհը դարձնելով։ Ուրիշները ծառայում են նրանց դասալարակությանը, ջանալով նրանցից պատվար-

ձան մարդիկ կրթել։ Ճշմարիտ է, դա հաղվադեպ է հաջողվում նրանց, սակայն ասվածային իմաստության նպատակը այդ չէ. դրանք միշտ իրենց ջանքերից օգուտ են քաղում, ապրելով ի հաշիվ այն մարդկանց, որոնց դաստիարակում են. և խնդիրը ինչ կողմից էլ որ քննելու լիներ, ունևորների ու մեծատունների տխմարությունն այս աշխարհի ընչաղուրկների եկամտի լավագույն աղբյուրն է»։

Այս խոհերը մի փոքր հանգստացրին իմ սիրտն ու միտքը։ Ես որոշեցի նախապես խորհրդակցել Մանոնի եղբոր՝ պարոն Լեսկոյի հետ։ Նա կատարելապես գիտեր Փարիզը, և ես բաղմիցս առիթ էի ունեցել համոզվելու, որ նրա եկամտի դլխավոր աղբյուրը ոչ իր սեփական կարողությունն է և ոչ էլ թագավորից ստացած թոշակը։ Ինձ մոտ մնում էր ընդամենը քսան պիստոլ, որոնք, բարեբախտաբար, գրպանումս էին։ Ես նրան ցույց տվի քսակս ու պատմեցի իմ դժբախտության ու մտավախության մասին, խնդրելով, որ նա ասի, թե ինձ համար չկա՞ արդյոք մի ուրիշ ելք, քան սովամահությունը կամ ինքնասպանությունը։ Նա պատասխանեց, որ ինքնասպանությունը տխմարների գործն է. ինչ վերաբերում է սովամահությանը, բաղմաթիվ խելացի մարդիկ անգամ ենթարկվում են դրան, երբ չեն կամենում գործադրել իրենց ձիրքերը։ Հետո նա ավելացրեց, որ ինքս պիտի մտածեմ, թե ինչ բանի եմ ընդունակ. իսկ նա իր կողմից պատրաստ է ինձ աջակցել և խորհուրդներ տալ իմ բոլոր ձեռնարկներում։

— Այդ ամենը շափազանց անորոշ է, պարոն Լեսկո,— ասացի ես նրան.— իմ դրությունն անմիջական օգնություն է պահանջում, որովհետև ի՞նչ պիտի ասեմ Մանոնին։

— Ի՞նչն է ձեզ անհանգստացնում Մանոնի վերաբերմամբ,— վրա բերեց նա։— Նրա նկատմամբ դուք միշտ էլ կարող եք հանգիստ լինել, եթե կամենաք։ Նման մի աղջիկ պետք է, որ մեզ բոլորիս՝ և՛ ձեզ, և՛ իրեն, և՛ ինձ, պահի։

Նա թույլ չտվեց ինձ ըստ հարկի պատասխանելու իր անլուր լկտիությանը և ավելացրեց, ասելով, որ խոստանում է մինչև երեկո հայթայթել հազար էկյու, կեսը՝ ինձ, կեսը՝ իրեն, եթե միայն կամենամ հետևել իր խորհրդին։ Նա ասաց, որ ճանաչում է մի ազնվական պարոնի, որն այնքան է առատա-

ձեռն հաճույքի խնդրում, որ ինքը հավատացած է, թե նա մեծ հաճույքամբ կտա հազար էկյու Մանոնի նման մի աղջկա սիրո համար։

Ես նրան թույլ չտվի շարունակելու։

— Ձեր մասին ես ավելի լավ կարծիք ունեի,— ասացի նրան։— Ես երևակայում էի, թե ձեր՝ դեպի ինձ տածած բարեկամությունը բխում է մի այլ զգացումից, քան այն, որը դուք ցուցաբերեցիք հենց հիմա։

Նա առանց ամաչելու խոստովանեց ինձ, որ ինքը միշտ նույն կարծիքն է ունեցել, և քանի որ թույրը խախտել է իր սեռի օրենքները՝ թեկուզև ամենից սիրած տղամարդու համար, ապա ինքը հաշտվել է նրա հետ սոսկ այն հաշվով, որ իրեն կհաջողվի որևէ օգուտ քաղել քրոջ վատ վարքից։

Ինձ համար դժվար չէր հասկանալ, որ մինչև այսօր նա մեզ անամոթ կերպով խաբել է։ Սակայն որքան էլ նրա խոսքերը իմ արդար զայրույթը հարուցեցին, այնուամենայնիվ, կարիքն ինձ ստիպեց ժպտալով պատասխանել, որ նրա խորհուրդն ընդունում եմ որպես վերջին միջոց, որին պետք է դիմել ծայրահեղ դեպքում։ Իսկ այժմ նրան խնդրում եմ մի այլ ուղի նշել։

Այն ժամանակ նա ինձ առաջարկեց օգտագործել բնությունից ինձ շնորհված երիտասարդությունս ու գեղեցկությունս և ջանալ սիրային կապեր հաստատել որևէ պառավ և առատաձեռն տիկնոջ հետ։ Ես չընդունեցի և այդ խորհուրդը, որովհետև դա պահանջում էր դավաճանել Մանոնին։

Ես նրան մատնանշեցի թղթախաղը, որպես միակ և ամենադյուրին մի միջոց, որը պատշաճում է իմ վիճակին։ Նա ասաց, որ, հիրավի, թղթախաղը կարող է փող վաստակելու միջոց լինել, սակայն դա պահանջում է որոշ բացատրություններ։ Նախաձեռնել թղթախաղը միայն տանելու հույսով, դա, անտարակույս, նշանակում է կատարյալ դարձնել իմ կործանումը. իսկ հավակնել մենակ, առանց ուրիշի աջակցության, կիրառելու այն բոլոր փոքր հնարները, որ գործադրում են ճարպիկ մարդիկ, որպեսզի շահեն բախտի անակնկալությունը, դա չափազանց վտանգավոր մի զբաղմունք է։ Կա և մի երրորդ ճանապարհ՝ ընկերության մեջ մտնել ուրիշ խաղացողների հետ։ Սակայն իմ երիտասարդությունը նրան երկյուղ է ներշնչում, թե ընկերության պարոն անդամները կարող են կարծել, որ ես տակավին զուրկ եմ նրանց ընկերակցելու շնորհքից։ Այնուամենայնիվ, նա խոստացավ իմ մասին բարեխոսել նրանց և, ինչ ես բնավ չէի սպասում նրանից, առաջարկեց ինձ մի որոշ գումար, երբ ծայր կարիքն ինձ նեղի։ Միակ շնորհը, որ խնդրեցի նրանից տվյալ հանգամանքներում, դա այն էր, որ նա ոչինչ չասի Մանոնին ոչ իմ կորստի և ոչ էլ մեր փոխադարձության նյութի մասին։

Նրա մոտից ես հեռացա ավելի դժգոհ, քան այցելել էի, նույնիսկ զզջացի, որ իմ գաղտնիքը հայտնել եմ նրան։ Նա ինձ ոչ մի այնպիսի բան չարեց, որը չկարողանայի նրանից ստանալ առանց իմ խոստովանության, մինչդեռ ես սաստիկ վախենում էի, որ նա կխախտի իր խոստումը՝ ոչինչ չհայտնելու Մանոնին։ Բացի այդ, իր զգացումների հայտնությամբ, նա ինձ առիթ տվեց երկյուղելու, որ կորուշի Մանոնից օգուտ քաղել, ինչպես ինքն էր ասում, խլելով նրան իմ ձեռից կամ առնվազն խորհուրդ տալով նրան լքել ինձ՝ որևէ հարուստ կամ առավել երջանիկ սիրեկանի հետ կապվելու համար։ Այս առթիվ արած իմ բյուր խորհրդածությունները լոկ մի բանի հանգեցին՝ սաստկացրին իմ տագնապն ու վերանորոգեցին այն հուսալքությունը, որը պատել էր ինձ առավոտյան։ Մի քանի անգամ մտադրվեցի նամակով դիմել հորս և մի նոր կեղծ զզջումով նրանից դրամական օգնություն հայցել։ Սակայն անմիջապես հիշեցի, թե ինչպես նա, չնայած իր բարեսրտությանը, վեց ամիս խստությամբ արգելափակել էր ինձ առաջին հանցանքիս համար։ Ես համոզված էի, որ Սեն-Սյուլպիսից իմ կատարած փոխուստից հետո, որը, անկասկած, խոշոր աղմուկ պետք է հանած լիներ, նա ինձ հետ ավելի խիստ կվարվեր։

Ի վերջո, այս խորհրդածությունների շփոթից իմ գլխում մի միտք ծագեց, որն իսկույն ինձ հանգստացրեց, և ես զարմացա, թե ինչու այն ավելի առաջ չէի հղացել. իմ մեջ ծագեց Տիբերժի աջակցությանը դիմելու միտքը։ Ես հավատացած էի, որ հանձին նրա, միշտ կգտնեմ նույն ջերմ ու բարեկամական վերաբերմունքը։ Ոչինչ չկա ավելի հրապուրիչ և ոչ

մի բան այնքան պատիվ չի բերում առաքինությանը, որքան այն վստահությունը, որով դիմում ես այնպիսի անձանց, որոնց ազնվությունը քեզ արդեն հայտնի է. դիտես, որ ոչ մի անակնկալությունից երկյուղ չունես, եթե նրանք միշտ ի վիճակի չեն օգնության ձեռք կարկառելու, գոնե վստահ ես, որ նրանք քեզ բարություն ու կարեկցանք ցույց կտան։ Սիրող, որ օտար մարդկանց առջև փակվում է այնքան մեծ խնամքով, ինքնաբերաբար բացվում է նրանց ներկայությամբ, ինչպես ծաղիկն է փթթում ջերմ արևի տակ, որից նա միայն կենսատու ջերմություն է սպասում։

Մտածեցի, որ ես սոսկ ասածս ներշնչմամբ այսպես՝ հենց ժամանակին մտաբերեցի Տիբերժին և որոշեցի միջոցներ որոնել՝ նրա հետ մինչ երեկո տեսնվելու համար։ Անմիջապես վերադարձա տուն, որպեսզի նրան մի երկտող գրեմ և նշանակեմ մեր տեսակցության հարմար վայրը։ Ես նրան խնդրեցի կատարյալ լռություն պահպանել մեր հանդիպման մասին. դա ամենամեծ ծառայությունն էր, որ նա կարող էր ինձ մատուցել իմ ներկա վիճակում։

Տիբերժի հետ տեսնվելու հույսի ներշնչած բերկրանքը ջնջել էր իմ դեմքից թախծի հետքերը, որ Մանոնն անպայման կնշմարեր իմ երեսին։ Շայոյում մեզ պատահած դժբախտությունը ես նրան ներկայացրի իբրև մի դատարկ բան, որը բնավ չպիտի հուզեր նրան։ Եվ որովհետև Փարիզն այն քաղաքն էր, որը նա ամենից շատ էր սիրում և ուր նա միշտ տենչացել էր ապրել, ապա նա բնավ չսրտմտեց, որ մենք ստիպված ենք այնտեղ մնալ, մինչև որ Շայոյում նորոգեն հրդեհի պատճառած ջնջին ավերումները։

Մի ժամ հետո ստացա Տիբերժի պատասխանը. նա փոստատեղում էր լինել նշանակված վայրում։ Ես անհամբերությամբ վազեցի դեպի այդ վայրը։ Այնուամենայնիվ, որոշ ամոթ զգացի երևալու մի բարեկամի աչքին, որի սոսկ ներկայությունն իմ անառակության կշտամբանքը կարող էր լինել։ Սակայն նրա սրտի բարության մասին ունեցած վստահությունս ու Մանոնի նկատմամբ զգացած հոգատար գուրգուրանքս պահեցին իմ արիությունը։

Ես նրան խնդրել էի գալ Պալե-Ռուայալի այգին։ Նա ինձ-

նից առաջ էր եկել այնտեղ։ Հենց որ ինձ տեսավ, իսկույն նետվեց դեպի ինձ և գրկախառնվեց. նա երկար ժամանակ ինձ սեղմեց իր գրկում, և նրա արցունքները թրջեցին դեմքս։ Ես ասացի, որ մեծ ամոթով եմ հանդիպում նրան և որ իմ սրտում միշտ վառ է մնում երախտագիտությանս զգացումը. ամենից առաջ խնդրեցի նրան ասել, թե արդյոք ինձ թույլատրելի՞ է նայել իրեն իբրև բարեկամի, երբ միանգամայն արդարացիորեն արժանի եմ, որ նա ինձ զրկի իր հարգանքից ու սիրուց։ Նա պատասխանեց ամենաքնքուշ խոսքերով, որ ոչ մի բան չի կարող ստիպել նրան հրաժարվելու այդ կոչումից. մինչև իսկ իմ դժբախտությունները կամ եթե ես թույլ տամ նրան այդպես արտահայտվել, մոլություններս ու մոլորություններս կրկնապատկել են դեպի ինձ տածած նրա քնքշությունը։ Սակայն այդ քնքշությունը համակվել է ամենախոր վշտով, որը զգում ես սիրելի բարեկամիդ հանդեպ, երբ նա քո աչքերի առաջ կործանվում է, իսկ դու ի վիճակի չես օգնության ձեռք կարկառել նրան։

Մենք նստեցինք նստարանին։

— Ավա՜ղ,— ասացի ես նրան սրտի խոր հառաչանքով,— ձեր կարեկցությունը չափազանց մեծ է, սիրելի Տիբերժ, եթե, ինչպես դուք հավաստիացնում եք, այն հավասար է իմ տառապանքներին։ Ես ամաչում եմ դրանք ձեզ ցուցադրելուց, որովհետև պատճառը, խոստովանում եմ, գովելի չէ. սակայն նրանց հետևանքն այն ստիճան տխուր է, որ կարիք չկա ինձ սիրել այնպես, ինչպես դուք եք սիրում, որպեսզի կարեկցանք շարժեմ դեպի ինձ։

Նա ինձ խնդրեց հանուն մեր բարեկամության, առանց որևէ բան թաքցնելու, պատմել իրեն այն ամենը, ինչ ինձ պատահել է իմ՝ Սեն-Սյուլպիսից մեկնելուց հետո։ Ես բավարարեցի նրա ցանկությունը, նկարագրեցի իմ սիրո պատմությունը դրա՝ ինձ ներշնչած թափով, առանց աշխատելու աղավաղել ճշմարտությունը կամ նվազեցնել մոլորություններս՝ դրանց ներումը դյուրությամբ ստանալու նպատակով։ Ես իմ սերը նրան պատկերացրի իբրև մեկը ճակատագրի մասնակի հարվածներից, որը մարդուս մղում է դեպի իր կործանումը, և որից առաքինությունը չի կարող պաշտպանել, ինչպես այդ

չի կարող նախատեսել իմաստությունը։ Ես վառ գույներով նկարագրեցի նրան իմ հուզմունքը, երկյուղը և այն հուսալքությունը, որով բռնված էի երկու ժամ առաջ և որի մեջ վերբստին պիտի ընկնեի, եթե իմ բարեկամներն ինձ լքեն նույնպիսի անգթությամբ, ինչպես արել է ճակատագիրը։ Ի վերջո, իմ պատմությամբ ես այն աստիճան շարժեցի Տիբերժի սիրտը, որ նա՝ դեպի ինձ տածած կարեկցանքից նույնքան վշտացած էր, որքան ես՝ իմ ցավերից։

Նա անդադար գրկում էր ինձ, քաջալերում ու մխիթարում։ Սակայն որովհետև նա մինչև վերջը պնդում էր, թե անհրաժեշտ է Մանոնից բաժանվել, ես կտրականապես ասացի նրան, որ այդ բաժանումը համարում եմ իմ դժբախտություններից ամենամեծագույնը, և որ ես պատրաստ եմ կրելու ոչ միայն ամենածայրահեղ թշվառությունը, այլև մինչև իսկ ամենադաժան մահը, նախքան կդիմեմ բուժման այնպիսի մի միջոցի, որը շատ ավելի անտանելի է, քան իմ բոլոր ցավերը միասին վերցրած։

— Այդ դեպքում, խնդրում եմ, բացատրեցեք ինձ,— ասաց նա,— ինչպիսի՞ օգնություն կարող եմ ցույց տալ, եթե դուք ընդդիմանում եք իմ բոլոր առաջարկություններին։

Ես քաջություն չունեցա ասելու, որ նրա քսակի օգնության կարիքն ունեմ։ Ի վերջո, նա ինքը գուշակեց այդ և, խոստովանելով, որ իրեն թվում է, թե ինձ հասկանում է, մի պահ լռեց տատանվող մարդու կերպարանք ընդունելով։

— Չկարծեք,— ասաց նա նորից,— որ իմ մտածմունքի պատճառը սիրուս ու բարեկամությանս սառնությունն է։ Դուք այնպիսի երկընտրանքի առաջ եք գնում ինձ, որ ես ստիպված եմ կամ մերժել միակ օգնությունը, որ դուք համաձայնում եք ընդունել, կամ խախտել իմ պարտականությունը՝ ընձեռելով ձեզ այդ օգնությունը։ Մի՞թե նպաստել ձեր համառությանը, չի նշանակում մասնակցել ձեր անառակ կյանքին։

— Այնուամենայնիվ,— շարունակեց նա, մի բոպե մտածելուց հետո,— ես ենթադրում եմ, որ դուցե հենց ձեր փոթորկալից գրությունը, որի մեջ դուք ընկել եք չքավորության հետևանքով, ձեզ զրկում է լավ բնորոշություն անելու ազատությունից։ Միայն անդորր վիճակում մարդ կարող է

ճաշակել իմաստությունն ու ճշմարտությունը։ Ես միջոց կգտնեմ ձեզ դրամ հայթայթելու։ Միայն թույլ տվեք, սիրելի ասպետ,— շարունակեց նա, գրկելով ինձ,— ձեզ մի պայման դնել. դուք ինձ կհայտնեք ձեր բնակավայրի հասցեն և կհանդուրժեք, որ ես գոնե ջանամ ձեզ վերադարձնել առաքինությանը, որը, ինչպես ես լավ գիտեմ, դուք սիրում եք, և որից ձեզ հեռացնում է լոկ կրքերի մոլեգնությունը։

Ես անկեղծորեն խոստացա նրան այն, ինչ ցանկանում էր և խնդրեցի կարեկցել իմ շարախինդ ճակատագրին, որը ստիպում է ինձ այդ աստիճան անարժան վերաբերմունք ցույց տալ այդքան ազնիվ մի բարեկամի խորհուրդներին։ Այնուհետև նա ինձ առաջնորդեց իրեն ծանոթ մի բանկիրի մոտ, որն ինձ տվեց հարյուր պիստոլ նրա մուրհակի դիմաց, որովհետև ինքը Տիբերժը բնավ կանխիկ դրամ չուներ։ Ես արդեն առիթ ունեցա ասելու, որ նա հարուստ չէր։ Նրա բենեֆիցիան հազար էկյուի արժեք ուներ, սակայն որովհետև նա առաջին տարին էր այդ ստանում, ուստի տակավին ոչ մի եկամուտ չէր ունեցել դրանից. նա այդ գումարն ինձ տվեց ի հաշիվ իր ապագա եկամտի։

Ես լավ զգացի նրա մեծահոգության ողջ արժեքը և այն աստիճան զգացվեցի, որ սկսեցի ողբալ շլացումն իմ ճակատագրական սիրո, որը ստիպում էր ինձ խախտելու բոլոր պարտականություններս։ Միաժամանակ առաքինությունը բավականին ուժ ունեցավ իմ սրտում ըմբոստանալու կրքիս դեմ և ես՝ զեթ արթնամտության այդ բոպեներին, գիտակցեցի իմ շղթաների ամոթն ու ստորությունը։ Սակայն պայքարը թույլ էր և երկար չտևեց։ Սոսկ Մանոնի տեսքն ընդունակ էր ինձ գահավիժել երկնքից, և երբ նորից նրա մոտ եղա, ես զարմացա, թե ինչպես էի կարողացել թեկուզ մի ակնթարթ, ամոթալի համարել այդպիսի արդարացի քնքշությունը՝ այնքան հրապուրիչ մի անձի համար։

Մանոնը մի արտասովոր արարած էր։ Անկարելի է երևակայել մի աղջիկ, որն այնքան քիչ սիրեր դրամը, ինչպես Մանոնը։ Սակայն դրա սոսկ պակասության երկյուղը մի բոպե անգամ հանգիստ չէր տալիս նրան։ Նա սիրում էր միայն հաճույքը և կենսուրախ ժամանցը։ Նա երբեք մի սու անգամ

չէր ծախսի, եթե կարելի լիներ զվարճանալ առանց դրամի։ Նա չէր էլ հետաքրքրվում, թե ինչ գրության մեջ են մեր միջոցները, միայն թե օրը հաճելի անցկացներ։ Մանոնը թղթախաղով չափից դուրս չէր տարվում, ոչ էլ շլանում էր մեծ ծախսերի շուքով, այնպես որ նրան բավարարելուց ավելի հեշտ բան չկար, միայն թե օրը օրին պետք էր ապահովել հաճելի զվարճությունները։ Սակայն այդ զվարճությունները այն աստիճանի էին նրան անհրաժեշտ, որ առանց դրանց բացարձակապես անկարելի էր ապավինել նրա տրամադրությանը և վստահել հակումներին։ Թեև նա ինձ սիրում էր քնքշագին, և ես նրա սեփական խոստովանությամբ, միակ մարդն էի, որն ի վիճակի էր նրան լիովին ճաշակել տալու սիրո քաղցրությունը, այնուամենայնիվ, գրեթե համոզված էի, որ նրա քնքշությունը որոշ երկյուղի ազդեցության տակ էր կարող անդրդվելի մնալ։ Նա ինձ կգերադասեր ողջ աշխարհից, եթե միայն ես թեկուզ միջակ կարողություն ունենայի։ Սակայն ես ամենևին չէի տարակուսում, որ նա ինձ կլքի որևէ մի նոր գը Ռ.-ի համար, եթե ես բացի սիրուց ու հավատարմությունից ընդունակ չլինեմ առաջարկել նրան որևէ մի ուրիշ բան։

Ուստի որոշեցի այնպես կարգավորել սեփական հաշիվները, որ միշտ ի վիճակի լինեմ հոգալու նրա ծախսերը և ավելի շուտ ինձ զրկել հազար ու մի անհրաժեշտ բաներից, քան սահմանափակել նրան թեկուզ շռայլության մեջ։ Ինձ ամենից շատ վախեցնում էր կառեթը, որովհետև բնավ հնարավորություն չունեի ձիեր և կառապան պահելու։

Իմ մտատանջության մասին հայտնեցի պարոն Լեսկոյին։ Ես նրանից չէի թաքցրել, որ մի բարեկամից հարյուր պիստոլ էի ստացել։ Նա ինձ վերստին հիշեցրեց, որ եթե ցանկանում եմ փորձել իմ բախտը թղթախաղում, նա հույս ունի, որ մի հարյուր ֆրանկ բարեհաճորեն զոհաբերելով նրա ընկերներին հյուրասիրելու համար, ինձ կհաջողվի իր հանձնարարությամբ ընդունվել վարպետ խաղացողների ընկերության մեջ։ Չնայած դեպի խաբեությունն ունեցած իմ գարշանքին, ես ստիպված էի համաձայնվել, զրկված անողոք անհրաժեշտությունից։

Նույն երեկո պարոն Լեսկոն ինձ, իբրև իր աղգականի, ներկայացրեց նրանց։ Նա ավելացրեց, որ ես առանձնապես տրամադրված եմ տանել թղթախաղում, որովհետև բախտի շնորհների մեծ կարիք ունեմ։ Միևնույն ժամանակ, որպեսզի հասկացնել տա, թե ես ամենաեռանդը չեմ, նա ասաց, որ մտադիր եմ բոլորին ընթրիքի հրավիրելու։ Այս առաջարկությունն ընդունվեց։ Ես նրանց շատ լավ հյուրասիրեցի։ Նրանք անվերջ խոսում էին իմ գեղեցկության և երջանիկ ձիրքերի մասին։ Միաբերան հաստատում էին, թե ինձնից շատ բան կարելի է սպասել, թե իմ դեմքն այնքան ազնվություն է արտահայտում, որ ոչ ոք ինձ չի կասկածի խարդախության մեջ։ Ի վերջո, նրանք իրենց զոհունակությունը հայտնեցին պարոն Լեսկոյին՝ ընկերության մեջ այսպիսի մի շնորհալի նորեկի անդամագրության համար և առաջարկեցին ուսուցել ինձ թղթախաղի անհրաժեշտ կանոնները և հրահանգները։

Իմ սխրագործությունների գլխավոր թատերաբեմը պիտի լիներ Տրանսիլվանյան հյուրանոցը, ուր մի դահլիճում գրված էր փարավոնախաղի սեղանը, իսկ մյուս սրահներում խաղում էին զառերով. կային նաև ուրիշ թղթախաղեր։ Այս խաղատունը պահում էր իշխան Ռ.-ն, որն այն ժամանակ ապրում էր Կլանիայում, և նրա սպաների մեծ մասը մեր ընկերության մեջ էր գտնվում։ Թեպետև ամաչում եմ խոստովանել, սակայն պետք է ասեմ, որ քիչ ժամանակում մեծ օգուտ քաղեցի ուսուցչիս դասերից. ես առանձնապես մեծ ճարպկություն ձեռք բերի թղթերը փոխարինելու շնորհքի մեջ. մի զույգ երկար բաղկակալների օգնությամբ ես ամենաանեռուն աչքերից անգամ աննկատելի կերպով խարդախում էի և ամենայն սառնասրտությամբ սնանկացնում բազմաթիվ աղնիվ խաղացողների։ Սույն արտակարգ ճարպկությունն այն աստիճան բազմացրեց իմ կարողությունը, որ մի քանի շաբաթից խոշոր գումարների տեր դարձա, չհաշված այն դրամները, որ ես սիրահոժար կիսում էի իմ ընկերների հետ։

Ես այլևս չէի երկյուղում Մանոնին պատմելու Շայոյի մեր կորստյան մասին և այն անախորժ լուրից նրան սփո

փելու համար մի կահավորված տուն վարձեցի, ուր սկսեցինք փարթամ ու անհոգ կյանք վարել։

Այս ամբողջ ժամանակվա ընթացքում Տիրերժը բազմիցս այցելել էր ինձ։ Նրա բարոյական խրատանքներին վերջ չկար։ Նա անդադար հիշեցնում էր այն վնասը, որ ես պատճառում եմ իմ խղճմտանքին, պատվին ու կարողությանը։ Նրա նկատողությունները ես ընդունում էի բարեկամաբար և թեպետ բնավ տրամադիր չէի հետևելու նրա խրատներին, այնուամենայնիվ, մեծապես երախտապարտ էի նրան խանդավառ հոգատարության համար, որովհետև գիտեի, թե ինչ աղբյուրներից է բխում այն։ Շատ անգամ ես մտերմաբար ծաղրում էի նրան Մանոնի ներկայությամբ և հորդորում չջանալ իր բծախնդրությամբ գերազանցել բազմաթիվ եպիսկոպոսների և այլ կղերականների, որոնք թե՛ սիրուհի են պահում և թե՛ բենեֆիցիա ստանում։

— Դիտեցեք, — ասում էի ես նրան, մատանշելով իմ սիրուհու աչքերը,— և ասացեք, կա՞ն այնպիսի հանցանքներ, որոնք չարդարացվեն այսպիսի մի հրաշագեղ պատճառով։

Նա համբերությունը չէր կորցնում. ընդհակառակը, նրա համբերությունը անչափ մեծ էր։ Սակայն, երբ տեսավ, որ իմ հարստությունն օրեցօր աճում է, և ես ոչ միայն նրան վերադարձրի իր հարյուր պիստոլը, այլև մի նոր տուն վարձելով և կրկնապատկելով իմ ծախսերը, նորից թաղվեցի ավելի մեծ հաճույքների մեջ, քան երբևէ, նա միանգամայն փոխեց իր խոսելու ձևը և վերաբերմունքը դեպի ինձ։ Նա գանգատվեց իմ քարսրտությունից, սպառնաց երկնային պատժով և նախազուշակեց ապագա իմ դժբախտությունները, որոնք և շուտով հարվածեցին ինձ։

— Անկարելի է,— ասում էր նա,— որ ձեր անառակ կյանքին անհրաժեշտ հարստությունները ձեռք բերված լինեն օրինավոր ճանապարհով։ Դուք անարդարությամբ եք վաստակել դրանք և նույն եղանակով էլ պիտի կորցնեք։ Աստծո ամենասարսափելի պատիժը կլինի թողնել, որ դուք հանգարտ վայելեք դրանք։ Իմ բոլոր խորհուրդները,— ավելացրեց նա,— իզուր անցան ձեզ համար. ես լավ եմ տեսնում, որ շուտով դրանք տաղտկալի պիտի երևան ձեզ։ Մենք

բարով, ապերախտ և թուլամորթ բարեկամս։ Թող ստվերների պես անհետանան ձեր հանցավոր հաճույքները։ Թող անվերադարձ կորչի ձեր բարեբախտությունն ու կարողությունը, և դուք մնաք մերկ ու միայնակ, որպեսզի զգաք ձեզ խելահեղորեն արբեցնող բոլոր բարիքների ունայնությունը։ Այն ժամանակ դուք ինձ կգտնեք պատրաստակամ ձեզ սիրելու և ծառայելու. իսկ այսօր ես խզում եմ ամեն մի հարաբերություն ձեզ հետ և արհամարհում այն կյանքը, որ դուք եք վարում։

Այս առաքելական քարոզը նա կարդաց իմ սենյակում Մանոնի ներկայությամբ։ Նա ոտքի կանգնեց, որ հեռանա։ Ես փորձեցի չթողնել նրան։ Սակայն Մանոնն ինձ կասեցրեց, ասելով, թե բարեկամս խելագար է, որին պետք է թույլ տալ հեռանալու։

Այնուամենայնիվ, նրա խոսքերը որոշ տպավորություն գործեցին ինձ վրա։ Այսպես, ես նշում եմ այն բազմաթիվ առիթները, երբ իմ սիրտը տենչում էր վերադառնալ դեպի բարին, որովհետև ապագայում ես այդ հուշերին էի պարտական իմ ուժի այն մասը, որն ինձ օգնեց տանելու իմ կյանքի ամենացավալի բոպեները։

Մանոնի փաղաքշանքները մի ակնթարթում փարատեցին այս տեսակցության ինձ պատճառած վիշտը։ Մենք շարունակեցինք վարել հաճույքներից ու սիրուց հյուսված մի կյանք։ Մեր հարստության աճումը կրկնապատկեց մեր փոխադարձ գուրգուրանքը։ Վեներան և Ֆորտունան երբևիցե մեզնից ավելի երջանիկ ստրուկներ չեն ունեցել։ Աստված իմ, ի՞նչպես կարելի է աշխարհն անվանել տառապանքների անդաստան, երբ այստեղ մարդիկ կարող են ճաշակել այնքա՜ն քաղցրանուշ վայելքներ։ Սակայն, ավա՜ղ, դրանք սրընթաց թռչելու հատկություն ունեն. ուրիշ ի՞նչ երանություն կարելի է գերադասել դրանցից, եթե դրանք իրենց բնությամբ հարատև լիներին։ Իմ և Մանոնի վայելքներին էլ վիճակված էր նույն ընդհանուր բախտը, այսինքն՝ այդ հաճույքները երկար չտևեցին և դառն կսկիծներ պատճառեցին մեզ։

Թղթախաղում ես այնպիսի խոշոր գումարներ տարա, որ մտածում էի մի մասը պահ տալ սեղանավորին։

Մեր ծառաները գիտեին իմ հաջողությունների մասին, մանավանդ իմ սպասավորը և Մանոնի աղախինը, որոնց ներկայությամբ հաճախ մենք խոսակցում էինք առանց զգուշանալու։ Աղախինը գեղեցիկ էր։ Իմ սպասավորը սիրահարվել էր նրան։ Նրանք գործ ունեին երիտասարդ ու ներողամիտ տերերի հետ, որոնց, ինչպես նրանք կարծում էին, հեշտությամբ կարելի էր խաբել։ Նրանք հղացան մեզ կողոպտելու միտքը և այդ իրագործեցին այնքան շարամտորեն և այնպիսի գրության մեջ նետեցին մեզ, որից այնուհետև երբեք չկարողացանք դուրս գալ։

Մի անգամ պարոն Լեսկոն մեզ ընթրիքի էր հրավիրել իր մոտ, և երբ մենք տուն վերադարձանք, մոտավորապես կեսգիշեր էր։ Ես կանչեցի իմ սպասավորին, Մանոնը՝ իր աղախնին. չերեսաց ո՛չ մեկը, ո՛չ մյուսը։ Իմացանք, որ նրանք ութ ժամ առաջ հեռացել են տնից, իրենց հետ վերցնելով մի քանի արկղներ, նրանց ասելով, ինձանից ստացած կարգադրության համաձայն։ Ես մասամբ նախազգացի ճշմարտությունը. սակայն այն, ինչ տեսա սենյակ մտնելիս, գերազանցեց իմ բոլոր կասկածները։ Իմ առանձնասենյակի փակը կոտրել էին և դրամս ու բոլոր զգեստներս գողացել։ Մինչ ես մտածում էի այս դեպքի մասին, Մանոնը սաստիկ հուզված եկավ ինձ հաղորդելու, որ նույն կողոպուտը կատարվել է և իր սենյակում։

Հարվածն այն աստիճան անողորմ էր, որ միայն բանականության արտակարգ ճիգն արգելեց ինձ անձնատուր չլինել լաց ու կոծին։ Այն երկյուղը, որ իմ վհատությամբ կհամակվի նաև Մանոնը, ստիպեց ինձ արտաքուստ անվրդով կերպարանք ցույց տալ։ Կատակով ես նրան ասացի, թե Տրանսիլվանյան հյուրանոցում որևէ ձախողակ խաղացող կհատուցի մեր վնասները։ Մինչդեռ նա այն աստիճան էր հուզված մեզ պատահած դժբախտությունից, որ նրա տրամադրությունն ինձ շատ ավելի վշտացրեց, քան իմ կեղծ զվարճությունը կարող էր նրան զերծ պահել հուսալքությունից։

— Մենք կործանվեցինք,— ասաց նա, արցունքներն աչքերին։ Ես իզուր էի աշխատում նրան մխիթարել իմ դգվանքներով։ Սեփական արտասուքներս մատնում էին վհատությունս ու վիշտս։ Հիրավի, այնպես հիմնովին էին կողոպտել մեզ, որ մի շապիկ անգամ չէր մնացել։

Ես որոշեցի իսկույն ևեթ կանչել պարոն Լեսկոյին։ Նա ինձ խորհուրդ տվեց անմիջապես դիմել պարոն ոստիկանապետին և Փարիզի գլխավոր դատավորին։ Ես այդ կատարեցի, սակայն մեծապես վնասելով ինձ, որովհետև ոչ միայն դիմումս և իմ խնդրանքով արդարության այդ պահապանների արած քայլերը հետևանք չունեցան, այլև այդպիսով ես ժամանակ տվի Լեսկոյին խորհրդակցելու իր քրոջ հետ և իմ բացակայությամբ նրան ներշնչել մի սարսափելի վճիռ։ Նա Մանոնին պատմում է մի ծեր տոփասեր պարոն դը Գ. Մ.-ի մասին, որը շռայլորեն հատուցում էր իր հաճույքների համար և այնքան համոզիչ կերպով է մատնանշում նրան այդ պարոնի սիրուհին լինելու առավելությունները, որ Մանոնը՝ միանգամայն ընկճված մեր դժբախտությունից, համաձայնում է նրա բոլոր ասածներին։ Սույն պատվավոր գործարքը կնքվել էր իմ վերադարձից առաջ, իսկ իրագործումը հետաձգվել էր մյուս օրվան, որպեսզի Լեսկոն նախազգուշացնի պարոն դը Գ. Մ.-ին։

Երբ ես վերադարձա, Լեսկոն մեր տանը սպասում էր ինձ, բայց Մանոնն առանձնացել էր իր սենյակը քնելու և հրամայել էր սպասավորին ասել ինձ, որ հանգստի կարիք ունի և խնդրում է չխանգարել իրեն այդ գիշեր։ Լեսկոն հեռացավ ինձնից, առաջարկելով մի քանի պիստոլ, որը և ես ընդունեցի։

Երբ անկողին մտա, մոտ ժամը չորսն էր։ Ես նորից երկար ժամանակ խորհեցի մեր կարողությունը վերականգնելու միջոցների մասին և այնքան ուշ քնեցի, որ ժամը տասնմեկը թե տասներկուսն էր, երբ արթնացա։ Հապճեպ վեր կացա, որպեսզի գնամ իմանալու Մանոնի առողջության մասին. ինձ ասացին, որ մի ժամ առաջ նա տնից մեկնել է իր եղբոր հետ, որը կառքով եկել էր նրա ետևից։ Թեպետ այդպիսի զբոսանքը Լեսկոյի հետ ինձ խորհրդավոր թվաց, այնուամենայնիվ ես ճնշում գործ դրի ինձ վրա, որպեսզի վանեմ կասկածներս։ Մի քանի ժամ անցկացրի ընթերցանությամբ.

ի վերջո, չկարողանալով այլևս դասել իմ հուզմունքը, սկսեցի մեծ-մեծ քայլերով ետ ու առաջ անել բնակարանում։ Մանոնի սենյակում սեղանի վրա մի փակ նամակ նկատեցի։ Նամակն ինձ էր ուղղված. ձեռագիրը նրանն էր։ Ես նամակը բացեցի մահացու մի սարսուռով. ահա թե ինչ էր ասված այնտեղ.

«Երդվում եմ քեզ, իմ սիրելի տասպետ, որ դու իմ սրտի կուռքն ես, ողջ աշխարհում ես միայն քեզ կարող եմ սիրել այնպես, ինչպես իրոք սիրում եմ։ Սակայն դու չե՞ս տեսնում, իմ խեղճ, սիրելի հոգյակս, որ մեր արդի վիճակում հավատարմությունն անմիտ առաքինություն է։ Մի՞թե դու կարծում ես, թե կարելի է քնքուշ լինել, երբ քաղցած ես։ Քաղցն ինձ համար մի ճակատագրական սխալանքի պատճառ կարող է լինել։ Մի օր ես կտամ իմ վերջին շունչը, կարծելով, որ դա սիրո հառաչանքն է։ Ես քեզ պաշտում եմ, հավատա ինձ, սակայն թույլ տուր ինձ միաժամանակ հարթել մեր դրամական դժվարությունները։ Վա՛յ նրան, ով կընկնի իմ ցանցը։ Ես աշխատում եմ, որպեսզի հարստացնեմ և երջանկացնեմ տասպետիս։ Իմ եղբայրը քեզ լուրեր կհաղորդի քո Մանոնի մասին. նա քեզ կասի, թե որքան եմ արտասվել քեզ լքելու անհրաժեշտության պատճառով»։

Այս նամակի ընթերցումից հետո ես ընկա մի այնպիսի դրության մեջ, որ միանգամայն դժվարանում եմ նկարագրել, որովհետև մինչև այսօր էլ չգիտեմ, թե ի՞նչպիսի զգացումներով էի այն ժամանակ փոթորկված։ Դա մեկն էր այն բացառիկ կացություններից, որոնց նմանը ոչ ոք չի ապրել երբևէ. չի կարելի դրանք բացատրել ուրիշներին, որովհետև ուրիշները չեն կարող գաղափար կազմել այդ մասին։ Բացի դրանից, ինքդ էլ դժվարանում ես լավ ըմբռնել դրանք, որովհետև, լինելով եղակի իրենց տեսակում, հիշողության մեջ դրանք չեն հարակցվում այլ ապրումների հետ, և ոչ էլ կարելի է մինչև իսկ դրանք համեմատել որևէ ծանոթ զգացման հետ։ Սակայն, ինչպիսին էլ որ լիներ իմ կացությունը, համենայն դեպս, պարզ էր, որ նա պարունակում էր և՛ ցավ, և՛ զայրույթ, և՛ խանդ, և՛ ամոթ։ Որքա՞ն ես երջանիկ կլինեի, եթե այն չպարունակեր մեծ չափով և սեր։

«Մանոնն ինձ սիրում է, ես հավատում եմ դրան։ Սակայն չէ՞ որ նա պետք է հրեշ լինի,— բացականչեցի ես,— որպեսզի ատի ինձ։ Կա՞ն արդյոք այնպիսի իրավունքներ մի սրտի նկատմամբ, որ ես չունենամ նրա հանդեպ։ Էլ ի՞նչ է մնացել անելու այն ամենից հետո, ինչ ես զոհաբերեցի նրան։ Այնուամենայնիվ, նա ինձ լքում է. ապերախտը կարծում է, թե իրեն իմ կշտամբանքներից զերծ է պահում, ասելով, թե չի դադարել ինձ սիրելուց։ Նա քաղցից է վախենում։ Օ՜, սիրո աստված, զգացումների ինչպիսի՞ դեհկությունն և որպիսի հատուցում՝ իմ սեփական նրբազգացությանը։ Քաղցն ինձ շահաբեկեց, երբ ես, ի սեր նրա, հաճությամբ ենթարկվեցի դրա փորձանքներին՝ հրաժարվելով իմ կարողությունից ու հայրական տան քաղցր անդորրից։ Ես, որ ինձ զրկել եմ ամենաանհրաժեշտ պետքերից, որպեսզի բավարարեմ նրա չնչին ցանկություններն ու քմահաճույքները։ Նա ասում է, որ ինձ պաշտում է։ Եթե, հիրավի, դու ինձ պաշտեիր, երախտամոռ, դու կխորհրդակցեիր ինձ հետ, չէիր լքի առանց հրաժեշտի։ Ի՞նձ պետք է հարցնել, թե ինչպիսի՞ դաժան տանջանքների է ենթարկվում մարդս, երբ բաժանվում է իր պաշտած էակից։ Պետք է բանականությունից զրկված լինես, որպեսզի քեզ հոժարակամ ենթարկես դրանց»։

Իմ դանդաղաներն ընդհատեց մեկի այցելությունը, որին ես բնավ չէի սպասում։ Այցելողը Լեսկոն էր։

— Դահիճ,— գոչեցի ես, ձեռքս տանելով սուսերիս,— ո՞ւր է Մանոնը, ի՞նչ արիր նրան։

Նա ահաբեկվեց իմ շարժումից։ Պատասխանեց, որ եթե նրան այդպես եմ ընդունում, երբ գալիս է ինձ հաշիվ տալու այն խոշորագույն ծառայության համար, որ կարողացել է ինձ մատուցել, ապա նա ստիպված է իսկույն հեռանալ և դրանից հետո էլ երբեք իր ոտքն իմ տունը չդնել։ Ես վազեցի դեպի դուռը և պինդ փակեցի։

— Չկարծես,— ասացի ես դառնալով նրան, թե քեզ կհաջողվի մի անգամ ևս ինձ խաբել ու հեքիաթներով կերակրել։ Պաշտպանիր քո կյանքը կամ ինձ վերադարձրու Մանոնին։

— Է՞, որքա՞ն դյուրաբորբոք ես,— առարկեց նա,— ես

էլ հենց այդ նպատակով եմ եկել։ Եկել եմ ձեզ հայտնելու մի երջանկության մասին, որը ձեր մտքով անգամ չի անցել, և որի համար դուք, թերևս, շնորհակալ պիտի լինեք ինձ։

Ես պահանջեցի, որ նա անմիջապես բացատրի, թե ինչ է ուզում ասել։

Նա ինձ պատմեց, որ Մանոնը, չկարողանալով տանել թշվառության երկյուղը և մանավանդ այն միտքը, որ մենք ստիպված պիտի լինենք միանգամից փոխելու մեր ապրելակերպը, խնդրել է իրեն հնարավորություն տալ ծանոթանալու պարոն դը Գ. Մ.-ի հետ, որի մասին ասում են, որ շատ առատաձեռն է։ Նա, իհարկե, չասաց, որ ինքն է այդ խորհուրդը տվել Մանոնին, և ոչ էլ այն, որ ինքն է ուզի հարթել, նախքան նրան այնտեղ առաջնորդելը։

— Ես այս առավոտ,— շարունակեց նա,— Մանոնին տարա նրա մոտ, և այդ արժանապատիվ մարդն այնքան հրապուրվեց նրա գեղեցկությամբ, որ հրավիրեց նրան նախապես գնալ իր ամառանոցը, ուր նա ցանկանում է անցկացնել մի քանի օր։ Իսկ ես,— շարունակեց Լեսկոն,— մի ակնթարթում ըմբռնելով, թե ինչ օգուտ կարելի է քաղել ձեզ համար այս առիթից, ճարպկությամբ հասկացրի նրան, որ Մանոնը խոշոր կորուստներ է ունեցել, և այն ստոփճան շոյեցի նրա մեծահոգությունը, որ ծերուկն իսկույն երկու հարյուր պիստոլ նվիրեց Մանոնին։ Ես նրան ասացի, որ առայժմ դա հրաշալի է, սակայն ապագայում մեծ ծախսեր են սպասում քրոջս, որը իր խնամքի տակ է վերցրել մեր հոր և մոր մահից հետո մնացած փոքրիկ եղբորը։ Եվ եթե պարոն դը Գ. Մ.-ն Մանոնին արժանի է համարում իր հարգանքին, ապա նա չի թողնի, որ իմ քույրը մտատանջվի այն խեղճ երեխայի համար, որի կյանքն անբաժան է իր կյանքից։ Պարոն դը Գ. Մ.-ն զգացվեց իմ պատմածից։ Նա պարտավորվեց մի հարմար տուն վարձել ձեզ և Մանոնի համար, որովհետև այդ դուք եք մեր խեղճ փոքրիկ որբ եղբայրը։ Նա խոստացավ պատշաճորեն կահավորել տունը և ձեզ նշանակել շորս հարյուր լիահնչուն ֆունտ ամսաթոշակ, որը մի տարում անում է, իմ հաշվով, շորս հազար ութ հարյուր։ Գյուղ մեկնելուց առաջ նա հրամայեց իր կառավարչին մի տուն գտնել և

մինչև իր վերադարձը հոգ տանել, որ ամեն ինչ այնտեղ պատրաստ լինի։ Այն ժամանակ դուք վերստին կտեսնեք Մանոնին, որն ինձ հանձնարարել է իր փոխարեն ձեզ հազար անգամ համբուրել և հավատիացնել, որ նա ձեզ սիրում է ավելի շատ, քան երբեք։

Ես հուսաբեկ նստեցի և խորասուզվեցի զանազան մտածումների մեջ, թե որքան տարօրինակ ընթացք ունի իմ վիճակը։ Զանազան զգացումներ ու մի անասելի անորոշ կացություն պատեցին ինձ, և ես երկար ժամանակ ոչ մի պատասխան չկարողացա տալ Լեսկոյի հարցումների տարափին։ Այդ վայրկյանում պատիվը և առաքինությունն ինձ ստիպեցին խղճի խայթ զգալու, և ես հառաչելով մի հետադարձ հայացք ձգեցի դեպի Ամիյենն՝ դեպի իմ հայրենական տունը, դեպի Սեն-Սյուլպիս և դեպի այն բոլոր վայրերը, ուր ես ապրել էի անմեղության մեջ։ Ինչպիսի անսահման տարածություն էր ինձ բաժանում նախկին երջանիկ կացությունից։ Ես այն տեսնում էի հեռվից։ Նա երևում էր որպես մի սավեր, որը հարուցում էր իմ կսկիծն ու տանջանքները, և որը, սակայն, շափազանց թույլ էր, որպեսզի կարողանար հարուցել և իմ եռանդը։ «Ո՞ր ճակատագիրը,— ասացի ես մտքումս,— այս ստոփճան հանցագործ դարձրեց ինձ։ Սերն անմեղ մի կիրք է։ Ի՞նչպես դա ինձ համար եղավ թշվառության ու անառակության աղբյուր։ Ո՞վ էր ինձ արգելում անդորր ու առաքինի ապրել Մանոնի հետ։ Ինչո՞ւ ես նրա հետ չամուսնացա, նախքան նրա սիրո ապացույցն ստանալը։ Մի՞թե ինձ քընքշագին սիրող հայրս չէր համաձայնվի, եթե ես թախանձեի նրան օրինավոր պնդումով։ Օ՜հ, հայրս ինքը կդուրդուրեր Մանոնին որպես հրաշագեղ մի աղջկա, որն ավելի քան արժանի է իր որդու կինը լինելու։ Ես երջանիկ կլինեի Մանոնի սիրով, հորս գուրգուրանքով, ազնվաբարո մարդկանց հարգանքով, բախտի բարիքներով և առաքինության անդորրությամբ։ Օ՜, իմ շարաբաստիկ հեղհեղուկ վիճակ։ Ի՞նչպիսի ստոր մարդ են ուզում ինձ դարձնել։ Ես նրա հետ ի՞նչ պետք է կիսեմ... Սակայն կարո՞ղ եմ արդյոք երկմտել, քանի որ ինքը Մանոնն է այդպես կարգադրել, և քանի որ ես կարող եմ կորցնել

նրան, եթե չհամաձայնվեմ այդ նվաստացուցիչ առաջարկության հետ։

— Պարոն Լեսկո,— բացականչեցի ես, աչքերս փակելով, կարծես այս ցավալի մտքերն ինձնից վանելու համար,— եթե դուք մտադրվել եք ինձ ծառայություն մատուցել, ապա շնորհակալություն եմ ձեզ հայտնում։ Իհարկե, դուք կարող էիք այդ անել մի ուրիշ, ավելի ազնիվ ճանապարհով։ Բայց դա արդեն կատարվել է, այնպես չէ՞։ Այժմ մեզ մնում է միայն խորհել, թե ինչպես օգտվենք ձեր հոգատարությունից և ինչպես օգտագործենք ձեր ծրագիրը։

Լեսկոն, որին իմ զայրույթն ու դրանից հետո տիրող երկար լռությունը շփոթել էր, մեծապես ուրախացավ, լսելով իմ՝ իր սպասածից բոլորովին տարբեր վճիռը, որը նրան անշուշտ երկյուղ էր պատճառել. նա բնավ քաջասիրտ չէր։ Հետագայում այդ մասին ես ամենահամոզիչ փաստերն ունեցա։

— Այո, այո,— պատասխանեց նա շտապ,— ես շատ խոշոր ծառայություն մատուցեցի ձեզ, և կտեսնեք, որ ապագայում դրանից մենք ավելի մեծ օգուտ կքաղենք, քան դուք սպասում եք։

Մենք սկսեցինք խորհրդակցել, թե ինչ կերպ կարելի կլիներ կանխել պարոն դը Գ. Մ.-ի կասկածները, որ նա կարող էր ունենալ մեր ազգակցության վերաբերյալ, երբ տեսներ, որ ես ավելի բարձրահասակ եմ և, թերևս, ավելի տարիքոտ, քան նա պատկերացնում էր։ Մենք ուրիշ հնար չգտանք. ես որոշեցի նրա առաջ գավառացու միամիտ կերպարանք ընդունել՝ որ իբր պատրաստվում եմ հոգևորական դառնալու, և այդ նպատակով ամեն օր ճեմարան եմ գնում։ Բացի դրանից, մենք որոշեցինք, որ առաջին անգամ, երբ պատիվ ունենամ նրան ներկայանալու, հնարավորին չափ վատ հագնվեմ։

Պարոն դը Գ. Մ.-ն քաղաք վերադարձավ երեք-չորս օրից հետո։ Նա անձամբ Մանոնին ուղեկցեց իր կառավարչի վարձած և խնամքով կահավորված տունը։ Նրա վերադարձի մասին Մանոնն անմիջապես տեղեկացրեց Լեսկոյին, իսկ վերջինս հաղորդեց ինձ այդ լուրը, և մենք երկուսով մեկնեցինք Մանոնի մոտ։ Մեր սիրեկանն արդեն դուրս էր եկել տնից։

Չնայած այն անտրտունջ խոնարհությանը, որով ես

հպատակվեցի Մանոնի ցանկություններին, այնուամենայնիվ, չկարողացա զսպել սրտիս մորմոքը, երբ նորից տեսա նրան։ Տխուր ու հոգետանջ վիճակում ներկայացա նրան։ Նրան վերստին տեսնելու ուրախությունս բոլորովին չփարատեց իր անհավատարմությունից կրած իմ վիշտը։ Ընդհակառակը, ինքը կարծես հիացած էր ինձ նորից տեսնելու հաճույքից։ Նա ինձ կշտամբեց սառնությանս համար։ Ես չկարողացա ինձ զսպել և նրան նենգ ու սիրադրուժ անվանեցի. այս խոսքերը արտասանեցի հառաչանքով։

Նա նախ ծիծաղեց իմ անշուք արտաքինի վրա, սակայն երբ տեսավ իր դեմքին հառած անթարթ հայացքս և իմ խոր վիշտը՝ կրած այս փոփոխության հետևանքով, որ միանգամայն անհարիր էր իմ բնավորությանը և տենչանքներին, նա լուռ առանձնացավ իր սենյակը։ Մի բոպե հետո ես հետևեցի նրան։ Նա դառն արտասվում էր։ Ես հարցրի արտասվելու պատճառը։

— Քեզ դա լավ հայտնի պետք է լինի,— պատասխանեց նա։— Կարո՞ղ եմ արդյոք ես ապրել, երբ իմ տեսքը քեզ ուրիշ բան չի ներշնչում, բացի տխրությունից ու վշտից։ Ահա մի ժամ է, ինչ դու այստեղ ես, սակայն ինձ ոչ մի անգամ չգուրգուրեցիր, մինչդեռ իմ զգվանքներն ընդունեցիր սուլթանի վեհությամբ՝ կարծես հարեմում։

— Լսիր, Մանոն,— ասացի ես, գրկելով նրան,— չեմ կարող քեզնից թաքցնել, որ իմ սիրտը մահացու խոցվել է։ Այժմ ես չեմ խոսում այն խոր վշտի մասին, որ ինձ պատճառել է քո անսպասելի փախուստը, ոչ էլ այն անզթության մասին, որով դու առանց մխիթարական մի խոսքի լքեցիր ինձ՝ գիշերն ուրիշի անկողնում անցկացնելով։ Քո ներկայության հմայքն ընդունակ է ինձ ստիպել մոռանալու դեռ ավելին։ Բայց մի՞թե դու կարծում ես, թե ես կարող եմ առանց հառաչանքի ու արցունքի,— շարունակեցի ես լալագին,— մտածել այն տխուր ու թշվառ կյանքի մասին, որը ես այստեղ վարելու եմ քո կամքի համաձայն։ Մի կողմ թողնենք իմ ծագումն ու պատիվը, այս բոլորը չափազանց թույլ հիմքեր են, որպեսզի կարենան մրցել իմ սիրո հետ։ Մի՞թե չես պատկերացնում, թե ինչպես սերը մորմոքում է, երբ տեսնում

է իրեն այդքան վատ վարձատրված կամ, ավելի շուտ, անգթորեն փոշտանգված՝ երախտամոռ ու դաժան սիրուհուց։

— Լսիր, ասպետս,— ընդհատեց Մանոնը,— անօգուտ է ինձ տանջել կշտամբանքներով, որոնք խոցում են սիրտս, երբ դրանք քեզանից եմ լսում։ Ես տեսնում եմ, թե ինչն է քեզ վիրավորում։ Ես հույս ունեի, թե դու կհամաձայնես այն ծրագրի հետ, որ կառուցել էի մեր կարողությունը փոքրինչ վերականգնելու համար։ Ես միայն քո փափկանկատությունը խնայելու նկատառումով սկսեցի այն իրագործել առանց քո մասնակցության. բայց ես դրանից հրաժարվում եմ, քանի որ դու չես տալիս քո հավանությունը։— Նա ավելացրեց, որ այժմ ինձանից խնդրում է միայն մի բան՝ համբերել մինչև երեկո, որովհետև ինքն արդեն երկու հարյուր պիստոլ ստացել է իր ծեր սիրեկանից, որը նրան խոստացել է երեկոյան բերել մի հրաշալի մարգարտյա մանյակ և ուրիշ զոհարներ, ապա նաև խոստացած տարեկան թոշակի կեսը։— Ժամանակ տուր ինձ,— ասաց նա,— որ ես ստանամ այս նվերը. երդվում եմ քեզ, որ նա ոչ մի հիմք չունի պարծենալու, թե վայելել է իմ շնորհները, որովհետև ես այդ նրան խոստացել եմ քաղաք վերադառնալուց հետո։ Ճիշտ է, նա միլիոն և ավելի անգամ համբուրել է իմ ձեռները, և միանգամայն արդարացի է, որ վճարի այդ հաճույքի համար. հինգ կամ վեց հազար ֆրանկ մի արտակարգ վճար չէ՝ նկատի ունենալով նրա հարստությունն ու տարիքը։

Նրա որոշումն ինձ շատ ավելի հաճելի էր, քան հինգ հազար ֆրանկ ստանալու հույսը։ Ես առիթ ունեցա համոզվելու, որ իմ սիրտը տակավին ամբողջապես չի կորցրել պատվի զգացումը, քանի որ այդքան հրճվում է ամոթալի արարքից խուսափելու համար։ Սակայն ես ծնված եմ վաղանցուկ բերկրանքի և տևական տառապանքների համար։ Ճակատագիրն ինձ փրկեց մի վիհից՝ որպեսզի նետի մի ուրիշ անդունդ։

Երբ հազար ու մի փաղաքշանքով իմ երջանկությունը հայտնեցի Մանոնին նրա այդ շրջադարձի առթիվ, ես ավելացրի, որ պետք է այս մասին տեղեկացնել պարոն Լեսկոյին, որպեսզի նրա հետ համաձայնեցնենք մեր անելիք քայլերը։

Սկզբում Լեսկոն փոքր-ինչ մտմտաց. սակայն չորս-հինգ հազար ֆրանկ հնչուն դրամը դրդեցին նրան ուրախությամբ ընդունելու մեր առաջադրած ծրագիրը։ Որոշեցինք, որ բոլորս էլ կգնանք ընթրիքի պարոն դը Գ. Մ.-ի մոտ՝ երկու պատճառով. նախ՝ որպեսզի մի քիչ զվարճանանք, ես ինձ ձևացնելու էի որպես Մանոնի դպրոցական եղբայրը, երկրորդ՝ որպեսզի թույլ չտանք ցոփ ծերուկին շափից դուրս աղատ վարվել սիրուհուս հետ, ենթադրելով, թե նա այդ իրավունքը գնել է իր այնքան առատ կանխավճարով։ Լեսկոն և ես պետք է հեռանայինք, երբ Գ. Մ.-ն բարձրանար իր սենյակը, որտեղ անցկացնելու էր գիշերը, իսկ Մանոնը, փոխանակ նրան հետևելու, խոստացավ մեր ետևից դուրս գալ տնից և գիշերն անցկացնել ինձ հետ։ Լեսկոն հանձն առավ տրամադրել, որ մեր կառքը ճիշտ որոշված ժամին պատրաստ լինի դռան առաջ։

Երբ ընթրիքի ժամանակը հասավ, պարոն դը Գ. Մ.-ն իրեն երկար սպասել չտվեց։ Լեսկոն քրոջ հետ դահլիճում էր։ Մերուկը ողջունեց իր գեղանի սիրուհուն՝ նվիրաբերելով նրան մարգարտյա ապարանջաններ, մանյակներ, օղեր, որոնք առնվազն հազար էկյու արժեին։ Այնուհետև նա հնչուն ոսկով հաշվեց երկու հազար չորս հարյուր ֆունտ, որը նշանակած թոշակի կեսն էր։ Նա իր ընծաները համեմեց բյուր հաճոյախոսություններով՝ հյուսված հին արքունի ոճով։ Մանոնը չկարողացավ նրան մերժել մի քանի համբույր. դրանով նա իրավունք էր ձեռք բերում այն դրամի վրա, որ ծերուկը տալիս էր նրան։ Ես դրսում դռան մոտ՝ ականջ էի դնում, սպասելով, որ Լեսկոն ինձ նշան անի ներս մտնելու։

Նա եկավ իմ ետևից և ձեռքիցս բռնած մտցրեց դահլիճ, երբ Մանոնն արդեն ստացած դրամն ու զոհարները թաքցրել էր իր արկղիկում։ Նա ինձ տարավ պարոն դը Գ. Մ.-ի մոտ և հրամայեց խոր գլուխ տալ։ Ես երեք թե չորս անգամ խոնարհվեցի նրա առաջ։

— Ներողամիտ եղեք, պարոն,— ասաց Լեսկոն,— երեխան տակավին բոլորովին անտաշ է։ Ինչպես տեսնում եք, նա դեռևս չի տիրապետում Փարիզի նիստուկացին, սակայն մենք հույս ունենք, որ սովորությունը կհղկի նրան։ Դուք

պատիվ պիտի ունենաք պարոնին հաճախ այստեղ տեսնելու,— ավելացրեց նա, շրջվելով դեպի ինձ,— աշխատեցեք լավ օգտվել այսպիսի մի սքանչելի օրինակից։

Մեր սիրեկանը կարծես հաճույքով էր ինձ դիտում։ Նա երկու թե երեք անգամ թեթև շոյեց իմ այտերը, ասելով, որ ես դեղագեմ տղա եմ, ուստի Փարիզում միշտ պետք է զգույշ լինեմ, որովհետև այստեղ երիտասարդ տղամարդիկ շատ դյուրությամբ են անձնատուր լինում անառակության։ Լեսկոն նրան վստահեցրեց, որ ես ի բնե չափազանց պարկեշտ մի տղա եմ և միայն տենչում եմ քահանա դառնալ, որ իմ միակ հաճույքը գտնում եմ փոքրիկ մատուռներ կառուցելու խաղի մեջ։

— Ես տեսնում եմ, որ նա նման է Մանոնին,— ասաց ծերունին, ծնոտս բռնելով։ Ես նրան պատասխանեցի՝ դեմքիս միամիտ արտահայտություն տալով.— այդ նրանից է, պարոն, որ մենք արյունակից ենք, և ես սիրում եմ իմ քրոջն, ինչպես սեփական անձիս։

— Դուք լսո՞ւմ եք,— ասաց նա Լեսկոյին,— խելոք տղա է։ Ափսոս, որ նա հասարակության մեջ քիչ է եղել։

— Ոչ, պարոն,— առարկեցի ես,— մեր եկեղեցիներում մեծ բազմության հետ եմ շփվել և հավատացած եմ, որ Փարիզում ինձնից տխմար շատ մարդիկ պիտի տեսնեմ։

— Տեսնո՞ւմ եք,— ավելացրեց նա, միշտ խոսքն ուղղելով Լեսկոյին,— գավառացի տղայի համար դա սքանչելի է։

Ընթրիքի ժամանակ մեր ամբողջ խոսակցությունը գրեթե ընթացավ այս եղանակով։ Ջարաճճի Մանոնն իր անզուսպ քրքիջներով մի քանի անգամ քիչ մնաց խորտակեր մեր ծրագիրը։ Ընթրիքի ընթացքում ես առիթ գտա ծերունուն անելու իր սեփական պատմությունը և այդ պատմության նրան սպառնացող շարաբաստիկ վերջավորությունը։ Լեսկոն և Մանոնը դողում էին իմ պատմած ժամանակ, մանավանդ, երբ ես Գ. Մ.-ի ճշգրիտ պատկերն էի ուրվագծում. սակայն ինքնասիրությունն արգելք հանդիսացավ նրան այդ պատկերի մեջ ճանաչել իրեն, և ես իմ պատմությունն այնպիսի ճարպկությամբ վերջացրի, որ նա ինքն առաջինը նշեց, թե դա շատ զվարճալի է։ Դուք հետագայում կտեսնեք, որ այս

արտակարգ դիպվածի մասին այսքան երկար խոսելն անհիմն չէ։

Վերջապես, երբ քնելու ժամանակը եկավ, ծերունին սկսեց խոսել սիրո և իր անհամբերության մասին։ Լեսկոն և ես հեռացանք։ Ներունուն առաջնորդեցին իր սենյակը, իսկ Մանոնը, ինչ-որ պատրվակով դուրս գալով, եկավ միացավ մեզ։ Երեք-չորս տուն այդտեղից ցած մեզ սպասող կառքն ուղղվեց դեպի մեզ։ Մի ակնթարթում մենք հեռացանք այդ թաղից։

Թեպետև իմ աչքում այս վարմունքն իսկական խաբեություն էր, այնուամենայնիվ, դա ամենից անպղծիվ արարքը չէր, որի համար պարտավորվեի ինձ կշտամբելու։ Ինձ շատ ավելի մեծ խղճահարություն էր պատճառում այն դրամը, որ տանում էի թղթախաղում։ Ի դեպ, մենք ոչ մի օգուտ չքաղեցինք ոչ մեկից և ոչ մյուսից, երիտասարդն այնպես տնօրինեց, որ այս երկու խարդախությունից փոքրագույնն ավելի խստությամբ պատժվեց։

Պարոն դը Գ. Մ.-ն շատ շուտ գլխի ընկավ, որ ինքը խաբեության զոհ է եղել։ Զգիտեմ, արդյոք հենց այն երեկո նա դիմե՞ց որևէ քայլի՝ մեզ գտնելու համար. նա բավականին լայն կապեր ուներ, որոնք ապահովում էին նրա ճիգերի շուտափույթ հաջողությունը, իսկ մենք բավականին անխոհեմ գտնվեցինք, հույս դնելով Փարիզի մեծության և մեր ու ծերունու թաղերի միջև եղած տարածության վրա։ Ոչ միայն նա տեղեկացավ մեր բնակավայրի և ներկա կացության մասին, այլև իմացավ և իմ ով լինելը, Փարիզում անցկացրած կյանքիս մասին, Մանոնի Բ.-ի հետ ունեցած սիրային կապի և նրա դավաճանության մասին, մի խոսքով նա իմացավ մեր պատմության բոլոր խայտառակությունները։ Այս ամենից հետո նա որոշեց մեզ ձերբակալել տալ և պահանջել, որ մեզ դատեն ոչ միայն իբրև քրեական հանցագործների, այլև որպես անուղղելի անառակների։ Մենք տակավին անկողնումն էինք, երբ ոստիկանության մի սպա վեց պահակների հետ մտավ մեր սենյակը։ Նրանք ամենից առաջ խլեցին մեզ մոտ եղած դրամը, ավելի ճիշտ պարոն Գ. Մ.-ի դրամը, հետո կոպտությամբ մեզ անկողնուց հանեցին և առաջնորդեցին

դեպի փողոց, ուր երկու կառք սպասում էին մեզ. մեկի մեջ նստեցրին խեղճ Մանոնին, առանց որևէ բացատրության, իսկ մյուսով ինձ տարան Սեն-Լազար։

Մարդս ինքը պետք է ապրած լինի այդպիսի ձախորդություններ, որպեսզի կարողանա դատել դրանցից առաջացած հուսահատության մասին։ Պահակն անգութ գտնվեց և թույլ չտվեց, որ ես գրկեմ իմ Մանոնին և ոչ էլ գոնե մի խոսք ասեմ նրան։ Երկար ժամանակ ես չգիտեի, թե ինչ է պատահել նրան։ Անտարակույս, ինձ համար երջանկություն էր, որ անմիջապես չիմացա նրա վիճակի մասին, որովհետև այդպիսի մի սոսկալի աղետ կարող էր ինձ զրկել խելքից, թերևս և կյանքից։

Անբախտ սիրուհիս իմ աչքի առաջ հափշտակվեց և կալանավորվեց մի արդելատան մեջ, որի անունն անգամ ինձ սարսափեցնում է։ Ի՞նչ վիճակ մի չքնաղագեղ արարածի համար, որը կարող էր աշխարհի առաջին գահը գրավել, եթե բոլոր մարդիկ ունենային իմ աչքերն ու սիրտը։ Ճիշտ է, նրա հետ այնտեղ բարբարոսությամբ չվարվեցին, սակայն նա բանտարկվեց մի նեղ խցում՝ միայնակ և դատապարտվեց ամենօրյա աշխատանքի, որպես անհրաժեշտ մի պայման՝ գարշելի կերակուր ստանալու համար։ Այս ցավալի մանրամասնությունը ես իմացա շատ ժամանակ հետո այն օրից, ինչ ինքս մի քանի ամիս կրեցի տաժանակիր ու հոգեմաշ պատիժը։

Իմ պահակները նույնպես չասացին, թե ուր են տանում ինձ, և ես իմ վիճակն իմացա Սեն-Լազար բանտի առջևում միայն։ Այդ բոպեին ես կգերադասեի մահն այն դրությունից, որ ինչպես ես էի մտածում, շուտով վիճակվելու էր ինձ։ Այդ բանտի մասին ես զարհուրելի գաղափար ունեի։ Իմ սարսափը կրկնապատկվեց, երբ այնտեղ մտնելիս պահակները կբրկին անգամ խուզարկեցին գրպաններս, համոզվելու համար, որ ինձ մոտ չկա ոչ զենք և ոչ էլ դիմադրության ուրիշ որևէ գործիք։

Անմիջապես հայտնվեց վանահայրը, որին նախազգուշացրել էին ինձ բերելու մասին։ Նա մեծ սիրալիրությամբ ողջունեց ինձ։

— Հայր իմ,— ասացի ես նրան,— խնդրում եմ ինձ հետ վարվել առանց վիրավորանքի. ես պատրաստ եմ հաղար կյանք զոհաբերելու, քան թե տանել որևէ անարժան վերաբերմունք։

— Ոչ, իհարկե, ոչ, պարոնս,— պատասխանեց նա ինձ,— դուք ձեզ վայելուչ կպահեք, և մենք գոհ կմնանք միմյանցից։

Նա խնդրեց ինձ բարձրանալ վերին հարկը։ Առանց ընդդիմադրության ես հետևեցի նրան։ Պահակները մեզ ուղեկցեցին մինչև սենյակի դուռը. վանականն ինձ հետ ներս մտավ և նրանց նշան արավ հեռանալու։

— Ուրեմն ես ձեր գերի՞ն եմ,— ասացի նրան։— Թող այդպես լինի, հայր իմ, սակայն ի՞նչ եք մտադիր անելու ինձ։

Նա պատասխանեց, որ շատ ուրախ է՝ տեսնելով իմ խոնարհությունը. նրա պարտականությունն է ջանալ ինձ հարգանք ներշնչել դեպի առաքինությունն ու կրոնը, իսկ ես պարտավոր եմ օգտվել նրա հորդորներից և խրատներից։ Եթե ես ընդառաջ գնամ դեպի ինձ ունեցած իր սիրալիր ուշադրությանը, ապա իմ մենության մեջ հաճույքից բացի ուրիշ ոչինչ չեմ զգա։

— Ինչպե՞ս, հաճույք զգա՞լ,— ասացի ես,— մի՞թե դուք չեք ճանաչում, հայր իմ, այն միակ առարկան, որն ընդունակ է ինձ հաճույք պատճառելու։

Նրա պատասխանն ինձ համոզեց, որ նա իրազեկ է իմ արկածներին և, թերևս, գիտե նաև անունս։

Ես նրան խնդրեցի ասել, թե ինչ գիտե իմ մասին։ Նա անկեղծորեն ասաց, որ ամեն ինչ պատմել են իրենց։

Այս լուրը բոլոր պատիժներից ամենադաժանը եղավ։ Ես արցունքի հեղեղներ թափեցի և անձնատուր եղա ամենասարսափելի հուսահատության։ Ես ոչ մի կերպ չէի կարող մխիթարվել այն նվաստացումից, որը շուտով իմ բոլոր ծանոթների խոսակցության նյութը և իմ ընտանիքի ամոթը պիտի լիներ։ Այսպես ես անցկացրի ութ օր ամենամեծ վհատության մեջ, ի վիճակի չլինելով որևէ բան լսելու, ոչ էլ ուրիշ բանի մասին մտածելու, բացի իմ նախատինքից։ Նույնիսկ Մանոնին հիշելը ոչինչ չէր ավելացնում իմ վշտին.

Թերևս դա միանում էր նրան որպես մի զգացմունք, որը ծագել էր իմ այս նոր ցավից, սակայն իմ հոգում տիրող հույզը սոսկ ամոթն ու վրդովմունքն էր։

Սակավաթիվ մարդիկ գիտեն սրտի այս առանձնահատուկ հույզերի զորությունը։ Մարդկանց մեծ մասը զգայուն է միայն հինգ կամ վեց զգացումների հանդեպ, որոնց շրջանակում ընթանում է կյանքը և որոնց հանգում են նրանց բոլոր հույզերը։ Խլեցեք նրանցից սերն ու ատելությունը, հաճույքն ու ցավը, հույսն ու վախը, և նրանք այլևս ոչինչ չեն զգա։ Սակայն ավելի բարձր ու ազնիվ բնության տեր մարդիկ կարող են հուզվել հազար ու մի այլ ձևերով. թվում է, թե նրանք օժտված են հինգից ավելի զգայարաններով և որ կարող են ստանալ գաղափարներ ու զգայություններ, որոնք դուրս են բնության սովորական սահմաններից։ Եվ որովհետև նրանք գիտակցում են այդ գերազանցությունը, որն իրենց բարձր է դասում հասարակ մարդկանց մակարդակից, ապա նրանք վերին աստիճանի նախանձախնդիր են այդ հարցում։ Այս պատճառով է, որ նրանք այնքան անհամբեր են նախատինքի ու ծաղրի ժամանակ, և որ ամոթը նրանց ամենաբուռն կիրքն է։

Այս շարաբաստիկ առավելությունը ես ունեի Սեն-Լազարում գտնված ժամանակ։ Իմ վիշտն այն աստիճան ծայրահեղ թվաց վանահորը, որ, վախենալով վատ հետևանքներից, նա որոշեց ինձ հետ շատ ավելի մեղմ ու ներողամտորեն վարվել։ Նա օրական երկու թե երեք անգամ այցելում էր ինձ։ Հաճախ նա ինձ իր հետ տանում էր պարտեզ զրոսանքի և իր եռանդը սպառում՝ հորդորանքներ ու փիլիսոփայական խրատներ տալով ինձ։ Ես դրանք ընդունում էի խոնարհաբար և նույնիսկ շնորհակալությունս էի հայտնում. այս պարագան նրան հույս էր ներշնչում իմ բարոյական դարձի մասին։

— Դուք բնությամբ այնքան հեզահամբույր ու համակրելի եք,— ասաց նա մի օր,— որ չեմ կարող հավատալ այն անառակությունը, որում ձեզ մեղադրում են։ Երկու բան ինձ զարմացնում է. նախ՝ ի՞նչպես այսպիսի գերազանց բարեմասնություններ ունենալով հանդերձ դուք անձնատուր եք եղել ծայրահեղ անառակության. երկրորդ, որով ես առավել

ես հիանում եմ, ի՞նչպես դուք այսպիսի հաճույքով լսում եք իմ խորհուրդներն ու հորդորները՝ երկար տարիներ զեխ կյանք վարելուց հետո։ Եթե դա զղջման հետևանք է, դուք երկնային գթասրտության նախընտրած մի մարդ եք. իսկ եթե դա բխում է ձեր բնածին բարությունից, ուրեմն դուք համենայն դեպս օժտված եք մի գերազանց բնավորությամբ, որն ինձ հույս է ներշնչում, թե կարիք չկա ձեզ երկար պահելու մեզ մոտ, որպեսզի վերադարձնենք ազնիվ ու արժանավայել կյանքի։

Ես հիացմունքով լսեցի նրա կարծիքն իմ մասին։ Որոշեցի այդ կարծիքն ամրացնել այնպիսի մի վարմունքով, որը միանգամայն գոհացներ նրան, որովհետև համոզված էի, որ դա իմ բանտարկությունը կարճելու ամենաապահով միջոցն է։ Գրքեր խնդրեցի նրանից։ Նա շատ զարմացավ, որ ես կանգ առա մի քանի լուրջ հեղինակների վրա, թեպետ ինձ էր շնորհված ընտրության իրավունքը։ Ես ձևացրի, թե միանգամայն տարվում եմ ուսումով և այսպես ամեն հարմար առիթին նրան ապացույցներ տվի իր սպասած փոփոխության վերաբերմամբ։

Սակայն դա միայն արտաքուստ էր այդպես։ Ամոթով պետք է խոստովանեմ, որ ես Սեն-Լազարում երկերեսանի անձի դեր էի կատարում։ Սովորելու փոխարեն, երբ մենակ էի, միայն հեծեծում էի իմ բախտի վրա։ Նզովում էի իմ բախտն ու ինձ այնտեղ արգելափակող բռնակալությունը։ Տակավին ես չէի ապաքինվել այն ցավից, որով բռնված էի, երբ վերստին անձնատուր եղա սիրո տառապանքներին։ Մանոնի բացակայությունը, նրա վիճակի անորոշությունը, նրան երբեք չտեսնելու երկյուղն իմ տխուր մտորումների միակ առարկան էր։ Ես նրան երևակայում էի պարոն դը Գ. Մ.-ի գրկում, որովհետև դա էր իմ առաջին ենթադրությունը։ Ես հեռու էի այն մտքից, թե նա կարող է Մանոնի հետ վարվել այնպես, ինչպես ինձ հետ վարվեց, և համոզված էի, որ նա ինձ հեռացրել է նրան հանգիստ տիրանալու նպատակով։

Այսպես էի անցկացնում օրերն ու գիշերները, որոնք ինձ անվերջանալի երկար էին թվում։ Իմ ամբողջ հույսը ես դրել էի միայն իմ կեղծավորության հաջողության վրա։ Ես ուշա-

գրությամբ դիտում էի վանահոր դեմքի արտահայտությունը և հետևում նրա խոսքերին, որպեսզի իմանամ, թե նա ի՞նչ է մտածում իմ մասին, և աշխատում էի սովորել հաճոյանալու նրան, որպես իմ բախտի դատավորին։ Դյուրությամբ նկատեցի, որ նա իմ մասին լավ կարծիք ունի և համակրում է ինձ։ Այլևս ոչ մի տարակուսանք չունեի, որ նա պատրաստ է ինձ ծառայություն մատուցելու։

Մի անգամ ես համարձակություն ունեցա հարցնելու նրան, թե արդյոք իրենի՞ց է կախված իմ ազատությունը։ Նա ինձ ասաց, որ դա բացարձակապես իրենից չի կախված։ Սակայն հույս ունի, որ իր միջնորդությամբ պարոն դը Գ. Մ.-ն, որի խնդրանքով ոստիկանության գլխավոր պետը հրամայել է ինձ բանտարկել, թերևս համաձայնվի ազատ արձակել։

— Կարո՞ղ եմ արդյոք հուսալ,— ասացի ես խոնարհաբար,— որ իմ կրած երկամյա բանտարկությունը նա բավական կհամարի՝ իբրև իմ հանցանքների քավություն։

Նա խոստացավ խոսել Գ. Մ.-ի հետ, եթե ես ցանկամ։ Ես նրան թախանձագին խնդրեցի մատուցել ինձ այդ բարի ծառայությունը։

Երկու օր հետո նա ինձ հաղորդեց, որ պարոն դը Գ. Մ.-ն այն աստիճան է զգացվել իմ մասին հայտնած բարենպաստ կարծիքով, որ ոչ միայն որոշել է ինձ ազատություն շնորհել, այլ նաև մեծ ցանկություն է հայտնել ավելի մոտիկից ինձ ճանաչելու և մտադիր է ինձ այցելել բանտում։ Թեև նրա այցելությունը չէր կարող հաճելի լինել ինձ, այնուամենայնիվ, ես այդ համարեցի իմ ազատությունը մոտեցնող մի միջոց։

Հիրավի, նա եկավ Սեն-Լազար։ Նա ինձ երկաց ավելի պատկառելի և նվազ հիմար, քան Մանոնի տանն եղած ժամանակ։ Ինձ մի քանի բարեմիտ խոսքեր ասաց իմ վատ վարքի մասին։ Այնուհետև ավելացրեց, անշուշտ իր սեփական անառակությունն արդարացնելու համար, որ մարդկային թուլությանը թույլատրելի է վայելել որոշ հաճույքներ, որ պահանջում է բնությունը, սակայն խաբեությունն ու խայտառակ արարքը արժանի են պատժի։

Ես նրան լսեցի խոնարհաբար, որից և նա շատ գոհ մնաց։ Ես նույնիսկ չվիրավորվեցի նրա ծաղրանքներից, ուղղված իմ, Լեսկոյի և Մանոնի եղբայրությանը, այն փոքրիկ մատուռներին, որ ինչպես նա էր ենթադրում, ես մեծ քանակությամբ պետք է արդեն կառուցած լինեի Սեն-Լազարում, քանի որ այդ բարեպաշտ զբաղմունքն ինձ այնքան հաճույք էր պատճառում։ Սակայն նա՝ ի դժբախտություն իր և իմ, անխոհեմություն ունեցավ ասելու, որ անտարակույս Մանոնը ևս արգելատանը նույնպիսի գեղեցիկ մատուռիկներ պետք է որ կառուցած լինի։ Չնայած արգելատան անվան ինձ նշանակած սարսափին, ես ուժ ունեցա նրան հեզաբար խնդրելու, որ բացատրի, թե ի՞նչ է ուզում ասել։

— Այո,— պատասխանեց նա,— ահա երկու ամիս է, ինչ ձեր Մանոնը գլխավոր արգելատանը ողջախոհություն է սովորում, և ես ցանկանում եմ, որ նա ևս այնտեղ նույնքան օգուտ քաղի, որքան դուք՝ Սեն-Լազարում։

Եթե ես իմ աչքի առաջ ունենայի ցմահ բանտարկության կամ նույնիսկ մահվան սպառնալիքը, դարձյալ չէի կարող սանձահարել իմ կատաղությունը, երբ լսեցի այդ զարհուրելի լուրը։ Ես այնպիսի բուռն մոլեգնությամբ հարձակվեցի նրա վրա, որ զրկվեցի իմ ուժերի կեսից։ Բայց և այնպես բավական ուժեղ գտնվեցի, որպեսզի նրան դետին տապալեմ և կոկորդից բռնեմ։ Ես սկսեցի նրան խեղդել, սակայն նրա ընկնելու աղմուկը և այն սուր ճիչը, որ նա հազիվ կարողանում էր արձակել խզվող ձայնով, իմ սենյակը փութացրին վանահորը և բազմաթիվ վանականների։ Նրան ազատեցին իմ ձեռքից։

Ինքս գրեթե շնչակտուր և ուժասպառ էի եղել։

— Ա՜խ, ասված իմ,— գոչեցի ես, հառաչելով,— երկնային արդարադատություն, ինչպե՞ս կարող եմ ապրել այսպիսի մի ստոր վիրավորանքից հետո։— Ես ուղեցի վերստին նետվել բարբարոսի վրա, որն ինձ մահացու խոցել էր։ Ինձ բռնեցին։ Իմ հուսահատությունը, ճիչերս ու արցունքներս գերազանցեցին ամեն մի երևակայություն։ Ես այնպիսի տարօրինակ բաներ արի, որ բոլոր ներկա եղողները, չիմանալով իմ այդպես վարվելու պատճառը, երկյուղով ու զարմացած նայեցին միմյանց։

Նույն միջոցին պարոն դը Գ. Մ.-ն հարդարում էր իր կեղծամն ու փողկապը։ Զայրացած իմ վատ վարմունքից, նա հրամայեց վանահորն ամենայն խստությամբ նորից բանտարկել ինձ և ենթարկել այն բոլոր խիստ պատիժներին, որոնք գործադրվում են Սեն-Լազարում։

— Ոչ, պարոն,— պատասխանեց նրան վանահայրը,— պարոն ասպետի նման ազնվատոհմիկ մի անձնավորության հետ մենք այդ կերպ վարվել չենք կարող։ Բացի դրանից, նա այնքան հեղահամբույր է ու ազնվաբարո, որ դժվարանում եմ հավատալ, թե նա առանց հիմնավոր պատճառի իրեն թույլ տված լինի այսպիսի մի արտառոց վարմունք։ Այս պատասխանը բոլորովին շփոթեց պարոն դը Գ. Մ.-ին։ Նա դուրս եկավ, ասելով, որ ինքը միջոցներ ձեռք կառնի ստիպելու, որ նրա կամքին խոնարհվենք՝ թե՛ վանահայրը, թե՛ ես և թե՛ այլ բոլոր անձինք, ովքեր կհամարձակվեն իրեն ընդդիմանալու։

Վանահայրը հրամայեց վանականներին Գ. Մ.-ին առաջնորդել դեպի դուռը, և ինքը մնաց ինձ հետ։ Նա ինձ թախանձեց իսկույն պատմել այս անկարգության պատճառը։

— Ա՜խ, հայր իմ,— բացականչեցի ես, շարունակելով արտասվել երեխայի նման։— Երևակայեցեք ամենասարսափելի բարբարոսությունը, և դա կլինի այն արարքը, որ ժպիրհ Գ. Մ.-ն ստորություն ունեցավ իրեն թույլ տալու։ Ա՜հ, նա իմ սիրտը խոցեց։ Իմ ցավն ամոթել անհնար է։ Ես ուզում եմ ամեն ինչ պատմել ձեզ,— ավելացրեցի ես հեկեկալով։— Դուք բարի եք, դուք ինձ կկարեկցեք։

Ես համառոտակի պատմեցի նրան՝ դեպի Մանոնը տարած իմ երկարատև ու անհաղթելի սիրո, մեր փարթամ կյանքի մասին՝ մինչ այն օրը, երբ մեր ծառաները կողոպտեցին մեզ, Գ. Մ.-ի իմ սիրուհուն արած առաջարկությունների, նրանց գործարքի մասին և այն մասին, թե ինչպես դա խափանվեց։ Ճիշտն ասած, այս բոլոր հանգամանքները ես նրան պատկերեցի մեզ համար նպաստավոր գույներով։

— Ահա,— շարունակեցի ես,— թե ինչ աղբյուրից է բխում պարոն դը Գ. Մ.-ի եռանդը դեպի իմ բարոյական դարձը։ Նրան հաջողվեց ինձ այստեղ բանտարկել տալ՝ սոսկ վրիժառության շարժառիթից դրդված։ Ես այդ ներում եմ նրան։

Բայց, հայր իմ, սա դեռ բոլորը չէ. նրան հաջողվեց ինձանից խլել իմ սեփական անձի ամենաթանկագին կեսը, նա անարգարաբար բանտարկել տվեց նրան արգելատնում, նա այնքան անամոթ գտնվեց, որ ինքն իր բերանով այսօր ինձ հայտնեց այդ լուրը։ Արգելատուն, հայր իմ։ Օ՜հ, երկի՜նք, իմ քընքշանուշ սիրուհին, իմ անգին թագուհին արգելատանը, որպես ամենանվաստը բոլոր արարածներից։ Ո՞րտեղ գտնեմ բավականաչափ ուժ՝ շմեռնելու ցավից ու ամոթից։

Բարեսիրտ հայրը, տեսնելով իմ ծայրահեղ վհատությունը, սկսեց սփոփել ինձ։ Նա ասաց, որ երբեք իմ արկածներն այնպես չի պատկերացրել, ինչպես հիմա ես պատմեցի իրեն։ Ճիշտ է, նա իմացել է, որ ես անվայել կյանք եմ վարել, բայց նա միշտ ենթադրել է, թե պարոն դը Գ. Մ.-ն դեպի իմ վիճակը այդպիսի մի հետաքրքրություն ցուցաբերել է դրդված իմ ընտանիքի հանդեպ ունեցած բարեկամության ու հարգանքի կապերից։ Մինչ այժմ նա հենց այդպես է հասկացել բոլոր իրադարձությունները։ Սակայն այն, ինչ ես իրեն պատմեցի, միանգամայն փոխելու է իմ գործի ընթացքը, և նա չի տարակուսում, թե այն ճշգրիտ պատմությունը, որ նա մտադիր է անելու գլխավոր ոստիկանապետին, կնպաստի իմ ազատությանը։

Այնուհետև նա հարցրեց, թե ինչո՞ւ ես տակավին չեմ խորհել՝ իմ մասին տեղեկացնելու ընտանիքիս, քանի որ նա ոչ մի մասնակցություն չի ունեցել իմ բանտարկության գործում։ Ես աշխատեցի գոհացուցիչ պատասխան տալ նրա իրավացի հարցումին, ասելով, որ ես այդ չեմ արել՝ դրդված հորս վշտացնելու երկյուղից և իմ սեփական ամոթանքի զգացումից։ Ի վերջո, նա ինձ խոստացավ անմիջապես գնալ ոստիկանության գլխավոր պետի մոտ։

— Ես գնում եմ,— ավելացրեց նա,— որ գոնե խափանեմ պարոն դը Գ. Մ.-ի նոր, վատթարագույն մտադրությունները, որովհետև նա այստեղից հեռացավ վերին աստիճանի դժգոհ. իսկ նա շափազանց մեծ իշխանություն ունի, որպեսզի կարողանանք չվախենալ նրանից։

Ես սպասեցի վանահոր վերադարձին՝ հոգեկան այնպիսի ալեկոծ վիճակում, որպիսին ապրում է միայն թշվառ դա-

տապարտյալը մահապատժի վերջին ժամին։ Ինձ համար անսպասելի տանջանք էր Մանոնին երևակայել արգելատան մեջ։ Այդ վայրի արգահատանքից բացի, ինձ անհայտ էր նաև, թե այնտեղ ինչպես են վարվում նրա հետ։ Իսկ սարսափի այդ տան մասին իմ լսած մանրամասնությունները վերհիշելիս ամեն րոպե նորոգվում էր մոլեգնությունս։ Ես հաստատ որոշել էի ազատել նրան ինչ գնով ու միջոցներով էլ որ լինի, որոշել էի անգամ հրդեհել Սեն-Լազարը, եթե ինձ համար անկարելի լինի այլ կերպ դուրս գալ այնտեղից։

Սկսեցի խորհել այն միջոցների մասին, որոնց ես պետք է դիմեի, եթե, հակառակ իմ կամքի, ոստիկանության գլխավոր պետը շարունակի ինձ պահել բանտում։ Ես գործ դրի իմ ողջ հնարամտությունը, կշռադատեցի բոլոր հնարավորությունները։ Չգտա և ոչ մի միջոց, որն ապահովեր իմ անվրեպ փախուստը, և ես վախեցա, թե ավելի խիստ բանտարկության կենթարկվեմ, եթե անհաջող փորձի դիմեմ։ Մտաբերեցի իմ մի քանի բարեկամների անունները, որոնց աջակցությունը կարող էի հուսալ։ Սակայն ինչպե՞ս տեղեկացնել իմ վիճակի մասին։ Վերջապես կարծեցի, թե կազմել եմ այնպիսի մի հնարամիտ ծրագիր, որը կարող է հաջողությամբ պսակվել, և ես դրա ավելի մանրամասն մշակումը հետաձգեցի մինչև վանահոր վերադարձը, երբ նրա դիմումի անհաջողությունն անհրաժեշտ կդարձներ իմ ծրագրի իրագործումը։

Վանահայրը շուտով վերադարձավ։ Ես նրա դեմքին չնկատեցի ուրախության այն նշանները, որոնք ուղեկցում են բարի լուրերին։

— Ես խոսեցի ոստիկանության գլխավոր պետի հետ,— ասաց նա,— սակայն փոսեցի շատ ուշ։ Պարոն դը Գ. Մ.-ն այստեղից դուրս գալուց հետո ուղղակի նրա մոտ է գնացել և այն աստիճան վատ է տրամադրել ձեր հանդեպ, որ նա պատրաստվել էր նոր հրամաններ տալ՝ ձեզ ավելի խիստ պահելու համար։ Սակայն, երբ ես հայտնեցի ձեր պատմության բոլոր հանգամանքները, նա, ըստ երևույթին, շատ փափկեց և, փոքր-ինչ ծիծաղելով ձեր պարոն դը Գ. Մ.-ի անժուժկալության վրա, ասաց, որ նրան բավարարելու նպատակով անհրաժեշտ է վեց ամիս ձեզ պահել բանտում, մանավանդ որ այստեղ անցկացրած ժամանակն անօգուտ չի անցնի ձեզ համար։ Նա ինձ հանձնարարեց ձեզ հետ վարվել արժանավայել կերպով, և ես վստահեցնում եմ, որ դուք երբեք չեք դանգատվի իմ վերաբերմունքից։

Բարի վանահոր բացատրությունը բավական երկար տևեց, այնպես որ ես ժամանակ ունեցա խորհելու իմ անելիքի մասին։ Ես մտածեցի, որ կխորտակեմ ծրագիրս, եթե շափազանց մեծ փութկոտություն ցույց տամ ազատության նկատմամբ։ Այդ պատճառով վանահորը հավաստիացրի, ընդհակառակը, որ բանտում մնալու անհրաժեշտության մեջ ինձ համար միակ քաղցր սփոփանքը կլինի վայելել նրա հարգանքը։ Այնուհետև միանգամայն անկեղծ խնդրեցին ինձ մի շնչին շնորհ մատուցել, որը կարող է մեծապես նպաստել իմ անդորրությանը. ես նրան խնդրեցի լուր տալ իմ ծանոթներից մեկին՝ Սեն-Սյուլպիսում ապրող մի սրբաբարո եկեղեցականի, թե ես գտնվում եմ Սեն-Լազարում և թույլատրել, որ երբեմն նա այցելի ինձ։

Նա առանց տատանվելու տվեց ինձ այդ շնորհը։

Ես նկատի ունեի իմ բարեկամ Տիբերժին։ Իհարկե, ես ոչ մի հույս չէր կապում իմ ազատությանն անհրաժեշտ նրա անմիջական օգնության հետ, բայց ես ուզում էի նրան օգտագործել որպես անուղղակի մի գործիք՝ իմ նպատակին հասնելու համար։ Մի խոսքով ահա իմ ծրագիրը. ես ուզում էի գրել Լեսկոյին և խնդրել նրան, որ մեր մյուս բարեկամների հետ ջանա ինձ ազատել։ Առաջին դժվարությունը նամակն նրան ուղարկելն էր. սա Տիբերժը պիտի աներ։ Բայց որովհետև նա գիտեր, որ Լեսկոն իմ սիրուհու եղբայրն է, ուստի վախենում էի, թե միգուցե նա իր վրա չվերցնի այդ հանձնարարությունը։ Ես մտածում էի Լեսկոյին ուղարկելիք իմ նամակը ներփակել մի ուրիշ նամակի մեջ՝ ուղղված որևէ ազնիվ և անվանի մի ծանոթի, վերջինիս խնդրելով նամակն անմիջապես հանձնել ըստ պատկանելույն։ Բայց որովհետև ինձ անհրաժեշտ էր տեսնվել Լեսկոյի հետ՝ իմ ծրագրի գործադրման միջոցները մշակելու համար, ապա ես ուզում էի խնդրել նրան գալ Սեն-Լազար և տեսակցություն ունենալ ինձ հետ՝ իմ մեծ եղբոր անվան տակ, որը իբրև թե Փարիզ է

եկել հատկապես իմ գործին ծանոթանալու նպատակով։ Ես մտադիր էի նրա հետ մշակել փախուստի ամենավստահելի և ամենաարագ միջոցառումները։ Վանահայրը Տիբերժին հայտնեց նրա հետ խոսակցելու իմ ցանկությունը։ Այս հավատարիմ բարեկամս ինձ երբեք աչքաթող չէր արել և իրավունք էր իմ այժմյան վիճակին. նա գիտեր, որ ես Սեն-Լազարում եմ գտնվում և, թերևս, այս դժբախտությունը նրան այնքան էլ չէր վշտացրել։ Նա, ըստ երևույթին, մտածել էր, որ դա կարող է ինձ պարտաճանաչության վերադարձնել։ Նա իսկույն եկավ իմ սենյակը։

Մեր խոսակցությունը համակված էր սիրալիր բարեկամությամբ։ Նա ցանկացավ իմանալ իմ դիտավորությունների մասին։ Առանց վերապահության, ես նրա առաջ բացեցի իմ սիրտը՝ թաքցնելով նրանից միայն փախուստիս ծրագիրը։

— Ես չեմ ուզում ձեր աչքերի առաջ, սիրելի բարեկամս,— ասացի ես,— ձևանալ այնպիսին, որպիսին իսկապես չեմ։ Եթե դուք կարծում եք այստեղ տեսնել ողջամիտ ու իր տենչանքների մեջ զուսպ մի բարեկամի, երկնային պատիժներից սփոփված մի անառակի, մի խոսքով՝ սիրուց աղատված և Մանոնի հմայքներից հիասթափված մի սիրտ, ապա չափազանց բարենպաստ դատած կլինեք իմ մասին։ Դուք ինձ գտնում եք այնպես, ինչպես թողեցիք չորս ամիս առաջ, միշտ սիրահար ու միշտ անբախտ այն ճակատագրական սիրուց, որ չի դադարում որոնել իր երջանկությունը։

Նա պատասխանեց, որ իմ խոսակցությունն ինձ նրա աչքում թողության անարժանի է դարձնում, որ կան բազմաթիվ մեղսագործ մարդիկ, որոնք, արբեցած մոլության կեղծ երջանկությունից, դա ակներևորեն գերադասում են առաքինության իսկական երջանկությունից։ Սակայն նրանք գոնե հրապուրվում են երևակայական երջանկությամբ և մոլորվում խաբուսիկ արտաքինով։ Բայց խոստովանել այնպես, ինչպես ես եմ խոստովանում, որ իմ սիրո առարկան միայն ընդունակ է ինձ հանցավոր ու անբախտ դարձնելու և միևնույն ժամանակ հոժարակամ շարունակել ինձ նետել դժբախտության ու հանցանքի մեջ, վկայում է մտածողու-

Մի վրդովվեք,— ավելացրեցի ես, տեսնելով, որ չնայած իր խանդաղատանքին, նա պատրաստ է վշտանալու,— միակ եղբայրացությունը, որ ուզում եմ անել այստեղ, դա այն է, որ չկա ավելի մի վատ եղանակ՝ սիրտը սիրուց հեռացնելու, քան ջանալ արատավորել սիրո քաղցրությունները և նրան ավելի մեծ երջանկություն խոստանալ առաքինության կատարման մեջ։ Մենք այնպես ենք ստեղծված, որ, անտարակույս, մեր երանությունը գտնում ենք հաճույքների մեջ, սա անհերքելի է և այլ կերպ մտածել չի կարելի. իսկ սիրտը երկար խորհրդածելու կարիք չունի, որպեսզի զգա, թե մեր բոլոր հաճույքներից ամենաքաղցրը սիրո հաճույքներն են։ Նա շատ շուտ է զգում, որ նրան ուզում են խաբել, երբ խոստանում են ուրիշ, ավելի հրապուրիչ վայելքներ, և այս խաբեությունը տրամադրում է նրան հավատ չընծայել ամենահաստատ խոստումներին։ Դու քարոզիչ ես, որ ցանկանում ես ինձ վերադարձնել առաքինության գիրկը, ասա ինձ, որ առաքինությունը խիստ անհրաժեշտ է, բայց ինձնից մի թաքցնի, որ այդ դաժան է ու դժվարին։ Հաստատապես պնդիր, որ սիրո վայելքներն անցողիկ են, որ դրանք արգելված են, որ դրանց հետևում են հավիտենական տանջանքները, և, ինչ կարող է, թերևս, ավելի մեծ տպավորություն թողնել ինձ վրա, դա այն է, որ որքան ավելի քաղցր ու հրապուրիչ են դրանք, այնքան ավելի հոյակապ կլինի երկնքի հատուցումը՝ այդպիսի մի խոշոր զոհաբերության համար։ Բայց խոստովանիր, որ մեր սրտերի համար սիրո վայելքներն այս աշխարհում ամենակատարյալ երանության աղբյուրն են։

Իմ ճառի այս եղրափակումը վերականգնեց Տիբերժի լավ տրամադրությունը։ Նա համաձայնվեց, որ իմ մտքերը որոշ չափով ողջամիտ են։ Միակ առարկությունը, որ նա արեց, դա այն էր, թե ինչո՞ւ ես չեմ հետևում իմ սեփական սկզբունքներին՝ զոհաբերելով սերս այն տենչած հատուցման, որի մասին այդպիսի բարձր կարծիք ունեմ։

— Օ՜հ, սիրելի բարեկամս,— պատասխանեցի նրան,— հենց այստեղ ես խոստովանում եմ իմ ոչնչությունն ու անզորությունը։ Ավա՜ղ, այո, իմ պարտքն է վարվել դատողությանս համաձայն. սակայն արդյոք ես ազա՜տ եմ իմ վարմունքի

մեջ։ Ինչպիսի՞ օգնության կարիք ունեմ, որպեսզի կարողանամ մոռանալ Մանոնի հմայքը։

— Թող ների ինձ աստված,— ասաց Տիբերժը,— բայց ինձ թվում է, թե ես լսում եմ մի նոր յանսենիստի ճառ։

— Չգիտեմ, թե ես ով եմ,— առարկեցի նրան,— և ինձ համար այնքան էլ ակներև չէ, թե ով պետք է լինեմ. սակայն ես լավ եմ զգում յանսենիստների անսածի ճշմարտությունը։

Այս զրույցը գեթ այն հետևանքն ունեցավ, որ վերականգնեց բարեկամիս կարեկցանքը դեպի ինձ։ Նա հասկացավ, որ իմ անառակության մեջ ավելի շատ թուլություն կա, քան չարություն։ Հետագայում նրա բարեկամությունն ավելի մեծ հոգատարությամբ օգնեց ինձ, առանց որի ես չքավորությունից պիտի կործանվեի։ Այնուամենայնիվ, ես նրան բնավ չհայտնեցի Սեն-Լազարից փախչելու իմ դիտավորությունը։ Միայն խնդրեցի նամակս հանձնել իմ ծանոթին։ Նամակը ես պատրաստել էի նախքան նրա գալը և բազմաթիվ փաստերով նրան բացատրեցի այն գրելու անհրաժեշտությունը։ Նա ամենայն հավատարմությամբ ու ճշտապահությամբ կատարեց իմ խնդիրը, և Լեսկոն երեկոյան դեմ ստացել էր իրեն ուղղված նամակը։ Հետևյալ առավոտյան ևեթ նա եկավ ինձ տեսնելու և բարեհաջող կերպով ընդունվեց, որպես իմ մեծ եղբայրը։ Ուրախությունս անսահման եղավ, երբ նրան տեսա իմ սենյակում։ Դուռը ուշի-ուշով փակեցի։

— Չկորցնեք և ոչ մի վայրկյան,— ասացի ես նրան.— նախապես պատմեցեք թե ինչ լուրեր ունեք Մանոնից և հետո խորհուրդ տվեք, թե ես ինչպես պետք է փշրեմ իմ շղթաները։

Նա ինձ հավատացրեց, որ քրոջը չի տեսել իմ ձերբակալության նախօրյակից հետո, որ Մանոնի և իմ վիճակի մասին տեղեկացել է շնորհիվ երկար որոնումների ու ջանքերի. որ մի քանի անգամ ներկայացել է արգելատուն, սակայն Մանոնի հետ խոսելու թույլտվություն նրան չեն տվել։

— Թշվառ Դ. Մ.,— բացականչեցի ես,— դա քեզ վրա թանկ կնստի։

— Ինչ վերաբերում է ձեր ազատությանը,— շարունակեց Լեսկոն,— դա այնքան էլ հեշտ բան չէ, որքան դուք կարծում եք։ Երեկ երեկոյան իմ երկու բարեկամների հետ մենք հետազոտեցինք այս տան բոլոր արտաքին մասերը և եկանք հետևյալ եզրակացության, քանի որ ձեր լուսամուտները դեպի բակն են նայում, որը շրջապատված է ուրիշ շենքերով, ինչպես դուք նշել էիք ձեր նամակում, ապա շատ դժվար կլինի ձեզ այստեղից դուրս հանելը։ Բացի դրանից, դուք երրորդ հարկումն եք գտնվում, և մենք չենք կարող այստեղ հացնել ո՛չ պարան, ո՛չ էլ սանդուղք։ Ուստի ես ոչ մի հնար չեմ տեսնում ձեզ այդ եղանակով ազատելու։ Անհրաժեշտ է որևէ միջոց գտնել հենց շենքի ներսից։

— Ոչ,— առարկեցի ես,— ամեն բան լավ եմ քննել մանավանդ այն օրից, երբ, շնորհիվ վանահոր ներողամտության, ինձ նվազ խստությամբ են հսկում։ Իմ սենյակի դուռն այլևս բանալիով չեն փակում. ես թույլտվություն ունեմ զբոսնելու վանականների միջանցքներում. սակայն բոլոր սանդուղքների մուտքերը հաստ դռներ ունեն, և դրանք գիշեր ու ցերեկ պինդ փակված են, ուստի անկարելի է, որ ես միայն ճարպկությամբ կարողանամ ազատվել։

— Սպասեցեք,— շարունակեցի ես փոքր-ինչ մի մտքի շուրջը խորհելուց հետո, որը իմ կարծիքով սքանչելի միտք էր,— դուք կարո՞ղ եք ինձ մի ատրճանակ բերել։

— Դյուրությամբ,— պատասխանեց Լեսկոն,— սակայն մի՞թե ուզում եք որևէ մեկին սպանել։

Ես վստահեցրի նրան, որ քիչ եմ մտածում սպանության մասին, և որ ինձ լցված ատրճանակ պետք էլ չի։—Բերեք ինձ վաղը,— ավելացրի ես,— և երեկոյան ժամը տասնմեկին մեր երկու կամ երեք բարեկամների հետ անձամբ եղեք այս տան դեմուդեմը։ Հույս ունեմ, որ ինձ կհաջողվի միանալ ձեզ։

Նա դուր տեղը պահանջեց բացատրել իմ մտադրությունը։ Ես նրան ասացի, որ այնպիսի մի ձեռնարկություն, որպիսին ես եմ հղացել, կարող է բանական համարվել միայն իր հաջող իրագործումից հետո։ Այնուհետև խնդրեցի նրան կարճել իր այցելությունը, որպեսզի հետևյալ օրը հեշտությամբ կարողանա կրկին ձեռք բերել ինձ տեսնելու թույլտվությունը։ Նրան առանց դժվարության թողին ինձ մոտ, ինչպես և առաջին անգամ։ Նա պատկառելի տեսք ուներ, և ոչ ոք չէր կարող նրան չհամարել ազնվաբարո անձնավորություն։

Հենց որ զինվեցի իմ ազատության գործիքով, համարյա այլևս չէի կասկածում ծրագրի հաջողության վրա։ Այդ ծրագիրն արտասովոր էր ու հանդուգն, սակայն ինձ ոգևորող շարժառիթների ազդեցության տակ ինչի՞ ասես, որ ես ընդունակ չէի այդ բոպեին։ Այն օրից, երբ ինձ թույլատրել էին դուրս գալ սենյակիցս և զբոսնել միջանցքներում, ես նկատել էի, որ ամեն երեկո, երբ բարապանը բոլոր դռների բանալիները բերում և հանձնում է վանահորը, տան ներսում խոր լռություն է տիրում. դա վկայում էր, որ ամենքը քաշվել են իրենց խուցերը։ Ես անարգել կարող էի իմ սենյակից միջանցքով գնալ վանահոր սենյակը։ Որոշել էի նրանից վերցնել բանալիները, ատրճանակով ահաբեկելով նրան, եթե հոժարակամ դրանք չտար, և, դռները բանալով, ինքս դուրս գալ փողոց։ Անհամբերությամբ սպասեցի օրվա վերջին։ Բարապանը եկավ սովորական ժամին, այսինքն՝ իններից քիչ անց։ Ես մի ժամ ևս սպասեցի, համոզվելու համար, որ բոլոր վանականները և ծառաները քնած են։ Վերջապես ուղևորվեցի դեպի վանահոր սենյակը, հետս վերցնելով զենքս և մի վառած մոմ։ Նախ մեղմ բախեցի սենյակի դուռը, որպեսզի առանց աղմուկի արթնացնեմ վանահորը։ Նա ինձ լսեց երկրորդ բախումից հետո և, անշուշտ, կարծելով, թե հիվանդ և օգնության կարոտ վանականներից մեկն է բախում, անկողնուց ելավ դուռը բացելու։ Այնուամենայնիվ, նա զգուշորեն դռան արանքից հարցրեց, թե ո՞վ է դուռը բախողը և ի՞նչ է ուզում։ Ես ստիպված եղա անունս տալ, բայց այդ արտասանեցի աղիողորմ ձայնով, որպեսզի հասկացնեմ, թե ինձ վատ եմ զգում։

— Ա՜, այդ դուք եք, սիրելի որդյակ,— ասաց նա դուռը բանալով։ —Ի՞նչն է ձեզ ստիպել այսպիսի ուշ ժամին ինձ մոտ գալու։

Ես սենյակ մտա և նրան դռան մոտից հեռացնելով մինչև սենյակի հակառակ ծայրը, հայտարարեցի, որ ինձ համար այլևս անհնար է մնալ Սեն-Լազարում, որ գիշերը հարմար ժամանակ է աննկատելի դուրս գալու այնտեղից, և ես դեպի ինձ տածած իր բարեկամությունից սպասում եմ, որ նա կհամաձայնվի դռները բանալ կամ բանալիներն ինձ տալ, որ ես ինքս բանամ։

Իմ սիրալիր խոսքերը զարմացրին նրան։ Մի քանի բոպե նա ինձ նայեց առանց պատասխանելու։ Սակայն, որովհետև ամեն մի բոպեն ինձ համար թանկ էր, և ես ժամանակ չունեի կորցնելու, նորից սկսեցի խոսել, ասելով, որ չափազանց ըղձացված եմ դեպի ինձ ցույց տված իր բարությունից ու սիրալիր ուշադրությունից, բայց որ ազատությունը բոլոր բարիքներից ամենաթանկագինն է, մանավանդ ինձ համար, ինձ, որից դա խլել են անարդարությամբ, այդ պատճառով որոշել եմ, ինչ գնով էլ ուզում է լինի, հենց այդ գիշերը ձեռք բերել իմ ազատությունը։ Եվ երկյուղելով, որ նա կփորձի ձայնը բարձրացնել օգնության կանչելու նպատակով, ես այնպես արի, որ նա տեսնի լռություն պատվիրող արժանի գործիքը, որը գտնվում էր իմ պարեգոտում։

— Ատրճանա՞կ,— ասաց նա։— Ինչպե՞ս, որդյակ իմ, դուք ուզում եք ինձ կյանքից զրկել, որպեսզի ձեր երախտապարտությունը հայտնեք այն սիրալիրության համար, որ ես ունեցել եմ ձեր հանդե՞պ։

— Աստված չանի,— պատասխանեցի ես։— Դուք բավական խելացի եք և բանիմաց, որպեսզի չհարկադրեք ինձ դիմելու այդպիսի ծայրահեղ անհրաժեշտության։ Սակայն ես ուզում եմ ազատ լինել, և իմ որոշումն այն աստիճան անհողդողդ է, որ եթե ընդդիմանաք և ծրագիրս չհաջողվի ձեր պատճառով՝ ձեր բանը բուրդ է։

— Բայց, սիրելի որդյակ,— պատասխանեց նա ահաբեկված ու գունաթափ,— ի՞նչ եմ արել ձեզ, ի՞նչ հիմք ունեք իմ մահը ցանկանալու։

— Ոչ, ոչ,— պատասխանեցի ես անհամբերությամբ,— ես ոչ մի դիտավորություն չունեմ ձեզ սպանելու. ուզում եք ապրել, բացեք դուռը, և ես ձեր ամենալավ բարեկամն եմ։

Ես տեսա, որ բանալիները սեղանի վրա են. վերցրի դրանք և խնդրեցի նրան հետևել ինձ, որքան կարելի է քիչ աղմուկ բարձրացնելով։ Նա հարկադրվեց կատարել իմ հրամանը։ Մինչ մենք առաջ էինք գնում, նա մեկը մյուսի հետևից բացում էր դռներն ու հառաչանքով կրկնում, «Ա՜խ, որդյակ

իմ, ա՜խ, որդյակ իմ, ո՞վ կարող է երբևէ մտածելը։ «Առանց աղմուկի, հայր իմ»,— ես ես կրկնում էի իմ կողմից ամեն բոպե։ Վերջապես մենք հասանք դրսի մեծ դռների առաջ հաստատված ցանկապատին։ Ես արդեն ինձ աղատ էի համարում և կանգնել էի վանահոր հետև, մի ձեռքով մոմը բռնած, մյուսով՝ ատրճանակը։

Մինչ նա աշխատում էր բանալ դուռը, մի ծառա, որը քնած էր մերձավոր փոքր սենյակում, լսելով սողնակի աղմուկը, վեր կացավ և գլուխը դուրս հանեց դռնից։ Բարեսիրտ հայրը, ըստ երևույթին, մտածելով, թե ծառան կարող է բռնել, անխոհեմություն ունեցավ նրան հրամայելու, որ օգնության հասնի իրեն։ Դա մի հաղթանդամ երիտասարդ էր, որն աներեր հարձակվեց ինձ վրա։ Առանց այլևայլության ես կրակեցի, և գնդակը դիպավ ուղիղ նրա կրծքին։

— Ահա թե ինչի պատճառը եղաք դուք, հայր իմ,— ասացի առաջնորդիս մի փոքր հպարտությամբ։— Սակայն թող այս ձեղ արգելք չլինի կատարելու ձեր անելիքը,— ավելացրեցի ես, հրելով նրան դեպի վերջին դուռը։ Նա չհանդգնեց հրաժարվել դուռը բանալուց։ Ես բարեհաջող դուրս եկա և շորս քայլի վրա գտա Լեսկոյին, որը երկու բարեկամների հետ սպասում էր ինձ՝ իր խոստման համաձայն։

Մենք հեռացանք այնտեղից։ Լեսկոն ինձ ասաց, որ իրեն թվաց, թե կրակոցի ձայն լսեց։

— Մեղքը ձերն է,— ասացի նրան,— ինչու ինձ լցված ատրճանակ բերիք։— Այնուամենայնիվ, ես նրան շնորհակալությունս հայտնեցի իր այդ շրջահայացության համար, առանց որի, անշուշտ, երկար ժամանակ պիտի մնայի Սեն-Լազարում։ Գիշերելու նպատակով մենք գնացինք մի պանդոկապետի մոտ, ուր ես մի փոքր կազդուրվեցի, համարյա երեք ամիս բանտային վատ ու անբավարար սնունդ ունենալուց հետ։ Սակայն ես չկարողացա լիովին անձնատուր լինել իմ երջանկությանը։ Ինձ անասելի տանջում էր Մանոնի վիճակը։

— Պետք է նրան ազատել,— ասացի բարեկամներիս։— Ես միայն այս նպատակի համար էի փափագում իմ ազատությունը։ Օգնեցեք ինձ ձեր հնարամտությամբ, իսկ ես պատրաստ եմ զոհաբերելու մինչև իսկ կյանքս։

Լեսկոն, որը զուրկ չէր խելքից և ոչ իսկ խոհեմությունից, նկատեց, որ անհրաժեշտ է շրջահայաց լինել։ Սեն-Լազարից իմ փախուստը և այնտեղից դուրս գալու ժամանակ պատահած դժբախտությունն անխուսափելիորեն աղմուկ կարթեցնի. ոստիկանության գլխավոր պետն անպայման կարդադրություն կանի ինձ ձերբակալելու. իսկ նա ամենազոր է։ Վերջապես, եթե ես չեմ ուզում ենթարկվել ավելի վատթար գրության, քան այն, ինչ ունեցել եմ Սեն-Լազարում, ապա անհրաժեշտ է, որ մի քանի օր թաքնվեմ և սենյակում փակված մնամ, մինչև որ մեղմանա իմ թշնամիների զայրույթի առաջին բորբոքումը։ Նրա խորհուրդը ողջամիտ էր. սակայն դրան հետևելու համար անհրաժեշտ էր, որ ինքս էլ ողջախոհ լինեի։ Այդքան դանդաղկոտություն ու խոհեմություն չէին համակերպվում իմ բուռն կրքի հետ։ Այնուամենայնիվ ես զիջեցի, համաձայնվելով հետևյալ ամբողջ օրը միայն քնով անցկացնել։ Նա ինձ փակեց իր սենյակում, որտեղ և ես մնացի մինչև երեկո։

Այս ժամանակի մի մասը ես գործադրեցի ծրագիրներ կազմելով և հնարներ մտածելով՝ Մանոնին ազատելու համար։ Ես միանգամայն համոզված էի, որ նրա բանտն ավելի անթափանցելի է, քան իմը։ Բռնություն և ուժ գործ դնելու մասին մտածել իսկ չէր կարելի. պետք էր հնարամտություն։ Սակայն ինքը՝ հնարագիտության աստվածուհին անգամ չգիտեր, թե գործն ինչից պետք էր սկսել։ Ես ոչ մի կերպ չկարողացա պարզել անելիքս, ուստի բարվոք համարեցի հետաձգել որոնումներս, մինչև որ տեղեկություններ հավաքեմ արգելատան դիրքի և ներքին կարգ ու կանոնի մասին։

Հենց որ գիշերն ինձ ազատություն բերեց, ես խնդրեցի Լեսկոյին ուղեկցելու ինձ։ Մեզ հաջողվեց զրուցել բարապանների մեկի հետ, որը մեզ թվաց որպես բանիմաց մի մարդ։ Ես ինձ ձևացրի օտարական, որին մեծ գովասանքով պատմել են ընդհանուր արգելատան և այնտեղ տիրող կարգերի մասին։ Ես նրան հարցուփորձ արի ամենաչնչին մանրամասնությունների վերաբերյալ և քայլ առ քայլ հասա վարչապետներին, որոնց անունները և բարեմասնությունները խնդրեցի հայտնել ինձ։ Բարապանի պատասխաններն իմ վերջին հարցին գլխու-

մըս մի միտք հղացրին, որն ինձ բոլորովին գերեց և որի իրագործումն անմիջապես ձեռնարկեցի։ Ես նրան հարցրի նաև,— որպես թե դա իմ հետազոտության համար էական կարևորություն ունեցող մի մանրամասնություն էր,— թե այդ պարոնները չունե՞ն արդյոք երեխաներ։ Նա պատասխանեց, թե այդ մասին չի կարող ինձ հավաստի տեղեկություններ տալ, սակայն ինչ վերաբերում է պարոն դը Տ.-ին, որը գլխավոր վարչապետներից մեկն է, ապա նա գիտե, որ այդ պարոնը հասունացած մի որդի ունի, որը բազմիցս հոր հետ եկել է արգելատուն։ Այս տեղեկությունն ինձ համար բավական էր։

Ես գրեթե անմիջապես ընդհատեցի մեր խոսակցությունը և, տուն վերադառնալով, Լեսկոյին հաղորդեցի հղացած մտադրությունս։

— Ենթադրում եմ,— ասացի նրան,— որ պարոն դը Տ.-ի որդին, որը հարուստ ու լավ ընտանիքից է, ինչպես իր հասակի երիտասարդների մեծամասնությունը, սիրում է վայելքներ։ Չի կարող պատահել, որ նա կնայաց լինի, ոչ էլ այն աստիճան անմիտ, որ իր ծառայությունը մերժի սիրային մի գործում։ Ես մտադիր եմ նրան շահագրգռել Մանոնի ազատությամբ։ Եթե նա ազնիվ մարդ է և զուրկ չէ զգացմունքներից, մեծահոգությունից զրկված, նա իր աջակցությունը ցույց կտա մեզ։ Եթե նա անընդունակ է այսպիսի շարժառիթով վարվելու, ապա գոնե մի բան կանի գեղանի մի աղջկա համար, թեկուզ նրա շնորհներին արժանանալու հույսով։ Չեմ ուզում հետաձգել իմ տեսակցությունը նրա հետ,— ավելացրի ես,— դա կլինի ոչ ուշ, քան վաղը։ Իմ ծրագիրն անչափ ոգևորում է ինձ, և ես հավատացած եմ, որ դա լավ նշան է։

Լեսկոն ինքն էլ համաձայնվեց, որ իմ մտքերը շատ հավանականություններ ունեն, և մենք կարող ենք որոշ հաջողություն ակնկալել այդ ճանապարհով։ Այդ գիշերը ես անցկացրի անխռով և սիրփված։ Երբ լույսը բացվեց, ես, որքան ներում էր իմ այն ժամանակվա ընչազուրկ դրությունը, հնարավորին չափ մաքուր հագնվեցի, կառք վարձեցի և գնացի պարոն դը Տ.-ի տունը։ Իրեն անծանոթ մի մարդու այցելությունը նրան շատ զարմացրեց։ Նրա արտաքինն ու սիրալիր վերաբերմունքը ինձ լավ բանի հույս ներշնչեցին։ Պարոն դը Տ.-ի հետ ես բա-

ցատրվեցի ամենայն անկեղծությամբ և, որպեսզի հրահրեմ նրա բնական զգացումները, պատմեցի իմ սիրո և սիրուհու արժանիքների մասին, իբրև երկու բաների, որոնք միմյանց համազոր են։ Նա ասաց, որ թեպետ Մանոնին երբեք չի տեսել, սակայն լսել է նրա մասին, եթե միայն խոսքն այն աղջկան է վերաբերում, որը ծեր Գ. Մ.-ի սիրուհին է եղել։ Ես բնավ չկասկածեցի, որ նրան հայտնի է այն մասնակցությունը, որ ես ունեցել եմ սույն արկածում և, որպեսզի իմ վստահությամբ միանգամայն շահեմ նրա բարյացակամությունը, պատմեցի նրան Մանոնի և ինձ հետ պատահած եղելության բոլոր մանրամասնությունները։

— Դուք տեսնո՞ւմ եք,— շարունակեցի ես,— որ իմ կյանքի և սրտի երջանկությունը ձեր ձեռքումն է։ Ինձ համար մեկը մյուսից ավելի թանկ չէ։ Ես ձեզ հետ խոսում եմ միանգամայն անկեղծ, առանց մի բան թաքցնելու, որովհետև ինձ հայտնի է ձեր վեհանձնությունը. բացի այդ, մեր հասակների նմանությունն ինձ դրդում է հուսալ, որ նույնպիսի նմանություն կա և մեր հակումների մեջ։

Ըստ երևույթին, նա շատ զգացված էր իմ անկեղծ ու անմեղ բացատրությունից։ Նա պատասխանեց, որպես աշխարհիկ և զգացմունքների տեր մի մարդ, զգացմունքներ, որ բարձրը հասարակությունը միշտ չէ, որ տալիս է մարդուս, եթե չասենք, որ հաճախ ստիպում է կորցնել դրանք։ Նա ասաց, որ իմ այցելությունը համարում է մեծ շնորհ, իսկ իմ բարեկամությունը՝ իր երջանիկ նվաճումներից մեկը, և որ ինքը պիտի ջանա արժանանալ իմ մտերմությանը՝ ինձ ծառայություն մատուցելու իր բուռն ցանկությամբ։

Նա չխոստացավ Մանոնին վերադարձնել ինձ, որովհետև, ասաց նա, հեղինակությունը շնչին է ու անհուսալի։ Սակայն ինձ հնարավորություն առաջարկեց՝ Մանոնին տեսնելու հաճույքն ունենալու և անելու այն ամենը, ինչ ներում են իր ուժերը, որպեսզի նրան իմ դիրքը վերադարձնի։ Իր համեստ հեղինակության խոստովանությունն ավելի մեծ բավականություն պատճառեց ինձ, քան եթե նա անվերապահորեն խոստանար կատարել իմ բոլոր ցանկությունները։ Իր առաջարկությունների չափավորության մեջ ես տեսա նրա անկեղծության

արտահայտությունը, և դա մեծապես հիացրեց ինձ։ Մի խոսքով՝ ես կատարյալ վստահությամբ բոլոր հույսերս նրա վրա դրի։ Մանոնին տեսնելու հնարավորությունն ընձեռելու միակ խոստման փոխարեն ես պատրաստ էի ամեն կերպ ընդառաջելու նրան։ Ինձ համակող այս զգացումները ես այնպիսի մի եղանակով արտահայտեցի, որ նա համոզվեց, թե ես բնությամբ չար չեմ։ Մենք գորովանքով գրկախառնվեցինք և դարձանք բարեկամներ՝ մեր սրտի բարության և բնական հակման հիմքով, որ դրդում է քնքուշ և ազնիվ մարդուն սիրել իր նմանին։

Իր հարգանքի նշանները նա շատ ավելի հեռուները հասցրեց, որովհետև մտածելով իմ արկածների մասին և դատելով, որ Սեն-Լազարից դուրս գալուց հետո ես անպայման դրամական նեղություն կունենամ, նա ինձ առաջարկեց իր բակը և պնդեց, որ ընդունեմ այն։ Սակայն ես չընդունեցի և ասացի նրան.

— Դուք չափազանց բարի եք, սիրելի պարոնս։— Եթե ձեր բարության ու բարեկամության շնորհիվ ես բախտ ունենամ տեսնելու իմ թանկագին Մանոնին, իմ ամբողջ կյանքում ձեզ երախտապարտ կլինեմ։ Իսկ եթե դուք ինձ վերադարձնեք այդ սիրելի արարածին, ապա ես առհավետ ձեզ պարտական կմնամ, անգամ եթե ձեզ համար թափելու լինեմ իմ ամբողջ արյունը։

Մենք բաժանվեցինք, նշելով մեր հետևյալ տեսակցության վայրն ու ժամը։ Նա այնքան բարի գտնվեց, որ չհետաձգեց մեր տեսակցությունը երկար ժամանակով և առաջարկեց հանդիպել նույն օրը, կեսօրից հետո։

Ես սպասեցի նրան մի սրճարանում, ուր նա եկավ ժամը չորսին, և մենք միասին ուղևորվեցինք դեպի արգելատուն։ Իմ ծնկները դողում էին, երբ ես անցնում էի բակով։

— Օ՜հ, սիրս ամենազոր աստված,— ասում էի ես,— ուրեմն պիտի տեսնեմ իմ սրտի կուռքին, այնքան արցունքների ու հույզերի առարկան։ Երկինք, ուժ տուր ինձ՝ նրա մոտ հասնելու և այնուհետև ինչ ուզում ես արա իմ բախտի ու կյանքի հետ. քեզնից ուրիշ շնորհ չեմ աղերսում։

Պարոն դը Տ.-ն խոսեց մի քանի բարապանների հետ,

որոնք բոլորն էլ շտապեցին պատրաստակամություն հայտնել՝ իրենց հնարավորության սահմաններում նրան ծառայելու։ Նա խնդրեց ցույց տալ միջանցքը, որտեղ գտնվում էր Մանոնի խուցը, և ծառաներից մեկը մեզ առաջնորդեց դեպի այն կողմը՝ ձեռքին բռնած ահռելի մեծությամբ մի բանալի, որով պիտի բացեր խցի դուռը։ Ես հարցրի մեզ առաջնորդող սպասավորին, որի հոգատարության տակ էր գտնվում Մանոնը, թե նա ի՞նչպես է անցկացրել իր ժամանակը արգելատան մեջ։ Սպասավորը պատասխանեց, որ նա հրեշտակի նման հեզահամբույր է. ինքը երբեք նրանից ոչ մի անվայել խոսք չի լսել. իր բանտարկության առաջին վեց շաբաթվա ընթացքում նա անընդհատ արտասվել է. սակայն հետագայում, կարծես, ավելի մեծ համբերությամբ է տարել իր դժբախտությունը և այժմ առավոտից մինչև երեկո ասեղնագործությամբ է զբաղված, բացառությամբ մի քանի ժամերի, որ նվիրում է ընթերցանության։ Ես նույնպես հարցրի նրան, թե արդյոք տանելի՞ պայմաններում է ապրում Մանոնը։ Սպասավորը վստահեցրեց, որ նրան երբևիցե չեն զրկել անհրաժեշտ բաներից։

Մենք մոտեցանք Մանոնի խցիկին։ Սիրտս բաբախում էր ուժգնորեն։ Ես ասացի պարոն դը Տ.-ին.

— Դուք մենակ մտեք և իմ այցի մասին նախազգուշացրեք նրան, որովհետև ես երկյուղ եմ կրում, թե ինձ հանկարծակի տեսնելով, նա կարող է չափազանց հուզվել։

Դուռը բացվեց։ Ես մնացի միջանցքում։ Այնուամենայնիվ, լսեցի նրանց խոսակցությունը։ Պարոն դը Տ.-ն Մանոնին ասաց, որ եկել է նրան փոքր-ինչ սփոփելու. որ ինքն իմ բարեկամներից է և մեծապես շահագրգռված է մեր երջանկությամբ։ Մանոնը մեծ փութկոտությամբ հարցրեց նրան, թե նա արդյոք կարո՞ղ է լուրեր հաղորդել իմ վիճակի մասին։ Պարոն դը Տ.-ն խոստացավ ինձ ներկայացնել նրան նույնքան քնքուշ ու հավատարիմ, որպիսին նա տենչում է տեսնել ինձ։ «Իսկ ե՞րբ»,— հարցրեց Մանոնը։ «Այսօր եթե,— պատասխանեց պարոն դը Տ.-ն,— այդ երջանիկ բոպեն հեռու չէ. ձեր ասպետը հենց այժմ կներկայանա, եթե դուք ցանկաք»։ Մանոնն հասկացավ, որ ես միջանցքումն եմ։ Երբ ներս մտա, նա արագ դեպի դուռն էր նետվում։ Մենք գրկախառնվեցինք այն

սիրագեղ քնքշությամբ, որի թովչանքը միմյանցից երեք ամսով բաժանված իսկական սիրեկանները միայն կարող են զգալ։ Մեր հառաչանքները, ընդհատվող բացականչությունները, հաղար ու մի սիրո անուններ, որ մենք կրկնում էինք քնքշանվաղ ձայնով, քառորդ ժամվա ընթացքում մի հուզող տեսարան ստեղծեցին պարոն դը Տ.-ի ներկայությամբ։

— Դուք իմ նախանձն եք շարժում,— ասաց նա, հրավիրելով մեզ նստել,— չկա մի ըղձալի վիճակ, որը ես գերադասեի այսպիսի մի հմայիչ ու գորովագին սիրուհուց։

— Հենց դրա համար էլ,— պատասխանեցի նրան,— ես կարհամարհեմ աշխարհի բոլոր կայսրությունները, միայն թե իմ սիրուհուց սիրված լինելու ապահովությունն ունենամ։

Խիստ ցանկալի այս զրույցը լի էր անհուն քնքշությամբ։ Եղեռ Մանոնն ու ես միմյանց պատմեցինք մեր արկածները։ Մենք դառն արտասվեցինք՝ անդրադառնալով այն վիճակին, որի մեջ ապրում է նա և այն դրությանը, որից ես նոր դուրս էի եկել։ Պարոն դը Տ.-ն մեզ մխիթարեց, նորից խոստանալով եռանդուն գործել, որպեսզի վերջ դնի մեր տառապանքներին։ Նա մեզ խորհուրդ տվեց շատ չերկարել այս առաջին խոսակցությունը, որպեսզի ինքը հնարավորություն ունենա դյուրությամբ ձեռք բերել հետագա տեսակցությունների թույլտվությունը։ Շատ դժվարությամբ նրան հաջողվեց մեզ համոզել հետևելու իր խորհրդին։ Առանձնապես Մանոնն անզոր էր ինձնից բաժանվելու։ Հարյուր անգամ ես տեղից բարձրացա, հարյուր անգամն էլ նա ինձ կրկին նստեցրեց։ Նա կառչում էր իմ զգեստներից ու ձեռքերից։

— Ավա՜ղ, ինչպիսի տեղ եք ինձ թողնում,— ասում էր նա։ Ո՞վ կարող է երաշխավորել, որ ես կրկին կտեսնեմ ձեզ։

Պարոն դը Տ.-ն խոստացավ ինձ հետ միասին հաճախակի այցելել նրան։

— Ինչ վերաբերում է տեղին,— ավելացրեց նա սիրալիր,— այսուհետև այն չպետք է անվանել արգելատուն. սա Վերսալն է այն օրից, երբ այստեղ արգելափակվեց մի գեղեցկուհի, որն արժանի է բոլոր սրտերի տիրապետությանը։

Երբ դուրս եկանք, Մանոնին սպասավորող ծառային մի փոքր դրամ տվի, որպեսզի խրախուսեմ նրան՝ հոգատար

եռանդով սիրուհուս ծառայել։ Այս սպասավորը նվազ ստոր, նվազ բարասիրտ մարդ էր, քան իր նմանները։ Նա ներկա էր եղել մեր տեսակցությանը։ Սրտաշարժ պատկերը հուզել էր նրան։ Ինձնից ստացած մի ոսկին նրան միանգամայն հօգուտ ինձ տրամադրեց։ Երբ իջնում էինք սանդուղքներից, նա ինձ մի կողմ տարավ։

— Պարոն,— ասաց նա,— եթե դուք կկամենաք ինձ ձեզ մոտ ծառայության վերցնել կամ պատշաճորեն վարձատրել՝ այստեղից պաշտոնս կորցնելու դեպքում, կարծում եմ, որ դյուրությամբ կարող եմ օրիորդ Մանոնին ազատել։

Ես մեծ ուշադրությամբ ունկնդրեցի նրա այս առաջարկությանը և թեպետ զրկվել էի իմ ամբողջ կարողությունից, բայց խոստացա շատ ավելի բան, քան ինքն էր պահանջում։ Ես մտածում էի, թե դժվար չի լինի վարձատրել այդ կարգի մի մարդու։

— Համոզված եղիր, բարեկամս,— ասացի նրան,— որ չկա մի բան, որ ես չանեմ քեզ համար և որ քո բարեկեցությունը նույնպես ապահովված է, ինչպես և իմը։

Ես կամեցա իմանալ, թե նա ինչ միջոցներ է ուզում գործադրել։

— Դա շատ պարզ է,— պատասխանեց նա,— երեկոյան ես օրիորդ Մանոնի խցիկի դուռը կբանամ և իրեն կբերեմ մինչև փողոցի դռները, ուր դուք պատրաստ պետք է լինեք նրան ընդունելու։

— Ես հարցրի, թե չկա՞ արդյոք վտանգ, որ միջանցքներում կամ բակում պատահական հանդիպողը ճանաչի նրան։ Նա խոստովանեց, որ այդ կողմից, իհարկե, վտանգ կա, սակայն, ավելացրեց նա, առանց դրան գործը գլուխ չի գա։

Թեպետ ես հիացած էի, տեսնելով նրան այսպես վճռականորեն տրամադրված, այնուամենայնիվ կանչեցի պարոն դը Տ.-ին և նրան հայտնեցի այդ ծրագիրը և այն միակ հանգամանքը, որը կարող է դա կասկածելի դարձնել։ Նա շատ ավելի դժվարություններ մատնանշեց, քան ես։ Նա լիովին համաձայնեց, որ Մանոնը կարող է այդ եղանակով փախչել։ «Սակայն, եթե նրան ճանաչեն,— շարունակեց նա,— և ձերբակալեն փախչելիս, հավանականաբար նա իր ուղատությունը

կկորցնի միանգամ ընդմիշտ։ Բացի այդ, դուք իսկույն ևեթ ստիպված պիտի լինեք հեռանալ Փարիզից, որովհետև ձեզ երբեք չի հաջողվի միշտ խուսափել ձերբակալվելուց, աչքի առաջ ունենալով, որ որոնումները պիտի կրկնապատկվեն թե՛ ձեր և թե՛ նրա նկատմամբ։ Տղամարդու համար, եթե նա մենակ է, հեշտ է խույս տալ հետապնդումից. բայց նրա համար գրեթե անկարելի է անհայտ մնալ, եթե նրան գեղեցիկ կին է ուղեկցում»։

Որքան էլ այս դատողությունը հաստատուն հիմունքներ ունենար, այնուամենայնիվ, դա չկարողացավ հաղթահարել իմ մտքում ծագած հույսը՝ Մանոնին շուտով ազատել բանտարկությունից։ Ես հայտնեցի իմ կարծիքը պարոն դը Տ.-ին, խնդրելով ներել իմ այդ փոքրիկ անխոհեմությունն ու հանդգնությունը, որ սերը ներշնչում է ինձ։ Ես ավելացրի, որ իրոք մտադիր եմ հեռանալ Փարիզից, որպեսզի բնակվեմ շրջակա գյուղերից մեկում, ինչպես այդ արել եմ արդեն մի անգամ։

Այսպես ուրեմն, մենք պայմանավորվեցինք սպասավորի հետ շատ չհետաձգել իր ծրագրի իրագործումը և հենց հետևյալ օրը ձեռնարկել այն։ Իսկ որպեսզի մեր ձեռնարկի հաջողությունն հաստատուն լինի, որոշեցինք վերցնել տղամարդու զգեստներ՝ արգելատնից դուրս գալը դյուրացնելու նպատակով։ Շատ էլ հեշտ բան չէր այդ զգեստները ներս տանելը, սակայն ես բավականաչափ հնարամիտ էի ելք գտնելու համար։ Ես պարոն դը Տ.-ին խնդրեցի միայն հետևյալ օրը հագնել թեթև մի վերնազգեստ. իսկ մնացածը վերցրի ինձ վրա։

Հաջորդ առավոտ մենք վերադարձանք արգելատուն։ Մանոնի համար վերցրել էի սպիտակեղեն, գուլպաներ և այլն, իսկ ես կիսաբաճկոնիս վրայից հագել էի մի պլաշչ, որը ծածկում էր իմ ուռած գրպանների բովանդակությունը։ Մանոնի սենյակում մենք միայն մի րոպե մնացինք։ Պարոն դը Տ.-ն նրան թողեց իր վերնազգեստներից մեկը. ես էլ ավի կիսաբաճկոնս. դուրս գալու համար ինձ բավական էր պլաշչը։ Ամեն ինչ կարգին էր նրա զգեստավորման տեսակետից, բացառությամբ անդրավարտիքի, որը ես դժբախտաբար մոռացել էի։

Այդ անհրաժեշտ առարկայի մոռացումը մեզ ծիծաղ պիտի պատճառեր, եթե նվազ լուրջ լիներ այն դժվարին կացությունը, որի մեջ մեզ գցում էր դա։ Ես հուսահատվեցի, որ այդպիսի մի չնչին բան կարող է փափանել մեր ծրագրի իրագործումը։ Ի վերջո, որոշեցի ինքս դուրս գալ առանց անդրավարտիքի՝ այն թողնելով Մանոնին։ Պլաշչս երկար էր, և ես մի քանի գնդասեղների օգնությամբ այնպես հարմարեցրի զգեստս, որ կարողացա վայելուչ կերպով դուրս գալ դռներից։

Օրվա մնացած ժամերն ինձ անտանելի երկար թվացին։ Վերջապես հասավ գիշերը, և մենք կառքով մեկնեցինք դեպի արգելատուն և կանգ առանք դարպասից փոքր-ինչ հեռու։ Երկար չսպասեցինք, Մանոնը շուտով իր առաջնորդի հետ հայտնվեց։ Կառքի դռնակները բաց էին, երկուսն էլ ներս մտան։ Ես բազուկներիս մեջ ընդունեցի իմ թանկագին սիրուհուն։ Նա դողում էր ինչպես տերև։ Կառապանն ինձ հարցրեց՝ թե ո՞ւր ենք գնալու։

— Քշիր մինչև աշխարհի ծայրը,— պատասխանեցի ես,— տար ինձ մի այնպիսի տեղ, որ ես այլևս երբեք չբաժանվեմ իմ Մանոնից։

Հույզի ազդեցության ներքո ասած այս խոսքերը, հույզ, որին ես չէի տիրապետում, քիչ մնաց, որ փորձանք բերեր գլխիս։ Իմ բացականչությունը կառապանին կասկածի մեջ ձգեց, և երբ հետո ես նրան անվանեցի այն փողոցը, ուր ուզում էինք գնալ, նա պատասխանեց, որ վախենում է անախորժ պատմության մեջ խճճվելուց։ Նա ասաց, ինքը կառահում է, որ Մանոն կոչված տղամարդը մի գեռատի աղջիկ է, որին ես փախցնում եմ արգելատնից, և ինքը բնավ տրամադրված չէ իր սեր ինձ իրեն վտանգի ենթարկելու։

Այդ անզգամի փափկանկատությունն առաջ էր գալիս ինձնից ավելի մեծ կառավարձ կորզելու ցանկությունից։ Մենք տակավին շատ մոտ էինք արգելատանը, որպեսզի կամենային հակաճառության բռնվել նրա հետ։

— Լռիր միայն,— ասացի ես նրան,— և դու կվճարես մի ոսկի։ Այս իմ խոստումից հետո նա ինձ կօգներ հրդեհելու մինչև իսկ ողջ արգելարանը։

Մենք հասանք Լեսկոյի բնակած տունը։ Ժամանակն ուշ

լինելու պատճառով պարոն դը Տ.-ն մեղնից հեռացավ, խոստանալով այցելել մյուս օրը։ Արդեյատան սպասավորը մընաց մեզ հետ։ Ես այնպես պինդ էի սեղմել Մանոնին իմ բազուկներում, որ մենք երկուսով մի տեղ էինք գրավում կառքի մեջ։ Նա լալիս էր ուրախությունից, և ես զգում էի, թե նրա արցունքները ինչպես են թրջում իմ այտերը։

Երբ մենք հասանք Լեսկոյի տանը և դուրս եկանք կառքից, ես նորից կառապանի հետ վեճի բռնվեցի, որի հետևանքները կործանարար հանդիսացան։ Ես զղջացի, որ նրան խոստացել եմ մի ոսկի ոչ միայն նրա համար, որ պարգևը չափից դուրս մեծ էր, այլ մի ուրիշ հիմքով, այսինքն՝ վճարելու անկարողությանս պատճառով։ Ես մարդ ուղարկեցի Լեսկոյի ետևից։ Նա իջավ իր սենյակից և դուրս եկավ փողոց։ Ես նրա ականջին ասացի, թե ինչ դժվար կացության մեջ եմ գտնվում։ Նա չափազանց կոպիտ բնավորություն ուներ և բնավ վարժված չէր քաղաքավարությամբ խոսել կառապանների հետ, ուստի ինձ պատասխանեց, թե ես երևի ծիծաղում եմ։

— Ոսկի՞,— ավելացրեց նա,— գավազանի քսան հարված պետք է տալ այս անպիտանին։

Իզուր ես ճգնեցի մեղմացնել նրա զայրույթը, ասելով, որ նա մեզ կկործանի։ Նա ձեռքից խլեց գավազանը՝ կառապանին ծեծելու մտադրությամբ։ Այս վերջինս, որը երևի արդեն բազմիցս գործ էր ունեցել գվարդիականների կամ մուշկետավորների հետ, վախից փախուստի դիմեց իր կառքով, գոռալով, որ ես փաբել եմ իրեն և սպառնալով, թե մենք դեռ կտեսնվենք։ Իզուր էի ես կանչում նրան կանգ առնել։

Նրա փախուստը ծայր աստիճան անհանգստացրեց ինձ։ Ես բնավ չէի տարակուսում, որ նա կգնա կոմիսարին հայտնելու։

— Դուք ինձ կործանում եք,— ասացի ես Լեսկոյին,— ձեզ մոտ ես ապահով չեմ կարող լինել։ անհրաժեշտ է, որ մենք անմիջապես հեռանանք այստեղից։— Ես ձեռքս մեկնեցի Մանոնին, խնդրելով քայլել, և մենք հապճեպ հեռացանք սույն վտանգավոր փողոցից։ Լեսկոն հետևեց մեզ։

Զարմանալի է, թե նախախնամությունն ինչպես է կապակցում դեպքերը։ Հաղիվ էինք մենք քայլել հինգ-վեց րոպե, երբ մի մարդ, որի դեմքը ես չկարողացա տեսնել, ճանաչեց Լեսկոյին։ Անկասկած նա սոսկ շարամիտ դիտավորությամբ էր փնտրում նրան իր տան մոտերքում, որը և իսկույն իրագործեց։

— Սա Լեսկոն է,— ասաց նա, ատրճանակը կրակելով նրա վրա։— Նա այսօր կգնա հրեշտակների հետ ընթրելու։

Եվ մի ակնթարթում անհետացավ։ Լեսկոն ընկավ անկենդան։ Ես ստիպեցի Մանոնին փախչել, որովհետև մեր օգնությունն ապարդյուն էր մի դիակի համար և, բացի այդ, վախենում էի, թե մեզ կարող է ձերբակալել դիշերային պահապանը, որը, անտարակույս, շուտով պիտի հայտնվեր։

Սպասավորի և Մանոնի հետ ես անմիջապես անցա առաջին հատող նրբանցքը։ Մանոնն այնպես էր հուզված, որ ես հաղիվ էի կարողանում նրան ոտքի վրա պահել։ Վերջապես նրբանցքի ծայրում մի կառք նկատեցի։ Մենք նստեցինք այդ կառքը, սակայն, երբ կառապանն ինձ հարցրեց, թե ուր ենք ուզում գնալ, ես չիմացա՝ ինչ ասեմ։ Ո՛չ վստահելի ապաստարան ունեի, ո՛չ էլ հավատարիմ բարեկամ, որին կարողանայի ապավինել։ Ես չունեի և դրամ, հաղիվ կես պիստոլ կար քսակումս։ Վախն ու հոգնածությունն այնպես հուզել ու ուժասպառ էին արել Մանոնին, որ նա համարյա ուշաթափ թեքվել էր ինձ վրա։ Բացի դրանից, Լեսկոյի սպանությունը կաշկանդել էր երևակայությունս, և ես տակավին վախենում էի դիշերային պահապանից։ Ի՞նչ որոշել։ Բարեբախտաբար հիշեցի Շայոյի պանդոկը, որտեղ մի քանի օր անց էի կացրել Մանոնի հետ, երբ գնացել էինք այդ գյուղում բնակություն հաստատելու։ Ես հույս ունեի, որ այնտեղ թե՛ ապահովություն կգտնեմ և թե՛ կարող կլինեմ որոշ ժամանակ ապրել, առանց անմիջապես վճարելու։

— Տար մեզ Շայո,— ասացի կառապանին։ Նա հրաժարվում էր ուշ դիշերով մեզ տանել այնտեղ, եթե չվճարեմ մի պիստոլ. մտատանջության նոր առիթ։ Վերջապես համաձայնեցինք վեց ֆրանկով. քսակումս եղած ամբողջ գումարն այդ էր։

Ճանապարհին մխիթարում էի Մանոնին, մինչդեռ սրտիս

խորքում հուսահատություն էր տիրում։ Ես հազար անգամ ինքնասպան կլիներ, եթե բազուկներիս մեջ չլիներ այն միակ էակը, որն ինձ կապում էր կյանքին։ Միայն այս միտքն էր պահում արիություն։ «Համենայն դեպս, իմ Մանոնն ինձ հետ է,— ասում էի ես.— նա սիրում է ինձ. նա իմն է։ Թող Տիբերժն ինչ ուզում է ասի, երջանկությունը պատրանք չէ։ Թող կործանվի արար աշխարհը, ես անտարբեր կմնամ։ Ինչո՞ւ։ Որովհետև, բացի իմ սիրուց, ինձ ոչինչ չի հետաքրքրում այս աշխարհում»։

Այս զգուշացումը միանգամայն անկեղծ էր. սակայն մինչ ինքս այսպես չնչին նշանակություն էի տալիս երկրավոր բարիքներին, զգում էի, որ ինձ հարկավոր է գոնե այդ բարիքների մի աննշան մասն ունենալ, որպեսզի ավելի վեհանձներին կարողանամ արհամարհել մնացածը։ Սերն ամեն կարգի բարիքներից, բոլոր գանձերից ու հարստություններից ամենաթանկագինն է. այնուամենայնիվ, սերը շատ հաճախ դրանց կարիքն ունի, և ոչ մի բան ավելի հուսահատական չէ նրբազգաց մի սիրեկանի համար, քան, հակառակ իր կամքի, տեսնել իրեն ստոր մարդկանց կողմության ենթակա։

Ժամը տասնմեկն էր, երբ հասանք Շայու։ Պանդոկում մեզ ընդունեցին որպես նախկին ծանոթների։ Մանոնի տղամարդու շորերը ոչ ոքի չզարմացրին, որովհետև Փարիզում և նրա շրջակայքում վարժված են կանանց տեսնել ամեն ձևի հագուստներով։ Ես կարգադրեցի, որ նրան ամեն տեսակ ծառայություն մատուցեն, և որ նա ոչ մի բանի պակասություն չզգա, իբր թե դրամի կողմից ես ամենափայլուն վիճակումն եմ։ Մանոնը չգիտեր իմ դրամական նեղ դրությունը։ Ես չէի ուզում, որ նա գիտենա այդ մասին և որոշել էի հետևյալ օրն ևեթ վերադառնալ Փարիզ, այնտեղ այս անախորժ հիվանդության դեմ որևէ բուժիչ միջոց որոնելու համար։

Ընթրիքի ժամանակ նա ինձ թվաց դունատ ու նիհարած։ Այդ ես չէի նկատել արդեսատանը, որովհետև սենյակը, ուր տեսել էի նրան, բավականին լուսավորված չէր։ Ես հարցրի նրան, թե գուցե դա հետևանք է այն սարսափի, որին նա ենթարկվեց, երբ իր աչքի առաջ սպանեցին եղբորը։ Նա հավատացրեց ինձ, որ թեպետ այդ դեպքը ծայր աստիճան հուզել

է իրեն, սակայն իր դունատությունը հետևանք է այն բանի, որ նա երեք ամիս չի տեսել ինձ։

— Ուրեմն դու այդպես բո՞ւռն ես սիրում,— ասացի ես։

— Հազար անգամ ավելի, քան այդ կարողանում եմ արտահայտել։

— Ուրեմն ինձ այլևս չե՞ս լքի,— ավելացրի ես։

— Ոչ, երբեք,— բացականչեց նա։ Եվ այս հավաստիացումը հաստատեց այնպիսի փաղաքշանքներով ու երդումներով, որ իրոք ինձ թվաց, թե անհնար է, որ նա կարողանա երբևիցե մոռանալ դրանք։

Ես միշտ հավատացած եմ եղել, որ նա անկեղծ էր. ի՞նչ դրդապատճառ ուներ իրեն այդ աստիճան կեղծավոր ցույց տալու։ Սակայն Մանոնն անչափ թեթևամիտ էր կամ, ավելի շուտ, միանգամայն գլուխը կորցնում էր, երբ տեսնում էր, որ իր աչքի առաջ ուրիշ կանայք ճոխության մեջ են ապրում, մինչդեռ ինքը խարխափում է չքավորության ու կարիքի մեջ։ Ես շուտով ստացա Մանոնի այսպիսի անկայուն խառնվածքի վերջին ապացույցը, որը գերազանցեց բոլոր մյուսներին և առաջ բերեց ամենաանօրինակ արկածը, որպիսին հազիվ թե երբևէ պատահած լինի իմ ծագման ու կարողության տեր մարդու հետ։

Լավ գիտենալով Մանոնի բնավորությունը, մյուս առավոտ ես շտապեցի դեպի Փարիզ։ Նրա եղբոր մահը, ինձ ու նրա համար սպիտակեղեն ու շորեր ձեռք բերելու անհրաժեշտությունը միանգամայն հարգելի պատճառներ էին, որպեսզի ստիպված լինեմ ուրիշ պատրվակների դիմելու։ Պանդոկից ես դուրս եկա այն մտադրությամբ, ինչպես ասացի Մանոնին ու պանդոկապետին, որ կառք վարձեմ, բայց դա միայն պարծենկոտություն էր. կարիքն ինձ ստիպում էր ոտքով գնալ։ Ես արագ քայլեցի դեպի Կուր-լա-Ռեն, ուր մտադիր էի կանգ առնել։ Ինձ անհրաժեշտ էր գեթ մի բոպե առանձնանալ, որպեսզի որոշեմ թե ինչ պիտի անեմ Փարիզում։

Ես նստեցի կանաչի վրա և խորասուզվեցի մտքերի ու դատողությունների ծովը, հոգետանջ մտքեր, որոնք կամաց-կամաց հանգան երեք գլխավոր կետերի։ Ինձ անհապաղ օգնություն էր պետք՝ ներկայումս անհետաձգելի իմ բազմաթիվ

կարիքների համար։ Ես պետք է որոնեի իմ ապագայի նրա-կատմամբ հույս ներշնչող ուղի, և թե՝ պակաս կարևոր չէր, ինձ անհրաժեշտ էր տեղեկություններ ձեռք բերել ու միջոցների դիմել՝ Մանոնի և իմ անվտանգությունն ապահովելու համար։ Երեք կետերից կազմված այս ծրագրի ու կոմբինացիաների վրա ուժասպառ լինելուց հետո, ես, այնուամենայնիվ, բարվոք համարեցի հրաժարվել վերջին երկուսից։ Մենք կարող կլինենք մեզ միանգամայն ապահով զգալ, ապրելով Շայոյում վարձած մի սենյակում. իսկ ինչ վերաբերում է մեր ապագա կարիքներին, ապա ես ենթադրում էի, թե դեռ ժամանակ կունենամ այդ մասին խորհելու, երբ կբավարարեմ մեր ներկա կարիքները։

Ուստի հիմա հարցն այն էր, թե ինչպես լցնեմ իմ քսակը։ Պարոն դը Տ.-ն վեհանձնաբար առաջարկել էր իրենը, սակայն ինքս նրան այդ մասին հիշեցնելու մտքից անգամ սաստիկ խորշում էի։ Ինչ մարդ պետք է լիներ ես, որ մի օտարականի պատմելով իմ թշվառությունը, խնդրեի նրան ինձ մասնակից անել յուր կարողությանը։ Միայն ստորաքարշ մարդն է ընդունակ այդ անելու՝ շնորհիվ իր նվաստության, որն արգելք է հանդիսանում նրան զգալու իր վարմունքի ստորությունը, կամ մի խոնարհ քրիստոնյա՝ շնորհիվ իր անչափ մեծահոգության, որը նրան բարձր է դասում ամոթի զգացումից։ Ես ոչ ստորաքարշ մարդ էի, ոչ էլ մոլեռանդ քրիստոնյա. արյանս կեսը կտայի, միայն թե խուսափեի այդպիսի նվաստացումից։

«Տիբե՞րժը,— հարցրի ինքս ինձ,— մի՞թե իմ բարի Տիբերժը պիտի մերժի այն, ինչ հնարավորություն ունի ինձ տալու։ Ոչ, իմ թշվառությունը կշարժի նրա սիրտը։ Սակայն նա ինձ կսպանի իր բարոյախոսությամբ։ Պետք է կրել նրա կըշտամբանքները, հորդորները, սպառնալիքները. նա այնքան թանկ կծախի իր օգնությունը, որ ես ավելի շուտ արյանս մի մասն էլ կտամ, քան թե կհամաձայնվեմ ինձ ենթարկել այդպիսի դառն փորձության, որն իմ սրտում նոր հույզեր ու խոցեր պիտի առաջացնի»։

— Լավ,— շարունակեցի ես իմ խորհրդածությունները,— պետք է, հետևաբար, հրաժարվել որևէ հույսից, քանի որ ուրիշ ելք չեմ տեսնում, ես այնքան հեռու եմ այդ երկու կետերն ընդունելուց, որ ամենամեծ հոժարությամբ արյանս կեսը կթափեմ, քան կգնամ այդ ճանապարհներից որևէ մեկով, այսինքն՝ ես կթափեմ իմ ամբողջ արյունը, քան կգնամ այդ երկու ճանապարհով։ Այո, իմ ամբողջ արյունը,— ավելացրեցի ես փոքր-ինչ մտածելուց հետո,— կասկած չկա, որ ես ավելի սիրով կթափեմ արյունս, քան թույլ կտամ ստորացնող աղերսանքներ անելու։

Սակայն մի՞թե հարցը վերաբերում է իմ արյանը։ Հարցը վերաբերում է Մանոնի կյանքին ու գոյությանը։ Հարցը վերաբերում է իմ սիրուն և Մանոնի հավատարմությանը։ Ի՞նչով կարող եմ ես վարձահատույց լինել նրան։ Մինչև հիմա ոչ մի բանով ես չեմ կարողացել այդ անել. նա ինձ համար փոխարինում է փառքը, երջանկությունը, հարստությունը։ Անշուշտ շատ բաներ կան, որոնց համար ես կյանքս կզոհաբերեմ, որպեսզի ձեռք բերեմ դրանք կամ խուսափեմ դրանցից. սակայն մի բան մեծարել ավելի, քան իմ կյանքը՝ դա դեռ չի նշանակում այն մեծարել ավելի, քան Մանոնին։

Այս խորհրդածությունից հետո ես հանգեցի մի որոշման։ Շարունակեցի ճանապարհս, վճռելով նախ՝ գնալ տեսնել Տիբերժին և ապա՝ պարոն դը Տ.-ին։

Փարիզ մտնելով, մի կառք վարձեցի, թեև նրան վճարելու համար ոչինչ չունեի. հույս դրել էի այն օգնության վրա, որը գնում էի հայցելու Կառապանին հրամայեցի ինձ տանել Լյուքսեմբուրգյան պարտեզը և այնտեղից լուր տվի Տիբերժին, որ սպասում եմ նրան։ Նա իր արագությամբ կարճեց իմ անհամբերությունը։ Առանց այլևայլության նրան պատմեցի իմ ծայրահեղ կարիքի մասին։ Նա հարցրեց, թե արդյոք բավակա՞ն է այն հարյուր պիստոլը, որ ես վերադարձրել էի նրան. և առանց որևէ առարկության իսկույն ևթ գնաց այդ դրամը բերելու՝ ոչինչ չմերժելու այն սրտաբաց պատրաստակամությամբ ու հրճվանքով, որը հատուկ է միայն սիրո և ճշմարիտ բարեկամության։

Թեպետև ես ոչ մի կասկած չունեի իմ խնդրանքի հաջողության վրա, այնուամենայնիվ չէի սպասում, թե այդքան էժան գնով կկարողանամ ձեռք բերել այն, առանց նրա կըշտամբանքն ստանալու՝ մեղա չգալուս համար։ Բայց սխալ-

վում էի, կարծելով, թե միանգամայն ազատ պիտի լինեմ նրա հանդիմանությունից, որովհետև դրամը համբելուց հետո, երբ ես պատրաստվում էի հեռանալ նրանից, նա խնդրեց գնալ ծառուղի փոքր-ինչ զբոսնելու։ Մանոնի մասին ոչինչ չէի ասել նրան։ Նա չգիտեր, որ Մանոնը ազատված է, այս պատճառով նրա բարոյական խրատները սկսեցին պտտվել Սեն-Լազարից կատարած իմ հանդուգն փախուստի և այն երկյուղի շուրջը, թե Սեն-Լազարում ինձ ավանդված խոհեմության դասերից օգտվելու փոխարեն ես կարող եմ դարձյալ անառակ կյանքի ուղին բռնել։

Նա ասաց, որ իմ փախուստի հաջորդ օրն ինձ այցի գնալով Սեն-Լազար, անասելի սարսափել է, տեղեկանալով, թե ինչպես եմ այնտեղից դուրս գնացել։ Այդ մասին խոսակցություն է ունեցել վանահոր հետ, որը սարսափից տակավին սթափված չի եղել։ Այնուամենայնիվ, այդ բարեսիրտ վանահայրը ոստիկանության գլխավոր պետից մեծահոգությամբ թաքցրել է իմ փախուստի հանգամանքը և ջանացել, որ բարապանի մահվան լուրը չտարածվի դրսում։ Այնպես որ այդ կողմից կարող եմ չանհանգստանալ։ Սակայն, եթե տակավին ես պահել եմ իմաստության ամենաշնչին մասնիկն անգամ, ապա ես պետք է օգտվեմ իմ գործերի սույն երջանիկ ընթացքից, որ տալիս է երկինքը։ Ես պարտավոր եմ անմիջապես հորս գրել և վերահաստատել իմ հարաբերությունները նրա հետ։ Իսկ եթե գեթ մի անգամ կամենում եմ հետևել իր՝ Տիբերժի խորհրդին, ապա նրա կարծիքով ես պետք է թողնեմ Փարիզը և վերադառնամ իմ ընտանիքի գիրկը։

Ես մինչև վերջը լսեցի նրա խոսքերը։ Նրանց մեջ ինձ համար շատ հոգնեցուցիչ բաներ կային։ Նախ և առաջ՝ անսահման ուրախ էի, որ կարող եմ Սեն-Լազարի կողմից ոչ մի երկյուղ չունենալ։ Կարծես թե Փարիզի փողոցներն ինձ համար դարձան մի ազատ երկիր։ Երկրորդը՝ ես հրճվում էի, որ Տիբերժը ոչինչ չգիտե Մանոնի ազատության և ինձ մոտ վերադառնալու մասին։ Ես նույնիսկ նկատեցի, որ նա խուսափում է Մանոնի մասին խոսելուց, երևի կարծելով, թե նա այժմ արքեն քիչ տեղ է գրավում իմ սրտում, եթե այդքան հանգիստ ու անտարբեր եմ նրա վիճակի նկատմամբ։

Ես որոշեցի մեր տուն չվերադառնալու դեպքում գոնե հորս գրել, ինչպես Տիբերժն էր խորհուրդ տալիս, և հայտնել, որ պատրաստ եմ կատարելու որդիական իմ պարտականությունը և հնազանդվել նրան։ Ես հույս ունեի, թե կկարողանամ նրանից դրամ ստանալ՝ ակադեմիայում իմ դասընթացը շարունակելու պատրվակով. որովհետև ինձ համար դյուրին չէր լինի համոզել նրան, որ մտադիր եմ հոգևոր դաս վերադառնալու։ Եվ հիրավի. իմ սրտի խորքում ես բնավ հեռու չէի անելիք խոստումս իրագործելու մտքից։ Ընդհակառակը, ես շատ ուրախ կլինեի զբաղվել որևէ պատվաբեր ու արժանավայել գործով, եթե միայն այս դիտավորությունս կարողանայ համակերպվել իմ սիրո հետ։ Ես մտածում էի ապրել Մանոնի հետ և միևնույն ժամանակ սովորել ակադեմիայում։ Մեկը մյուսին բնավ չէր խանգարում։

Ես այն աստիճան գոհ էի այս բոլոր մտքերից, որ Տիբերժին խոստացա նույն օրն եթե մի նամակ ուղարկել հորս։ Նրանից բաժանվելով, ես, իրոք մտա փոստատուն և այնպիսի մի սրտառուչ ու խոնարհ նամակ գրեցի, որ երբ ինքս կարդացի այն, հաստատապես համոզվեցի, որ նորից պիտի նվաճեմ հորս սիրտն ու գորովանքը։

Թեպետ այժմ, Տիբերժից հեռանալուց հետո, ես ի վիճակի էի կառապան վարձել և վճարել նրան, այնուամենայնիվ, ուզեցի ինձ հաճույք պատճառել, ոտքով քայլելով դեպի պարոն դը Տ.-ի տունը։

Ես մեծ բավականություն էի զգում այսպես համարձակ վայելել իմ ազատությունը, որի մասին կարող էի այլևս ոչ մի երկյուղ չունենալ, ինչպես վստահացրել էր ինձ բարեկամս։ Սակայն իմ մտքով հանկարծ անցավ, որ նրա հավաստիացումները վերաբերում են սոսկ Սեն-Լազարին, մինչդեռ ինձ վրա բացի նրանից, ծանրացած էր նաև արդելատնից Մանոնին հափշտակելու հանգամանքը, չհաշված Լեսկոյի մահը, որին ես մասնակից էի գոնե որպես վկա։ Այս միտքն ինձ այն աստիճան սարսափեցրեց, որ ես թաքնվեցի առաջին պատահած ծառուղիում և այնտեղից կառք կանչեցի։ Կառապանին հրամայեցի ինձ ուղիղ տանել պարոն դը Տ.-ի մոտ, որին զվարճացրի իմ երկյուղի պատմությամբ։ Դա ինձ ես ծիծաղելի

երևաց, երբ նա հաղորդեց, որ ոչ արգելատան կողմից և ոչ էլ Լեսկոյի սպանության առիթով ես հիմք չունեմ վախենալու։ Նա ինձ ասաց, որ երկյուղելով, թե միգուցե կարող են կասկածել, որ ինքն էլ է մասնակցել Մանոնի հափշտակմանը, նա հենց նույն առավոտ գնացել է արգելատուն և խնդրել, որ իրեն թույլ տան այցելելու նրան, ձևացնելով, թե ոչինչ չգիտե պատահածի մասին։ Ոչ միայն արգելատանը ոչ ոք չի մտածում մեղադրել իրեն կամ ինձ, այլ, ընդհակառակը, այնտեղ շտապել են նրան հայտնել այդ դեպքը որպես մի արտակարգ նորություն։ Բոլորին զարմացրել է այն հանգամանքը, որ Մանոնի նման սիրուն աղջիկը վճռել է փախչել մի սպասավորի հետ։ Նա այս ամենին պատասխանել է սառնությամբ, որ ինքը բնավ չի զարմանում և որ հանուն աղատության մարդ ոչ մի միջոցի առաջ կանգ չի առնում։ Նա շարունակեց պատմել, որ արգելատնից գնացել է Լեսկոյի մոտ՝ ինձ և իմ գեղեցիկ սիրուհուն այնտեղ գտնելու հույսով, սակայն տանտերը, որը կառեթագործ է, հայտնել է, որ նա չի տեսել ո՛չ Մանոնին, ո՛չ էլ ինձ, և զարմանալի էլ չէ, որ մենք չենք եղել իր մոտ, որովհետև քանի որ Լեսկոյին պիտի հանդիպեինք, ապա անկասկած պետք է և լսած լինեինք, որ Լեսկոն սպանվել է մոտավորապես նույն ժամանակ։ Ըստ որում, տանտերը չի հրաժարվել բացատրել, որ ինքը գիտե այդ սպանության պատճառն ու հանգամանքները։ Մոտավորապես դրանից երկու ժամ առաջ Լեսկոյի բարեկամ գվարդիականներից մեկը եկել է նրա մոտ և առաջարկել թուղթ խաղալ։ Լեսկոն թղթախաղում այնքան արագ է տարել, որ մի ժամվա ընթացքում մյուսը զրկվել է իր հարյուր էկյուից, այսինքն՝ մոտը բոլորովին փող չի մնացել։ Այդ թշվառականն առանց մի սուի մնալով, խնդրել է Լեսկոյին տանուլ տված գումարի կեսը իրեն փոխ տալ, և այս առթիվ ծագած տարաձայնությունից նրանք սկսել են մի կատաղի կռիվ։ Լեսկոն հրաժարվել է դուրս գալ փողոց՝ սուսերով մենամարտելու համար. իսկ մյուսը հեռանալիս երդվել է նրա գլուխը ջախջախել առաջին իսկ հանդիպումին, որ և կատարել է հենց նույն երեկո։

Պարոն դը Տ.-ն սիրալիրությամբ ավելացրեց, որ նա խիստ անհանգստացել է մեզ համար և շարունակեց իր ծա-

ռայություններն առաջարկել մեզ։ Ես ոչ մի բոպե չտատանվեցի՝ հայտնելու նրան մեր ապաստարանի տեղը։ Նա իմ բարեհաճ թույլտվությունը խնդրեց՝ մեզ հետ ընթրելու։

Ես պետք է միայն սպիտակեղեն ու հագուստներ վերցնեի Մանոնի համար, ուստի ասացի նրան, որ կարող ենք հենց նույն ժամին մեկնել, եթե միայն նա կհաճի ինձ հետ մի բոպե կանգ առնել վաճառատներում։ Չգիտեմ, մտածե՞ց նա արդյոք, որ ես այդ առաջարկությունն անում եմ նրա առատաձեռնությունից օգտվելու նպատակով կամ գուցե դա բխում էր իր մեծ հոգու դրդումից, բայց համաձայնելով հենց նույն բոպեին մեկնելու, նա ինձ տարավ իրեն սպասարկող վաճառականների մոտ։ Նա ինձ ընտրել տվեց զանազան կտորեղեններ, որոնց գինը շատ ավելի թանկ էր, քան ես մտադիր էի վճարել, և երբ ուզեցի հաշիվ տեսնել, նա բացարձակապես արգելեց վաճառականներին ստանալ ինձնից թեկուզ մի սու։ Այս սիրալիրությունը նա ցույց տվեց այնպիսի մի շնորհալի հոժարակամությամբ, որ ես մտածեցի, թե կարող եմ առանց ամոթի ընդունել այն։ Մենք միասին բռնեցինք Շայոյի ճանապարհը, ուր ես հասա նվազ մտատանջ, քան մեկնել էի այնտեղից։

Ասպետ դե Գրիյոյի այս պատմությունը տևեց մի ժամից ավելի։ Ես խնդրեցի նրան փոքր-ինչ դադար առնել և ընկերակցել մեզ՝ ընթրիք անելու։ Մեր լարված ուշադրությունից նա հասկացավ, որ հաճույքով ենք լսել իրեն։ Նա վստահացրեց, որ իր պատմության շարունակությունն ավելի հետաքրքրքրական ու ուշագրավ կլինի մեզ համար։

Երբ վերջացրինք ընթրիքը, շարունակեց հետևյալ խոսքերով։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Իմ ներկայությունը և պարոն դը Տ.-ի սիրալիր վերաբերմունքը բոլորովին փարատեցին Մանոնի թախիծը։

— Մոռանանք մեր անցած սարսափները,— ասացի ես նրան տուն վերադառնալով,— և վերսկսենք մի նոր, ավելի երջանիկ կյանք։ Վերջ ի վերջո, սերը մի բարի տնօրեն է. ճակատագիրը չի կարող այնքան վշտեր պատճառել մեզ, որքան հաճույքներ սերն է պատճառում։

Մեր ընթրիքը վերածվեց իսկական տոնախմբության։ Իմ Մանոնի հետ ու հարյուր պիստոլով ես ինձ ավելի հպարտ ու երջանիկ էի զգում, քան Փարիզի ամենահարուստ վաճառականը ի դիզած գանձերով։ Հարստություն պետք է համարել այն միջոցները, որոնք բավարարություն են տալիս մեր ցանկություններին։ Մինչդեռ ես այլևս չունեի չիրագործված ցանկություն։ Անգամ ապագան քիչ էր անհանգստացնում ինձ։ Ես գրեթե վստահ էի, որ հայրս դժվարություն չի հարուցի ինձ միջոցներ հայթայթելու՝ Փարիզում պատվավոր կերպով ապրելու համար, որովհետև, լինելով քսան տարեկան, ես ստանում էի մորս կարողությունից ինձ հասանելիք ժառանգության իրավունքները։ Ես Մանոնից չթաքցրի, որ իմ հարստությունը կազմում է հարյուր պիստոլ։ Այս գումարը բավական էր, որպեսզի մենք հանգարտ սպասենք ավելի լավ օրերի, որոնք, ինձ թվում էր, անկասկած պիտի հասնեին,

այրի առաջ ունենալով իմ ժառանգական իրավունքները կամ թղթախաղից ստանալիք եկամուտները։

Այսպես, առաջին շաբաթների ընթացքում ես ուրիշ հոգս չունեի, քան իմ անդորը վիճակի պարգևած վայելքները։ Եվ որովհետև մի կողմից պատվի զգացումը և մյուս կողմից ոստիկանության վախն ինձ ստիպում էր օրեցօր հետաձգել Տրանսիլվանյան խաղատան ընկերակիցներիս հետ կապ վերահաստատելը, ապա ես բավականացա խաղալ նվազ վատահամբավ ժողովարաններում, ուր բախտի բերումն ինձ ազատեց խարդախության դիմելու նվաստացումից։ Նոճաշյա ժամանակի մի մասը ես անց էի կացնում քաղաքում և Շայո վերադառնում ընթրելու, շատ հաճախ պարոն դը Տ.-ի ընկերակցությամբ, որի բարեկամությունն օրըստօրև ամրանում էր։

Մանոնը գտավ իր ձանձրույթը փարատելու միջոցը։ Նա մտերմացավ մի քանի ջահել հարևանուհիների հետ, որոնց գյուղ էր գրավել գարունը։ Նրանք ժամանակն անց էին կացնում զբոսանքով ու իրենց սեռին հատուկ զրաղմունքներով։ Թուղթ էին խաղում կանխորոշված գումարի սահմաններում և տարած դրամով հոգում կառեթի ծախսերը։ Թարմ օդ շընչելու համար գնում էին Բուլոնյան անտառ, և ես երեկոյան վերադարձիս Մանոնին տեսնում էի ավելի դեղեցիկ, ավելի կենսուրախ, ավելի գորովալից, քան երբևէ։

Այնուամենայնիվ, իմ կյանքի երկնակամարում սև ամպեր կուտակվեցին, որոնք կարծես սպառնում էին խորտակել երջանկությանս շենքը։ Սակայն դրանք շուտով խսպառ փարատվեցին, և Մանոնի շարաճճի բնավորությունն այնպիսի մի զավեշտական լուծում տվեց դրանց, որ մինչև հիմա էլ ինձ համար քաղցր է վերականգնել իմ մտքում նրա սրտի քընքշությունն ու հրապույրներն արտացոլող այդ հիշողությունը։

Միակ ծառան, որ սպասարկում էր մեզ, մի անգամ ինձ մի կողմ հրավիրեց և մեծ շփոթմունքով ասաց, որ կարևոր գաղտնիք ունի հաղորդելու։ Ես քաջալերեցի նրան՝ առաջարկելով ազատ խոսել։ Սկզբում նա մի քանի կցկտուր խոսքեր արտասանեց և ի վերջո հասկացրեց, որ օտարերկրացի մի սինյոր, ըստ երևույթին, սաստիկ հրապուրվել է օրիորդ Մա-

նոնի գեղեցկությամբ։ Ես իմ բոլոր երակներում զգացի արյանս բորբոքումը։

— Իսկ Մանո՞նը, նա է՞լ է հրապուրվել,— ընդհատեցի ես նրան խիստ սաստկությամբ, քան պահանջում էր խոհեմությունը՝ լուսաբանությունը շփափանելու համար։

Իմ դյուրաբորբոքությունը սարսափեցրեց սպասավորին։ Նա շփոթված պատասխանեց, որ իր տեղեկությունները այնքան էլ հեռու չեն գնում։ Սակայն մի քանի օր շարունակ նկատելով, որ այդ օտարականը համառությամբ գալիս է Բուլոնյան անտառ, իջնում իր կառքից և, առանձնանալով հեռավոր ծառուղիներում, բացահայտորեն ուրիշ է փնտրում տեսնելու կամ հանդիպելու Մանոնին, ապա ինքը որոշում է ծանոթություն հաստատել օտարականի ծառաների հետ՝ նրանց տիրոջ անունն իմանալու նպատակով։ Ծառաներն ասել են, որ նա իտալացի իշխան է, որ իրենք էլ են կասկածում իրոք սիրային ինչ-որ արկածախնդրության։ Սպասավորն ավելացրեց, որ իրեն չի հաջողվել ուրիշ տեղեկություն ձեռք բերել, որովհետև այդ վայրկյանին իշխանը դուրս է եկել անտառից, մտերմորեն մոտեցել է իրեն ու հարցրել անունը։ Այնուհետև, երևի գուշակելով, որ նա մեր ծառան է, իշխանը շնորհավորել է իրեն, որ նա սպասավորում է աշխարհի ամենահրաշալի տիկնոջը։

Ես անհամբեր սպասում էի այս պատմության շարունակությանը։ Նա վերջացրեց այն՝ երկյուղած ներողություն խնդրելով, որը ես վերադրեցի իմ անխոհեմ վրդովմունքին։ Իզուր հորդորում էի նրան շարունակել և ոչինչ չթաքցնել։ Նա երդվեց, որ այլևս ոչ մի բան չգիտե և որովհետև այն ամենը, ինչ պատմել է, պատահել էր նախընթաց օրը, ուստի ժամանակ չի ունեցել կրկին տեսնելու իշխանի սպասավորներին։ Ես նրան քաջալերեցի ոչ միայն գովասանքներով, այլև առատաձեռն վարձատրությամբ և, առանց որևէ անվստահություն ցույց տալու Մանոնի նկատմամբ, ավելի հանդիստ խոսելով հանձնարարեցի նրան հետևել օտարականի յուրաքանչյուր քայլին։

Այնուամենայնիվ, սրտիս խորքում նրա երկյուղը սարսափելի կասկածներ հարուցեց։ Վախի ազդեցության տակ նա

կարող էր թաքցնել ճշմարտության մի մասը։ Սակայն փորձինչ խորհելուց հետո, ես այն աստիճան ազատվեցի ինձ ճնշող տագնապից, որ մինչև իսկ զղջացի ցուցաբերած թուլությունս այդ նշանի համար։ Արդարև, ես չէի կարող մեղադրել Մանոնին, որ ուրիշները սիրում են նրան։ Ամենայն հավանականությամբ նա ոչինչ չգիտե իր հաղթանակի մասին։ Եվ ապա՝ ինքս ինչ կյանք պիտի վարեմ, եթե խանդն այդքան դյուրությամբ մուտք է գործում իմ սիրտը։

Հետևյալ օրը ես վերադարձա Փարիզ մի մտադրությամբ. արագացնել իմ հարստացումը մեծ գումարախաղով, որպեսզի ի վիճակի լինեմ առաջին իսկ փորձանքի դեպքում հեռանալ Շայոյից։ Այդ երեկո իմ հանդիստը վրդովող ոչինչ չմացա։ Օտարականն էլի եկել էր Բուլոնյան անտառ և նախընթաց օրը, հաստատած բարեկամության իրավունքից օգտվելով, մոտեցել էր իմ հավատարմատար սպասավորին և խոսել իր սիրո մասին, սակայն այնպիսի արտահայտություններով, որոնք Մանոնի կողմից ոչ մի փոխադարձություն չեն ցուցաբերել։ Օտարականը հարցափորձ է արել հազար ու մի մանրամասնությունների մասին. ի վերջո, նա փորձել է մեծ փոստումներով կաշառել սպասավորիս և, գրպանից հանելով նախօրոք պատրաստած մի նամակ, իզուր առաջարկել է նրան մի քանի ոսկի՝ նամակն իր տիրուհուն հանձնելու համար։

Երկու օր անցավ առանց այլ պատահարների։ Երրորդ օրն ավելի փոթորկալից եղավ։ Բավական ուշ քաղաքից տուն վերադառնալով, ես իմացա, որ Մանոնը զբոսանքի պահին միառժամանակ հեռացել է իր ընկերուհիներից և, երբ քայլառ քայլ հետևող օտարականը մոտեցել է նրա ազդանշանին, մի նամակ է տվել նրան, որը նա ընդունել է մեծ հաճույքով։ Օտարականը կարողացել է իր բերկրանքը հայտնել միայն քնքշանքով համբուրելով նամակը, որովհետև Մանոնն իսկույն հեռացել է։ Սակայն օրվա մնացած բոլոր ժամերին Մանոնը եղել է անսովոր ուրախ ու այդ զվարթ տրամադրությունը նա պահել է նաև տուն վերադառնալուց հետո։ Իհարկե, այս պատմության յուրաքանչյուր խոսքն ինձ սարսռեցրեց։

— Դու վստա՞հ ես,— տխրագին հարցրի ես սպասավորին,— որ քո աչքերը չեն խաբել քեզ։

Նա երկինքը վկա կանչեց, որ իր ասածը զուտ ճշմարտություն է։

Ես չգիտեմ, թե ինչ կաներ ինձ սրտիս մորմոքը, եթե Մանոնը, որը լսել էր իմ վերադարձը, չգար ինձ դիմավորելու՝ անհամբեր ու գանգատվելով իմ ուշացման համար։ Առանց սպասելու իմ պատասխանին, նա ինձ հեղեղեց փաղաքշանքներով և, երբ մենակ մնացինք, խստությամբ հանդիմանեց, որ սովորություն եմ դարձրել միշտ այդպես ուշ վերադառնալ։ Իմ լռությունը նրան թույլ էր տալիս աղատ շարունակելու իր զեղումները, և նա ասաց, որ ահա երեք շաբաթ է, ինչ ես ոչ մի օր լրիվ չեմ անցկացրել իր հետ։ Նա հայտարարեց, որ այլևս չի կարող տանել այդպիսի երկար անջատումներ և խնդրում է իմ բացակայություններն ընդմիջել գոնե մի-մի օրով՝ իրեն նվիրելու համար և որ հենց վաղվանից նա ցանկանում է առավոտից մինչև երեկո ինձ իր մոտ տեսնել։

— Կլինեմ, կարող ես չկասկածել,— պատասխանեցի ես փոքր-ինչ կտրուկ։ Նա քիչ ուշադրություն դարձրեց իմ տրխրության վրա, և միանգամայն համակված անզուսպ ուրախությամբ, որն իրոք ինձ արտակարգ թվաց, հաղար ու մի զվարճալի պատկերներով նկարագրեց, թե ինչպես է անցկացրել օրը։ «Տարօրինակ աղջիկ է,— մտածում էի ինքս ինձ,— արդյոք ի՞նչ է սպասում ինձ այս նախերգանքից հետո»։ Մաքովս անցավ մեր առաջին անջատման արկածի հիշողությունը։ Սակայն ինձ թվաց, թե նրա ուրախությունն ու փաղաքշանքները տոգորված են անկեղծությամբ և ներդաշնակ են իրենց արտաքին արտահայտությանը։

Ընթրիքի ժամանակ չհաղթահարվող տխրություն ես հեշտությամբ կարող էի վերագրել թղթախաղում ունեցած անախորժ կորուստիս։ Իսկ այն, որ նա ինքը խնդրեց հետևյալ օրը չհեռանալ Շայոյից, չափից դուրս ձեռնտու էր ինձ։ Այդպիսով, ես ժամանակ ունեցա խորհրդածելու իմ անելիքի մասին։ Իմ ներկայությունը վերացնում էր յուրաքանչյուր կասկած այդ օրվա նկատմամբ։ Եթե ես նույնիսկ չնկատեի ոչ մի բան, որը ստիպեր ինձ բարձրաձայն արտահայտել իմ գիտումները, ապա, միևնույնն է, ես որոշել էի հետևյալ օրն ևեթ նրա հետ տեղափոխվել քաղաք և հաստատվել մի

թաղում, ուր ադատ կլինեմ իտալացի իշխաններին հանդիպելու անախորժությունից։ Այդ որոշման շնորհիվ գիշերը անցկացրի հանգիստ, թեպետև դա ինձ չփրկեց մի նոր անհավատարմության սարսափից։

Առավոտյան, երբ ես արթնացա, Մանոնն ինձ ասաց, որ թեև մենք ամբողջ օրը տանն ենք անցկացնելու, այնուամենայնիվ, նա կուզեր, որ ես անփութություն չցուցաբերեմ իմ արտաքինի հանդեպ, և որ հենց այդ պատճառով էլ ինքը ցանկանում է իր ձեռքով հարդարել իմ մազերը։ Ես հրաշալի մազեր ունեի։ Նա բազմիցս մեծ բավականությամբ հարդարել էր դրանք։ Սակայն այդ օրը նա սովորականից ավելի խնամք գործ դրեց։ Ես ստիպված եղա գիջել նրան ու նստել իր զարդասեղանի առաջ և տանել այն բոլոր մանրակրկիտ աշխատանքը, որով նա հարդարում էր իմ մազերը։ Աշխատանքի ընթացքում նա հաճախ էր իմ երեսը շրջում դեպի իրեն և, երկու ձեռքով ուսերիս հենվելով, նայում ինձ անհագուրդ հետաքրքրությամբ։ Այնուհետև, երկու-երեք համբույրով իր բավականությունն արտահայտելով, վերստին ստիպում էր ինձ նախկին դիրքն ընդունել՝ իր գործը շարունակելու համար։

Այդ զվարճախաղը մեզ զբաղեցրեց մինչև ճաշ։ Դրանով նրա հրապուրվելն ինձ թվում էր այնքան բնական և ուրախությունն այնքան անկեղծ ու սրտաբուխ, որ, չկարողանալով հաշտեցնել այսքան հարատև անկեղծության արտաքին արտահայտությունը մի սև դավաճանության ծրագրի հետ, ես բազմիցս պատրաստ էի նրան բացել իմ սիրտը և աղատվել մտատանջության այն բեռից, որը ճնշում էր ինձ։ Սակայն ամեն անգամ ես սպասում էի, որ նա ինքը կսկսի իր սրտաբաց բացատրությունը, և նախօրոք պատրաստվում էի ճաշակել հաղթանակի քաղցրությունը։

Մենք վերադարձանք նրա առանձնասենյակը։ Նա ցանկացավ նորից հարդարել իմ մազերը, և ես ամենայն սիրալիրությամբ զիջում էի նրա բոլոր ցանկություններին, երբ հանկարծ հայտնեցին, որ իշխան դ.-ն կամենում է նրան տեսնել։ Այդ անունը բորբոքեց իմ կատաղությունը։

— Ի՞նչպես,— գոչեցի ես, ետ հրելով նրան,— ո՞վ, ի՞նչ իշխան։

Նա իմ հարցերին չպատասխանեց։— Ներս հրավիրեցեք պարոնին,— սառն ասաց նա սպասավորին և, դեպի ինձ դառնալով, ավելացրեց դյութող ձայնով.

— Թանկագին իմ, մի վայրկյան, միայն մի վայրկյան։ Ես քեզ հազար անգամ ավելի կսիրեմ, ամբողջ իմ կյանքում երախտապարտ կմնամ քեզ։

Զայրույթն ու անակնկալությունը կաշկանդեցին իմ լեզուն։ Նա կրկնում էր իր թախանձանքը, իսկ ես պատշաճ խոսքեր էի փնտրում՝ արհամարհանքով այն մերժելու համար։ Սակայն, երբ նա լսեց, որ նախասենյակի դուռը բացեցին, մի ձեռքով բռնեց ուսերիս ալիք-ալիք փռված իմ մազերից, իսկ մյուսով վերցրեց զարդասեղանի հայելին. նա իր բոլոր ուժը լարեց ինձ այս տարօրինակ վիճակում քարշ տալու մինչև սենյակի դուռը, որը բացեց ծնկով և աղմուկի պատճառով սենյակի մեջտեղում կանգնած օտարականին ցույց տվեց մի տեսարան, որը հավանորեն նրան քիչ շղարշացրեց։ Մեր առջև կանգնած էր մի վերին աստիճանի լավ հագնված մարդ, սակայն բավականին տգեղ դեմքով։

Այս տեսարանը նրան ծայր աստիճան շփոթեցրեց. այնուամենայնիվ, նա չհրաժարվեց խոնարհել գլուխը։ Մանոնը նրան ժամանակ չտվեց մի բառ անգամ արտասանելու։ Նա նրան մեկնեց հայելին.

— Նայեցեք, պարոն,— ասաց նա,— լավ դիտեցեք ձեզ և ճշմարիտ եղեք։ Դուք խնդրում եք իմ սերը։ Ահա այն մարդը, որին ես սիրում եմ և երդվել եմ սիրել իմ ամբողջ կյանքում։ Ինքներդ համեմատեցեք։ Եթե դուք գտնում եք, որ կարող եք նրա հետ մրցակցել իմ սրտին տիրանալու համար, ապա ցույց տվեք, թե ինչ հիմունքով, որովհետև ես հայտարարում եմ, որ ձեր ամենախոնարհ սպասավորուհու աչքում Իտալիայի բոլոր իշխանները չարժեն մեկն այն մարդերից, որ ես ահա բռնել եմ ձեռքս։

Այս սեթևեթ խոսքերից հետո, որոնք նա անշուշտ մտածել էր նախօրոք, ես ապարդյուն ճիգ էի թափում ազատվել նրա ձեռքից և կարեկցելով այդ ականավոր մարդուն, պահանջ էի զգում քաղաքավարությամբ մեղմել նրան հասցրած շնչին վիրավորանքը։ Սակայն հյուրը շատ շուտ ինքն իրեն

հավաքեց, և նրա պատասխանը, որ փոքր-ինչ կոպիտ թվաց, ինձ ստիպեց փոխել իմ մտադրությունը։

— Օրիորդ, օրիորդ,— ասաց նա Մանոնին, բռնաղբոսիկ մի ժպիտ դեմքին,— ես իրոք բացում եմ աչքերս և տեսնում, որ դուք շատ ավելի փորձված եք, քան ես ենթադրում էի։

Նա անմիջապես հեռացավ, առանց Մանոնին նայելու և ցածր ձայնով ավելացնելով, որ Ֆրանսիայի կանայք Իտալիայի կանանցից ավելին չարժեն։ Սրանից հետո ես ոչ մի ցանկություն չէի զգում նրան ստիպել, որ ավելի լավ կարծիք ունենա գեղեցիկ սեռի մասին։

Մանոնը բաց թողեց մազերս, նետվեց բազկաթոռի վրա և սենյակը լցրեց անզուսպ ու երկար քրքիջով։ Չեմ թաքցնում, որ մինչև սրտիս խորքը զգացվեցի սույն զոհաբերությամբ, որը միայն սիրո զգացմունքին կարող էի վերագրել։ Սակայն այս ծաղրը չափից դուրս վիրավորական թվաց ինձ։ Ես նրան հանդիմանեցի այդ առթիվ։ Նա պատմեց, որ իմ խոյանը մի քանի օր Բուլոնյան անտառում իրեն անդադար հետապնդելուց և իր զգացումները ծամածռություններով հասկացնելուց հետո որոշում է բացահայտորեն դրանց խոստովանությունն անել մի նամակով, որը նա ստորագրել է իր իսկական անունով բոլոր տիտղոսների հետ միասին և նամակն իրեն հասցրել կառապանի միջոցով, որը նրան իր ընկերուհիների հետ միշտ տանում էր անտառ։ Նամակի մեջ նա խոստանում է փայլուն դիրք, հոյակապ կարողություն և հարատև սեր Ալպյան լեռների այն կողմում, ուր իր երկիրն է։ Ինքը՝ Մանոնը վերադարձել է Շայո այդ արկածն ինձ հաղորդելու դիտավորությամբ, սակայն մտածելով, որ մենք կարող ենք այդ մեր զվարճության առարկան դարձնել, նա չի հրաժարվել իր հղացած մտքից։ Խոստումնալից մի պատասխանով նա առաջարկել է իտալացի իշխանին այցելության գալ մեզ մոտ, և ավելորդ անգամ բավականություն է պատճառել իրեն՝ ինձ ևս մտցնելով իր ծրագրի մեջ, առանց այդ մասին իմ մեջ որևէ կասկած հարուցելու։ Ես ոչ մի խոսք չասացի Մանոնին այն տեղեկությունների մասին, որ ստացել էի ուրիշ ճանապարհով, և, հաղթական սիրո արբեցումից դրդված, հավանություն տվի նրա բոլոր արարքներին։

Իմ ամբողջ կյանքում նկատել եմ, որ երկինքն իր ամենադաժան պատիժներին ենթարկել է ինձ հենց այն բոպեներին, երբ իմ երջանկությունն առանձնապես հաստատուն է թվացել։ Ես այն աստիճան ինձ երջանիկ էի զգում պարոն դը Տ.-ի բարեկամությամբ և Մանոնի քնքշությամբ, որ անկարելի էր հավատացնել, թե ինձ կարող է որևէ մի նոր դժբախտություն սպառնալ։ Մինչդեռ շատ շուտով չարաբաստիկ մի հարված նետեց ինձ այն ծանր կացության մեջ, որում դուք տեսաք Պասսիում և աստիճանաբար այնպիսի ցավալի ծայրահեղությունների հասցրեց, որ դուք դժվար թե հավատաք իմ ճշմարիտ պատմությանը։

Մի անգամ, երբ պարոն դը Տ.-ն ընթրիքի էր նստել մեզ հետ, լսվեց փողոցով ընթացող մի կառքի աղմուկ, որը կանգ առավ հյուրանոցի առաջ։ Հետաքրքրությունը մեզ դրդեց իմանալու, թե ով կարող էր գալ այդ ժամին։ Մեզ ասացին, որ դա երիտասարդ Գ. Մ.-ն է, այսինքն մեր ամենաոխերիմ թշնամու՝ այն տուփաաեր ծերուկի որդին, որն ինձ բանտարկել էր տվել Սեն-Լազարում, իսկ Մանոնին՝ արգելատանը։ Նրա անունը լսելիս արյունը գլուխս խփեց։

— Երկինքն է դրան ուղարկել ինձ մոտ,— ասացի պարոն դը Տ.-ին,— որպեսզի նա կրի իր հոր ստորության պատիժը։ Նա չի կարող ինձնից խույս տալ մինչև մեր սրերը չբախվեն միմյանց։

Պարոն դը Տ.-ն, որը նրան ճանաչում էր և նրա լավագույն բարեկամներից էր, աշխատեց ինձ ուրիշ զգացմունքներ ներշնչել դեպի նա։ Նա հավատացրեց ինձ, որ երիտասարդ Գ. Մ.-ն մի շատ հաճելի անձնավորություն է, և պարզապես ոչ մի առնչություն չի կարող ունենալ իր հոր արարքի հետ և, եթե ես գեթ մի վայրկյան տեսնեմ նրան, չեմ կարող չհարգել նրան և չցանկանալ նրա փոխադարձ հարգանքը։ Հօգուտ նրան ուրիշ շատ բաներ ավելացնելուց հետո նա խնդրեց թույլ տալ, որ գնա նրան առաջարկի՝ գալ մեզ հետ ընթրելու։ Առարկությունը, թե Մանոնը կարող է վատանգի ենթարկվել, եթե նրա բնակավայրը հայտնի լինի մեր թշնամու որդուն, նա կանխեց, համոզելով իր պատվով ու հավատով, որ եթե երիտասարդ Գ. Մ.-ն մեզ ճանաչի, կդառնա մեր

ամենաջերմ պաշտպանը։ Այսպիսի հավաստիացումներից հետո ես այլևս ոչ մի արգելք չհարուցեցի։

Նախքան նրան մեզ մոտ բերելը, պարոն դը Տ.-ն հաղորդել էր մեր ով լինելը։ Նա ներս մտավ այնպիսի մի տեսքով, որ մեզ, իրոք, հօգուտ իրեն տրամադրեց։ Նա գրկախառնվեց ինձ հետ. մենք նստեցինք սեղանի շուրջը։ Նա աքանչացավ Մանոնով, ինձնով, մեր ողջ կահավորմամբ և կերավ մի այնպիսի ախորժակով, որը պատիվ էր բերում մեր ընթրիքին։

Ընթրիքից հետո, երբ սեղանը հավաքեցին, խոսակցությունն ավելի լուրջ բնույթ ստացավ։ Նա աչքերը գետին հառեց և խոսեց իր հոր՝ մեր դեմ գործ դրած ծայրահեղ միջոցների մասին։ Նա մեզնից խոնարհաբար ներողություն խնդրեց։

— Ես կկարճեմ իմ ներողություն խնդրելը,— ասաց նա,— որպեսզի իմ մեջ չարթնացնեմ ամոթ հարուցող մի հիշողություն։

Եթե սկզբից նա անկեղծորեն ներողություն էր խնդրում, ապա հետագայում նրա անկեղծությունն ավելի ակնհայտ դարձավ, որովհետև հապիվ էր կես ժամ անցկացրել մեզ հետ զրուցելով, երբ նկատեցի Մանոնի հմայքի թողած տպավորությունը։ Նրա հայացքն ու վարվեցողությունը հետզհետե քնքշացան։ Այսուհանդերձ, խոսելիս նա ոչ մի ակնարկ չարեց իր կրած տպավորության մասին։ Սակայն չկանխելով հանդերձ, ես բավական փորձառություն ունեի սիրո խընդիրներում, որպեսզի հասկանայի, թե ինչ է առաջ գալիս սիրուց։

Նա մեզ հետ անցկացրեց գիշերվա մի մասը և բաժանվելուց առաջ իր գոհունակությունն հայտնեց մեզ հետ ծանոթանալու առթիվ ու խնդրեց թույլ տալ երբեմն հաճախել և վերանորոգել մեզ ծառայելու իր պատրաստակամությունը։ Առավոտյան դեմ նա մեկնեց պարոն դը Տ.-ի հետ, որը նստեց նրա կառքը։

Ինչպես ասացի, ես բնավ հակամետ չէի խանդին։ Ավելի քան երբևէ ես հավատում էի Մանոնի երդումներին։ Սույն չընաղ արարածն այնպես բացարձակորեն էր տիրացել իմ հոգուն, որ դեպի նա ունեցած իմ ամենափոքր զգացմունքն

անգամ համակված էր հարգանքով ու սիրով։ Հեռու այն մտքից, որ Մանոնը մեղապարտ է՝ երիտասարդ Գ. Մ.-ին դուր գալով, ես սքանչանում էի նրա հմայքի ներգործությամբ և զարմանքս գոհ ու հպարտ էի, որ ինձ սիրում է մի աղջիկ՝ զմայլելի բոլորի համար։ Ես նույնիսկ անտեղի համարեցի նրան հաղորդել իմ կասկածները։ Մի քանի օր մենք զբաղված էինք նրա զգեստները կարգի բերելու հոգսով և միտք անելով այն մասին, թե արդյոք կարո՞ղ ենք առանց ճանաչվելու երկյուղի գնալ թատրոն։ Մի շաբաթ անց պարոն դը Տ.-ն նորից եկավ մեզ այցելության. մենք հարցրինք նրա կարծիքն այդ մասին։ Նա տեսավ, որ ստիպված էր «այո» ասելու՝ ի հաճույս Մանոնին։ Մենք որոշեցինք բոլորս միասին հենց այդ երեկո գնալ թատրոն։

Սակայն այդ որոշումը չկարողացանք իրագործել, որովհետև պարոն դը Տ.-ն իսկույն մի կողմ հրավիրեց ինձ և ասաց.

— Մեր վերջին տեսակցությունից հետո ես մեծ անհանգստության մեջ եմ գտնվում և այսօրվա իմ այցելության դրդապատճառը հենց այդ է։ Գ. Մ.-ն սիրում է ձեր գեղեցկուհուն. նա ինքը խոստովանեց այդ։ Ես նրա մտերիմ բարեկամն եմ և պատրաստ եմ ամեն կերպ ծառայելու նրան։ Սակայն նմանապես և ձեր բարեկամն եմ։ Ես կարծում եմ, որ նրա մտադրություններն անազնիվ են և դատապարտում եմ դրանք։ Ես կպահեի նրա գաղտնիքը, եթե նա մտադրվեր միայն սովորական միջոցներ գործ դնել՝ անձնապես դուր գալու համար. սակայն նա լավ տեղյակ է Մանոնի բնավորությանը։ Իմացել է, չգիտեմ ինչպես, որ Մանոնը սիրում է փարթամ կյանք և հաճույքներ, և որովհետև նա արդեն մեծ կարողության տեր է, ապա ինձ հայտնեց, որ կամենում է որևէ խոշոր նվերով և տասը հազար ֆունտ թոշակի առաջարկությամբ գերել նրան։ Ուրիշ հավասար պայմաններում ես, թերևս, մեծ ճնշում գործ դնեի ինձ վրա՝ նրան մատնելուս համար. սակայն արդարությունը խոսում է հօգուտ ձեր բարեկամության, մանավանդ որ ես ինքս անխոհեմաբար պատճառ եղա նրա կրքին՝ ձեր տունը հրավիրելով նրան, ուստի և պարտավոր եմ կանխել ձեզ պատճառած չարիքի հետևանքները։

Ես շնորհակալություն հայտնեցի պարոն դը Տ.-ին այդպիսի մի կարևոր ծառայության համար և, լիակատար վստահություն տածելով դեպի նա, խոստովանեցի, որ իրոք Մանոնի բնավորությունն այդպիսին է, ինչպես պատկերացնում է Գ. Մ.-ն, այսինքն՝ նա չի կարող տանել չքավորության անունն անգամ։

— Բայց և այնպես,— ասացի ես,— երբ հարցը շատի կամ քչի մասին է, ես չեմ կարծում, որ նա ընդունակ լինի ինձ թողնել՝ մի ուրիշի համար։ Հիմա ես ի վիճակի եմ հոգալու, որ նա ոչնչի կարիք չզգա և հույս ունեմ, որ օրեցօր պիտի աճի իմ կարողությունը։ Միայն մի բանից եմ վախենում,— ավելացրի ես,— Գ. Մ.-ն, գիտենալով մեր բնակատեղին, կարող է վատ ծառայություն մատուցել մեզ։

Պարոն դը Տ.-ն վստահեցրեց ինձ, որ այդ կողմից կարող եմ միանգամայն հանգիստ լինել։ Գ. Մ.-ն ընդունակ է դիմելու սիրային որևէ խելագար ծայրահեղության, սակայն նա ընդունակ չէ ստորության։ Եթե նա նույնիսկ իրեն թույլ տա որևէ ստոր արարք, ապա ինքը՝ պարոն դը Տ.-ն առաջինը կպատժի նրան և այդպիսով կհարթի մեզ պատճառած դժբախտության հետևանքները։

— Ձեր այս բարեկամական զգացմունքը մեծապես պարտավորեցնում է ինձ,— պատասխանեցի ես։— Սակայն այդ դեպքում չարիքը կատարված կլինի, մինչդեռ բուժումը խիստ տարակուսելի է։ Ուստի, ավելի խելացի կլինի դժբախտությունը կանխել, հեռանալով Շայոյից՝ մի ուրիշ տեղ բնակություն հաստատելու համար։

— Այո,— ասաց պարոն դը Տ.-ն,— սակայն դժվար կլինի այդ անել անհրաժեշտ արագությամբ, որովհետև Գ. Մ.-ն կեսօրին այստեղ կլինի. նա այդ մասին ինձ ասաց երեկ, և դա է, որ ինձ դրդել է այսպես վաղ առավոտյան գալ ձեզ հաղորդելու նրա մտադրությունը։ Բոլոր առ բոլոր նա կարող է հայտնվել։

Այս վրդովեցուցիչ լուրն ինձ ստիպեց ավելի լուրջ մտածել խնդրին։ Մտածելով, որ արդեն անկարելի է խուսափել Գ. Մ.-ի այցելությունից և, անշուշտ, անհնարին կլինի նաև արգելել նրան՝ իր սիրո խոստովանությունը Մանոնին։

անելու, ես որոշեցի իմ նոր ախոյանի դիտավորության մասին ինքս զգուշացնել Մանոնին։ Ես ենթադրում էի, որ եթե նա գիտենա, որ ես իրազեկ եմ այն առաջարկություններին, որոնք իրեն պիտի անի Գ. Մ.-ն և դրանք պիտի լսի իմ աչքի առաջ, ապա նա բավականաչափ կամքի ուժ կունենա նրան մերժելու։ Իմ միտքը ես հայտնեցի պարոն դը Տ.-ին, որը պատասխանեց, թե դա շատ փափուկ հարց է։

— Ձեզ հետ համաձայն եմ,— ասացի ես,— սակայն այն բոլոր հիմունքները, որ կարելի է ունենալ իր սիրուհու վրա վստահ լինելու համար, ես ունեմ, որպեսզի հաստատապես համոզվեմ, թե նա սիրում է ինձ։ Նրան կարելի կլինի շլացնել միայն ամենամեծ առաջարկություններով, և ես ձեզ ասացի, որ շահախնդրությունը միանգամայն անհայտ է նրան։ Մանոնը սիրում է ունենալ կյանքի լայն հարմարություններ, սակայն նա սիրում է և ինձ. իսկ հիմա իմ գործերը այնպիսի մի դրության մեջ են, որ ես հավատացած չեմ, թե Մանոնը ինձ կգերադասի մի մարդուց, որի հայրը իրեն արգելատուն է նետել։

Մի խոսքով, ես հաստատ մնացի իմ մտադրության մեջ և, մի կողմ կանչելով Մանոնին, ամենայն անկեղծությամբ պատմեցի այն ամենը, ինչ ես հենց հիմա լսել էի։

Մանոնն ինձ շնորհակալություն հայտնեց իր մասին ունեցած լավ կարծիքիս համար և խոստացավ այնպես ընդունել Գ. Մ.-ի առաջարկությունները, որ նա այլևս ցանկություն չունենա դրանք կրկնելու։

— Ոչ,— ասացի ես,— չպետք է նրան գրգռել կոպտությամբ, նա կարող է մեզ վնասել։ Առանց այդ էլ դու լավ գիտես, շարաճճի,— ավելացրի ես ծիծաղելով,— թե ինչպես պետք է աղատվել մի անախորժ կամ անհարմար երկրպագուից։

Մի քիչ մտածելուց հետո նա պատասխանեց։

— Գլխումս մի սքանչելի միտք ծագեց, և ես հիացած եմ դրանով։ Գ. Մ.-ն մեր ամենաոխերիմ թշնամին է. հոր՝ մեզ հասցրած վիրավորանքի վրեժը մենք պետք է առնենք ոչ թե որդուց, այլ նրա քսակից։ Ես ուշադրությամբ կլսեմ նրան, կընդունեմ նրա նվերները և կծիծաղեմ նրա վրա։

— Հիանալի ծրագիր է,— ասացի ես,— սակայն, իմ փեղձ մանկիկ, մի՞թե դու ընավ չես մտածել այն մասին, որ դա մեզ ուղղակի արգելատուն տանող ճանապարհն է։

Իզուր ես ճիգ թափեցի մատնանշելու նրան այդ մտադրության վտանգները։ Նա ասաց, որ հարկավոր է միայն նախազգուշական միջոցներ ձեռք առնել, և առ ոչինչ համարեց իմ բոլոր առարկությունները։ Ցույց տվեք մի սիրեկան, որը կուրորեն չհավանի իր պաշտած սիրուհու բոլոր քմայքներին, և ես կհամաձայնեմ, որ սխալվել եմ, երբ այդպես պյուրությամբ զիջեցի նրան։ Մեր որոշումն եղավ՝ ծանակել ու խաբել Գ. Մ.-ին, սակայն իմ ճակատագրի խաղով այնպես պատահեց, որ խաբվեցի ես։

Գ. Մ.-ի կառեթը երևաց մոտավորապես ժամը տասնմեկին։ Նա նուրբ հաճոյախոսություններով խնդրեց ներել իրեն՝ մեզ մոտ ճաշի գալու համար։ Նա չզարմացավ, որ մեզ մոտ հանդիպում է պարոն դը Տ.-ին, որը նախընթաց օրը խոստացել էր նրան նույնպես այցելել, սակայն, որը ձևացրել էր իբրև թե զբաղված է ինչ-ինչ գործերով, որպեսզի ստիպված չլինի նրա հետ միևնույն կառեթով գալու։ Թեպետ մեզնից յուրաքանչյուրն իր սրտում գաղտնի դավաճանություն էր պահում, այնուամենայնիվ սեղան նստեցինք փոխադարձ վստահության ու բարեկամության քողի տակ։ Գ. Մ.-ն հեշտությամբ առիթ ունեցավ իր զգացմունքները խոստովանելու Մանոնին։ Ես չէի կարող խանգարել նրան, որովհետև դիտմամբ մի քանի բոպեով դուրս էի եկել սենյակից։

Վերադարձիս ես նկատեցի, որ Մանոնը նրան հուսահատության չի մատնել իր չափազանց խստությամբ։ Նրա տրամադրությունը շատ լավ էր։ Ես էլ ձևացրի, թե նմանապես լավ եմ տրամադրված։ Նա ներքուստ ծիծաղում էր իմ, իսկ ես՝ նրա միամտության վրա։ Ամբողջ ետճաշյա ժամերի ընթացքում մենք միմյանց համար հաճելի տեսարաններ էինք ներկայացնում։ Նրա մեկնելուց առաջ ես մի քանի անգամ նորից հնարավորություն ընձեռեցի նրան առանձին զրույց ունենալու Մանոնի հետ, այնպես որ նա շատ գոհ մնաց թե իմ սիրալիրությունից և թե փառավոր ճաշից։

Հենց որ նա կառեթ նստեց պարոն դը Տ.-ի հետ, Մանոնը

գրկաբաց դեպի ինձ վազեց և համբուրեց ուրախ քրքջալով։ Նա կրկնեց Գ. Մ.-ի խոսքերը և առաջարկությունները, չփոխելով մի բառ անգամ։ Ահա թե ինչին էին հանգում գրանք։ Գ. Մ.-ն պաշտում է Մանոնին. նա ցանկանում է նրա հետ կիսել քառասուն հազար ֆունտի հասույթը, որին արդեն տիրում է, չհաշված այն, որ նա պիտի ստանա իր հոր մահից հետո։ Մանոնը կլինի նրա սրտի և կարողության տիրուհին և իբրև երաշխիք իր բարերարության, պատրաստ է նրան արամադրելու մի կառեթ, մի կահավորված առանձնատուն, մի աղախին, երեք սպասավոր և մի խոհարար։

— Ահա մի որդի,— ասացի ես Մանոնին,— որը շատ ավելի առատաձեռն է, քան իր հայրը։ Խոսենք ամենայն անկեղծությամբ,— ավելացրի ես,— արդյոք ձեզ չի՞ գայթակղեցնում Գ. Մ.-ի առաջարկությունը։

— Ի՞նձ,— պատասխանեց նա, իր մտքին հարմարեցնելով Ռասինի երկու տառանավորները։

Ի՞նձ. կասկածել, թե իրոք նենգ եմ այնքան,
Որ դեմքն այն ահռելի տանե՞լ կարենամ,
Որն ինձ արգելատունն է հիշեցնում։

— Ոչ,— պատասխանեցի ես, շարունակելով պարոդիան։

Մտածել իսկ դժվարանում եմ, տիկին,
Որ այնտեղ սիրո մի սլաք կպավ ձեր սրտին։

Այնուամենայնիվ, կահավորված առանձնատուն, աղախին, խոհարար, կառեթ և երեք սպասավորներ, գայթակղեցուցիչ է. սերն այդպիսի հրապույր չունի։

Նա հանդիսավոր կերպով հավատացրեց, որ սիրաը հավիտյան ինձ է պատկանում և թե բացի իմ սիրո սլաքներից՝ այլ սլաքներ նա երբեք չի ընդունի։

— Գ. Մ.-ի խոստումները,— ասաց նա,— ավելի շուտ վրիժառության խթաններ են, քան սիրո սլաքներ։

Ես նրան հարցրի, թե նա մտադի՞ր է արդյոք ընդունել առանձնատունը և կառեթը։ Նա պատասխանեց, որ կամենում է տիրանալ միայն նրա դրամին։

Դժվարությունը մեկն առանց մյուսի ձեռք բերելն էր։

Մենք վճռեցինք սպասել Գ. Մ.-ի ծրագրի լիակատար լուսաբանությանն այն նամակում, որ նա խոստացել էր գրել Մանոնին։ Հիրավի, Մանոնը նամակն ստացավ մի սպասավորի միջոցով, որը եկել էր առանց համազգեստի և մեծ ճարպկությամբ հարմար բոպե գտել նրա հետ երես առ երես խոսելու։ Մանոնը հրամայեց սպասավորին սպասել իր պատասխանին և իսկույն ինձ բերեց նամակը։ Մենք միասին բացեցինք այն։

Սովորական քնքշալի խոսքերից բացի, նամակը բովանդակում էր իմ ախոյանի խոստումների մանրամասն պարզաբանումը։ Նա իր ծախսերը չի սահմանափակում որոշ շրջանակներում։ Պարտավորվում է Մանոնին տալ տասը հազար ֆրանկ, հենց որ նա դառնա առանձնատան տիրուհին, և այնպես լրացնել գումարի հետզհետե պակասելը, որ Մանոնն իր տրամադրության տակ միշտ կանխիկ ունենա այն։ Առանձնատուն հանդիսավոր մուտք գործելու օրը հեռու չէր։ Նա խնդրում էր իրեն երկու օր ժամանակ տալ՝ անհրաժեշտ պատրաստությունների համար և մատնանշում էր փողոցի ու առանձնատան անունները, ուր նա խոստանում էր սպասել Մանոնին երկրորդ օրը՝ կեսօրին, եթե նա կարողանա մի հնարքով պրծնել իմ ձեռքից։ Սա միակ կետն է, որի մասին նա աղաչում է հանդստացնել իրեն։ Մնացած բոլորը նա միանգամայն ապահով էր համարում, սակայն ավելացնում էր, որ եթե ինձնից հեռանալը դժվար է, ապա ինքը մի միջոց կգտնի դյուրացնելու նրա փախուստը։

Գ. Մ.-ն իր հորից ավելի խորամանկ էր։ Նա ուզում էր նախ՝ տիրանալ իր որսին, ապա՝ նոր համրել դրամը։ Մենք քննեցինք, թե Մանոնն ի՞նչ վարմունք պետք է ունենա։ Ես նորից աշխատեցի նրա մտքից հանել այս ծրագիրը և ցույց տվեցի դրա վտանգները. ոչինչ չկարողացավ տատանել նրա որոշումը։

Նա մի կարճ պատասխան գրեց Գ. Մ.-ին, վստահեցնելով, որ առանց դժվարության սահմանած օրը կլինի Փարիզում, և որ նա կարող է ապահով սպասել իրեն։

Այնուհետև մենք վճռեցինք, որ ես իսկույն ևեթ կմեկնեմ և մի նոր բնակարան կվարձեմ մեզ համար որևէ գյուղում՝

Փարիզի այն կողմում, և ինձ հետ կվերցնեմ մեր համեստ գույքը. իսկ Մանոնը հետևյալ օրը կեսօրից հետո, ուղիղ որոշված ժամին, կգնա Փարիզ։ Գ. Մ.-ից նվերներ ստանալուց հետո նա թախանձագին խնդրելու է թատրոն տանել իրեն և իր հետ վերցնելու է այնքան դրամ, որքան կարող է, իսկ մնացածը հանձնելու է սպասավորին, որը, համաձայն Մանոնի ցանկության, պիտի ուղեկցեր նրան։ Այդ սպասավորը հենց նա էր, որը Մանոնին ազատեց արգելատնից և որը հիմա միանգամայն նվիրված էր մեզ։ Ես պետք է վարձու կառքով գտնվեի Սենտ-Անդրե-դեզ-Առ փողոցի անկյունում և երեկոյան ժամը յոթի մոտերքը կառքն այդտեղ թողած, մթնով պետք է ուղևորվեի դեպի թատրոնի մուտքը։ Մանոնն ինձ խոստանում էր պատրվակ գտնել՝ թատրոնից մի րոպեով դուրս գալու և միանալու ինձ։ Ծրագրի մնացած մասի իրագործումը ոչ մի դժվարություն չէր ներկայացնում։ Մենք մի րոպեում կհասնեինք իմ թողած կառապանին և Փարիզից կհեռանայինք Սենտ-Անտուան արվարձանով, որը դեպի մեր նոր բնակավայրն էր տանում։

Այս ծրագիրը, որքան և արտառոց լիներ, մեզ թվաց միանգամայն լավ կշռադատված։ Սակայն իրականում անմտություն էր երևակայել, որ ամենաբարենպաստ հաջողության դեպքում անգամ մենք ընդմիշտ կարող կլինենք խուսափել դրա հետևանքներից։ Այնուամենայնիվ, մենք մեզ վտանգի ենթարկեցինք ամենահանդուգն ինքնավստահությամբ։

Մանոնը մեկնեց Մարսելի հետ— այսպես էին կոչում մեր սպասավորին։ Ես տրտմագին ճանապարհ դրեցի և, գբրկելով նրան, ասացի.

— Մանոն, չե՞ս խաբում, արդյոք հավատարիմ կմնա՞ս ինձ։

— Նա քնքշանքով գանդատվեց իմ կասկածամտությունից և մի անգամ ևս կրկնեց իր բոլոր երդումները։

Նրա հաշվով ինքը Փարիզ պիտի հասներ ժամը երեքին։ Նրա ետևից մեկնեցի և ես։ Օրվա մնացած ժամանակը գնացի սպասելու Ֆերե սրճարանում, որը Սեն-Միշել կամուրջի մոտ է գտնվում։ Այստեղ մնացի մինչև մութն ընկնելը։ Այնուհետև

դուրս եկա սրճարանից և մի կառք վարձեցի, որը մեր ծրագրի համաձայն թողեցի Սենտ-Անդրե-դեզ-Առ փողոցի անկյունում, իսկ ինքս ոտքով ուղղվեցի դեպի թատրոնի մուտքը։ Ես զարմացա, որ Մարսելն այնտեղ չէ, որովհետև նա թատրոնի դռան մոտ պետք է սպասեր ինձ։ Մի ամբողջ ժամ համբերությամբ սպասեցի, խառնվելով սպասավորների բազմությանը և ուշադրությամբ նայելով բոլոր անցորդներին։ Վերջապես, երբ ժամը յոթը խփեց, և տակավին ոչ մի նշան չկար, որ առնչություն ունենար մեր մտադրության հետ, ես մի տոմս վերցրեցի՝ պարտերում նստելու, որպեսզի տեսնեմ, թե արդյոք որևէ օթյակում չե՞ն գտնվում Մանոնը և Գ. Մ.-ն։ Ոչ մեկը և ոչ մյուսը չկային։ Ես փողոց վերադարձա և քառորդ ժամ նորից սպասեցի՝ անհամբերությունից և անհանգստությունից սաստիկ հուզված։ Դարձյալ ոչ ոք չերևաց, և ես գնացի դեպի իմ կառքը, առանց հանգելու որևէ որոշման։ Ինձ տեսնելով, կառապանս մի քանի քայլ առաջ եկավ և խորհրդավոր տեսքով ասաց, թե ահա մի ժամ է, ինչ մի սիրուն աղջիկ կառքում ինձ է սպասում։ Այդ աղջիկը նրան հարցրել է իմ մասին, հետաքրքրվել է իմ արտաքինով և հագուստներով, որոնց շնորհիվ հասկացել է, թե ում է վերաբերում խոսքը, և երբ իմացել է նրանից, որ ես շուտով պիտի վերադառնամ, ասել է, թե համբերությամբ կսպասի ինձ։

Ես իսկույն մտածեցի, թե դա Մանոնն է։ Մոտեցա կառքին։ Սակայն այնտեղ տեսա փոքրիկ, գեղեցիկ մի դեմք, որը բնավ նման չէր Մանոնին։ Դա մի անծանոթ աղջիկ էր, որը նախ և առաջ ինձ հարցրեց, թե արդյոք պատիվ չունի՞ խոսելու պարոն ասպետ դե Գրիյոյի հետ։ Ասացի, որ իրոք այդպես է իմ անունը։

— Մոտս մի նամակ կա ձեզ հանձնելու,— ասաց նա,— այդ կբացատրի, թե ինչու համար եմ եկել ձեզ մոտ և ինչ առնչությամբ եմ պատիվ ունեցել իմանալու ձեր անունը։

Ես խնդրեցի նրան ժամանակ տալ՝ հարևան գինետանը նամակը կարդալու։ Աղջիկը կամեցավ հետևել ինձ այնտեղ և խորհուրդ տվեց առանձին սենյակ վերցնել։

— Ո՞ւմից է այդ նամակը,— հարցրեցի ես նրան, սանդուղքներով բարձրանալիս։

Պատասխանի փոխարեն նա ինձ հանձնեց նամակը, հրավիրելով կարդալ այն։

Ես ճանաչեցի Մանոնի ձեռագիրը։ Ահա թե մոտավորապես ինչ էր նա գրում։

Գ. Մ.-ն նրան ընդունել է սպասածից ավելի շքեղ և սիրալիր քաղաքավարությամբ։ Անհաշիվ նվերներ է տվել և թագուհու կյանք խոստացել։ Այնուամենայնիվ, նա հավատացնում է ինձ, որ նոր փարթամության մեջ նա ինձ չի մոռացել։ Բայց որովհետև չի կարողացել համոզել Գ. Մ.-ին՝ նույն երեկո իրեն թատրոն տանելու, նա մի ուրիշ օրվա է հետաձգում ինձ տեսնելու հաճույքը։ Իսկ որպեսզի փոքրինչ մեղմի այն ցավը, որ, ինչպես ինքը նախատեսում է, ինձ պիտի պատճառի այդ տեղեկությունը, նա հնարավորություն է ունեցել ինձ մոտ ուղարկելու Փարիզի ամենագեղեցիկ աղջիկներից մեկին, որն ինձ պետք է հանձնի իր երկտողը։ Ստորագրված էր. «Քո հավատարիմ և սիրելի Մանոն Լեսկո»։

Այս նամակում մի ինչ-որ անողոք, վիրավորական բան կար ինձ համար. զայրույթն ու ցավը միաժամանակ համակեցին իմ ողջ էությունը, և ես կորցրի դատելու կարողությունը։ Հետո փորձեցի ճիգ անել՝ մեկընդմիշտ մոռանալու իմ ապերախտ և ուխտադրուժ սիրուհուն։ Ես մի հայացք նետեցի առջևս կանգնած աղջկա վրա։ Նա շափազանց սիրունիկն էր, և ես կցանկանայի, որ նրա գեղեցկությունն այնպիսին լիներ, որ ինձ ևս դրդեր ուխտադրուժ և անհավատարիմ դառնալու։ Սակայն նրանում ես չգտա այն նրբագեղ ու քնքշանվաղ աչքերը, այն աստվածային բարեկազմությունը, այն՝ սիրո աստծուց ստացած երանգավորումը, վերջապես այն անհատնում հրապույրները, որոնցով բնությունը շռայլել էր նենգ Մանոնին։

— Ոչ, ոչ,— ասացի ես այդ աղջկան, դադարելով նրան նայելուց,— ձեզ ուղարկող երախտամոռը լավ գիտեր, որ ձեր քայլերն ապարդյուն կլինեն։ Վերադարձեք նրա մոտ և իմ կողմից ասացեք նրան, թող վայելե իր հանցանքը, և եթե հնարավոր է, առանց խղճի խայթի թող վայելե այն։ Ես անդարձ լքում եմ նրան և միաժամանակ հրաժարվում բոլոր կանանցից, որոնք չեն կարող նույնքան հրապուրիչ լինել, որքան նա է, և որոնք, անկասկած, նույնքան ստոր ու նենգ են, որքան և նա։

Այդ րոպեին ես պատրաստ էի դուրս նետվել սենյակից և մեկընդմիշտ հեռանալ՝ բոլորովին ձեռք քաշելով Մանոնից։ Եվ որովհետև սիրտս խոշտանգող մահացու խանդը փոխվեց թախծոտ ու մռայլ անդորրության, ամոթումը մոտալուտ թվաց ինձ, քանի որ ես չէի զգում և ոչ մեկն այն բուռն հույզերից, որոնք ինձ վրդովում էին նման դեպքերում։

Ավա՜ղ, ես սիրո խաբեության զոհն էի, ինչպես նաև զոհն էի Գ. Մ.-ի և Մանոնի խաբեության։ Տեսնելով, որ ես պատրաստ եմ ոանդուղքներից ցած իջնել ու հեռանալ, նամակ բերող աղջիկը հարցրեց, թե ի՞նչ եմ ցանկանում հաղորդել իր միջոցով պարոն դը Գ. Մ.-ին և նրա մոտ տեսած տիկնոջը։ Լսելով այս հարցը, ես նորից սենյակ մտա, և հանկարծ կարծեցյալ անդորրությունից ամենաահռելի կատաղության մոլուցքի մեջ ընկա մի այնպիսի սաստկությամբ, որն անհավատալի պիտի թվա բոլոր նրանց, ովքեր երբեք չեն ապրել բուռն կրքեր։

— Գնա,— ասացի ես նրան,— և հաղորդիր դավաճան Գ. Մ.-ին ու նրա նենգ սիրուհուն, թե ինչպիսի վհատության մեջ գցեց ինձ քո բերած նզովյալ նամակը։ Սակայն հայտնիր նաև, որ նրանք երբեք չպիտի հրճվեն ու ծիծաղեն ինձ վրա և որ երկուսն էլ իմ ձեռքով դաշունահար պիտի լինեն։

Ես նետվեցի աթոռի վրա։ Գլխարկս ընկավ մի կողմ, ձեռնափայտս՝ մյուս։ Արտասուքի երկու վտակներ հոսեցին իմ աչքերից։ Կատաղության մոլուցքը, որ դեռ նոր էր համակել ինձ, տեղի տվեց խոր վշտի։ Ես լալիս էի, հառաչանքներ ու հեկեկանքներ արձակելով։

— Մոտեցիր, մանկիկս, մոտեցիր ինձ,— ասացի ես խոսքս ուղղելով ջահել աղջկան,— մոտեցիր, քանի որ քեզ են ուղարկել ինձ մխիթարելու։ Ասա ինձ, դու գիտե՞ս, թե ինչպես պետք է սփոփել վհատությունը, ցասումը և ինքնասպան լինելու ցանկությունը՝ երկու ապրելու անարժան դավաճանների սպանությունից հետո։ Այո, մոտեցիր ինձ,— ավելացրի ես տեսնելով, որ նա մի քանի երկչոտ ու անվստահ քայլ է անում դեպի ինձ։— Եկ, սրբիր իմ արտասուքները,

եկ, վերադարձրու ինձ իմ հոգեկան անդորրությունը, եկ, ասա, որ դու սիրում ես ինձ, որպեսզի ես ընտելանամ մի այլ էակի սիրուն՝ երբ չունեմ իմ անհավատարիմ գեղեցկուհու սերը։ Դու լավիկն ես, թերևս ես էլ քեզ կարողանամ սիրել։

Այս խեղճ մանկիկը, որ հազիվ տասնվեց-տասնյոթ տարեկան էր և, ըստ երևույթին, ավելի ամոթխած, քանի իր նմանները, չափից դուրս զարմացած էր այսպիսի մի անսովոր տեսարանից։ Այնուամենայնիվ, նա մոտեցավ և ուզեց փաղաքշել ինձ. սակայն ես իսկույն ձեռքով ետ մղեցի նրան։

— Ի՞նչ ես ուզում ինձնից,— ասացի ես։— Ախ, դու կի՞ն ես, դու մի սեռից ես, որին ատում եմ ես և որն այլևս անտանելի է ինձ համար։ Քո երեսի քնքշությունը տակավին ինձ դավաճանություն է սպառնում։ Հեռացիր և այստեղ ինձ մենակ թող։

Նա գլուխը խոնարհեց իմ առջև, առանց համարձակվելու մի բան արտասանել և երեսը դեպի դուռը շրջեց՝ դուրս գալու համար։ Ես ասացի, որ կանգ առնի։

— Սակայն գոնե ասա ինձ,— ավելացրի ես,— ինչո՞ւ, ինչպե՞ս և ի՞նչ նպատակով են քեզ ինձ մոտ ուղարկել։ Ի՞նչպես դու իմացար իմ անունը և վայրը, ուր կարող էիր ինձ գտնել։

Աղջիկն ասաց, որ վաղուց է ճանաչում պարոն դը Գ. Մ.-ին։ Վերջինս իր մոտ մարդ է ուղարկել ժամը հինգին։ Եվ աղջիկը հետևել է սպասավորին և եկել մի մեծ տուն, ուր գտել է Գ. Մ.-ին՝ մի գեղեցիկ տիկնոջ հետ պիկե խաղալիս։ Նրանք երկուսով հանձնարարել են իրեն բերել այդ նամակը, բացատրելով, որ ինձ կարող է գտնել Սենտ-Անդրե փողոցի անկյունում՝ կառքի մեջ նստած։ Ես նրան հարցրի, թե նրանք ուրիշ ոչինչ չե՞ն ասել արդյոք։ Կարմրելով, նա պատասխանեց, որ նրանք հուսադրել են, թե ես իր հետ հաճելի ժամանց կունենամ։

— Քեզ խաբել են, խեղճ աղջիկս,— ասացի ես,— քեզ խաբել են։ Դու կին ես, և քեզ տղամարդ է հարկավոր, սակայն մի տղամարդ, որը հարուստ և երջանիկ լինի, մինչդեռ այստեղ այդպիսին չես գտնի։ Վերադարձիր, վերադարձիր

պարոն դը Գ. Մ.-ի մոտ։ Նա ունի այն ամենը, ինչ հարկավոր է, որպեսզի նվաճի գեղեցկուհիների սիրտը։ Նա կարող է կահավորված առանձնատներ և կառքեր ընծայել։ Ինչ ինձ է վերաբերում, ես միայն սեր կարող եմ առաջարկել և սիրո մեջ՝ հավատարմություն. կանայք, սակայն, արհամարհում են իմ չքավորությունը և իմ միամտությունը դարձնում են իրենց զվարճության առարկան։

Ես նորից հաղար ու մի խոսք ասացի՝ մերթ թախծոտ, մերթ փոթորկալից, նայած թե ինձ փոխ առ փոխ հուզող կրքերից որն էր տեղի տալիս կամ գերիշխում։ Բայց և այնպես, ինձ երկար տանջելուց հետո կատաղությանս մոլուցքը մեղմացավ և տեղի տվեց տագնապալից խոհերի։ Այս վերջին դժբախտությունը ես համեմատեցի նույն կարգի դժբախտությունների հետ, որ արդեն կրել էի և եկա այն եզրակացության, թե այժմ ոչ մի հիմունք չունեմ ինձ ավելի մեծ վհատության մատնելու, քան առաջ։

Ես ճանաչում էի Մանոնին. ինչո՞ւ վշտանալ մի դժբախտությունից, որը պետք է նախատեսեի։ Ինչո՞ւ չզբաղվել բուժիչ միջոցների որոնումով։ Դեռ ուշ չէ. համենայն դեպս, պետք է գործ դնեմ իմ բոլոր ջանքերը, եթե չեմ ուզում ինքս ինձ հանդիմանել, որ անփութությամբ նպաստում եմ սեփական տանջանքներիս։ Ըստ որում, ես սկսեցի կշռադատել այն բոլոր միջոցները, որոնք կարող կլինեն ճանապարհ հարթել դեպի հույսը։

Փորձել Մանոնին բռնությամբ հափշտակել Գ. Մ.-ի ձեռքից— դա մի հուսահատական քայլ կլինի, որը կարող է միայն կործանել ինձ և ոչ մի հաջողություն չի խոստանում։ Սակայն ինձ թվում էր, որ եթե ես կարողանամ նրա հետ ունենալ թեկուզ ամենակարճ մի տեսակցություն, ապա անխուսափելիորեն կնվաճեմ նրա սրտի մեկ բեկորը։ Ես այնպես լավ գիտեի այդ սրտի բոլոր զգայուն լարերը։ Ես այնքան վստահ էի, որ նա սիրում է ինձ։ Սակայն սույն քմայքը՝ ինձ մխիթարելու համար մի սիրուն աղջիկ ուղարկելը, գրաղ կարող էի գալ, նրա միտքն էր, և դա հետևանք էր դեպի ինձ տածած իր կարեկցանքի։

Ես որոշեցի իմ ամբողջ հնարամտությունը գործադրել

նրան տեսնելու համար։ Բազմաթիվ միջոցներ մեկը մյուսի ետևից քննելուց հետո ես կանգ առա հետևյալի վրա. պարոն դը Տ.-ն հենց մեր ծանոթության օրից սկսել էր ինձ ծառայություն մատուցել այնպիսի մի սիրալիր պատրաստակամությամբ, որ ես մի բոպե անգամ չէի կասկածում նրա անկեղծությանը և դեպի ինձ տածած բարեկամությանը։ Մտադրվեցի անհապաղ գնալ նրա մոտ և խնդրել, որ նա որևէ կարևոր գործի պատրվակով իր տուն հրավիրի Գ. Մ.-ին։ Ինձ կես ժամ էր պետք Մանոնի հետ զրուցելու համար։ Իմ դիտավորությունն էր մտնել նրա սենյակը, և ես մտածում էի, թե դա դյուրին կլինի Գ. Մ.-ի բացակայության դեպքում։

Այս որոշումն ինձ հանգստացրեց, և ես առատաձեռն վարձատրեցի այն դեռատի աղջկան, որը տակավին սպասում էր։ Իսկ որպեսզի նրան զրկեմ իրեն ուղարկողների մոտ վերադառնալու ցանկությունից, ես վերցրի նրա հասցեն, հույս ներշնչելով, թե կգնամ գիշերը նրա հետ անցկացնելու։ Ես կառք նստեցի և կառապանին հրամայեցի ամենայն արագությամբ ինձ տանել պարոն դը Տ.-ի մոտ։ Բարեբախտաբար, նա տանն էր. ճանապարհին ես երկյուղ էի կրում դրանից։ Մի քանի խոսքով նրան պատմեցի իմ հոգեկան տառապանքների մասին և հասկացրի, թե ինչպիսի ծառայություն եմ խնդրում նրանից։

Նա այնպես ապշեց, երբ լսեց, թե Գ. Մ.-ն կարողացել է գայթակղեցնել Մանոնին և չիմանալով, որ ինքս էլ եմ մասնակցել ինձ հարվածող այդ դժբախտությանը՝ մեծահոգությամբ առաջարկեց հավաքել բոլոր իր բարեկամներին, որպեսզի նրանց բազուկների ու սուսերի օգնությամբ ազատենք իմ սիրուհուն։ Ես նրան հասկացրի, որ այդ ձեռնարկն աղմուկ կբարձրացնի, և որ դա կարող է կորստաբեր լինել թե՛ Մանոնի և թե՛ ինձ համար։

— Խնայենք մեր արյունը,— ասացի ես նրան,— ավելի ծայրահեղ դեպքի համար։ Ես մտածում եմ մի ավելի մեղմ միջոցի մասին, որը հույս ունեմ, քիչ հաջողություն չպիտի ունենա։

Նա պարտավորվեց առանց վերապահության անել այն ամենը, ինչ ես կպահանջեմ իրենից։ Եվ երբ ես կրկնեցի, թե

նրանից լոկ խնդրում եմ իր մոտ կանչել պարոն դը Գ. Մ.-ին՝ որպես թե զրույցի համար, և նրան մեկ-երկու ժամ պահել իր տանը, նա անմիջապես մեկնեց ինձ հետ, իմ խնդիրը բավարարելու համար։

Մենք սկսեցինք խորհել, թե ինչ պատրվակի դիմենք՝ Գ. Մ.-ին այդքան երկար պահելու համար։ Ես նրան խորհուրդ տվի նախ երկտող գրել, հրավիրելով Գ. Մ.-ին անհապաղ գալ մի գինետուն՝ շատ կարևոր և անհետաձգելի գործով։

— Ես կսպասեմ,— ավելացրի ես,— մինչև որ նա դուրս գա, և առանց դժվարության կմտնեմ տուն, ուր ինձ ճանաչում են միայն Մանոնը և Մարսելը՝ իմ սպասավորը։ Իսկ դուք այդ ժամանակ մնալով Գ. Մ.-ի հետ, կարող եք ասել, որ այն գործը, ինչի մասին ցանկանում եք հետը խոսել, դրամին վերաբերող հարց է։ Կասեք, որ խաղի միջոցին դուք ձեր ունեցած բոլոր դրամը տանուլ եք տվել և, նույն անհաջողությամբ շարունակելով խաղալ աղնիվ խոսքի վրա, ավելի մեծ գումար եք կորցրել։ Որպեսզի նա ձեզ տանի այնտեղ, ուր իր դրամի արկղն է, նրան ժամանակ է պետք, և դա բավ է ինձ մտադրությունս իրագործելու համար։

Պարոն դը Տ.-ն կետ առ կետ կատարեց իմ ասածները։ Ես նրան թողեցի գինետանը, որտեղ էլ հապճեպ գրեց իր նամակը։ Ես գնացի սպասելու Մանոնի տնից մի քանի քայլ հեռավորության վրա. տեսա, երբ նամակաբերը հայտնվեց, և մի բոպե անց Գ. Մ.-ն մի սպասավորի ուղեկցությամբ դուրս եկավ տնից։ Ես ժամանակ տվի, որ նա հեռանա և ուղղվեցի դեպի սիրուհուս տունը, և, չնայած իմ ամբողջ ցասմանը, ակնածանքով այնպես բախեցի դուռը, ասես տաճարի դուռ լիներ։ Բարեբախտաբար դուռը բացողը Մարսելն էր։ Ես նրան նշան արի, որ լռի։ Թեպետ ես առիթ չունեի վախենալու մյուս ծառաներից, բայց և այնպես շշուկով հարցրի, թե նա կարո՞ղ է ինձ առաջնորդել Մանոնի սենյակն այնպես, որ ոչ ոք չնկատի։ Նա պատասխանեց, որ դա հեշտ է. միայն պետք է կամացուկ բարձրանալ գլխավոր սանդուղքով։

— Ուրեմն շուտ գնանք,— ասացի ես նրան,— և աշխա-

տիր թույլ չտալ, որ որևէ մեկը բարձրանա, քանի դեռ այստեղ եմ։

Անարգել ես մտա Մանոնի սենյակը։ Նա ընթերցանությամբ էր զբաղված։ Այստեղ ստիպ ունեցա մի անգամ ևս ապշել ու զմայլվել այս տարօրինակ աղջկա բնավորությամբ։ Նա ոչ ահաբեկվեց, ոչ էլ շփոթվեց, երբ ինձ տեսավ, այլ միայն թեթև զարմանք արտահայտեց, որն անխուսափելի է, երբ հանկարծ տեսնում ես մի մարդու, որին հեռու էիր կարծում։

— Օ՜, այդ դո՞ւ ես, սեր իմ,— ասաց նա սովորական քնքշությամբ գրկելով ինձ։— Աստված իմ, որքան հանդուգն ես։ Ո՞վ կարող էր այսօր քեզ այստեղ սպասել։

Ես դուրս պրծա նրա գրկախառնությունից. հեռու նրա փաղաքշանքներին պատասխանելու մտադրությունից, ես արհամարհանքով հրեցի նրան և մի քանի քայլ ետ-ետ գնացի։ Իմ շարժումը նրան չփոթեցրեց։ Նա քարացավ իր կանգնած տեղում և, գունաթափ դեմքով, աչքերը սևեռեց ինձ վրա։

Իմ սրտի խորքում ես այն աստիճան հիացած էի նրան տեսնելով, որ բարկության այդքան արդարացի պատճառներով հանդերձ, ես հազիվ ուժ ունեի նրան կշտամբելու։ Սակայն սրտիցս արյուն էր ծորում ինձ հասցրած նրա սուր վիրավորանքից։ Այդ վիրավորանքը ես վերակենդանացրի իմ հիշողության մեջ, որպեսզի զրգռեմ զայրույթս։ Ես աշխատում էի իմ աչքերում ցոլացնել մի այլ կրակ, քան սիրո կրակն է։ Միառժամանակ լուռ մնացի, և նա զգաց իմ հուզմունքը. նկատեցի, որ, ըստ երևույթին, վախի ազդեցության տակ նա սարսեց։

Ես չկարողացա տանել այս տեսարանը։

— Օ՜հ, Մանոն,— ասացի նրան քնքշանքով,— ուխտադրուժ ու անհավատարիմ Մանոն։ Ինչի՞ց սկսեմ իմ գանգատները։ Ես քեզ տեսնում եմ գունատ ու դողդոջուն, և տակավին այնքան զգայուն եմ քո ամենաթեթև տառապանքների հանդեպ, որ վախենում եմ քեզ չափից դուրս վշտացնել իմ կըշտամբանքներով։ Սակայն, Մանոն, հավատացնում եմ քեզ, որ իմ սիրտը խոցվել է քո դավաճանության ցավով։ Այդպես չեն հարվածում սիրեկանին, եթե կանխապես չեն որոշել նրա

մահը։ Սա արդեն երրորդ անգամն է, Մանոն. ես լավ եմ հաշվել. սա երբեք չի մոռացվում։ Անհրաժեշտ է, որ դու հենց այս րոպեին որոշես, թե այսուհետև ինչպես ես վարվելու. որովհետև իմ վշտահար սիրտն այլևս չի կարող տանել նման դաժան հարվածներ։ Զգում եմ, որ սիրտս ուժասպառ է և շուտով կտոր-կտոր կլինի ցավից։ Ես այլևս չեմ կարող դիմանալ,— շարունակեցի ասելիքս, նստելով աթոռին,— հոգիով եմ ի վիճակի խոսել կամ կանգնած մնալ ոտի վրա։

Նա ոչինչ չպատասխանեց, բայց երբ ես նստեցի, նա ծունկ չոքեց և գլուխը հենեց իմ ծնկներին՝ երեսը ծածկելով ձեռներով։ Անմիջապես զգացի, որ նա իր արցունքներով թրջում է ձեռները։ Աստվածներ, ինչ հույզերով ասես, որ ես չհամակվեցի։

— Օ՜, Մանոն, Մանոն,— շարունակեցի ես հառաչանքով,— շատ ուշ են հորդում քո արցունքները, դու արդեն մահ ես պատճառել ինձ։ Դու ձևացնում ես, թե վշտացած ես, բայց իրականում ոչ մի վիշտ չես զգում։ Քո վշտերից մեծագույնը, անկասկած, իմ ներկայությունն է, որը միշտ խոչընդոտ է հանդիսացել քո հաճույքներին։ Բացիր աչքերդ։ Նայիր, ինչ եմ դարձել. այդքան չարմ արցունք չեն թափում մի թշվառականի համար, որին դավաճանել են, որին լքում են այդքան անգթորեն։

Նա համբուրում էր ձեռները՝ մնալով ծնկաչոք։

— Սիրադրուժ ու փոփոխամիտ Մանոն,— շարունակեցի ես,— երախտամոռ ու անհավատարիմ աղջիկ, ո՞ւր են քո խոստումներն ու երդումները։ Բյուր անգամ թեթևամիտ ու անողորմ սիրուհի, ի՞նչ արիր դու այն սերը, որով դեռ այսօր երդվում էիր ինձ։ Արդար երկինք,— ավելացրի ես,— ահա թե ինչպես է քեզ ծաղրում մի անհավատարիմ կին՝ սրբությամբ և ակնածանքով քեզ վկա կանչելուց հետո։ Այսպես, ուրեմն, ուխտադրժությունը պարգևատրվում է, իսկ հավատարմությանը և հարատևությանը սպասում են լքում ու վհատություն։

Այս խոսքերից հետո այնպիսի դառն խոհեր ունեցա, որ աչքերս ակամա լցվեցին արցունքով։ Մանոնն այդ նկատեց ձայնիս փոփոխումից։ Վերջապես նա խղեց լռությունը։

— Երևի շատ մեղավոր եմ,— ասաց նա տխրագին,— քանի որ կարողացել եմ այդքան վիշտ ու հուզմունք պատճառել քեզ։ Սակայն թող ինձ պատժի երկինքը, եթե ես գիտակցել կամ կշռադատել եմ իմ մեղքը։

Այս խոսքերն այն աստիճան զուրկ թվացին ողջամտությունից ու արժանահավատությունից, որ ես չկարողացա զսպել ամենասաստիկ զայրույթիս բռնկումը։

— Զարհուրելի՜ կեղծություն,— գոչեցի ես,— ավելի ակներևորեն եմ տեսնում հիմա, քան երբևէ, որ դու սոսկ մի խաբեբա և նենգ կին ես։ Այժմ գիտեմ քո ստորաքարշ բնավորությունը։ Մնաս բարով, անարդ արարած,— շարունակեցի ես ոտքի կանգնելով։— Ես գերադասում եմ հազար անգամ մեռնել, քան թե այսօրվանից որևէ առնչություն ունենալ քեզ հետ։ Թող երկինքը պատժի ինձ, եթե ես երբևէ քեզ արժանացնեմ իմ ամենաթեթև հայացքին։ Մնա քո նոր սիրեկանի հետ, սիրիր նրան, արհամարհիր ինձ, ձեռք քաշիր պատվից, ողջամտությունից. ես ծիծաղում եմ քո վարմունքի վրա. ինձ համար ողջը մեկ է։

Նա այն աստիճան սարսափեց իմ կատաղությունից, որ տակավին ծունկ չոքած աթոռի մոտ, որից ես վեր էի կացել, դողդողալով ինձ էր նայում, առանց համարձակվելու մինչև իսկ շունչ քաշել։ Ես մի քանի քայլ ևս արի դռան ուղղությամբ , գլուխս շրջած դեպի նա և աչքերս սևեռած նրա վրա։ Սակայն պետք է կորցրած լինեի մարդկային վերջին զգացումը, որպեսզի անզգա ու անդրդվելի մնայի նրա հմայքների առաջ։

Ես այնքան հեռու էի այդ բարբարոս ու քարասիրտ անզգայությունից, որ հասնելով հանկարծ հակադիր ծայրահեղության, վերադարձա կամ ավելի շուտ դեպի նա նետվեցի առանց մտածելու... Ես նրան իմ գիրկն առա, հազար քնքուշ համբույր տվի, իմ կատաղության համար ներում խնդրեցի, խոստովանեցի, որ կոպիտ եմ եղել և որ արժանի չեմ նրա նման մի աղջկանից սիրվելու երջանկությանը։

Ես նրան նստեցրի և, իմ հերթին ծունկ չոքելով, աղաչեցի այդ դիրքով ունկնդրել ինձ։ Ապա ներողության հայցումիս մեջ հակիրճ կերպով բովանդակեցի այն բոլոր հարգալիր ու քնքուշ խոսքերը, որ մի հլու և զորովալիր սիրեկան ի վիճակի է հնարելու։ Ես նրան խնդրեցի շնորհ անել ասելու, թե ներում է ինձ։ Նա իր ձեռները դրեց իմ ուսերին, ասելով, որ ինքը կարոտ է իմ բարությանը, որպեսզի կարողանա ինձ մոռացնել տալ իր պատճառած ցավերը, և որ նա հիմա երկյուղի մեջ է ոչ պակաս հիմունքով, որ այն, ինչ նա ուզում է ասել իր արդարացման համար, ինձ դուր չպիտի գա։

— Ես,— ընդհատեցի նրան անմիջապես,— օ՜, ես քեզնից ոչ մի արդարացում չեմ պահանջում։ Իմ հավանությունն եմ տալիս քո բոլոր արարքներին։ Ես ոչ մի իրավունք չունեմ քեզնից բացատրություն պահանջելու՝ քո վարմունքի վերաբերյալ։ Ես շատազանց ուրախ կլինեմ և երջանիկ, եթե անգին Մանոնս ինձ չզրկի իր սրտի քնքշությունից։ Սակայն,— շարունակեցի ես, շմտածելով իմ կացության վրա,— ամենակարող Մանոն, դու, որ քո քմահաճությամբ բերկրանք ու տառապանք ես պատճառում ինձ, արդյոք թույլ կտա՞ս նվաստացումովս ու զզջումովս քեզ բավարարելուց հետո խոսել իմ վշտի ու տանջանքի մասին։ Կլսե՞մ արդյոք քեզնից, թե այսօր ո՞րն է լինելու իմ վիճակը և թե արդյոք վճռե՞լ ես անդարձ ստորագրելու իմ մահվան դատավճիռը, գիշերն անցկացնելով իմ ախոյանի հետ։

Նախքան պատասխանելը նա փոքր-ինչ մտածեց։

— Ասպետս,— ասաց նա, վերստին հանդարտված,— եթե դու հենց սկզբից բացատրված լինեիր այսպես պարզ, դու քեզ զերծ կպահեիր բյուր հուզումներից, իսկ ինձ՝ անչափ ցավալի մի տեսարանից։ Քանի որ քո վիշտը բխում է խանդից, ապա ես այդ կամոքեմ, առաջարկելով հենց այս ժամին հետևել քեզ թեկուզ աշխարհի ծայրը։ Բայց ես կարծեցի, որ քո դառնության պատճառն այն նամակն է, որը ես գրեցի քեզ պարոն դը Գ. Մ.-ի աչքի առջև, և այն աղջիկը, որին մենք ուղարկեցինք քեզ մոտ։ Ես մտածեցի, թե միգուցե դու իմ նամակն ընդունել ես իբրև ծաղր, և կարծել, թե այդ աղջկան ես քեզ մոտ ուղարկել եմ որպես խոստովանություն, թե հրաժարվում եմ քեզնից, Գ. Մ.-ի հետ կապվելու համար։ Ահա այս միտքն է, որ ընկճել էր ինձ հանկարծ, որովհետև, թեպետ անմեղ էի, այնուամենայնիվ, մտածելով

իմ վարմունքի մասին, գտնում էի, որ արտաքուստ դեպքերն աննպաստ էին ինձ համար. սակայն,— ավելացրեց նա,— ես ուզում եմ, որ դու իմ դատավորը լինես, երբ քեզ կբացատրեմ իրերի բուն եղելությունը։

Այն ժամանակ նա ինձ պատմեց այն ամենը, ինչ պատահել էր իրեն Գ. Մ.-ի հետ հանդիպելուց հետո, որը նրան սպասել էր հենց այն տանը, ուր հիմա մենք գտնվում էինք։ Գ. Մ.-ն, հիրավի, նրան ընդունել էր որպես աշխարհիս ամենանամանի մի իշխանուհու։ Նա ցույց էր տվել բոլոր սենյակները, որոնք զարմանալի ճաշակով ու մեծ խնամքով էին կահավորված։ Իրեն հատկացված առանձնասենյակում նա տվել էր նրան տասը հազար ֆունտ և, բացի դրանից, նվիրել էր մի քանի գոհարներ, որոնց թվում և այն մարգարտե ապարանջաններն ու մանյակը, որոնք մի անգամ արդեն ինքը ստացել էր Գ. Մ.-ի հորից։ Այնուհետև նրան առաջնորդել էր դեպի մի դահլիճ, որն ինքը Մանոնը տակավին չէր տեսել և ուր ճոխ ու ընտիր ճաշ էր սպասում նրան։ Ճաշին սպասարկել էին նոր ծառաները, որոնց նա վարձել էր հատկապես Մանոնի համար, հրամայելով նրանց, որ այսուհետև նրան ընդունեն որպես իրենց տիրուհին. ի վերջո ցույց էր տվել կառեթը, ձիերը և մնացած բոլոր նվերները, որից հետո առաջարկել էր թուղթ խաղալ մինչև ընթրիք։

— Խոստովանում եմ,— շարունակեց նա,— խելքս կորցրի այս հոյակապ փարթամությունից։ Ես մտածեցի, որ ափսոս է միանգամից զրկվել այսքան բարիքներից, բավականանալով միայն ինձ հետ տասը հազար ֆրանկ ու գոհարներ տանելուց, որ այս ամենը պատրաստի մի կարողություն է մեր երկուսի համար, և որ մենք կկարողանանք հաճելի կյանք վարել Գ. Մ.-ի հաշվին։ Փոխանակ առաջարկելու թատրոն գնալ, իմ մտքով անցավ նրան հարցուփորձ անել քո մասին, իմանալու համար, թե որքան դյուրությամբ մենք կարող կլինենք տեսնվել միմյանց հետ իմ ծրագիրն իրագործվելու դեպքում։ Ես համոզվեցի, որ նա հեղաբարո և դյուրաբեկ բնավորություն ունի։ Նա ինձ հարցրեց, թե ինչ եմ մտածում քո մասին և տիսոսո՞ւմ եմ արդյոք, որ լքել եմ քեզ։ Ես պատասխանեցի, որ դու այնքան քնքուշ ես եղել և միշտ այնպես

ազնվարար վարվել ինձ հետ, որ անբնական կլիներ, եթե քեզ ատեի։ Նա խոստովանեց, որ դու իրոք մեծ արժանիքներ ունես, և որ ինքը ցանկացել է քեզ հետ մտերմություն հաստատել։ Նա կամեցավ իմանալ, թե իմ կարծիքով դու ինչ վերաբերմունք ցույց կտաս իմ մեկնումին, մանավանդ, երբ իմանաս, որ ես նրա մոտ եմ։ Ես պատասխանեցի, որ մեր սերը հին պատմություն է և արդեն փոքր-ինչ սառել է. բացի այդ, ասացի, որ դու այժմ դժվար պայմաններում ես գտնվում և թերևս ինձ կորցնելը քո աչքում մեծ դժբախտություն չի երևա, քանի որ քեզ ազատում է մի ճնշող բեռից։ Այնուհետև ավելացրի, որ ես այն աստիճան համոզված եմ քո քաղցրաբարո ու խաղաղասեր բնավորության մեջ, որ մի բոպե անգամ չեմ տատանվել քեզ ասելու, որ գործով եմ գնում Փարիզ, որ դու ոչ մի դժվարություն չես հարուցել և թույլ ես տվել ինձ մեկնելու, նույնիսկ ինքդ ես եկել այստեղ, իսկ բաժանվելիս առանձնապես մեծ անհանգստություն չես ցուցաբերել։ «Եթե ես գիտենայի,— ասաց Գ. Մ.-ն,— թե ձեր ասպետը հակամետ է ինձ հետ հաշտ ապրելու, ինքս առաջինը կառաջարկեի նրան իմ ծառայությունն ու բարեկամությունը»։ Ես նրան վստահեցրի, որ ճանաչելով քո բնավորությունը, բնավ չեմ կասկածում, թե դու ամենայն անկեղծությամբ կընդունես նրա առաջարկությունը, մանավանդ, ավելացրի ես, եթե նա, Գ. Մ.-ն, կարողանա քեզ օգնել քո գործերում, որոնք ծայր աստիճան ձախողվել են այն օրից ի վեր, ինչ դու ընդհարվել ես քո ընտանիքի հետ։ Գ. Մ.-ն ինձ ընդհատեց, հայտարարելով, որ նա պատրաստ է քեզ մատուցել ամեն տեսակ ծառայություն, ինչ կախված է իրենից, և որ եթե դու ցանկանաս սիրային նոր կապ հաստատել, ապա նա քեզ կտրամադրի մի գեղեցկուհի, որին թողել է հանուն իմ սիրու։

— Ես հավանություն տվի այդ մտքին,— ավելացրեց Մանոնը,— որպեսզի լիովին կանխեմ նրա բոլոր կասկածները. և ավելի ու ավելի ամրապնդվելով իմ մտադրության մեջ, ես սոսկ տենչում էի մի հնար գտնել՝ քեզ այս ամենի մասին իրազեկ դարձնելու համար, որովհետև վախենում էի, թե դու չափից դուրս կհուզվես, եթե ինձ չտեսնես ժամադրված վայրում։ Հենց այս նպատակով էր, որ ես առաջարկեցի նույն

երեկոն եթե քեզ մոտ ուղարկել այդ նոր սիրուհուն, որպեսզի առիթ ունենամ քեզ գրելու. ես ստիպված եղա դիմել այս խորամանկությանը, չունենալով ոչ մի հույս, որ նա թեկուզ մի ակնթարթ մենակ կթողնի ինձ։ Նա ծիծաղեց իմ առաջարկության վրա, կանչեց իր սպասավորին ու հարցրեց, թե կարո՞ղ է արդյոք իսկույն եթե գտնել իր նախկին սիրուհուն, և ուղարկեց քաղաքի բոլոր մասերում որոնելու նրան։ Գ. Մ.-ն կարծում էր, թե այդ աղջիկը ձեզ կգտնի Շայոյում։ Սակայն ես նրան հաղորդեցի, որ քեզանից հեռանալիս խոստացել եմ քեզ հանդիպել թատրոնում կամ, եթե որևէ պատճառ արդելք հանդիսանա ինձ այնտեղ լինելու, դու ինձ պիտի սպասես կառքում՝ Սենտ-Անդրե փողոցի անկյունում։ Եվ որ հետևաբար, ավելի լավ կլինի այնտեղ էլ ուղարկել քո նոր սիրուհուն, հենց թեկուզ այն նպատակով, որ գիշերը տաղտկալի չանցնի քեզ համար։ Ես նրան ասացի նաև, որ հարկավոր է մի երկտող գրել քեզ՝ հայտնելու սույն փոփոխությունը, որն առանց դրան դու դժվար կհասկանաս։ Նա համաձայնեց, սակայն ես հարկադրված էի գրել նրա ներկայությամբ և զգուշացա նամակումս ակնհայտ բացատրությունից։ Ահա թե իրերն ինչ ընթացք ստացան,— ավելացրեց Մանոնը։— Ես քեզնից ոչինչ չեմ թաքցնում, ոչ իմ վարմունքը և ոչ էլ դիտավորություններս։ Ջահել աղջիկը հայտնվեց. նա ինձ գեղեցիկ թվաց, և որովհետև ես բնավ չէի կասկածում, որ իմ բացակայությունը քեզ վիշտ կպատճառի, ապա անկեղծորեն ցանկանում էի, որ նա գեթ մի քանի րոպե կարողանա քո ձանձրույթը փարատել և զվարճացնել քեզ, որովհետև իմ տենչած հավատարմությունը, որ դու ևս ունես, դա սրտի հավատարմությունն է։ Ես մեծ հաճույք զգացած կլինեի, եթե կարողանայի Մարսելին ուղարկել քեզ մոտ։ Սակայն ինձ չհաջողվեց մի հարմար րոպե գտնել նրան ասելու այն, ինչ ուզում էի քեզ հաղորդել։

Վերջապես նա ավարտեց իր պատմությունը, հայտնելով ինձ, թե Գ. Մ.-ն որքան էր վրդովվել՝ ստանալով պարոն դը Տ.-ի նամակը։ Մանոնի խոսքերով, նա դեռ վարանում էր, լքի՞ արդյոք իրեն, թե ոչ, և վստահեցրեց, որ առանց հապաղելու կվերադառնա։ «Հենց դրա համար էլ քո ներկայությունը հիմա ինձ անհանգստացնում է, այդ պատճառով էր, որ քո գալուստը զարմացրեց ինձ»։

Ես մեծ համբերությամբ լսեցի նրա պատմությունը։ Նրա մեջ ինձ համար բազմաթիվ անողոք ու վիրավորական խոսքեր կային, որովհետև նրա անհավատարմությունն այն աստիճան ակներև էր, որ նա մինչև իսկ չչանաց այն թաքցնել։ Նա չէր կարող հուսալ, որ Գ. Մ.-ն ամբողջ գիշեր նրան մենակ կթողնի իբրև վեստալուհի։ Ուրեմն նա որոշել էր Գ. Մ.-ի հետ գիշերն անցկացնել։ Ինչ խոստովանություն մի սիրեկանի համար։ Սակայն մտածեցի, թե մասամբ ես եմ նրա հանցանքի պատճառը, քանի որ ես էի նրան պատմել Գ. Մ.-ի դեպի նա ունեցած զգացմունքի մասին և այնքան թույլ գըտնվել, որ կուրորեն համաձայնել էի մասնակցելու նրա արատաց ու հանդուգն ծրագրի իրականացմանը։ Բացի այդ, շնորհիվ իմ դյուրազգաց բնության, սիրտս փափկեց նրա անկեղծ ու անպաճույճ պատմությունից և այն բարի ու սրտաբաց եղանակից, որով նա պատմում էր մինչև անգամ ինձ համար ամենանվիրական հանգամանքները։

«Մանոնը մեղանչում է առանց չարամտության,— ասում էի ինքս ինձ,— նաև թեթևամիտ է ու անխոհեմ, սակայն շիտակ ու անկեղծ»։ Ավելացրեք և այն, որ իմ սերը բավական էր, որպեսզի ստիպեր ինձ փակել աչքերս նրա բոլոր հանցանքների հանդեպ։ Ես չափից դուրս գոհ էի հենց նույն երեկո նրան իմ ախոյանից հրաժարակելու հույսից։ Այնուամենայնիվ ասացի նրան.

— Իսկ գիշերը ո՞ւմ հետ դու պետք է անցկացնես։

Տխուր ձայնով տված այս հարցը նրան շփոթեցրեց։ Նա ինձ պատասխանեց կցկտուր բառերով— «սակայն», «եթե»... Նա տանջվում էր իր հարցումից. ես խղճացի նրան և ընդհատելով մեր զրույցը՝ կտրուկ հայտարարեցի, որ սպասում եմ անմիջապես ինձ հետևելու նրա որոշմանը։

— Ամենայն սիրով,— ասաց նա,— սակայն մի՞թե դու չես հավատում իմ ծրագրին։

— Ա՜խ, բավական չէ՞ միթե,— առարկեցի ես,— որ հավանում եմ այն ամենը, ինչ դու արել ես մինչև հիմա։

— Ի՞նչ, մի՞թե մենք չպիտի վերցնենք այն տասը հա-

զար Ֆրանկը,— հարցրեց Մանոնը,— նա ինքն է տվել. դրանք իմն են։

Ես նրան խորհուրդ տվի ամեն ինչ թողնել և միայն մտածել այն մասին, թե ինչպես շուտափույթ հեռանանք. որովհետև թեպետ ընդամենը կես ժամ էր, ինչ նրա մոտ էի, բայց արդեն երկյուղ էի կրում Գ. Մ.-ի վերադարձից։ Սակայն նա այնպիսի բուռն թախանձանքով համոզեց ինձ ձեռնունայն չհեռանալ, որ ես պարտքս համարեցի որոշ բանի տեղի տալ նրան, քանի որ շատ զիջումներ էի ստացել նրանից։ Մինչ մենք մեկնումի պատրաստություն էինք տեսնում, լսեցի, որ փողոցի դուռը բախեցին։ Ես բնավ չէի տարակուսում, որ դա Գ. Մ.-ն է. այդ միտքն ինձ խիստ անհանգստություն պատճառեց, և ես դրա ազդեցության տակ Մանոնին ասացի, որ եթե Գ. Մ.-ն մտնի սենյակ, կենդանի չի մնա։ Հիրավի, ես դեռևս բոլորովին չէի սթափվել իմ կատաղությունից, որպեսզի կարողանայի նրա ներկայությամբ զսպել ինձ։ Մարսելը վերջ տվեց իմ մտատանջությանը, հանձնելով ինձ մի նամակ, որը նա ստացել էր շքամուտքի դռանը։ Երկտողը պարոն դը Տ.-ից էր։ Նա ինձ գրում էր, որ Գ. Մ.-ն գնացել է տուն իր համար դրամ բերելու, ուստի ինքն օգտվում է նրա բացակայությունից, որպեսզի մի շատ զվարճալի միտք հաղորդի ինձ։ Նրան թվում է, որ ես կարող եմ վրեժս առնել իմ ախոյանից ավելի հաճելի եղանակով՝ ուտելով նրա ընթրիքը և հենց նույն գիշերը պառկելով այն անկողնում, որտեղ նա հույս ուներ անցկացնել իմ սիրուհու հետ։ Նրա կարծիքով այս ծրագիրը դյուրությամբ կարելի էր իրագործել, եթե միայն ես կարողանամ ապահովել երեք կամ չորս մարդու աջակցություն, որոնք բավականին վճռականություն ունենան Գ. Մ.-ին փողոցում կանգնեցնելու, և բավականաչափ հավատարմություն՝ մինչև առավոտ նրան աչքից չհեռացնելու։ Իսկ ինչ վերաբերում է իրեն, նա խոստանում է առնվազն մի ժամ նորից նրան զբաղեցնել զրույցով՝ զանազան նյութերի շուրջը, որը արդեն նախապատրաստել է նրա վերադարձի համար։

Սույն երկտողը ես ցույց տվի Մանոնին և հաղորդեցի նրան, թե ինչպիսի խորամանկության եմ դիմել՝ նրա մոտ

ազատ մտնելու համար։ Թե՛ իմ և թե՛ պարոն դը Տ.-ի հնարամտությունը մեծ հիացմունք պատճառեց Մանոնին։ Մենք մի քանի րոպե սրտագին ծիծաղեցինք այդ առթիվ, սակայն երբ ես պարոն դը Տ.-ի վերջին ծրագրի մասին խոսեցի որպես կատակի, ապշած մնացի, տեսնելով, թե նա ինչպես է լրջորեն պնդում իրագործելու այդ առաջարկությունը, որի միտքը սքանչացնում էր նրան։ Ես իզուր էի հարցնում, թե նրա կարծիքով մի վայրկյանում որտեղ կարող եմ գտնել մարդիկ, որոնք ընդունակ լինեն բռնել Գ. Մ.-ին և բաց չթողնել։ Նա ինձ պատասխանեց, որ, համենայն դեպս, պետք է փորձել, քանի որ պարոն դը Տ.-ն մեզ ապահովում է մի ժամ ևս, և իբրև պատասխան իմ մյուս առարկությունների, ինձ հայտարարեց, որ ես բռնակալի պես տանջում եմ և բնավ չեմ կամենում հաճոյանալ իրեն։ Այս ծրագիրը ծայր աստիճան հրապուրիչ էր թվում նրան։

— Ընթրիքին դու կնստես նրա տեղը,— կրկնեց նա ինձ,— դու կքնես նրա անկողնում և վաղ լուսադեմին կհափշտակես նրա սիրուհուն ու դրամը։ Դու կատարելապես քո վրեժն առած կլինես թե՛ հորից և թե՛ որդուց։

Ես զիջեցի նրա թախանձանքներին, չնայած սրտիս գաղտնի վայրիվերումներին, որոնք ասես ինձ շարաբաստիկ աղետ էին նախագուշակում։ Ես տնից դուրս եկա այն դիտավորությամբ, որ գնամ փնդրեմ երկու-երեք գվարդիականների, որոնց հետ ինձ ծանոթացրել էր Լեսկոն, որպեսզի իրենց վրա վերցնեն Գ. Մ.-ին բռնելու հոգսը։ Ես տանը միայն մեկին գտա. սակայն դա մի եռանդուն ու նախաձեռնող մարդ էր, որը գործի եղելությունն իմանալով, իսկույն երաշխավորեց դրա հաջողությունը։ Նա ինձնից ընդամենը տասը պիստոլ խնդրեց՝ վարձատրելու գվարդիայի երեք զինվորներին, որոնց նա որոշեց հրավիրել իր գլխավորությամբ մասնակցելու մեր ձեռնարկին։ Ես խնդրեցի նրան ժամանակ չկորցնել։ Քառորդ ժամ չանցած նա հավաքեց այդ զինվորներին։ Ես նրան սպասում էի իր տանը, և երբ նա վերադարձավ ընկերակիցների հետ, ես անձամբ նրան առաջնորդեցի դեպի այն փողոցի անկյունը, որով անհրաժեշտաբար պիտի անցներ Գ. Մ.-ն՝ Մանոնի գտնված փողոցը գնալու համար։

Գվարդիականին պատվիրեցի վատ չվարվել Գ. Մ.-ի հետ և միայն աչալուրջ ու ապահով պահել մինչև առավոտյան ժամը յոթը, որպեսզի ես հանգիստ լինեմ, որ նա ոչ մի հնարավորություն չունենա փախչելու։

Գվարդիականն ինձ ասաց, որ մտադիր է նրան իր սենյակը տանելու և ստիպելու շորերը հանել կամ մինչև իսկ պառկել իր անկողնում, մինչդեռ ինքը և իր կտրիճները գիշերը պիտի անցկացնեն կոնծաբանելով ու թղթախաղով։ Ես նրանց հետ մնացի, մինչև որ երևաց մոտեցող Գ. Մ.-ն և այն ժամանակ միայն այնտեղից փոքր-ինչ հեռացա դեպի ցած՝ մի մութ տեղ, որպեսզի վկա լինեմ այդպիսի արտասովոր մի տեսարանի։ Գվարդիականն ատրճանակը ձեռին մոտեցավ նրան և քաղաքավարությամբ բացատրեց, որ ինքը ոչ նրա կյանքին է սպառնում, ոչ էլ քսակին, սակայն, եթե նա առանց դիմադրության և հոժարակամ չհետևի իրեն կամ փորձի օգնություն կանչել, ապա ինքը իսկույն կգնդակահարի նրան։ Գ. Մ.-ն տեսնելով, որ գվարդիականի հետ երեք զինվոր ևս կան և, անշուշտ, վախենալով լիքը ատրճանակից, չդիմադրեց։ Ես տեսա, թե ինչպես զինվորները ոչխարի նման տարան նրան։ Ես անհապաղ վերադարձա Մանոնի մոտ և, որպեսզի ծառաները ոչ մի կասկած չտանեն, ներս մտնելով ասացի, որ պարոն Գ. Մ.-ին չպետք է սպասել ընթրիքի, քանի որ անակնկալ գործերը նրան թույլ չեն տվել վերադառնալու, նա ինձ խնդրել է գալ իր ներողությունը հայտնելու և ընթրելու տիկնոջ հետ, որը ես մեծ երջանկություն եմ համարում ինձ համար, մանավանդ որ տիկինն անասելի գեղեցիկ է։ Մանոնը մեծ ճարպկությամբ օգնեց իմ մտադրության իրագործմանը։

Մենք սեղան նստեցինք։ Քանի դեռ ծառաները մեզ սպասարկում էին՝ մենք լուրջ ու վայելուչ տեսք ունեինք։ Վերջապես նրանց արձակելով, մենք անցկացրինք մեկը մեր կյանքի ամենասքանչելի երեկոներից։ Մանոնից գաղտնի ես հրամայեցի Մարսելին մի կառեթ որոնել և պատվիրել կառապանին, որ հետևյալ օրը առավոտյան ժամը վեցին սպասի տան առաջ։ Կեսգիշերի մոտերքը ես ձևացրի, թե բաժանվում եմ Մանոնից. սակայն կամացուկ կրկին Մարսելի օգնությամբ սենյակ

վերադառնալով՝ պատրաստվեցի դրավել Գ. Մ.-ի անկողինը, ինչպես քիչ առաջ նստել էի նրա տեղը՝ սեղանի շուրջը։

Մինչդեռ նույն այդ ժամանակ շար բախտը կործանում էր պատրաստել մեզ համար։ Մենք անձնատուր եղանք հեշտության վայելքներին, սակայն սուրն արդեն կախված էր մեր գլխին։ Այդ պահող թելը կտրվելու վրա էր։ Բայց, որպեսզի հասկանալի լիներ մեր կործանման բոլոր հանգամանքները, պետք է լուսաբանել դրա պատճառը։

Գ. Մ.-ին ուղեկցում էր մի սպասավոր, երբ գվարդիականը նրան բռնեց։ Այս տղան, ահաբեկված իր տիրոջ գլխին եկած փորձանքից, փախուստի դիմեց, և առաջին քայլը, որ նա արեց տիրոջն օգնելու համար, այն էր, որ գնաց պատահածի մասին իմաց տվեց ծեր Գ. Մ.-ին։ Այդպիսի անախորժ լուրը չէր կարող սաստիկ չանհանգստացնել ծերուկին։ Դա նրա միակ որդին էր, և այդ պատճառով նա ցուցաբերեց իր տարիքի համար արտասովոր ձեռներեցություն։

Ամենից առաջ սպասավորից պահանջեց իմանալ, թե որդին ի՞նչպես է անցկացրել երեկոն. արդյոք կռվի չի՞ բռնվել որևէ մեկի հետ. արդյոք ուրիշի կռվին չի՞ խառնվել կամ որևէ կասկածելի տուն չի՞ հաճախել։ Սպասավորը, կարծելով, թե իր տերը ծայրահեղ վտանգի մեջ է գտնվում և ենթադրելով, որ ինքը ոչ մի բան չպիտի խնայի տիրոջն օգնելու համար, ծեր հորը պատմել է իր բոլոր գիտեցածը՝ որդու դեպի Մանոնն ունեցած սիրո և նրա համար արված բոլոր ծախսերի մասին. նա նրան հաղորդում է, թե իր տերն ինչպես է անցկացրել ժամանակը կեսօրից հետո՝ մինչև ժամը ինի մոտերքը, ինչպես է դուրս եկել տնից և վերադարձին ինչ դժբախտություն է պատահել նրան։ Այս տեղեկությունը բավական էր, որպեսզի ծերուկը կասկածեր, թե իր որդու արկածը սիրային ընդհարման հետևանք է։

Թեպետ ժամը տասն անց էր կես, բայց նա առանց տատանվելու անմիջապես գնում է պարոն ոստիկանապետի մոտ. նրանից խնդրում է բոլոր գիշերապահ պահակախմբերին հատուկ հրամաններ ու հրահանգներ տալ։ Այնուհետև, ոստիկանապետի թույլտվությամբ, իր հետ վերցնելով մի պահակախումբ, շտապում է դեպի այն փողոցը, ուր բռնել էին իր որ-

դուն։ Հետո լինում է քաղաքի բոլոր մասերում, որտեղ հույս է ունենում գտնել նրան, և, ոչ մի տեղ նրա հետքը չգտնելով, հրամայում է իրեն առաջնորդել որդու սիրուհու տունը, որտեղ, նրա կարծիքով, որդին երևի արդեն վերադարձած կլինի։

Ես պատրաստվում էի անկողին մտնել, երբ նա եկավ։ Մեր սենյակի դուռը փակ լինելու պատճառով ես չէի լսել փողոցի դռան բախումը։ Սակայն նա ներս մտավ երկու պահակների ընկերակցությամբ և իր որդու վիճակի մասին արած հարցուփորձից հետո կամեցավ տեսնել նրա սիրուհուն՝ որևէ տեղեկություն ստանալու նպատակով։ Նա բարձրացավ սանդուղքով։ Մենք պատրաստվել էինք անկողին մտնելու. նա բացեց դուռը, և երբ մենք նրան տեսանք, արյունը սառեց մեր երակներում։

— Ա՜խ, աստված իմ, ծեր Գ. Մ.-ն է,— ասացի Մանոնին։ Ես նեռվեցի դեպի իմ սուսերը. դժբախտաբար այն պինդ մխրճվել էր պատյանի մեջ։ Տեսնելով իմ շարժումը, պահակներն իսկույն մոտեցան ինձ բռնելու։ Մարդը, որի հագինը միայն մի շապիկ է, անկարող է դիմադրել։ Նրանք ինձ զրկեցին պաշտպանվելու բոլոր միջոցներից։

Թեպետ Գ. Մ.-ն գլուխը կորցրել էր այս տեսարանից, այնուամենայնիվ իսկույն ճանաչեց ինձ։ Առավել զյուրությամբ նա ճանաչեց և Մանոնին։

— Մի՞թե պատրանք է սա,— ասաց նա մեզ խստորեն։

— Մի՞թե ես տեսնում եմ ասպետ դե Գրիյոյին և Մանոն Լեսկոյին։

Ես այն աստիճան էի կատաղել ամոթից ու վշտից, որ ոչինչ չպատասխանեցի նրան։ Միաժամանակ թվաց, թե նա զանազան խոհեր է կշռադատում իր մտքում, և հանկարծ զրանք ասես բռնկեցին նրա զայրույթը, և նա գոռաց, խոսքն ինձ ուղղելով.

— Օ՜, թշվառական, այժմ ես հավատացած եմ, որ դու ես սպանել իմ որդուն։

Այս մեղադրանքը սաստիկ խոցեց իմ սիրտը։

— Ծեր ավազակ,— հպարտ պատասխանեցի նրան,— եթե ես հարկ ունենայի սպանել քո ընտանիքի անդամներից որևէ մեկին, ապա քեզնից կսկսեի։

— Դրան պինդ պահեցեք,— դիմեց նա պահակներին։— Ես դրան կստիպեմ պատմելու, թե ինչ է պատահել իմ որդուն, ես դրան վաղն ևեթ կախաղան կհանեմ, եթե հիմա իսկույն չասի, թե ինչ է արել որդուս։

— Դո՞ւ ինձ կախել կտաս,— գոռացի ես։— Անզգամ, քո նմաններին պետք է կախաղան հանել։ Իմացիր, որ ես ավելի ազնիվ, ավելի զտարյուն տոհմի զավակ եմ, քան դու։ Այո,— ավելացրի ես,— ինձ հայտնի է, թե ինչ է պատահել քո որդու հետ և եթե դու շարունակես ինձ զայրացնել, ապա ես կհրամայեմ, որ վաղն ևեթ այգաբացին նրան խեղդեն և քեզ էլ նույն վիճակն եմ խոստանում նրանից հետո։

Ես անխոհեմություն արի, խոստովանելով, որ գիտեմ նրա որդու ուր լինելը. սակայն ծայրահեղ բարկությունն ինձ դրդեց այս անզգույշ քայլն անելու։ Նա անմիջապես կանչեց հինգ թե վեց պահակների, որոնք սպասում էին դռան մոտ և նրանց հրամայեց տան բոլոր ծառաներին ձերբակալել։

— Օ՜, պարոն ասպետ,— ասաց նա ծաղրանքով,— դուք գիտեք, թե ուր է իմ որդին և կհրամայեք, որ նրան խեղդե՞ն, ասում եք։ Հավատացած եղեք, մենք կկանխենք ձեր դիտավորությունը։

Ես իսկույն հասկացա գործած սխալս։ Ծեր Գ. Մ.-ն մոտեցավ Մանոնին, որն անկողնում նստած լաց էր լինում, և մի քանի հեգնոտ հաճոյաբանություններ ասաց հոր և որդու վրա նրա ունեցած իշխանության նկատմամբ և այն լավ շարաշահելու մասին։ Այս ծեր անժուժկալ հրեշն ուզեց ընտանեվարի վարվել Մանոնի հետ։

— Փորձիր միայն նրան դիպչել,— գոչեցի ես, և ոչ մի սրբություն չի գտնվի, որ կարողանա քեզ փրկել իմ ձեռքից։

Նա դուրս եկավ, թողնելով սենյակում երեք պահակներին, որոնց հրամայեց ստիպել մեզ՝ շուտափույթ հագնվելու մեր շորերը։

Չգիտեմ, թե այդ միջոցին նա ինչ դիտավորություն ուներ մեր նկատմամբ։ Թերևս մենք ձեռք կբերեինք մեր ազատությունը, եթե հայտնեինք նրա որդու ուր լինելը։ Շորերս հագնելիս ես խորհում էի, թե գուցե ամենալավ ելքը դա լիներ. սակայն, եթե նա այդպիսի դիտավորություն ուներ մեզնից

հեռանալիս, ապա այն բոլորովին փոխվել էր, երբ սենյակ վերադարձավ։ Նա գնացել էր հարցուփորձ անելու Մանոնի սպասավորներին, որոնց ձերբակալել էին պահակները։ Նա ոչ մի բան չէր կարողացել իմանալ իր որդու՝ Մանոնի համար վարձած սպասավորներից. սակայն երբ իմացել էր, որ Մարսելը մեզ սպասարկել է նաև անցյալում, սպառնալիքներ տալով ստիպել էր նրան խոսելու։

Մարսելը հավատարիմ սպասավոր էր, սակայն պարզամիտ էր ու անտաշ։ Արգելատնից Մանոնին ազատելու իր վարմունքի հիշողությունը և Գ. Մ.-ի ներշնչած ահաբեկությունը այնպիսի մի տպավորություն էին գործել նրա թույլ մտքի վրա, որ նա կարծել էր, թե իրեն ահա կտանեն կախելու կամ անիվահարելու։ Նա խոստովանում է հայտնել այն ամենը, ինչ գիտեր, եթե միայն իր կյանքը խնայեն։ Գ. Մ.-ն այս խոսքերից գալիս է այն եզրակացության, որ մեր արարքները շատ ավելի լուրջ են ու հանցավոր, քան ինքը պատկերացրել է իրեն մինչ այդ։ Նա Մարսելին խոստանում է ոչ միայն կյանքը խնայել, այլև վարձատրել իր խոստովանության համար։

Այս թշվառ արարածը նրան պատմում է մեր ծրագրի մի մասը, որի շուրջը մենք առանց քաշվելու խոսակցել էինք նրա ներկայությամբ, որովհետև որոշ չափով նա ևս պիտի մասնակցեր դրա գործադրմանը։ Ճիշտ է, նրան միանգամայն անհայտ էին այն փոփոխությունները, որոնց ենթարկվել էր մեր ծրագիրը Փարիզում։ Սակայն Շայոյից հեռանալու պահին նա տեղյակ էր մեր ձեռնարկի ծրագրին և գիտեր, թե ինքն ինչ դեր պիտի խաղա նրա իրագործման մեջ։ Ուստի նա հայտնում է Գ. Մ.-ին, որ մեր մտադրությունն է եղել՝ խաբել նրա որդուն, որ Մանոնը պետք է ստանար կամ արդեն ստացել է տասը հազար ֆրանկ, որոնք, ըստ մեր դիտավորության, երբեք չպիտի ընկնեին Գ. Մ.-ի տոհմի ժառանգների ձեռքը։

Այս խոստովանությունից հետո կատաղած ծերուկն անմիջապես մեր սենյակը բարձրացավ։ Առանց մի խոսք ասելու, նա մտավ առանձնասենյակը, ուր և հեշտությամբ գտավ զրամը և գոհարները։ Կարմրատակած դեմքով նա վերադարձավ մեր սենյակը և ցույց տալով, ինչպես ինքը կամեցավ անվանել, մեր կողոպուտը, նա մեր գլխին թափեց իր վիրավորական կշտամբանքները։ Նա Մանոնի աչքերին մատնեցրեց մարգարտե մանյակն ու ասպարանջանները։

— Դուք ճանաչում եք սրանք,— ասաց նա հեգնական ժպիտով։— Առաջին անգամը չէ, որ դուք տեսնում եք։ Իսկ և իսկ նրանք են, ազնիվ խոսք։ Դրանք ձեզ դուր են գալիս, գեղեցկուհիս,— այժմ ես հեշտությամբ համոզվում եմ դրանում։ Խեղճ երեխաներ,— ավելացրեց նա,—իրավ, երկուսն էլ դեմքով հրաշալի են, սակայն բնությամբ՝ փոքր-ինչ խաբեբա։

Այս վիրավորական խոսքերից իմ սիրտը պատառ-պատառ էր լինում։ Միայն մի ակնթարթ ազատ լինելու համար ես կտայի... օ՜, արդար երկինք, ինչեր չէի տա։ Վերջապես ես բռնություն գործ դրի ինձ վրա և ասացի զսպված զայրույթով, որը ցասման նուրբ արտահայտություն էր.

— Վերջ դնենք, պարոն, այս տմարդի և ամբարտավան ծաղրին։ Ինչի մասին է խոսքը։ Ի՞նչ եք մտադիր անելու մեզ հետ։

— Իմ ասածն այն է, պարոն ասպետ,— պատասխանեց նա,— որ ձեզ անմիջապես Շաթելե պետք է ուղարկեմ։ Վաղն առավոտյան մենք ավելի դյուրին կլուսաբանենք եղելությունը, և ես հույս ունեմ, որ դուք ի վերջո շնորհ կանեք ասելու, թե որտեղ է իմ որդին։

Առանց երկար մտածելու ես հասկացա, որ Շաթելեում բանտարկվելը մեզ համար սարսափելի հետևանքներ կունենա։ Սարսուռով ես նախազգացի բոլոր վտանգները։ Իմ բոլոր հոգատարությամբ հանդերձ ես ըմբռնեցի, որ պետք է հոժարակամ կրել բախտի ծանրությունը և շողոքորթել ամենաոխերիմ թշնամուս՝ իմ հեզությամբ նրանից մի բան ստանալու համար։ Քաղաքավարությամբ ես նրան խնդրեցի մի բոպե լսել ինձ։

— Ես գիտակցում եմ իմ հանցանքը, պարոն,— ասացի նրան։— Խոստովանում եմ, որ երիտասարդությունն ինձ ստիպեց մեծ սխալներ գործել, որոնք ձեզ էլ են այն աստիճան վիրավորել, որ տեղի են տվել ձեր արդար դանդատներին։ Սակայն եթե ձեզ անհայտ չէ սիրո ուժը, եթե դուք ի վիճակի եք դատելու այն մասին, թե ինչ է կրում մի խեղճ, թշվ-

վառ պատանի, որից խլում են նրա սիրո առարկան, դուք, Թերևս, ինձ թողության արժանի կհամարեք՝ մի ընչին վրեժխնդրության բավարարությունը փնտրած լինելուս համար կամ, Թերևս, առնվազը բավականաչափ պատժված կհամարեք ինձ՝ հենց այստեղ հասցրած նախատինքով։ Հարկ չկա դիմելու ո՛չ տանջանքների և ո՛չ էլ բանտարկության, որպեսզի ինձ ստիպեք ասելու, Թե որտեղ է գտնվում ձեր որդին։ Նրան ոչ մի վտանգ չի սպառնում։ Իմ մտադրությունը չի եղել նրան վնասել, ոչ էլ ձեզ վիրավորել։ Ես պատրաստ եմ ձեզ հայտնելու այն վայրը, ուր նա անվտանգ կանցկացնի դիշերը, եթե դուք բարի լինեք ինձ ազատություն շնորհել։

Ներ վագրը, որ բնավ չզացվեց իմ աղերսանքից, ծիծաղելով Թիկունքն ինձ դարձրեց։ Նա շրթներից միայն մի քանի խոսք Թոցրեց՝ ինձ հասկացնել տալու, որ մեր դիտավորությունը նա գիտե իր սկզբնավորությունից։ Ինչ վերաբերում է իր որդուն, կոպտությամբ ավելացրեց անողորմ ծերուկը, նա շուտով կգտնվի, քանի որ ես չեմ սպանել նրան։

— Դրանց տարեք փոքր Շաթելե,— ասաց նա պահակներին,— և զգուշացեք, որ ասպետը ձեր ձեռքից չփախչի։ Նա խորամանկ է և մի անգամ արդեն փախել է Սեն-Լազարից։

Նա դուրս եկավ սենյակից և ինձ թողեց, կարո՞ղ եք երևակայել, ինչ վիճակում։

— Օ՜, երկինք,— բացականչեցի ես,— հլու-հնազանդ կընդունեմ բոլոր քո հարվածները. սակայն այն, որ մի Թշվառական ու ապիկար ծերուկ բռնությամբ է վարվում ինձ հետ, ծայրահեղ հուսահատության է մատնում ինձ։ Պահակները խնդրեցին մեզ փութալ։ Դրսում կառեթն արդեն սպասում էր։ Սանդուղքներից իջնելիս ես բռնեցի Մանոնի ձեռքը։

— Գնանք, իմ սիրելի թագուհի,— ասացի ես նրան,— գնանք հնազանդվելու մեր դաժան բախտին։ Թերևս երկինքը բարեհաճի մեզ ավելի երջանիկ օրեր շնորհել։

Մենք միասին մեկնեցինք միևնույն կառեթով։ Մանոնն ընկավ իմ գիրկը։ Նա մի խոսք անգամ չէր արտասանել Գ. Մ.-ի գալուց ի վեր։ Սակայն, երբ ինձ հետ մենակ մնաց, հազար քնքուշ խոսքեր ասաց, անդադար հանդիմանելով իրեն, Թե ինքն է եղել իմ դժբախտության պատճառը։ Ես հավատացրի նրան, որ երբեք չեմ գանգատվի իմ բախտից, քանի դեռ նա չի դադարել ինձ սիրելուց։

— Դու չպիտի անհանգստանաս ինձ համար ու խղճաս ինձ,— ավելացրի ես։— Մի քանի ամսվա բանտարկությունն ամենևին չի սարսափեցնում ինձ, և ես բոլոր դեպքերում Շաթելեն կգերադասեմ Սեն-Լազարից։ Սակայն քո վիճակը, անգին հոգյակս, անհանգստացնում է ինձ ու խոցում սիրտս։ Ինչպիսի՜ վիճակ այսքան չքնաղ մի արարածի համար։ Օ՜հ, երկինք, ինչպես ես դու կարողանում այդպես դաժան վարվել քո ամենակատարյալ ստեղծագործության հետ։ Ինչո՞ւ ի բնե մեզ չեն տրված մեր Թշվառ վիճակին համապատասխանող հատկություններ։ Մեզ շնորհել են խելք, ճաշակ, նրբազգացություն. ավա՜ղ, որքան տխուր պարագաներում ենք կիրառում դրանք, մինչդեռ մեր այս վիճակին արժանի՝ բազմաթիվ ստոր հոգիներ վայելում են բախտի բոլոր շնորհները։

Սույն խորհրդածությունները խոր վշտով համակեցին ինձ։ Սակայն այս բոլորը ոչինչ էր, համեմատած ապագայի մասին ունեցած իմ խոհերի հետ, որովհետև ես տոչորվում էի Մանոնի վիճակի համար։ Նա մի անգամ արդեն եղել էր արգելատանը ու, Թեպետ նրան հաջողվել էր այնտեղից ազատվել, բայց ես գիտեի, որ այս կարգի մի կրկնություն չափազանց մեծ վտանգների հետ է կապված։ Ուզում էի նրան հաղորդել իմ մտավախությունը, բայց երկյուղում էի չափից դուրս վհատեցնել նրան։ Ես դողում էի նրա համար, չհամարձակվելով զգուշացնել նրան սպառնացող վտանգի մասին։ Հառաչելով գրկում էի նրան՝ գոնե հավաստիացնելու համար իմ սերը, միակ զգացումը, որ ես համարձակվում էի արտահայտել։

— Մանոն,— ասում էի ես նրան,— անկեղծ ասա, մի՞շտ պիտի սիրեք ինձ։

Նա պատասխանեց, որ ինքը չափազանց անբախտ է համարում իրեն, որ ես կասկածում եմ այդ մասին։

— Լավ,— ավելացրի ես,— այլևս չեմ կասկածում և վրատհությամբ արհամարհում եմ բոլոր վտանգներն ու չեմ վախենում մեր Թշնամիներից։ Ես կդիմեմ իմ ընտանիքի աջակցությանը, որպեսզի դուրս գամ Շաթելեից և իմ բոլոր ար-

յունը ոչ մի արժեք չպիտի ունենա, եթե անմիջապես չփրկեմ քեզ, երբ ինքս ազատվեմ բանտարկությունից։

Մենք հասանք բանտ։ Մեզ տեղավորեցին առանձին խցերում։ Այս հարվածն ինձ բոլորովին շշմեցրեց, որովհետև ես նախատեսել էի այն։ Բարապանին հանձնարարեցի հոգ տանել Մանոնի համար, հասկացնելով նրան, որ ես բարձր դիրքի մարդ եմ, և խոստանալով մեծ վարձատրություն։ Ես գերեցի իմ անգին սիրուհուն նախքան նրանից անջատվելը, թախանձելով չտիրից դուրս չվազանալ և ոչ մի բանից չվախենալ, քանի դեռ ես կենդանի եմ։ Մոտս բավականաչափ դրամ ունեի. մի մասը Մանոնին տվեցի, իսկ մնացածից մի մեծ գումար, ավելի քան մեր ամսական ծախսը, նախապես վճարեցի բարապանին՝ ինձ և Մանոնին սպասարկելու համար։

Իմ դրամը մեծ ազդեցություն գործեց։ Ինձ մի մաքուր սենյակ հատկացրին և հավատացրին, որ Մանոնին էլ նույնպիսի սենյակում են տեղավորել։ Ես անմիջապես սկսեցի խորհել, թե ինչ միջոցներով արագացնեմ իմ ազատությունը։

Պարզ է, որ իմ գործում, իրոք, ոչ մի հանցավոր արարք չկա, և անգամ եթե ենթադրենք, որ մեր գողության դիտավորությունն ապացուցվել է Մարսելի վկայությամբ, այնուամենայնիվ լավ գիտեի, որ գողության սոսկ դիտավորությունը չի պատժվում։ Ես որոշեցի մի շտապ նամակ գրել հորս, խնդրելով նրան անձամբ գալ Փարիզ։ Ինչպես ասացի, ինձ համար ավելի քիչ ամոթալի էր լինել Շաթելեում, քան Սեն-Լազարում։ Բացի այդ, թեև մեջս վառ էր մնացել հարգանքը դեպի հայրական հեղինակությունը, այնուհանդերձ, տարիների փորձառությունը զգալի չափով պակասեցրել էին իմ երիտասարդությունը։ Անմիջապես նամակը գրեցի. Շաթելեում դժվարություն չհարուցեցին այն ուղարկելու թույլտվության խնդրում։ Սակայն ես նեղություն չէի կրի այդ անելու, եթե իմանայի, որ հաջորդ օրն իսկ հայրս ժամանելու է Փարիզ։

Նա ստացել էր մի շաբաթ առաջ գրած իմ նամակը և չափազանց ուրախացել։ Սակայն, չնայած պարտաճանաչ դառնալու իմ հուսատու խոսքերին, նա երևի մտածել էր, թե սոսկ խոստումներին չի կարելի հավատ ընծայել։ Նա որոշել էր անձամբ գալ Փարիզ, համոզվելու իմ վարք ու բարքի փոփոխության և զղջման անկեղծության մեջ և ըստ այնմ վարվել ինձ հետ։ Իմ բանտարկության հաջորդ օրը նա քաղաք էր ժամանել։

Ամենից առաջ նա այցելել էր Տիբերժին, որին խնդրել էի ուղղել իր պատասխանը։ Տիբերժից նա ոչինչ չէր կարողացել իմանալ. ո՛չ իմ բնակատեղի հասցեն, ո՛չ էլ ներկա վիճակիս մասին։ Նրանից իմացել էր միայն իմ գլխավոր արկածները Սեն-Սյուլպիսից փախչելուց հետո։ Տիբերժը մեծ գոհունակությամբ էր խոսել մեր վերջին տեսակցության միջոցին իմ ցուցաբերած բարի ու ջերմեռանդ դիտավորությունների մասին։ Նա ավելացրել էր, որ իր կարծիքով ես խզել եմ բոլոր իմ կապերը Մանոնի հետ, սակայն նրան զարմացնում է այն, թե ինչու ահա ութ օր է, ինչ ես նրան ոչ մի լուր չեմ հաղորդում իմ մասին։ Հայրս միամիտ մարդ չէր։ Նա իսկույն հասկանում է, որ իմ լռությունը, որից գանգատվում էր Տիբերժը, ինչ-որ բան է թաքցնում, որը վրիպել էր բարեկամիս կորովամտությունից, և նա այնքան ճիգ է թափում իմ հետքը գտնելու համար, որ իր ժամանումից երկու օր հետո իմանում է իմ՝ Շաթելեում լինելը։

Նրա այցելությունից առաջ, որին ես բնավ չէի սպասում, ինձ մոտ եղավ ոստիկանության պետը կամ, եթե իրերն իրենց իսկական անունով կոչենք, ես ենթարկվեցի հարցաքննության։ Նա փոքր-ինչ հանդիմանեց ինձ, սակայն ոչ խիստ և ոչ էլ վիրավորական ձևով։ Մեղմաբար ասաց, որ ցավում է իմ վատ վարքի համար, և որ ես անդադար եմ վարվել՝ պարոն դը Գ. Մ.-ի պես մարդուն դարձնելով իմ թշնամին։ Նրա խոսքերից երևում էր, որ իմ գործում ավելի շատ անխոհեմություն և թեթևամտություն կա, քան չար դիտավորություն։ Սակայն, ահավասիկ երկրորդ անգամն է, որ ես ենթարկվում եմ նրա դատաստանին, մինչդեռ ինքը հուսացել է, որ Սեն-Լազարում անցկացրած երկու-երեք ամիսներն ինձ խելքի կբերեն։

Անսահման ուրախացած, որ գործ ունեմ մի ողջախոհ դատավորի հետ, ես նրան բացատրություններ տվի այնքան հարգալից ու համեստ կերպով, որ կարծես նա շատ գոհ մնաց իմ պատասխաններից։ Նա ինձ հորդորեց այնքան էլ չվշտանալ և ասաց, որ ինքը պատրաստ է ինձ որոշ ծառա-

յութիւն մատուցելու՝ ի սեր իմ տոհմի ու երիտասարդութեան։ Ես համարձակութիւն ունեցա նրա ուշադրութիւնը հրավիրել Մանոնի վիճակի վրա, գովասանքով խոսելով նրա հեզութեան ու քաղցրաբարո բնավորության մասին։ Նա ծիծաղելով ինձ պատասխանեց, որ ինքը դեռևս չի տեսել այդ աղջկան, սակայն լսել է, որ նրան շատ վտանգավոր մի անձնավորություն են համարում։ Այս խոսքերն այնպիսի մի քնքշանք առաջացրին իմ մեջ, որ ես հազար ու մի ջերմ խոսքեր ասացի խեղճ սիրուհուս պաշտպանության համար, և մինչև իսկ չկարողացա ինձ զսպել լաց լինելուց։ Նա հրամայեց նորից բանտ տանել ինձ։

— Սե՛ր, սե՛ր,— բացականչեց այս պատկառելի դատավորն իմ ետևից,— մի՞թե դու երբեք հաշտ չպիտի ապրես իմաստության հետ։

Ես անձնատուր եղա իմ տխուր մտքերին և խորհում էի ոստիկանապետի հետ ունեցած խոսակցությանս մասին, երբ լսեցի սենյակիս դռան բախումը. դա հայրս էր։ Թեպետ պետք է պատրաստ լինեի նրա այցելությանը, քանի որ ես նրան այսպես թե այնպես սպասում էի մի քանի օր հետո, այնուամենայնիվ այն աստիճան հուզվեցի, որ գետնի խորքը ինձ նետած կլինեի, եթե դա բացվեր իմ ոտքերի առաջ։ Մեծ շփոթությամբ ես գրկեցի նրան։ Նա անխոս նստեց. լուռ էի և ես։

Ես կանգնել էի նրա առջև՝ աչքերս գետին հառած, գլուխս բաց։

— Նստիր պարոն,— ասաց նա ինձ լրջորեն,— նստիր։ Շնորհիվ քո անառակ կյանքի և խարդախությունների բարձրացրած աղմուկի՝ ես իմացա քո օթևանի տեղը։ Քո արարքներն այն առավելությունն ունեն, որ անհայտ մնալ չեն կարող. դու ուղիղ ճանապարհով ես գնում դեպի համբավ։ Պետք է հուսալ, որ քո վարմունքը շուտով քեզ Դրևի հրապարակը կտանի և դու, հիրավի, կհասնես քո փառքին՝ ի սքանչացումն բոլոր ժողովրդի այնտեղ ցուցադրվելով։

Ես ոչինչ չպատասխանեցի։ Նա շարունակեց.

— Օ՜հ, որքան դժբախտ է այն հայրը, որը գորովանքով սիրել է իր որդուն և ոչ մի բան չի խնայել նրան բարեկիրթ մարդ դարձնելու և որը, ի վերջո, հանձին այդ որդու գտնում է իրեն անպատվող մի խարեբայի։ Կարելի է մխիթարվել շար բախտի պատճառած դժբախտությունից։ Ժամանակը մոռացնում է այն և վիշտը մեղմացնում. սակայն, ո՞ւր գտնել բուժիչ միջոցներ այն շարիքի դեմ, որն օրեցօր մեծանում է, մի շարիք, որպիսին առաջանում է պատվի զգացումը լիովին կորցրած արատավոր որդու անկարգություններից։ Դու լսո՞ւմ ես, թշվառական,— ավելացրեց նա։— Դիտեցեք այս կեղծ համեստությունը, այս խորամանկ հեզությունը. ասես ձեր առաջ կանգնել է իր տոհմի ամենապատվավոր ներկայացուցիչը։

Թեպետ ես ստիպված եղա ընդունել, որ մասամբ արժանի եմ այս վիրավորանքներին, այնուամենայնիվ, ինձ թվաց, որ դրանք չափից ավելի խիստ են։ Ես կարծեցի, որ ինձ թույլատրելի է անկեղծորեն և պարզ բացատրել իմ միտքը։

— Հավատացնում եմ ձեզ, պարոն,— ասացի ես,— որ իմ համեստությունը բնավ կեղծ չէ. դա բնական է և հատուկ մի ազնվատոհմիկ մարդու, որն անսահման հարգում է իր հորը և առավել ևս՝ իր զայրացած հորը։ Ես հավակնություն չունեմ ինձ համարելու մեր տոհմի ամենապատվավոր ներկայացուցիչը։ Խոստովանում եմ, որ արժանի եմ ձեր կշտամբանքին. սակայն, թախանձում եմ ձեզ, փոքր-ինչ ավելի բարի եղեք դեպի ինձ և մի վարվեք որպես բոլոր մարդկանցից ամենանվաստի հետ։ Ես արժանի չեմ այդքան դաժան խոսքերի։ Բոլոր իմ սխալների պատճառը սերն է, ձեզ հայտնի չէ դրա ուժը։ Մի՞թե ձեր արյունը, որն իմ արյան աղբյուրն է, երբեք կրքի բռնկումներ չի ունեցել։ Սերն ինձ դարձրեց չափազանց ինքուշ, չափազանց գորովալիր, առավել հավատարիմ և թերևս անչափ հաճոյակատար՝ իմ չքնաղ սիրուհու ցանկությունների հանդեպ. ահա իմ հանցանքները։ Դրանից որն է ձեզ անպատվում։ Սիրելի հայր,— ավելացրի ես քնքշագին,— մի փոքր խղճացեք ձեր որդուն, որը միշտ հարգանք ու սեր է տածել դեպի ձեզ, որը երբեք չի հրաժարվել, ինչպես դուք եք կարծում, պատվից և պարտաճանաչությունից և որը հազար անգամ արժանի է կարեկցանքի, քան դուք կարող եք երևակայել։— Այս խոսքերը ես վերջացրի արտասվաթոր։

Հայրական սիրտը բնության ստեղծագործության գլուխ-

գործոցն է. նա այնտեղ իշխում է, այսպես ասած, որպես արքա դատավոր և կառավարում է նրա բոլոր հույզերը։ Իսկ իմ հայրը, բացի այդ, լինելով խելացի ու նրբաճաշակ մարդ, այնքան զգացվեց արդարացումներիս մասին լսած խոսքերից, որ չկարողացավ թաքցնել իր տրամադրության փոփոխությունը։

— Եկ, իմ խեղճ ասպետ,— ասաց նա ինձ,— եկ, գրկիր ինձ. ես քեզ խղճում եմ։

Ես գրկեցի նրան։ Զգալով, թե ինչ ջերմությամբ է հայրս ինձ սեղմում իր կրծքին, ես կարողացա դատել, թե ինչ է կատարվում նրա սրտում։

— Սակայն, ի՞նչ միջոցների պետք է դիմել,— շարունակեց նա,— որպեսզի քեզ այստեղից ազատենք։ Պատմիր ինձ քո բոլոր գործերի մասին, առանց մի բան թաքցնելու։

Իմ արարմունքի մեջ, եթե այն համեմատենք որոշ կարգի աշխարհիկ երիտասարդների արարքների հետ, վերջին հաշվով ոչ մի այնպիսի բան չկար, որն ինձ միանգամայն անպատվեր։ Եվ քանի որ մեր դարում սիրուհի ունենալն ամոթալի բան չի համարվում, ինչպես նաև թղթախաղում ճարպկորեն բախտն իր կողմը թեքելը, ապա ես ամենայն անկեղծությամբ հորս պատմեցի իմ կյանքի բոլոր մանրամասնությունները։ Յուրաքանչյուր մեղքիս խոստովանության հետ ես օրինակ էի բերում որևէ ականավոր մարդու արարքը՝ իմ ամոթալի հանցանքը մեղմացնելու նպատակով։

— Ես ապրում եմ մի սիրուհու հետ,— ասացի հորս,— առանց ամուսնական ծիսակատարության։ Պարոն դուքս...ը ողջ Փարիզի աչքի առաջ երկու սիրուհի է պահում, իսկ պարոն Գ.-ն ահա տասը տարի է, ինչ ապրում է մի սիրուհու հետ, որին այնպիսի մի հավատարմությամբ է նվիրված, որը երբեք չի ունեցել իր կնոջ նկատմամբ։ Ֆրանսիայի ազնվատոհմիկ մարդկանց երկու-երրորդ մասը պատիվ են համարում սիրուհի ունենալը։ Ես թղթախաղում փարդախություն գործադրեցի. պարոն մարկիզ...-ի և կոմս...-ի եկամուտները նույն աղբյուրներն ունեն. պարոն իշխան...-ը և պարոն դուքս...ը ասպետախմբի նույնպիսի մի ընկերության պարագլուխներս են։

Ինչ վերաբերում է երկու Գ. Մ.-ների քսակի նկատմամբ նյութած իմ ծրագրերին, ապա ինձ դժվար չէր ապացուցել, որ այս դեպքում ես ունեցել էի օրինակներ։ Սակայն ես բոլորովին պատվազուրկ չէի, որպեսզի ի վիճակի չլինեի ինձ հետ դատապարտելու բոլոր նրանց, ովքեր օրինակ էին հանդիսացել ինձ։ Այդ պատճառով ես խնդրեցի հորս ներել սույն իմ թուլությունը, որը հետևանք էր ինձ համակած երկու բուռն կրքերի՝ վրեժխնդրության և սիրո։

Նա հարցրեց, թե արդյոք չե՞մ կարող միջոցներ նշել, որոնց շնորհիվ կարելի լինի ամենակարճ ժամանակում ազատվել, միաժամանակ և խուսափելով անցանկալի աղմուկից։ Ես նրան հաղորդեցի ոստիկանապետի դեպի ինձ տածած բարեհաճ զգացումների մասին։

— Եթե դուք դիմումներ անելիս որևէ դժվարության հանդիպեք,— ասացի ես նրան,— ապա դա միայն երկու Գ. Մ.-ները կարող են ձեզ պատճառել. ուստի և ինձ թվում է, որ անհրաժեշտ է նեղություն կրել նրանց տեսնելու։

Հայրս խոստացավ այդպես վարվել։

Ես չհամարձակվեցի խնդրել նրան միջնորդել նաև Մանոնի համար։ Այդ ես չարի ոչ թե համարձակության պակասությունից, այլ վախի ազդեցության տակ, ենթադրելով, որ այդպիսի մի առաջարկությամբ կարող եմ նրան վրդովել և որևէ կործանարար միտք ներշնչել իմ և Մանոնի նկատմամբ։ Մինչև այսօր էլ չգիտեմ, թե արդյոք այդ երկյուղը չէ՞ր իմ ամենամեծ դժբախտությունների պատճառը, մի երկյուղ, որն արգելք հանդիսացավ ինձ փորձել հորս տրամադրելու՝ հօգուտ իմ թշվառ սիրուհու և ջանալ բարենպաստ մի վերաբերմունք ներշնչել դեպի նա։

Թերևս մի անգամ էլ ինձ հաջողվեր շարժել նրա գութը։ Այսպիսով, ես նրան կնախազգուշացնեի հավատ ընծայել Գ. Մ.-ի ասածներին, որոնց տպավորության տակ նա ընկավ ամենայն դյուրությամբ։ Ով գիտե, թերևս, իմ չար բախտը խափաներ բոլոր ջանքերս և դրանք ապարդյուն դարձներ. սակայն ես, իմ դժբախտության մեջ, համենայն դեպս, կմեղադրեի միայն չար բախտս ու թշնամիներիս անգթությունը։

Ինձնից հեռանալով, հայրս գնաց այցելելու պարոն դը

Գ. Մ.-ին։ Հոր մոտ է լինում նաև երիտասարդ Գ. Մ.-ն, որին գվարդիականն աղնվաբար արձակել էր։ Ես երբեք չիմացա նրանց զրույցի մանրամասնությունները. սակայն, դժբախտաբար, հեշտությամբ կարողացա դատել այդ խոսակցության մասին՝ շնորհիվ դրա մահացու հետևանքների։ Նրանք՝ երկու հայրերը, միասին գնում են ոստիկանապետի մոտ, որից երկու բան են խնդրում. նախ՝ անմիջապես ինձ ազատ արձակել Շաթելեից. երկրորդ՝ Մանոնին ցմահ բանտարկության ենթարկել կամ արտաքսել Ամերիկա։ Հենց այդ ժամանակները սկսել էին մեծ թվով անհայտ ու կասկածելի մարդկանց Միսսիսիպի աքսորել։ Ոստիկանապետը նրանց խոստանում է առաջին իսկ մեկնող նավով Մանոնին ուղարկել Ամերիկա։

Պարոն դը Գ. Մ.-ն և հայրս իսկույն եկան ինձ մոտ՝ հաղորդելու իմ ազատության լուրը։ Պարոն դը Գ. Մ.-ն քաղաքավարությամբ խնդրեց անցյալի վիրավորանքները մոռանալ, ինձ շնորհավորեց այդպիսի մի հայր ունենալուս համար և հորդորեց օգտվել նրա խրատներից և օրինակից։ Հայրս ինձ հրամայեց ներողություն խնդրել Գ. Մ.-ից այն կարծեցյալ վիրավորանքի համար, որ ես իբր թե պատճառել եմ նրա ընտանիքին, և շնորհակալություն հայտնել ազատությունս ձեռք բերելու գործում նրա ցույց տված աջակցության համար։

Մենք բոլորս դուրս եկանք, առանց որևէ խոսքով հիշելու Մանոնին։ Նրանց ներկայությամբ ես նույնիսկ չհամարձակվեցի նրա մասին խոսել բարապանների հետ։ Ավաղ, միևնույն է, իմ սրտահույզ խոսքերն անօգուտ պիտի մնային։ Աքսորի դաժան ու անագորույն հրամանը ստացվել էր իմ ազատության հրամանի հետ միասին։ Մի ժամ հետո այս անբախտ աղջկան տարան արգելատուն, որտեղ նա միացավ նույն վիճակին դատապարտված մի քանի թշվառ կանանց խմբին։

Հայրս ինձ ստիպեց հետևելու իրեն՝ դեպի իր իջևանատեղը, և միայն երեկոյան ժամը վեցին ինձ հաջողվեց հարմար բոպե գտնել ու հեռանալ նրա մոտից Շաթելե վերադառնալու համար։ Ես մտադիր էի միայն մի քիչ ուտելիք տանել Մանոնին և հանձնարարել նրան բարապանի խնամքին, որովհետև ոչ մի հույս չունեի, թե կարող եմ նրան անձամբ տեսնելու

թույլտվություն ստանալ։ Նույնպես և դեռ ժամանակ չէի ունեցել խորհել նրան ազատելու միջոցների մասին։ Ես խնդրեցի կանչել բարապանին։ Իմ առատաձեռնությունից ու բարի վերաբերմունքից նա շատ գոհ էր մնացել. ուստի միանգամայն պատրաստ լինելով ինձ ծառայություն մատուցել, նա Մանոնի վիճակի մասին խոսեց արդեն որպես մի կատարված դժբախտության մասին, որը մեծապես անհանգստացրել է իրեն, քանի որ դա չի կարող չվշտացնել և ինձ։ Ես գլխի չընկա, թե նա ինչ է ասում ինձ։ Մի քանի բոպե մենք զրուցում էինք առանց միմյանց հասկանալու։ Ի վերջո, երբ նա համոզվեց, որ ես ոչինչ չգիտեմ և որ անհրաժեշտ է ճիշտ տեղեկություն տալ, ինձ հաղորդեց այն, ինչ արդեն ես ձեզ պատմեցի սարսափով, և որի կրկնումը նույնպիսի սարսափ է պատճառում ինձ։

Նույնիսկ ամենաուժգին կաթվածը բնավ չի ունեցել այնպիսի մի հանկարծական ու սոսկալի ներգործություն, ինչպիսին ես ապրեցի այս լուրը լսելիս։

Սիրտս այնպես ցավագին ճմլվեց, որ երբ ես ուշաթափ վայր ընկա, կարծեցի, թե առհավետ զրկվում եմ կյանքից։ Այս միտքը դեռևս հարատևում էր իմ մեջ, երբ ուշքի եկա։ Նայեցի շուրջս, սենյակի պատերին, նայեցի և ինձ վրա, որպեսզի համոզվեմ, թե արդյոք տակավին կենդանի՞ եմ։ Ճիշտն այն է, որ հետևելով սոսկ տառապանքներից ազատվելու բնական մղման, ինձ համար հուսահատության ու սարսափի այս վայրկյանին ավելի քաղցր և ցանկալի բան չկար, քան ինքը մահը։ Մինչև իսկ կրոնը չէր կարող ինձ պատկերել հանդերձյալ աշխարհում ավելի անտանելի տանջանքներ, քան այն ծանր ցնցումները, որոնք խոշտանգում էին իմ հոգին։ Այնուամենայնիվ, շնորհիվ սիրո կատարած հրաշքի, ես շուտով բավականաչափ ուժ ունեցա շնորհակալ լինելու երկնքին գիտակցությունս ու բանականությունս վերադարձնելու համար։

Մահս կարող էր օգտակար և ցանկալի լինել միմիայն ինձ համար։ Մինչդեռ իմ կյանքը պետք էր Մանոնին՝ նրան ազատելու, օգնելու և նրա վրեժն առնելու համար։

Բարապանն ինձ այնպիսի օգնություն ցույց տվեց, որը կարելի է սպասել միայն ամենամտերիմ բարեկամից։ Նրա

ծառայությունն ընդունեցի ամենաջերմ շնորհակալությամբ։

— Ավա՜ղ,— ասացի նրան,— ուրեմն իմ տառապանքները դուք այդքան մոտ եք ընդունում ձեր սրտին։ Բոլորն ինձ լքում են. անգամ հայրս մեկն է իմ ամենաանգութ հալածողներից։ Ոչ ոք ինձ չի կարեկցում. դաժանության ու բարբարոսության այս վայրում միայն դուք եք ցավակցում բոլոր մարդկանցից ամենաթշվառին։

Նա ինձ խորհուրդ տվեց փողոցում չերևալ, քանի դեռ չի մեղմել իմ հուզումը։

— Հոգ չէ, հոգ չէ,—ասացի ես դուրս գալով։— Մենք նորից միմյանց հետ կտեսնվենք և ավելի շուտ, քան դուք կարծում եք։ Պատրաստեցեք ձեր խուցերից ամենախավարը. ես կաշխատեմ արժանանալ դրան։

Հիրավի, իմ առաջին միտքը եղավ սպանել երկու Գ. Մ.-ներին և ոստիկանապետին և այնուհետև զինված հարձակում գործել արգելատան վրա՝ բոլոր այն մարդկանց օգնությամբ, որոնց կհաջողվի գրավել իմ կողմը։ Տարված իմ արդար վրեժխնդրությամբ, ես հոգս անգամ չպիտի խնայեի, որովհետև բարապանն ինձ հաղորդել էր, որ հայրս և Գ. Մ.-ն էին իմ կորստյան հեղինակները։

Սակայն, երբ ես մի քանի քայլ արեցի փողոցում, և օդը փոքր-ինչ զովացրեց արյունս և հանգստացրեց ինձ, իմ ցասումը տեղի տվեց ավելի ողջամիտ զգացումների։ Մեր թշնամիների մահը ոչ մի օգուտ չպիտի բերեր Մանոնին, մինչդեռ, անկասկած, ինձ պիտի զրկեր նրան օգնելու հնարավորությունից։ Բացի այդ, արդյոք ես ընդունա՞կ էի ստոր սպանության դիմելու։ Ուրիշ ի՞նչ ուղի կարող էի ընտրել իմ վրեժխնդրության համար։ Ես բոլոր ուժերս ու արիությունս հավաքեցի, որպեսզի նախ ջանամ ազատել Մանոնին և միայն այս կարևոր ձեռնարկության հաջողությունից հետո մտածել հետագա քայլերի մասին։

Մոտս քիչ դրամ կար։ Այնինչ, ամեն բանի անհրաժեշտ հիմքը դա էր, որից և պետք էր սկսել։ Ես միայն երեք անձնավորություն գիտեի, որոնք կարող էին ինձ դրամական օգնություն ցույց տալ. պարոն դը Տ.-ն, հայրս և Տիբերժը։ Քիչ հավանականություն կար որևէ բան ստանալ վերջին երկուսից. իսկ ես ամաչում էի նորից առաջինին դիմել բաղմիցս կրկնված մի այսպիսի խնդրանքով։ Սակայն հուսահատությունը հարկադրում է մարդուս խեղդել պատվասիրության ամեն զգացում։ Ես անմիջապես ուղևորվեցի դեպի Սեն-Սյուլպիսի սեմինարիան, առանց վախենալու, որ այնտեղ ինձ կարող են ճանաչել։ Ես դուրս կանչեցի Տիբերժին։ Նրա առաջին խոսքերից հասկացա, որ նա տակավին տեղյակ չէ իմ վերջին արկածների մասին։ Այս հանգամանքը ստիպեց փոխել իմ դիտավորությունը՝ շարժել նրա կարեկցանքը դեպի ինձ։ Ես նրա հետ խոսեցի ընդհանրապես հորս տեսնելու իմ ուրախության մասին և հետո խնդրեցի փոխարինաբար մի փոքր գումար տալ ինձ, պատրվակ բերելով, թե Փարիզից մեկնելուց առաջ ես ուզում եմ հատուցել մի քանի պարտքեր, որոնք ցանկալի էր, որ անհայտ մնային։ Նա իսկույն եթե իմ տրամադրության տակ դրեց իր քսակը։ Ես այնտեղ եղած վեց հարյուր ֆրանկից վերցրի հինգ հարյուրը։ Առաջարկեցի ստացական. նա չափազանց վեհանձն գտնվեց այն չընդունելու համար։

Այնտեղից ես գնացի պարոն դը Տ.-ի մոտ։ Նրանից ես ոչինչ չթաքցրի։ Պատմեցի նրան իմ դժբախտությունների և տանջանքների մասին. սակայն նա արդեն տեղյակ էր իմ պատմության ամենաչնչին հանգամանքներին, որովհետև հետևել էր երիտասարդ Գ. Մ.-ի արկածախնդրության բոլոր դեպքերին։ Այնուամենայնիվ, նա լսեց իմ պատմածը և շատ կարեկցեց։ Իսկ երբ նրանից խորհուրդ հարցրի Մանոնին ազատելու միջոցների մասին, նա տխրությամբ պատասխանեց, որ ոչ մի ելք չի տեսնում և որ պետք է հրաժարվել այդ մտքից, եթե միայն երկինքը չօգնի մի արտասովոր ու անըսպասելի եղանակով։ Նա ավելացրեց, որ ինքը դիտմամբ արգելատուն է գնացել Մանոնի բանտարկությունից հետո, սակայն մինչև իսկ իրեն թույլ չեն տվել նրան տեսնելու, որովհետև ոստիկանապետի հրամանն այդ մասին չափազանց խիստ է. բացի այդ՝ ի լրումն բոլոր դժբախտությունների՝ այն ողորմելի խմբակը, որին միացրել են Մանոնին, երրորդ օրը պիտի մեկնի։

Ես այն աստիճան ընկճված էի նրա պատասխանից, որ

նա կարող էր ժամերով խոսել, և ես ի վիճակի չլինեի ընդհատել նրան։ Նա շարունակեց պատմել, թե ինքը չի եկել ինձ Շաթելեռում տեսնելու, որպեսզի հարկ եղած դեպքում ավելի դյուրությամբ կարողանա ծառայություն մատուցել, եթե ոչ ոք չկասկածի մեր բարեկամությանը։ Նա ասաց, որ մի քանի ժամ հետո, իմանալով իմ ազատության լուրը, նա շատ է ցավել տեղս չիմանալու համար, որովհետև ցանկացել է շուտափույթ տեսնել, տալ ինձ միակ խորհուրդը, որից, թերևս, կարելի լինի որևէ փոփոխություն ակնկալել Մանոնի համար։ Սակայն այդ խորհուրդը վերին աստիճանի վտանգավոր է, ուստի նա խնդրում է ինձ հավիտյանս գաղտնի պահել, որ ինքն է դրա հեղինակը։ Նա խորհուրդ է տալիս գտնել մի քանի խիզախ մարդիկ, որոնք արիություն ունենան հարձակվելու Մանոնի պահակների վրա, երբ սրանք Փարիզից դուրս կգան արտաքսվող աղջիկների հետ։

Նա ժամանակ չտվեց խոսելու իմ փող չունենալու մասին և, մեկնելով ինձ դրամապանակը, ասաց.

— Ահա հարյուր պիստոլ, որոնք կարող են ձեզ որոշ օգնություն ցույց տալ. ինձ կվերադարձնեք այդ գումարը, երբ բախտը կհարթի ձեր գործերը։

Նա ավելացրեց, որ եթե իր բարեհամբավի մատահոգությունը թույլ տար իրեն անձամբ ձեռնարկել սիրուհու ազատությունը, ապա իմ տրամադրության տակ կդներ իր բազուկն ու սուսերը։

Նրա բացառիկ մեծահոգությունն արտասվելու չափ հուզեց ինձ։ Ես իմ երախտագիտությունը հայտնեցի նրան այնպիսի մի ջերմությամբ, որը թույլ էր տալիս իմ վիշտը։ Ես նրան հարցրի, թե չկա՞ արդյոք որևէ հույս՝ միջնորդել ոստիկանության պետի առաջ։ Նա պատասխանեց, որ ինքն արդեն մտածել է այդ մասին, սակայն այս ուղին նրան անհուսալի է թվում, որովհետև չի կարելի դիմել առանց լուրջ հիմունքի այդպիսի մի միջնորդության, և ինքը չգիտե, թե ինչպես պետք է հիմնավորել նման մի խնդրանք, եթե հայցելու լինի ականավոր ու հզոր մի անձի միջնորդությունը։ Եթե այս ճանապարհով կարելի լինի որևէ բան ձեռք բերել, ապա դա պետք է անել միայն այն դեպքում, եթե հաջողվի

ստիպել պարոն Գ. Մ.-ին և իմ հորը՝ փոխելու իրենց որոշումն ու համոզել նրանց, որ իրենք դիմեն ոստիկանապետին, խնդրելով նրան դատավճռի վերացումը։ Նա խոստացավ ամեն մի ջանք գործ դնել՝ հօգուտ մեզ տրամադրելու երիտասարդ Գ. Մ.-ին, թեպետ իրեն թվում է, թե այս վերջինս կասկածելով, որ ինքը որոշ մասնակցություն է ունեցել մեր գործում, փոքր-ինչ սառել է իր նկատմամբ։ Այնուհետև պարոն դը Տ.-ն ինձ հորդորեց ոչ մի բանի առաջ կանգ չառնել հորս սիրտը մեղմացնելու համար։

Սակայն այս պատվերն այնքան էլ հեշտ չէր ինձ համար։ Ես աչքի առաջ ունեի ոչ միայն հորս համառությունը հաղթահարելու միանգամայն բնական դժվարությունը, այլ նաև մի ուրիշ հանգամանք, որն ստիպում էր ինձ վախենալ նրան դիմելուց. ես նրա բնակարանը թողել էի հակառակ իր հրամանի ու նրանից թաքուն, և հիմա լսելով Մանոնի տխուր վիճակի մասին, հաստատապես որոշել էի այլևս չվերադառնալ այնտեղ։ Ես հիմք ունեի եզրակացնելու, որ նա կարող է, հակառակ իմ կամքի, ինձ տանը պահել և, թերևս, բռնի իր հետ գավառ տանել։ Իմ անդրանիկ եղբայրը մի անգամ անցյալում արդեն այդպես վարվել էր ինձ հետ։ Ճիշտ է, այժմ ես ավելի հասուն էի, բայց տարիքը թույլ պատճառաբանություն է ուժի դեմ։ Այնուամենայնիվ, ես գտա մի այլ ուղի, որն ինձ ազատում էր վտանգից. ես մտածում էի ուրիշի անվան տակ հորս կանչել որևէ հասարակական վայր և այնտեղ հայտնվել նրան։ Ես անմիջապես կանգ առա այս որոշման վրա։ Պարոն դը Տ.-ն գնաց Գ. Մ.-ի մոտ, իսկ ես դիմեցի գնալի Լյուքսեմբուրգյան այգի, որտեղից մարդ ուղարկեցի հորս հայտնելու, որ մի աղնվական խոնարհաբար սպասում է նրան այգում։ Ես երկյուղում էի, թե նա չի կամենա նեղություն կրել գալու, որովհետև օրն արդեն մթնում էր։ Սակայն մի քիչ անց նա եկավ մի սպասավորի ուղեկցությամբ։ Ես նրան խնդրեցի առանձնանալ ծառուղիում, ուր կարող էինք երես առ երես խոսել։ Մոտ հարյուր քայլ առաջ գնացինք, առանց մի բառ անգամ արտասանելու։ Նա, իհարկե, հասկանում էր, որ այսքան զգուշություն ձեռք է առնվում անկասկած մի որևէ կարևոր մտադրության համար։ Նա սպասում

էր իմ խոսքերին, իսկ ես կշռադատում էի դրանք։ Վերջապես խոսեցի։

— Պարոն,— ասացի դողդողալով,— դուք բարի հայր եք, դուք առատորեն շնորհներ եք տվել ինձ և բազմիցս ներել իմ անթիվ սխալները. ուստի, երկինքը վկա, ես դեպի ձեզ տածում եմ բոլոր այն զգացմունքները, որոնք վայել են ամենաքնքուշ և ամենահարգելի որդուն։ Սակայն, ինձ թվում է, թե... ձեր խստասրտությունը...

— Լավ, հետո, իմ խստասրտությունն ի՞նչ,— ընդհատեց հայրս, անշուշտ գտնելով, որ ես իր ցուցաբերած անհամբերության համար չափազանց դանդաղ եմ խոսում։

— Ա՜խ, պարոն,— շարունակեցի ես,— ինձ թվում է, թե ձեր խստասրտությունը, որը պատճառ եղավ դժբախտ Մանոնի անարգար դատապարտին, չափազանց դաժան է։ Դուք հավատ եք ընծայել պարոն Գ. Մ.-ի հերյուրանքին։ Դրդված ատելությունից, նա ձեզ ամենամռայլ գույներով է պատկերացրել նրան։ Դուք նրա մասին սոսկալի վատ կարծիք եք կազմել։ Մինչդեռ Մանոնը ամենաքնքուշ և ամենադուրեկան արարածն է, որ երբևէ ստեղծվել է աշխարհում։ Օ՜, ինչո՞ւ երկինքը չբարեհաճեց գեթ մի ակնթարթ սիրուհուս տեսնելու ցանկություն ներշնչել ձեզ։ Որքան ես համոզված եմ, որ նա մի չքնաղ ու հմայիչ աղջիկ է, նույնքան և հավատացած եմ, որ դուք ևս նրան այդպիսին կգտնեք և, անկասկած հօդուտ նրա կտրամադրվեք։ Դուք կարհամարհեք Գ. Մ.-ի սև խարդավանքները. կարեկցությամբ կհամակվեք դեպի ինձ և նա։ Այո, ես վստահ եմ դրանում։ Ձեր սիրտը անզգա չէ, ի տես նրա դրավչության դուք չեք կարող անտարբեր մնալ։

Հայրս կրկին ընդհատեց ինձ, տեսնելով, որ ես խոսում եմ այնպիսի մի եռանդով, որն ինձ թույլ չի տա շուտով վերջացնելու։ Նա կամեցավ իմանալ, թե որն է իմ ոգեշունչ խոսքերի բուն նպատակը։

— Կյանք եմ հայցում ձեզնից,— պատասխանեցի նրան,— կյանք, որից ես իսկույն կզրկվեմ, եթե Մանոնը մեկնի Ամերիկա։

— Ոչ, ոչ,— ասաց նա խստությամբ,— ես գերադասում եմ քեզ տեսնել մեռած, քան՝ պատվազուրկ ու խելակորույս։

— Այդ դեպքում հեռու չգնանք,— գոչեցի ես, բռնելով նրա ձեռքը,— զրկեցեք ինձ կյանքից, զրկեցեք այս ատելի ու անտանելի կյանքից։ Որովհետև դուք ինձ այնպիսի մի վհատության մեջ եք նետում, որ մահը մի շնորհ է ինձ համար. հայրական ձեռքին արժանի մի շնորհ։

— Ես քեզ շնորհում եմ այն, ինչին արժանի ես,— պատասխանեց նա,— ես բազմաթիվ հայրեր գիտեմ, որոնք այսքան երկար չէին սպասի քո դահիճը լինելու համար։ Սակայն իմ անսահման բարեսրտությունը կործանեց քեզ։

Ես ծունկ չոքեցի նրա առաջ։

— Օ՜, եթե ձեր սրտում գեթ մի փոքր բարություն կա դեպի ինձ,— ասացի ես, համբուրելով նրա ծնկները,— անողոք մի լինեք իմ արցունքների հանդեպ։ Մտածեցեք, որ ես ձեր որդին եմ։ Ավա՜ղ, հիշեցեք իմ մորը։ Դուք այնպիսի քնքշանքով էիք սիրում նրան։ Մի՞թե կարող էիք հանդուրժել, որ նրան խլեն ձեր ձեռքից։ Դուք մինչև ձեր վերջին շունչը կպաշտպանեիք նրան. և մի՞թե կարծում եք, թե ուրիշը չի կարող ձեր սրտի նման սիրտ ունենալ։ Մի՞թե մարդ կարող է այսքան բարբարոս լինել, երբ ինքը գեթ մի անգամ զգացել է իսկական քնքշությունն ու վիշտը։

— Մի խոսիր մորդ մասին,— ասաց նա ցասկոտ ձայնով,— նրա հիշատակը բորբոքում է իմ զայրույթը։ Քո անառակությունները վշտից կմահացնեին նրան, եթե կենդանի մնար և տեսներ դրանք։ Վերջ դնենք մեր խոսակցությանը,— ավելացրեց նա,— դա անհաճո է ինձ և չի կարող ստիպել՝ փոխելու իմ որոշումը։ Ես տուն եմ վերադառնում և քեզ էլ հրամայում եմ հետևել ինձ։

Այն շոր ու հատու շեշտը, որով նա արձակեց այս հրամանը, ինձ համոզեց, որ նրա սիրտն անդրդվելի է։ Ես մի քայլ հեռացա նրանից, վախենալով, թե, թերևս, նա կփորձի իր իսկ ձեռքերով բռնել ինձ։

— Մի խորացնեք իմ վհատությունը,— ասացի ես,— հարկադրելով ինձ չհնազանդվել ձեզ։ Ես չեմ կարող հետևել ձեզ։ Ինձ համար նաև անհնարին է ապրել դեպի ինձ ցուցաբերած ձեր քարսրտությունից հետո։ Ուստի առհավետ հրաժեշտ եմ տալիս ձեզ։ Իմ մահը, որի մասին շուտով կլսեք,— ավելաց-

դի ես տրամաբանում,— թերևս վերջին հայրական զգացումներ արթնացնի ձեր մեջ։ Երբ ես շրջվեցի, որ հեռանամ նրանից, նա զայրույթով գոչեց.

— Ուրեմն դու չե՞ս կամենում հետևել ինձ. ինչ արած, գնա դեպի քո կործանումը։ Գնաս բարով, ապերախտ և ըմբոստ որդի։

— Մնաք բարով,— ասացի ես մոլեգին,— մնաք բարով, ամարդ ու բարբարոս հայր։

Ես անմիջապես դուրս եկա Լյուքսեմբուրգյան այգուց։ Խելագարի պես փողոցներում թափառելով հասա պարոն դը Տ.-ի տունը։ Քայլելիս ես աչքերս ու ձեռքերս վեր էի բարձրացնում, դիմելով երկնային զորության օգնությանը։ «Օ՜, երկինք,— ասում էի ես,— մի՞թե դու էլ այնքան անողորմ ես, որքան մարդիկ։ Քեզանից բացի, ուրիշ ոչ ոքից ես օգնություն չեմ ակնկալում»։

Պարոն դը Տ-ն տակավին չէր վերադարձել տուն։ Սակայն մի քանի րոպե անց եկավ։ Նրա բանակցությունը ևս ոչ մի հաջողություն չէր ունեցել։ Այդ մասին նա վշտահար դեմքով պատմեց ինձ։ Երիտասարդ Գ. Մ.-ն թեպետ հորից սակավ չէր չարացած Մանոնի և իմ դեմ, այնուամենայնիվ, չէր կամեցել հանձն առնել հոր առաջ մեր մասին բարի միջամտություն անելու հոգսը։ Նա չէր համաձայնել մեզ պաշտպանել, որովհետև ինքը ևս վախենում էր վրեժխնդիր ծերուկից, որն առանց այդ էլ սաստիկ բարկացած էր որդու վրա, հանդիմանելով նրան Մանոնի հետ սիրային կապեր հաստատելու դիտավորություն ունենալու մեջ։

Ինձ մնում էր միայն գնալ բոնի ուժի ճանապարհով, որի ծրագիրն ուրվագծել էր պարոն դը Տ.-ն։ Իմ ամբողջ հույսը դա էր։

— Զարմանալի անորոշ ու կասկածելի է այդ ուղին,— ասացի ես պարոն դը Տ.-ին,— սակայն ամենահաստատ և ամենամխիթարական հույսն ինձ համար՝ պայքարում կործանվելն է։

Ես հեռացա պարոն դը Տ.-ից, խնդրելով, որ նա իր բարեմաղթություններով նպաստի իմ հաջողությանը։

Սկսեցի մտածել միայն այն մասին, թե ո՞րտեղից ընկերներ գտնեմ, որոնց կարողանայի գեթ մի կայծ ներշնչել իմ անվեհերությունից ու վճռականությունից։ Ամենից առաջ իմ մտքով անցավ հենց այն գվարդիականը, որին հանձնարարել էի ձերբակալել Գ. Մ.-ին։ Ի դեպ, ես մտադիր էի նրա մոտ անցկացնել և գիշերը, որովհետև օրվա ընթացքում բնավ ազատ ժամանակ չէի ունեցել բնակարան ճարելու մասին մտածելու։ Ես նրան գտա տանը միայնակ։ Նա իր ուրախությունը հայտնեց Շաթելեից ազատվելուս առթիվ և ամենայն սիրալիրությամբ առաջարկեց ինձ իր ծառայությունը։ Ես նրան բացատրեցի, թե ինչպիսի ծառայություն պետք է ինձ մատուցի։ Նա բավական բանիմաց մարդ էր, որպեսզի իսկույն գլխի ընկներ այդ ձեռնարկության դժվարությունների մասին։ Սակայն նա նույնպես բավական մեծահոգի էր որպեսզի համաձայներ ձեռնարկել՝ հաղթահարելու այդ դժվարությունները։

Գիշերվա մի մասն անցկացրինք խորհելով ու կշռադատելով իմ ծրագիրը։ Նա ինձ հետ խոսեց այն երեք գվարդիական զինվորների մասին, ներկայացնելով նրանց իբրև փորձված կտրիճների, որոնք օգնել էին նրան Գ. Մ.-ի ձերբակալության միջոցին։ Պարոն դը Տ.-ն ինձ ճշտիվ տեղեկացրել էր Մանոնին ուղեկցող պահակների թվի մասին, որոնք ընդամենը վեց հոգի էին։ Հինգ խիզախ ու վճռական մարդիկ բավական էին երկյուղ ազդելու այդ թշվառականներին, որոնք անընդունակ են ազնվաբար պաշտպանելու իրեն, երբ կարող են ստոր վախկոտությամբ խուսափել կռվի վտանգներից։

Քանի որ դրամի պակասություն չունեի, գվարդիականն ինձ խորհուրդ տվեց ոչինչ չխնայել մեր հարձակման հաջողությունն ապահովելու համար։

— Մեզ հարկավոր են,— ասաց նա,— ձիեր, ատրճանակներ և ամեն մեկիս մի-մի մուշկետ։ Ես հանձն եմ առնում այդ բոլորը պատրաստել վաղվա համար։ Բացի այդ, անհրաժեշտ է երեք ձեռք քաղաքացիական հագուստ մեր զինվորների համար, որովհետև նրանք չեն համարձակվի այս կարգի գործում երևալ զորագնդի համազգեստով։

— Պարոն դը Տ.-ից ստացած հարյուր պիստոլը ես տվի-

ցի նրան։ Հաջորդ օրն այդ բոլոր դրամը մինչև վերջին սուն ծախսվեց։ Երեք զինվորներին զորադեմի հրավիրեցի ու մեծամեծ խոստումներով ոգևորեցի. և որպեսզի նրանց անվրստահությունը փարատեմ, ամենից առաջ նրանց նվիրեցի տաս-տաս պիաստր։

Երբ հասավ ծրագիրն իրագործելու օրը, վաղ առավոտյան զինվորներից մեկին ուղարկեցի արգելատուն, անձամբ իմանալու, թե պահակները երբ պիտի ճանապարհ ընկնեն իրենց զոհերի հետ։ Թնպետ ես մտատանջությունից ու նախատեսությունից դրդված դիմել էի այս զգուշությանը, այնուամենայնիվ, պարզվեց, որ դա միանգամայն անհրաժեշտ էր։ Ես հավատ էի ընծայել այն մի քանի սխալ տեղեկություններին, որ ինձ տվել էին նրանց երկաթուղու վերաբերյալ և, համոզված լինելով, որ այն ողորմելի խմբակը Լա-Ռոշելում նավ պիտի նստեցնեն, ես իզուր նրանց պիտի սպասեի Օռլեանի ճանապարհին։ Այնինչ, գվարդիական զինվորի ձեռք բերած տեղեկությունից իմացա, որ խմբակը Նորմանդիայի ճանապարհը պիտի բռնի և Հավր-դե-Կրասում նավ նստի Ամերիկա մեկնելու համար։

Մենք անմիջապես ուղղվեցինք դեպի Սեն-Օնորեի դռները. զգուշության համար ցրվեցինք և գնացինք տարբեր փողոցներով, իսկ քաղաքի արվարձանի ծայրում վերստին միացանք։ Կայտառ ու ժիր առաջ էին ընթանում մեր ձիերը։ Շուտով երևացին վեց պահակներն ու այն երկու փղճուկ սայլակները, որոնց դուք պատահեցիք Պասսիում սրանից երկու տարի առաջ։ Սույն տեսարանը քիչ մնաց ինձ զրկեր ուժից ու գիտակցությունից։ «Օ՜, ճակատագիր,— բացականչեցի ես,— դաժան ճակատագիր, գեթ այժմ ինձ շնորհիր մահ կամ հաղթանակ»։

Մի բոպե մենք խորհրդակցեցինք հարձակման եղանակի մասին։ Հազիվ միայն չորս հարյուր քայլի վրա պահակները գնում էին մեր առաջից, և մենք կկարողանայինք կտրել նրանց ճանապարհը, սրընթաց անցնելով մի փոքրիկ դաշտ լայնքով, որի շուրջը պատվում էր մեծ ճամփան։ Գվարդիականը համամիտ էր հենց այս եղանակին, որպեսզի անսպասելիորեն հարձակվելով պահակների վրա, հանկարծակիի բերենք նրանց։ Ես իմ համաձայնությունը տվի՝ նրա ծրագրին և առաջինը ինքս խթանեցի ձիս։ Սակայն ճակատագիրն անողորմաբար մերժեց իմ ազերսանքները։

Երբ պահակները տեսան, թե ինչպես են հինգ ձիավորներ իրենց վրա սլանում, բնավ չկասկածեցին, որ դա հարձակման նպատակով է։ Նրանք վճռական կերպով պատրաստվեցին պաշտպանության՝ սվիններն ու հրացանները ձեռներին։

Կռվի այս պատրաստակամությունը, որ միանգամայն ոգևորեց ինձ ու գվարդիականին, հանկարծ արիությունից զրկեց մեր երեք վախկոտ ընկերներին։ Նրանք երեքն էլ միաժամանակ կանգ առան, ասես նախապես արված համաձայնությամբ և, միմյանց հետ փոխանակելով մի քանի խոսք, որ ես չկարողացա լսել, ձիերի գլուխները շրջեցին և սարշավ ընթացան Փարիզի ուղղությամբ։

— Աստվա՜ծ իմ,— բացականչեց գվարդիականը, որը կարծես ինձնից պակաս շփոթված չէր այս խայտառակ փախուստից,— ի՞նչ ենք անելու հիմա, միայն երկուսս մնացինք։

Զայրույթից ու զարմանքից ես կորցրի ձայնս։ Կանգ առա՝ չիմանալով անելիքս և մտածելով, թե արդյոք չպե՞տք է իմ վրեժխնդրությունն առաջին հերթին ուղղել այն վախկոտների դեմ, որոնք լքում էին ինձ։ Ես դիտում էի նրանց փախուստը և մյուս կողմից հայացքս ուղղում դեպի պահակները։ Եթե կարողանայի երկու կտոր լինել, ապա միաժամանակ կհարձակվեի իմ ցասման այս երկու առարկաների վրա, որոնց խժռում էի աչքերովս։

Գվարդիականը, որը անվճռականությանս մասին դատում էր իմ շվարած ու թափառուն հայացքից, խնդրեց ինձ ունկնդրել իր խորհրդին։

— Անմտություն է,— ասաց նա,— երկուսով հարձակվել վեց մարդու վրա, որոնք մեզնից վատ չեն զինված և, ըստ երևույթին, պատրաստ են անվեհերությամբ դիմադրելու։ Պետք է Փարիզ վերադառնալ և ջանալ ավելի արիասիրտ ընկերներ ընտրել։ Պահակներն իրենց երկու ծանր սայլակներով չեն կարող մեծ տարածություն կտրել, և մենք վաղը առանց դժվարության կհասնենք նրանց։

Մի բոպե ես միտք արի այս առաջարկության վրա, սակայն ամեն կողմից միայն հուսահատության պատճառներ տեսնելով, իրոք հուսահատական մի որոշում կայացրի, այն է՝ շնորհակալություն հայտնել իմ հավատարիմ ընկերոջը իր ծառայության համար, և թողնելով պահակների վրա հարձակվելու միտքը, որոշեցի գնալ նրանցից խոնարհաբար խնդրել՝ ինձ իրենց խմբակում ընդունել և թույլ տալ Մանոնին մինչև Հավր-դե-Կրաս ուղեկցելու ու այնտեղից նրա հետ գնալու անդրօվկիանոսյան երկիրը։

— Բոլորն ինձ հալածում են կամ դավաճանում,— ասացի գվարդիականին.— այլևս ոչ մի հիմք չունեմ հավատ ընծայելու որևէ մեկին. ես ոչինչ չեմ սպասում ո՛չ ճակատագրից ո՛չ էլ մարդկանց օգնությունից. իմ տանջանքների բաժակը լցվել է. ինձ մնում է միայն համակերպվել իմ վիճակին. ուստի և այլևս ոչ մի հույս չունեմ։ Թող երկինքը վարձատրի ձեր մեծահոգությունը։ Մնաք բարով։ Ես գնում եմ օգնելու իմ շար բախտին՝ ավարտել իմ կործանումը, հոժարակամ ընդառաջելով նրան։

Նա ապարդյուն ջանաց համոզել ինձ Փարիզ վերադառնալու։ Ես նրան խնդրեցի թույլ տալ ինձ հետևել իմ որոշումներին և շուտով հեռանալ ինձնից, որովհետև վախենում էի, թե պահակները կարող են կարծել, որ մենք տակավին մտադիր ենք հարձակվել իրենց վրա։

Ես շարժվեցի նրանց կողմը, մեն-մենակ, դանդաղ ձիս քշելով և այնպիսի մի ընկճված դեմքով, որ իմ մոտեցումը ոչ մի ահ կամ կասկած չէր կարող ներշնչել նրանց։ Այնուամենայնիվ, նրանք իրենց պաշտպանողական դիրքը պահեցին։

— Հանգստացեք, պարոններ,— ասացի մոտենալով նրանց,— ես մտադիր չեմ ձեզ վրա հարձակվելու. գալիս եմ ձեզնից մի շնորհ հայցելու։ Ես խնդրեցի նրանց առանց կասկածանքի շարունակել իրենց ճամփան և ճանապարհին հայտնեցի, թե ինչպիսի շնորհ եմ սպասում նրանցից։

Նրանք խորհրդակցեցին միմյանց հետ, որոշելու համար, թե ինչպես պիտի ընդունեն իմ առաջարկությունը։ Խմբի ավագը բոլորի անունից խոսեց ինձ հետ։ Նա ասաց, որ թեպետ իրենց շատ խստիվ հրամայված է աչալուրջ հսկել կանավորներին, այնուհանդերձ, նա ինձ համարում է դեղեցկադեմ ու դուրեկան մի երիտասարդ և դրա համար էլ ինքը և իր ընկերները պատրաստ են փոքր-ինչ շեղվել իրենց պարտականությունից. սակայն ես պիտի հասկանամ, որ սա ինձ բոլորովին ձրի չի տրվում։ Իմ քսակում մնացել էր մոտավորապես տասնհինգ պիստոլ. ես անկեղծորեն ասացի նրանց, թե որքան է իմ ամբողջ կարողությունը։

— Լավ,— պատասխանեց պահակը,— մենք բարեխղճորեն կօգտագործենք ձեր կարողությունը։ Մի ժամվա զրույցն այս աղջիկներից յուրաքանչյուրի հետ, ըստ ձեր ընտրության, կարժենա մի էկյու. սա Փարիզի սովորական գինն է։

Ես նրանց հետ դիտմամբ չէի խոսել Մանոնի մասին, որովհետև չէի կամենում, որ նրանք իմանան իմ սիրո մասին։ Նրանք նախ կարծել էին, թե իմ ցանկությունը սոսկ երիտասարդ մի տղամարդու քմահաճույք է, որը դրդում է ինձ զվարճալի ժամանց փնտրել այս կարգի աղջիկների հետ. սակայն հենց որ գլխի ընկան իմ սիրո մասին, այն աստիճան իրենց մատուցած ծառայության գինը բարձրացրին, որ երբ մենք դուրս եկանք Մանտ քաղաքից, ուր գիշերել էինք Պասսի հասնելուց առաջ, իմ քսակն արդեն դատարկվել էր։

Պատմե՞մ արդյոք ճանապարհին Մանոնի հետ ունեցած իմ տխուր զրույցի կամ՝ այն տպավորության մասին, որ թողեց նրա կերպարանքը, երբ ես պահակներից թույլտվություն ստացա նրա սայլակին մոտենալու։

Օ՜հ, խոսքերը չնչին չափով միայն կարող են արտահայտել սրտի զգացումները։ Երևակայեցեք իմ խեղճ սիրուհուն մեջքից շղթայված, նստած մի կապ ծղոտի վրա, գլուխը հոգեառնչ հենած սայլակի կողքին, երեսը գունատ ու ողողված արցունքների վտակներով, որոնք հոսում էին նրա արտանունքների արանքից, թեև աչքերը շարունակ փակ էին։ Մինչև իսկ հետաքրքրությունը չէր ստիպել նրան բանալու աչքերը, երբ լսել էր հարձակումից երկյուղած պահակների աղմկալի պատրաստությունները։ Նրա սպիտակեղենը կեղտոտ էր ու անկանոն։ Նրբակերտ ձեռները ենթարկվել էին արևի և քամու ներգործությանը. մի խոսքով՝ նրա ամբողջ հրաշագեղ կերպարանքը, դեմքը, որը կարող էր պաշտամունքի առար-

կա լինել համայն աշխարհի համար, իրենից ներկայացնում էր անկարգության ու լքվածության մի անասելի տեսարան։

Մի քանի րոպե ես նայեցի նրան, համբաքայլ ընթանալով նրա սայլակի կողքով։ Ես այն աստիճան կորցրել էի ինձ, որ քանիցս քիչ մնաց վայր ընկնեի ձիուց։ Իմ հառաչանքներն ու անվերջ բացականչություններն, ի վերջո, գրավեցին նրա ուշադրությունը, և նա նայեց իմ կողմը։ Նա իսկույն ճանաչեց ինձ, և ես նկատեցի, որ նրա առաջին շարժումը եղավ փորձել դուրս գալ սայլակից ու դեպի ինձ նետվել, սակայն շղթայից կաշկանդված՝ ետ ընկավ իր նախկին տեղը։

Ես խնդրեցի պահակներին կաբեկցել և գեթ մի րոպե կանգ առնել. ազատությունից զրկված նրանք համաձայնեցին։ Ես ձիուց իջա և նստեցի Մանոնի կողքին։ Նա այն աստիճան նվազած էր և ուժասպառ, որ երկար ժամանակ չկարողացավ ո՛չ խոսել, ո՛չ էլ շարժվել։ Ես իմ արցունքներով թրջեցի նրա ձեռքերը և որովհետև ինքս նույնպես անընդունակ էի բառ անգամ արտասանելու, ապա մենք երկուսս էլ գտնվում էինք անօրինակ ու աննախընթաց մի տխուր վիճակում։ Պակաս տխուր չէին մեր խոսքերը, երբ ի վիճակի եղանք խոսելու։ Մանոնը քիչ խոսեց. կարծես ամոթն ու վիշտը աղճատել էին նրա ձայնը՝ այնպես թույլ էր այն ու դողդոջուն։ Նա շնորհակալություն հայտնեց, որ չեմ մոռացել և այժմ ուրախություն եմ պատճառում իրեն,— ավելացրեց նա հառաչանքով,— մի անգամ ևս տեսնելու և վերջին հրաժեշտը տալու։ Սակայն, երբ ես նրան վստահեցրի, որ ոչ մի բան չի կարող ինձ անջատել նրանից և որ ես պատրաստ եմ թեկուզ մինչև աշխարհի ծայրը հետևել նրան, որպեսզի զուրգուրեմ, սպասարկեմ, սիրեմ նրան և առհավետ ու անքակտելիորեն իմ շար բախտը կապեմ նրա բախտի հետ, այս խեղճ աղջիկը համակվեց այնպիսի քնքուշ ու վշտալից զգացումներով, որ ես երկյուղեցի, թե այսքան բուռն հուզումը կարող է վտանգել նրա կյանքը։ Նրա հոգու բոլոր հույզերը կարծես կուտակվել էին աչքերում, որ անթարթ հառել էր երեսիս։ Մի քանի անգամ նա սկսեց խոսել, սակայն ուժ չէր ունենում ասելիքը վերջացնելու։ Այնուամենայնիվ, նրան հաջողվեց մի քանի բառ արտասանել, որոնք արտահայտում էին իր սքանչանքը իմ

սիրո հանդեպ, քնքուշ հանդիմանանք՝ իմ ծայրահեղ սիրո համար, կասկած՝ թե իրոք ինքն այնքան երջանիկ է, որ կարողացել է ինձ այդ աստիճան կատարյալ մի սեր ներշնչել. այդ խոսքերն արտահայտում էին նաև թախանձանք, որ ես հրաժարվեմ իրեն հետևելու մտադրությունից և մի այլ տեղ որոնեմ ինձ արժանի նոր երջանկություն, որը, ինչպես նա էր ասում, ես չէի կարող ունենալ իր հետ։

Հակառակ ամենադաժան ճակատագրի, իմ երանությունը գտնում էի նրա հայացքում և այն վստահության մեջ, որ ունեի նրա սիրո նկատմամբ։ Արդարև, ես կորցրել էի այն ամենը, ինչ սովորական մարդիկ հարգում ու մեծարում են։ Սակայն ես տիրապետում էի Մանոնի սրտին, միակ բարիքը, որ մեծարում էի։ Ինչ հոգ, թե որտեղ ապրել. Եվրոպայում թե Ամերիկայում, եթե ես վստահ եմ իմ երջանկության վրա՝ սիրուհուս հետ ապրելով։ Մի՞թե ողջ աշխարհը երկու հավատարիմ սիրեկանների հայրենիքը չէ՞։ Մի՞թե նրանք միմյանց մեջ չեն տեսնում իրենց հորն ու մորը, ազգականներին ու բարեկամներին, հարստությունն ու երանությունը։

Եթե կար մի հանգամանք, որ անհանգստություն էր պատճառում ինձ, դա Մանոնին զրկանքի մեջ տեսնելու վախն էր։ Ես արդեն ինձ երևակայում էի նրա հետ մի անմշակ երկրում, ուր վայրենիներ են ապրում։

— Հավատացած եմ,— ասում էի ինքս ինձ,— որ նրանց մեջ չկա գեթ մեկն այնքան անողորմ, որքան անողորմ են Գ. Մ.-ն և իմ հայրը։ Նրանք գոնե մեզ թույլ կտան խաղաղ ապրելու։ Եթե նրանց մասին լսած պատմություններս ճիշտ են, ապա նրանք ապրում են բնության օրենքների համաձայն։ Նրանց անհայտ է թե՛ ազատության մոլուցքը, որը տիրում է Գ. Մ.-ին և թե՛ պատվի խելացնոր գաղափարը, որն ինձ դարձրեց հորս թշնամին։ Այդ վայրենիները չեն վրդովի երկու սիրեկանների, որոնք նույնպիսի պարզ կյանք պիտի վարեն, ինչպիսին իրենք են վարում։ Ուստի այս կողմից ես հանգիստ էի։

Սակայն ես խաբուսիկ երազանքներով չէի տարվում կենցաղային ամենօրյա կարիքների հանդեպ։ Ես բազմիցս զգացել էի, որ պահանջներ կան, որոնց չբավարարելն ան-

տանելի է, առանձնապես մի քնքուշ աղջկա համար, որը վարժվել է հարմարությունների ու փարթամ կյանքի։ Հուսահատությունը պատում էր ինձ, քանի որ ես զուր տեղը վատնել էի քսակումս եղած դրամը, իսկ այն աննշան գումարը, որը տակավին մնացել էր մոտս, շուտով ինձնից պիտի հափշտակվեր անզգամ պահակների կողմից։ Ես կշռադատում էի, որ մի փոքրիկ գումարով ի վիճակի կլինեմ Ամերիկայում, ուր դրամը հաղվագյուտ է, ոչ միայն միաժամանակ հոգալ մեր ամենաանհրաժեշտ և ամենաանհետաձգելի կարիքները, այլ նույնիսկ ձեռնարկել որևէ գործ՝ կայուն բնակություն հաստատելու համար։

Այս խորհրդածությունն ինձ մի միտք ներշնչեց, այն է՝ նամակ գրել Տիբերժին, որը միշտ և անհապաղ իր բարեկամական օգնության ձեռքն էր կարկառել ինձ։ Ես նրան գրեցի մեր անցած առաջին իսկ քաղաքից։ Իմ խնդիրքը հիմնավորելու համար, ես այլ պատճառների չդիմեցի, քան այն ծայրահեղ կարիքը, որն, ինչպես կանխատեսում էի, պիտի կրեի Հավր-դե-Կրասում, ուր խոստովանեցի նրան, գնում էի Մանոնին ուղեկցելու։ Ես նրանից հարյուր պիստոլ էի խնդրում։ «Ուղարկեցեք ինձ այդ գումարը Հավր փոստով,— գրում էի ես նրան— Ինչպես տեսնում եք այս վերջին անգամն է, որ ձեզ ձանձրացնում եմ իմ դիմումներով և որովհետև դժբախտությունս առհավետ հափշտակվում է ինձնից, ես չեմ կարող թողնել, որ նա հեռանա առանց փոքրիկ օժանդակության, որը փոքր-ինչ կթեթևացնի նրա անբախտ վիճակն ու իմ մահացու խոցերը։

Պահակները հենց որ իմացան իմ բուռն սիրո մասին, այն աստիճան ժպիրհ ու անամոթ դարձան, որ շարունակ կրկնապատկելով իրենց ամենաչնչին ծառայությունների արժեքը, շուտով ինձ հասցրին հետին չքավորության։ Մյուս կողմից, սերն ինձ թույլ չէր տալիս խնայելու իմ քսակը։ Առավոտից մինչև երեկո ես մնում էի Մանոնի մոտ, և ժամանակն ինձ համար այլևս հաշվվում էր ոչ թե ժամերով, այլ ամբողջ օրով։ Վերջապես իմ քսակը բոլորովին դատարկվեց, և ես ենթարկվեցի վեց անզգամների քմահաճույքին ու կոպտությանը, անզգամների, որոնք ինձ հետ անհանդուրժելի

ամբարտավանությամբ էին վարվում։ Այդ դուք տեսար Պասսիում։ Ձեր հանդիպումը մի երջանիկ ժամանակավոր հանգիստ էր, որ ինձ շնորհեց ճակատագիրը։ Ձեր կարեկցանքը դեպի տանջանքներս՝ եղավ իմ միակ երաշխիքը ձեր մեծահոգի սրտի առաջ։ Ձեր այնքան առատաձեռնորեն ցույց տրված օգնությունը թույլ տվեց ինձ հասնել Հավր, և պահակներն իրենց խոստումը կատարեցին շատ ավելի մեծ բարեխղճությամբ, քան ես սպասում էի։

Մենք ժամանեցինք Հավր։ Ամենից առաջ ես գնացի փոստ։ Տիբերժը տակավին ժամանակ չէր ունեցել պատասխանելու։ Ես տեղեկացա, թե երբ կարող էի ստանալ նրա նամակը. դա կարող էր ինձ հասնել երկու օրից հետո միայն և իմ շար բախտի տարօրինակ նախասահմանումով այնպես պատահեց, որ մեր նավը պիտի մեկներ հենց նույն օրվա առավոտը, երբ ես կարող էի ստանալ բարեկամիս նամակը։ Անզոր եմ ձեզ նկարագրելու իմ վհատությունը։

— Ի՞նչ,— բացականչեցի ես,— ճակատագիրն ինձ անգթաբար հալածում է մինչև իսկ իմ դժբախտությունների մեջ։

Մանոնը պատասխանեց.

— Ավա՜ղ, արժե՞ միթե այսպիսի մի դժբախտ կյանքի համար այդքան հոգս ու ցավ կրել։ Մեռնենք հենց Հավրում, իմ սիրելի ասպետ։ Թող մահը միանգամից վերջ դնի մեր տառապանքներին։ Հա՞րկ է մեզ գնալ մի անհայտ երկիր՝ ծանրաբեռնված այս տառապանքներով, մի երկիր, ուր, անկասկած, ծայրահեղ սարսափներ են սպասում մեզ, քանի որ իբրև պատժավայր դա է նշանակված ինձ համար։ Մեռնենք,— կրկնեց նա,— կամ գոնե սպանիր ինձ և ինքդ գնա այլ վիճակ որոնիր մի ավելի երջանիկ սիրուհու բազուկներում։

— Ոչ, ոչ,— ասացի ես նրան,— քեզ հետ դժբախտ լինելն ինձ համար նախանձի արժանի մի վիճակ է։

Նրա խոսքերն ինձ սարսափեցրին։ Հասկացա, որ նա չափազանց ընկճվել է իր ցավերից։ Ես ջանացի ավելի հանգիստ տեսք ընդունել, որպեսզի վանեմ նրանից մահվան ու վհատության այդ մռայլ մտքերը։ Որոշեցի նույն վարմունքն ունենալ և ապագայում. հետո արդեն համոզվեցի, որ ոչ մի

բան այնքան ի վիճակի չէ կնոջն արիություն ներշնչելու, որքան իր սիրած տղամարդու անվեհերությունը։

Կորցնելով Տիբերժից օգնություն ստանալու հույսը, ես ծախեցի ձիս։ Ստացած դրամը, որին ավելացավ նաև ձեր առատաձեռնությունից մնացած դրամը, մի փոքրիկ գումար կազմեց, տասնյոթ պիստոլ։ Դրանցից յոթով ես մի քանի բաներ գնեցի, որոնք անհրաժեշտ էին Մանոնի ամենաանհեռատես գեղի կարիքները հոգալու համար, իսկ մնացած տասը խնամքով պահեցի, որպես հիմք Ամերիկայում մեր ակնկալած բարեկեցության։ Առանց դժվարության, ինձ տեղ ավեցին նավում։ Այն ժամանակները երիտասարդ տղամարդկանց էին որսում, որոնք պատրաստ լինեին հոժարակամ գաղութ գնալու։ Ճանապարհածախսը և սնունդն ինձ համար ձրի էին։ Հաջորդ օրը փոստը պիտի մեկներ Փարիզ, և ես մի նամակ գրեցի Տիբերժին։ Այդ նամակը հուզիչ ու սրտառուչ էր և, անկասկած, ընդունակ ծայր աստիճան նրա զութը շարժելու, քանի որ այդ դրդեց նրան կայացնելու մի որոշում, որը կարող էր առաջ գալ մի դժբախտ բարեկամի հանդեպ ունեցած անսահման քնքշությունից ու մեծահոգությունից միայն։

Նավի առագաստները պարզեցինք։ Քամին մինչև վերջ նպաստում էր մեզ։ Ես նավապետից մի առանձին խուց ստացա Մանոնի և ինձ համար։ Նա այնքան բարի գտնվեց, որ մեզ ուրիշ աչքով էր նայում, քան մեր թշվառ ուղեկիցներին։ Հենց առաջին օրը ես նրան մի կողմ հրավիրեցի, որպեսզի ավելի հարդալիր վերաբերմունք ներշնչեմ դեպի մեզ. նրան պատմեցի իմ դժբախտությունների մի մասը։ Ես մտածեցի, որ ամոթալի սուտ ասած չեմ լինի, եթե նրան հայտնեմ, որ Մանոնը և ես ամուսիններ ենք։ Նա ձեռացրեց, թե հավատում է և ինձ շնորհեց իր հովանավորությունը։ Մենք այն վայելեցինք ամբողջ նավարկության ժամանակ։ Նա հոգաց, որ մենք լավ ու բավարար սնունդ ստանանք, և նրա սիրալիր ուշադրությունը դեպի մեզ ստիպեց մեր անբախտության ընկերներին հարգանքով վերաբերվել մեզ։ Ես անդադար հոգ էի տանում, որ Մանոնն ամենաչնչին անհարմարություն անգամ չզգա։ Նա այդ լավ էր նկատում. տեսնելով այդ ու գիտակցելով, թե ես հանուն նրա սիրո ինչպիսի ծայրահեղ դժ-

բախտության եմ ինձ մատնել, նա անչափ քնքուշ ու գորովալի էր դեպի ինձ, անչափ ուշադիր իմ ամենաաննշան պահանջներին. այնպես որ նրա և իմ միջև առաջացել էր փոխադարձ ծառայությունների ու սիրո հարատև մի մրցակցություն։ Ես բնավ չէի ափսոսում, որ թողել եմ Եվրոպան. ընդհակառակը, որքան ավելի էինք մոտենում Ամերիկային, այնքան ավելի էի զգում, որ սիրտս թեթևանում է ու հանգստանում։ Եթե ես կարողանայի ապահով լինել, որ այնտեղ ի վիճակի կլինեմ մեր կենսական ամենաանհրաժեշտ պահանջները բավարարելու, ապա իմ շնորհակալությունը պիտի հայտնեի ճակատագրին՝ մեր դժբախտություններին այդքան բարենպաստ ընթացք տված լինելու համար։

Երկու ամսվա նավարկությունից հետո վերջապես մոտեցանք ցանկալի ափին։ Առաջին հայացքից երկիրը մեզ անհրապույր թվաց։ Մեր առաջ փռված էին անբերրի ու անբնակ դաշտավայրեր, ուր հազիվ կարելի էր նկատել հատուկենտ բուսած եղեգներ և քամուց մերկացած ծառեր։ Ոչ մի հետք՝ ոչ մարդու, ոչ անասունների։ Այնուամենայնիվ, երբ նավապետը հրամայեց մի քանի զարկ տալ թնդանոթներից, քիչ անց մենք տեսանք Նոր-Օրլեանի քաղաքացիների մի խումբ, որ ուրախության բուռն նշաններով մեզ էր մոտենում։ Մենք չէինք նկատել քաղաքը. մի փոքրիկ բլուր ծածկում էր այն մեր աչքերից։ Մեզ ընդունեցին որպես երկնքից առաքված անձերի։

Այդ խեղճ բնակիչները փութացին հազար ու մի հարց տեղալ Ֆրանսիայի և այն զանազան գավառների մասին, որտեղ իրենք ծնվել էին։ Նրանք մեզ գրկում էին որպես իրենց եղբայրների և որպես սիրելի ընկերների, որոնք եկել են կիսելու իրենց թշվառությունն ու մենակությունը։ Մենք նրանց հետ բռնեցինք քաղաքի ճանապարհը, սակայն երբ մոտեցանք դրան, զարմանքով տեսանք, որ այն, ինչը մեզ գովել էին իբրև բարեկեցիկ քաղաք, ոչ այլ ինչ է, եթե ոչ մի քանի անշուք խրճիթների հավաքույթ։ Դրանց մեջ բնակվում էին հինգ թե վեց հարյուր մարդ։ Նահանգապետի տունը մյուսներից փոքր-ինչ աչքի էր ընկնում իր բարձրությամբ ու գիրքով։ Մի քանի հողաշեն ամրություններ, որոնց շուր-

ջը մի լայն փոս էր ձգվել, պաշտպանում էին այդ տունը։ Մեզ ամենից առաջ ներկայացրին նահանգապետին։ Նա երկար ժամանակ առանձին խոսեց նավապետի հետ և, վերադառնալով դեպի մեզ, մեկը մյուսի հետևից նայեց բոլոր աղջիկներին, որոնք եկել էին նավով։ Դրանք երեսուն հոգի էին, որովհետև Հավրում մենք հանդիպել էինք մի ուրիշ խմբի, որը միացավ մեզ։ Նրանց երկար քննելուց հետո նահանգապետը հրամայեց, որ կանչեն քաղաքի երիտասարդներին, որոնք սիրատոչոր՝ կանայք էին սպասում իրենց համար։ Ամենագեղեցիկները նա տվեց զաղութի ավաղներին, իսկ մնացածներին վիճակով բաժանեց։ Նա դեռևս չէր խոսել Մանոնի հետ, սակայն մյուսներին հրամայելով հեռանալ, Մանոնին և ինձ խնդրեց մնալ իր մոտ։

— Ես նավապետից իմացա, որ դուք ամուսիններ եք,— ասաց նա,— նա ճանապարհին համոզվել է, որ դուք ողջամիտ ու պատվավոր մարդիկ եք։ Ես չեմ ուզում քննել ձեր դժբախտության պատճառները, սակայն, եթե հիրավի դուք այդքան արժանիք ունեք, որքան վկայում է ձեր դեմքը, ես ոչ մի բան չեմ խնայի, որպեսզի թեթևացնեմ ձեր վիճակը, իսկ դուք ձեր կողմից կաշխատեք փոքր-ինչ զվարճացնել ինձ այս վայրենի ու ամայի վայրում։

Ես նրան պատասխանեցի այնպիսի խոսքերով, որոնք, ինձ թվում է, ընդունակ էին ամրացնել նրա մեր մասին կազմած կարծիքը։ Նա կարգադրություն արեց, որ քաղաքում մեզ բնակարան հատկացնեն և իր մոտ ընթրիքի հրավիրեց։ Որպես դժբախտ վտարանդիների պետ, նա չափազանց սիրալիր ու քաղաքավարի էր։ Ընթրիքի ժամանակ ուրիշների ներկայությամբ հարցուփորձ չարեց մեր արկածների մասին։ Խոսակցությունն ընդհանուր բնույթ ունեցավ և, չնայած մեր տրամության ու տխուր վիճակին, Մանոնն ու ես ջանացինք այն ավելի հաճելի դարձնել։

Երեկոյան նա հրամայեց, որ մեզ առաջնորդեն մեզ համար պատրաստված բնակարանը։ Դա մի ողորմելի խրճիթ էր՝ տախտակված ու ցեխածեփ, բաղկացած երկու թե երեք զետնափոր սենյակներից, վերևում՝ ձեղնահարկով։ Նահանգապետը կարգադրել էր այնտեղ բերել վեց աթոռ և մի քանի ուրիշ հարմարություններ։

Մանոնը կարծես սարսափեց, տեսնելով այս խղճալի բնակարանը։ Նա վշտանում էր ավելի շուտ ինձ, քան իր համար։ Երբ մենք մենակ մնացինք, նա նստեց և սկսեց դառն արտասվել։ Ես նախ փորձեցի մխիթարել նրան, սակայն երբ նա ասաց, որ միայն ինձ համար է մորմոքում, և մեր ընդհանուր դժբախտությունների մեջ նրան հուզում են լոկ իմ կրելիք տանջանքները, ապա ես արիասիրտ ու մինչև իսկ ուրախ ձևացրի ինձ, որպեսզի նույն արիությունն ու ուրախությունը ներշնչեմ և նրան։

— Ինչի՞ մասին պիտի ցավեմ,— ասացի նրան,— ես ունեմ այն բոլորը, ինչ ցանկանում եմ։ Դու ինձ սիրում ես, այնպես չէ՞։ Ուրիշ էլ ինչ երջանկություն եմ տենչացել երբևէ։ Երկնքին թողնենք մեր բախտի ընթացքը։ Դա բոլորովին հուսահատական չի թվում ինձ։ Նահանգապետը քաղաքավարի մարդ է. նա սիրալիր ուշադրություն ցույց տվեց մեր նկատմամբ, նա չի հանդուրժի, որ մենք զրկանքներ կրենք։ Իսկ ինչ վերաբերում է մեր խրճիթի ողորմելիությանն ու կահկարասիի կոպտությանը, դու ինքդ կարողացար նկատել, թե որքան քիչ մարդիկ այստեղ մեզ պես լավ բնակարան ու հարմարություններ ունեն. իսկ բացի դրանից՝ դու հրաշալի այքիմիկոս ես,— ավելացրի ես, նրան գրկելով,— դու ամեն ինչ ոսկու ես վերածում։

— Այդ դեպքում դու աշխարհի ամենահարուստ մարդը կլինես,— պատասխանեց նա,— որովհետև, եթե մինչև այժմ քո սիրո նմանը չի եղել, ապա նույնպես անհնար է, որ երբևէ որևէ մեկը այնքան քնքշորեն սիրված լինի, որքան դու։ Ես միանգամայն արդարացիորեն զգում եմ,— շարունակեց նա,— որ երբեք չեմ արժանացել այն արտասովոր սիրուն, որը դու տածում ես դեպի ինձ։ Ես քեզ այնպիսի տառապանքներ պատճառեցի, որ դու կարողացել ես ներել միայն շնորհիվ քո անսահման բարության։ Ես թեթևամիտ եղա ու դյուրաթեք իմ վարքում, և քեզ միշտ խելահեղորեն սիրելով հանդերձ, ապերախտ դտնվեցի քո նկատմամբ։ Սակայն դու չես կարող հավատալ, թե որքան փոխվել եմ ես։ Արցունքները, որ ես

այնքան հաճախ թափել եմ Ֆրանսիայից մեկնելուց ի վեր, ոչ մի անգամ չեն բխել իմ սեփական տառապանքներից։ Ես դադարեցի դրանք զգալուց, հենց որ դու սկսեցիր մասնակից լինել իմ տանջանքներին։ Ես արտասվել եմ միայն դեպի քեզ զգացած քնքշություններից և կարեկցանքից։ Ես ոչ մի կերպ չեմ կարող սփոփել ինձ, որ իմ կյանքում թեկուզ մի րոպե վշտացրել եմ քեզ։ Ես անդադար հանդիմանում եմ ինձ իմ անկայունության համար և անդադար սքանչանում, թե սերը դեպի մի անբախտ արարած ի՞նչ զորություն է ներշնչել քեզ, մի արարած, որը արժանի չէ դրան և որն անզոր է իր ամբողջ արյունով անգամ հատուցելու,— ավելացրեց նա հորդառատ արցունքներ թափելով,— կեսն այն տառապանքների, որ նա պատճառել է քեզ։

Նրա արցունքները, խոսքերը և արտահայտության եղանակն այնպիսի մի զարմանալի տպավորություն գործեցին ինձ վրա, որ թվաց, թե հոգիս երկատվում է։

— Զգույշ կաց,— ասացի ես նրան,— զգույշ կաց, սիրելի Մանոն. ես բավականաչափ ուժ չունեմ՝ տանելու քո սիրո այդ չերմ արտահայտությունը. ես բնավ սովոր չեմ ուրախության այդպիսի բուռն զեղման։ Օ՜, ասուված,— բացականչեցի ես,— այլևս ոչինչ չեմ ազերսում քեզնից։ Եվ վստահ եմ Մանոնի սրտի վրա. դա հենց այնպիսին է, որպիսին ես տենչում էի՝ երջանիկ լինելու համար, և հիմա ես միանգամայն երջանիկ եմ առհավետ։ Իմ երջանկությունը գտնված է։

— Հիրավի, քո երջանկությունը գտնված է,— ասաց Մանոնը,— եթե դու այդ կապում ես ինձ հետ. ես էլ լավ գիտեմ, թե մշտապես ուր կարող եմ գտնել իմ սեփական երջանկությունը։

Ես պակեցի քնելու, տոգորված այս քաղցր խոհերով, որոնք իմ խրճիթը վերածեցին մի պալատի՝ արժանի աշխարհի առաջին թագավորին։ Այնուհետև Ամերիկան ինձ թվաց վայելքների մի վայր։ «Պետք է Նոր-Օրլեան գալ,— հաճախ ասում էի Մանոնին,— եթե ուզում ես ճաշակել սիրո իսկական քաղցրությունը։ Այստեղ մարդ կարող է սիրել առանց շահախնդրության, առանց խանդի և հարատևորեն։ Մեր հայրենակիցները գալիս են այստեղ ոսկի փնտրելու։ Նրանք չեն էլ պատկերացնում, որ մենք այստեղ գտել ենք ոսկուց շատավելի թանկարժեք գանձեր»։

Մենք փութաջան եռանդով բարեկամական հարաբերություն էինք պահպանում նահանգապետի հետ։ Նա այնքան բարի գտնվեց, որ մեր ժամանումից մի քանի շաբաթ անց բերդում մի համեստ պաշտոն տվեց ինձ։ Թեև այդ պաշտոնն ինքնին բավականին աննշան էր, այնուամենայնիվ, ես այն ընդունեցի իբրև երկնային մի շնորհ։ Դա ինձ թույլ էր տալիս ապրել առանց ուրիշին բեռ լինելու։ Ես մի սպասավոր վարձեցի ինձ և մի աղախին՝ Մանոնի համար։ Մեր տնային մանր-մունր գործերը հարթվեցին, և կյանքը կանոնավորվեց։ Ինքս համեստ ու շափավոր կյանք էի վարում, նույնը և Մանոնը։ Մենք ոչ մի առիթ բաց չէինք թողնում մեր հարևաններին ծառայություն մատուցելու և բարիք անելու։ Իմ պաշտոնական դիրքի և մեր քաղցրաբարո վարվեցողության շնորհիվ մենք ձեռք բերեցինք ամբողջ գաղութի վստահությունն ու սերը։ Կարճ միջոցում մենք այն աստիճան աչքի ընկանք, որ նահանգապետից հետո առաջին դեմքերն էինք քաղաքում։

Մեր անմեղ զբաղումները և այն անդորր կյանքը, որում ապրում էինք հարատև, անզգալիորեն մեր մեջ վերականգնեցին կրոնի գաղափարը։ Մանոնը երբեք չէր դադարել բարեպաշտ լինելուց. նույնպես և ես նման չէի այն մոլի աղատախոհներին, որոնք փառք են համարում զուգորդել անկրոնությունն իրենց բարքերի ապականության հետ։ Մեր անկարգությունների պատճառը եղել է սերն ու երիտասարդությունը։ Կյանքի տարիների փոխարեն մենք փորձառություն ունեինք. դա մեզ տվեց այն, ինչ կարող էին միայն տալ երկար տարիները։ Մեր խորիմաստ զրույցներն աննկատելիորեն մեզ դրդեցին առաքինի ու օրինավոր սեր տենչալու։ Առաջինը ես Մանոնին առաջարկեցի օրենքով սրբագործել մեր սերը։ Ինձ հայտնի էին նրա սրտի նվիրական տենչերը։ Նա անկեղծ ու բնական էր իր զգացումների արտահայտության մեջ, մի հատկություն, որը մարդուն միշտ դեպի առաքինություն է տրամադրում։ Ես նրան հասկացրի, որ մեր երջանկության համար մի բան պակասում է։

— Դա երկնքի հավանությունն է,— ասացի ես նրան։— Մեր հոգիները չափազանց հրաշալի են և սրտերը գերազանցորեն բարեմիտ, որպեսզի կարենանք գիտակցաբար ապրել պարտազանցության մեջ։ Թող Ֆրանսիայում այդպես ապրած լինենք, ուր մենք ոչ կարող էինք դադարել միմյանց սիրելուց, ոչ էլ օրինավոր ուղիով բավարարել մեր սերը։ Սակայն Ամերիկայում, ուր մենք մեզանից բացի ոչ ոքից կախում չունենք, ուր կարող ենք հաշվի չառնել հասարակական դիրքի ու կեղծ բարեվայելչության կամայական օրենքները, ուր մեզ արգեն ամուսիններ են համարում, ինչն է մեզ արգելում իրապես դառնալ այդպիսիք և կրոնի սահմանված երդումներով ազնվացնել մեր սերը։ Ինչ վերաբերում է ինձ, ոչինչ նոր բան չեմ առաջարկում քեզ՝ առաջարկելով իմ սիրան ու ձեռքը. սակայն ես պատրաստ եմ՝ վերստին զոհասեղանի առաջ դրանք քեզ նվիրաբերելու։

Ինձ թվաց, թե խոսքերս ցնծությամբ համակեցին սիրուհուս։

— Կհավատա՞ս ինձ,— ասաց նա,— որ ես նույնպես բազմիցս այդ մասին մտածել եմ այն օրից ի վեր, ինչ մենք Ամերիկայում ենք։ Քեզ տհաճություն պատճառելու երկյուղն ինձ ստիպեց սրտումս թաքցնել այդ ցանկությունը։ Ես միամտություն չունեմ տենչալու՝ լինել քո ամուսինը։

— Ա՜հ, Մանոն,— բացականչեցի ես,— դու կարող էիր շուտով թագուհի դառնալ, եթե երկինքը ցանկար, որ ես թագավոր ծնված լինեի։ Ջատանվենք. ոչ մի խոչընդոտ մեզ չի սպառնում։ Ես հենց այսօր ուզում եմ խոսել նահանգապետի հետ և խոստովանել, որ մենք նրան խաբել ենք մինչ հիմա։ Թող գռեհիկ սիրեկանները վախենան ամուսնական անքակտելի շղթաներից։ Նրանք բնավ դրանցից վախ չպիտի զգան, եթե հաստատ լինեն մեզ պես, թե կրում են սիրո կապանքները։

Մանոնը սաստիկ հրճվեց, լսելով իմ այս որոշումը։

Ես համոզված եմ, որ աշխարհումս ոչ մի ազնիվ մարդ չպիտի զլանա իր հավանությունը տալ իմ մտադրություններին այն հանգամանքներում, որոնց մեջ ես էի գտնվում, այսինքն՝ երբ ճակատագրականորեն ստրկացած էի մի անհաղթելի կրքից և պարտված՝ անասելի խղճի խայթից։ Սակայն ով կարող է ինձ մեղադրել, որ իմ տառապանքներն անարդարացի են, երբ ես զանգատվում եմ երկնքի խստությունից, որով նա վանեց իրեն հաճոյանալու իմ դիտավորությունը։ Ավա՜ղ, ինչո՞ւ եմ ասում, թե նա վանեց իմ դիտավորությունը, երբ նա որպես մի հանցանք պատժեց այն։ Երկինքը համբերությամբ հանդուրժել էր ինձ, մինչ ես կուրորեն քայլում էի մոլության ու մեղքի ճանապարհով. սակայն նա ինձ վերապահել էր իր դաժան պատիժները, հենց որ սկսեցի իմ դարձը դեպի առաքինություն։ Ես վախենում եմ, թե ուժ չեմ ունենա ավարտելու այն շարարաստ դեպքի պատմությունը, որը երբևէ պատահել է աշխարհում։

Ես գնացի նահանգապետի մոտ, ինչպես պայմանավորվել էի Մանոնի հետ, խնդրելու նրա համաձայնությունը մեր ամուսնության արարողության համար։ Ես այդ մասին երբեք չէի խոսի ո՛չ նրա և ո՛չ էլ մեկ ուրիշի հետ, եթե վստահ լինեի, որ բերդի քահանան, որը քաղաքի միակ քահանան էր, առանց նահանգապետի գիտության ինձ կմատուցի սույն ծառայությունը։ Սակայն չհամարձակվելով հուսալ, որ քահանան լռություն կպահպանի, ես վճռեցի գործել բացահայտորեն։

Նահանգապետը մի եղբորորդի ուներ՝ Սիններլեն անունով, որին նա շատ էր սիրում։ Դա երեսուն տարեկան մի տղամարդ էր՝ կտրիճ, սակայն տաքարյուն ու դյուրաբորբոք։ Նա տակավին ամուրի էր։ Մանոնի գեղեցկությունը մեր ժամանումի հենց առաջին օրից գրավել էր նրա ուշադրությունը և բազմաթիվ առիթները, որ նա ունեցել էր ինն թե տասը ամսվա ընթացքում նրան հանդիպելու, այնպես էին բորբոքել նրա կիրքը, որ նա թաքուն հյուծվում էր Մանոնի համար։ Սակայն իր հորեղբոր և ամբողջ քաղաքի հետ համոզված լինելով, որ ես իսկապես Մանոնի ամուսինն եմ, նա այն ասպիճան զսպել էր իր սերը, որ մինչև իսկ չէր ցուցաբերել այն, դեռ ավելին՝ բազմիցս իր խանդաղատանքն էր արտահայտել ինձ՝ մատուցելով զանազան ծառայություններ։

Երբ ես բերդ հասա, Սիններլեն իր հորեղբոր մոտ էր։ Ես ոչ մի հիմք չունեի նրանից թաքցնելու իմ մտադրությունը։ Ուստի, առանց քաշվելու, նրա ներկայությամբ բացատրեցի

իմ խնդիրը։ Նահանգապետն ինձ լսեց իր սովորական բարեսրտությամբ։ Ես նրան արի իմ պատմության մի մասը, որը նա ունկնդրեց հաճությամբ, և երբ նրան խնդրեցի ներկա լինել իմ ամուսնության ծիսակատարությանը, նա մեծահոգությամբ խոստացավ իր վրա վերցնել բոլոր ծախսերը։ Ես շտապեցի գոհ հեռացա նրանից։

Մի ժամ անց ինձ մոտ եկավ քահանան։ Ես կարծեցի, թե նա եկել է իմ ամուսնության առթիվ ինձ խրատներ տալու. սակայն սառը բարևելուց հետո նա երկու խոսքով ասաց, որ նահանգապետն ինձ արգելում է մտածել անգամ իմ ամուսնության մասին, և որ նա ուրիշ դիտավորություններ ունի Մանոնի նկատմամբ։

— Ուրի՞շ դիտավորություններ Մանոնի նկատմամբ,— ասացի ես սրտի մահարեր սարսուռով։— Այդ ինչ դիտավորություններ են, հայր իմ։

Նա պատասխանեց, թե ես լավ գիտեմ, որ այս գաղութում նահանգապետն է տնօրենը։ Մանոնին Ֆրանսիայից տարագրել են այստեղ, ուստի և նա գտնվում է նահանգապետի լիակատար տնօրինության տակ։ Մինչ այսօր նա ոչ մի կարգադրություն չի արել նրա մասին, ենթադրելով, թե Մանոնն իրոք ամուսնացած է։ Սակայն ինձնից իսկ իմանալով, որ դա այդպես չէ, նա հարմար է գտնում Մանոնին տալ Սիննելլին, որը նրան սիրահարված է։

Իմ խոհեմությունը չկարողացավ զսպել զայրույթս։ Հպարտ տեսքով ես հրամայեցի քահանային հեռանալ իմ տնից՝ երդվելով, որ ո՛չ նահանգապետը, ո՛չ Սիննելլին և ո՛չ էլ ամբողջ քաղաքը չեն համարձակվի ձեռք բարձրացնել իմ կնոջ կամ սիրուհու վրա, ինչպես էլ որ նրանք կամենան անվանել նրան։

Ես խսկույն Մանոնին հաղորդեցի հենց նոր ընդունած շարագույժ լուրի մասին։ Մենք այն եզրակացության եկանք, որ իմ հեռանալուց հետո Սիննելլին երևի հաջողվել է համոզել հորեղբորը փոխել իր մտադրությունը, և ուրեմն դա հետևանք է նախօրոք նյութված շարամիտ դիտավորության։ Նրանք մեզանից ուժեղ էին։ Ապրելով Նոր-Օռլեանում, դա նույնն է, թե գտնվում ենք ծովի մեջտեղում, այսինքն՝ անջատված ահագին տարածությամբ մնացած աշխարհից։ Ո՞ւր փախչել անհայտ ու ամայի մի երկրում, ուր միայն գաղաններն ու նույնքան բարբարոս վայրենիներն են բնակվում։ Քաղաքում ինձ հարգում էին. սակայն ես չէի կարող հուսալ, որ ինձ կհաջողվի այն աստիճան հարուցել բնակչության գութը դեպի ինձ, որպեսզի նրանից մեկ սպասնացող չարիքին համազոր օգնություն ստանայի։ Դրա համար անհրաժեշտ էր դրամ ունենալ, իսկ ես աղքատ էի։ Բացի այդ, ժողովրդական հուզմունքի հաջողությունն անորոշ էր. և եթե բախտը մեզնից երես շրջեր, ապա մեր դժբախտությունն անամոքելի կդառնար։

Այս բոլոր մտքերն անցան իմ գլխով։ Դրանց մի մասը ես հաղորդում էի Մանոնին. դեռ նրա պատասխանը չլսած, նոր մտքեր էի հղանում. ընդունում էի մի վճիռ, հետո այն թաղում մի ուրիշին հանդելու համար. խոսում էի ինքս ինձ հետ, ինքս էլ բարձրաձայն պատասխանում իմ խոհերին. վերջապես ինձ այնպիսի մի հուզմունք պատեց, որ ես այն չեմ կարող համեմատել ուրիշ ոչնչի հետ, որովհետև երբեր ոչ ոք չի ապրել դրա նմանը։

Մանոնն անթարթ ինձ էր նայում. իմ վրդովմունքից նա գատում էր վտանգի մեծության մասին. սարսափից դողդողալով, ավելի շուտ ինձ, քան իրեն համար, այս քնքուշ աղջիկը չէր համարձակվում մի խոսք անգամ արտասանել իր մտատանջությունն արտահայտելու համար։ Անվերջ ու հոգետանջ խորհրդածություններից հետո ես եկա այն եզրակացության, որ անհրաժեշտ է գնալ նահանգապետի մոտ և ջանալ նրա մեջ պատվո զգացում հարուցել և շարժել նրա գութը, հիշեցնելով նրան իմ հարգալիր վերաբերմունքը դեպի ինքը և իր սիրալիր ուշադրությունը՝ իմ նկատմամբ։ Մանոնը չէր ուզում, որ ես գնամ. արտասուքն աչքերին նա ասում էր.

— Դու մահվան դեմ ես գնում, նրանք կսպանեն քեզ. ես այլևս չեմ տեսնի քեզ. ես ուզում եմ քեզնից առաջ մեռնեմ։

Հարկ եղավ մեծ ճիգ թափել նրան համոզելու, որ ինձ անհրաժեշտ է գնալ, ինչպես և իրեն անհրաժեշտ է տանը մնալ։ Ես նրան խոստացա շատ շուտ վերադառնալ։ Նա չդի-

տեր, ինչպես և ես, որ հենց իրեն պիտի հարվածեին երկնքի զայրույթն ու մեր թշնամիների կատաղությունը։

Ես գնացի բերդը. նահանգապետը քահանայի հետ էր։ Նրա կարեկցանքը շարժելու համար ես թույլ տվեցի այնպիսի նվաստացուցիչ աղերսանքներ, որ յուրաքանչյուր այլ դեպքում կգերազասեի գերեզման մտնել։ Ես գործ դրեցի բոլոր այն հնարները, որոնք, անշուշտ, պետք է շարժեին ամեն մի սիրտ, եթե միայն այն չպատկաներ ամեհի ու դաժան վագրին։ Իմ բոլոր աղերսներին այդ բարբարոսը միայն երկու պատասխան տվեց, որը և հարյուր անգամ կրկնեց. Մանոնը, ասում էր նա, իր իշխանության տակ է գտնվում, և նա խոսք է տվել, որ նրան տա իր եղբորորդուն։ Ես որոշել էի ինձ զրկել անգամ ամենածայրահեղ դեպքում և բավարարվեցի միայն ասելով, որ նրան համարում եմ իմ մեծ բարեկամը, ուստի նա չի կարող ցանկանալ իմ մահը, որին ես համաձայն եմ ենթարկվել ավելի շուտ, քան զրկվել իմ սիրուհուց։

Ես նրանից հեռացա միանգամայն համոզված, որ ոչ մի բան չի կարելի հուսալ սույն համառ ծերուկից, որը պատրաստ էր իր եղբորորդու համար հազար անգամ հոգին ծախել սատանային։ Այնուամենայնիվ, ես մտադիր էի մինչև վերջ հնազանդության տեսք տալ դեմքիս, վճռելով հանդերձ, որ եթե անարդար ծայրահեղ միջոցների դիմեն իմ թշնամիները, ես Ամերիկային ցույց կտամ ամենաարյունռուշ և ամենաեղերական մի տեսարան, որ երբևիցե սերը հարուցել է։

Ես տուն էի վերադառնում խորհելով սույն մտադրության մասին, երբ ճակատագիրը, որը կամենում էր արագացնել կործանումս, ինձ երես առ երես հանդիպեցրեց Սիննելիի հետ։ Իմ աչքերում նա կարդաց մտքերիս մի մասը։ Ես արդեն առիթ ունեցա ասելու, որ նա արիասիրտ մի տղամարդ էր։ Նա մոտեցավ ինձ և հարցրեց.

— Դուք ինձ չե՞ք փնտրում,— ասաց նա։— Գիտեմ, որ իմ դիտավորությունները ձեզ վիրավորում են, և ես լավ եմ նախատեսում, որ մեզ անհրաժեշտ է մեր սրերը չափել. տեսնենք՝ ով ավելի երջանիկ կլինի։

Ես նրան պատասխանեցի, որ նա իրավացի է, և որ միայն իմ մահը կարող է վերջ դնել մեր թշնամությանը։

Մենք հարյուր քայլ հեռացանք քաղաքից։ Մեր սուսերները խաչաձևվեցին. ես նրան վիրավորեցի ու գրեթե միաժամանակ զինաթափ արի։ Նա այն աստիճան կատաղեց իր անհաջողության համար, որ հրաժարվեց խնդրել՝ խնայել իր կյանքը և ձեռք քաշել Մանոնից։ Թերևս, ես իրավունք ունենայի նրան զրկել թե՛ կյանքից և թե՛ Մանոնից։ Սակայն աղնիվ արյունը երբեք չի դավաճանում իրեն։ Ես նրան նետեցի իր սուսերը։

— Նորից սկսենք,— ասացի ես,— սակայն իմացեք, որ այս անգամ կռիվն անխնա պիտի լինի։

Անասելի մոլեգնությամբ նա հարձակվեց ինձ վրա։ Պետք է խոստովանեմ, որ սուսերամարտում ես վարժ չէի, որովհետև միայն երեք ամիս էի մարզվել Փարիզում։ Սերն էր շարժում իմ սուրը։ Սիննելիի սուսերն ընդթափ անցավ իմ բազուկով. սակայն ես էլ օգտվեցի հարմար րոպեից և այնպիսի մի ուժգին հարված հասցրի նրան, որ նա անշարժ ընկավ իմ ոտքերի մոտ։

Չնայած այն ուրախությանը, որ տալիս է մահացու կռվի հաղթանակը, ես անմիջապես սկսեցի խորհել այդ մահվան հետևանքների մասին։ Ես բնավ չէի կարող հուսալ, որ ինձ կշնորհվի ներում կամ մահապատժի հետաձգում։ Գիտենալով նահանգապետի սերը դեպի իր եղբորորդին, ես համոզված էի, որ մահվան պիտի ենթարկվեմ՝ Սիննելիի ապանության լուրը նահանգապետին հասնելուց մի ժամ հետո։ Որքան էլ տագնապալից լիներ այս վախը, այնուամենայնիվ, դա չէ իմ անհանգստության պատճառը։ Մանոնը և նրա վիճակը, նրան սպառնացող վտանգն ու նրան կորցնելու անխուսափելիությունն այն աստիճան հուզում էին ինձ, որ աչքերս մթագնում էին, և ես անկարող էի իմանալ, թե որտեղ եմ գտնվում։ Ես նախանձում էի Սիննելիի վիճակին. վաղահաս մահն ինձ թվում էր որպես իմ տառապանքների միակ դարմանը։ Սակայն հենց այս միտքն ինձ ուշքի բերեց և ընդունակ դարձրեց մի որոշում կայացնելու։ «Ի՞նչ, ես ուզում եմ մեռնե՞լ,— բացականչեցի ես,— որպեսզի վերջ դնեմ դավերիս։ Ուրեմն կա մի բան, որ ինձ համար ավելի սարսափելի է, քան սիրուհուս կորուստը։ Ահ, թող կրեմ

ամենատաժանելի շարշարանքները սիրուհուս օգնելու համար, և թող մեռնեմ այն ժամանակ միայն, երբ իմ կրած տանջանքներն ապարդյուն լինեն»։

Ես վերադարձա քաղաք և հասա տուն։ Մանոնին գտա սարսափից ու անհանգստությունից կիսակենդան։ Իմ ներկայությունն ուշքի բերեց նրան։ Ես չկարողացա թաքցնել նրանից ինձ հետ պատահած ահռելի դիպվածը։ Նա ուշաթափ ընկավ գիրկս, երբ լսեց Սիննելեի մահվան և իմ վերքի մասին։ Քառորդ ժամից ավելի շարշարվեցի, որպեսզի նրան ուշքի բերեմ։

Ինքս էլ կիսով չափ մեռած էի. ոչ մի ելք չէի տեսնում նրա ու իմ անվտանգության համար։

— Մանոն, ի՞նչ ենք անելու,— ասացի ես նրան, երբ նա մի փոքր սթափվեց։— Ավա՜ղ, ի՞նչ պիտի անենք։ Անհրաժեշտ է, որ ես փախչեմ։ Դու ուզո՞ւմ ես քաղաքում մնալ։ Այո, մնա. այստեղ դեռևս դու կարող ես երջանիկ լինել. իսկ ես գնում եմ քեզնից հեռու, մահ որոնելու վայրենիների մեջ կամ գաղանների մոտիլներում։

Զնայած իր դրությանը, նա վեր կացավ, բռնեց իմ ձեռքից՝ ինձ դեպի դուռն առաջնորդելու համար։

— Միասին փախչենք,— ասաց նա,— չկորցնենք և ոչ մի րոպե։ Սիննելեի դիակը կարող է գտնված լինել, և մենք ժամանակ չենք ունենա բավականին հեռու գնալու։

— Սակայն, սիրելի Մանոն,— ասացի ես խելացնոր,— ասա, ո՞ւր կարող ենք գնալ։ Փախստյան ի՞նչ ուղի ունենք։ Ավելի լավ չի՞ լինի, որ դու փորձես այստեղ առանց ինձ ապրել, իսկ ես գնամ հոժարակամ հանձնվեմ նահանգապետին։

Այս առաջարկությունն առավել ևս հրահրեց նրա փախչելու տենչը. ես պետք է հետևեի նրան։ Տակավին բավական արթնամիտ գտնվեցի, որ դուրս գալիս հետս վերցրի տանը եղած մի քանի սրվակ թունդ խմիչքը և այնքան մթերք, որքան գրպաններումս տեղավորվեց։ Հարևան սենյակում գտնվող ծառաներին ասացինք, որ գնում ենք երեկոյան զբոսանքի (սա մեր ամենօրյա սովորությունն էր) և քաղաքից հեռացանք ավելի մեծ հապճեպությամբ, քան, թվում էր, թույլ

էր տալիս Մանոնի թուլացած վիճակը։ Թեև ես տակավին անվճռականության մեջ էի գտնվում մեր ապաստարանի վայրի նկատմամբ, այնուամենայնիվ, երկու հույս ունեի, առանց սրանց ես կգերադասեի մահն այն անհայտությունից, թե ինչ կարող է պատահել Մանոնին։ Ես բավական լավ էի ուսումնասիրել երկիրը մոտ տասը ամսվա ընթացքում, որ ապրում էի Ամերիկայում, և լավ էլ գիտեի, թե ինչ կերպ պետք է վարվել վայրենիների հետ բարեկամանալիս։ Մարդ կարող է իրեն հանձնել նրանց, առանց մահվան ենթարկվելու։ Ես նույնիսկ մի քանի խոսք էի սովորել նրանց լեզվով և գիտեի նրանց սովորությունները՝ շնորհիվ այն բազմաթիվ հանդիպումների, որ ունեցել էի նրանց հետ։

Այդ տխուր հույսի հետ ես ունեի նաև մի ուրիշ հույս, որն ինձ ներշնչում էին անգլիացիները, որոնք մեզ՝ ֆրանսիացիներիս նման նոր աշխարհի այն մասում աքսորվածների բնակավայրեր ունեին։ Սակայն հեռավորության մեծությունն ահաբեկում էր ինձ։ Նրանց գաղութները հասնելու համար մենք պետք է օրեր շարունակ կտրեինք անբերրի հարթավայրեր և մի քանի սարեր, որոնք այնքան բարձր ու դիք էին, մանավանդ որ ճանապարհը դեպի այդ սարերը սոսկալի դժվար էր, անգամ ամենագիմացկուն և ամենակորովի մարդկանց համար։ Այնուամենայնիվ, ես հույս ունեի, որ մենք կարող կլինենք օգուտ քաղել թե մեկից և թե մյուսից. վայրենիներից՝ մեզ ճանապարհին օգնելու, իսկ անգլիացիներից՝ նրանց բնակավայրերում պատսպարվելու համար։

Մենք քայլեցինք այնքան ժամանակ, որքան թույլ էին տալիս Մանոնի ուժերը, և անցանք մոտավորապես երկու մղոն, որովհետև իմ անհման սիրուհին շարունակ մերժում էր դադար առնել ավելի վաղ։ Վերջապես հոգնածությունից ուժասպառ՝ նա խոստովանեց, որ այլևս անկարող է առաջ գնալ։ Արդեն գիշեր էր. մենք նստեցինք լայնատարած հարթավայրի մեջտեղում, չկարողանալով գտնել մի ծառ անգամ, որ պատսպարվենք։ Մանոնի առաջին հոգսը եղավ փոխել իմ վիրակապը, որն ինքն անձամբ փաթաթել էր մեր մեկնումից առաջ։ Իզուր ընդդիմանում էի նրա կամքին. ես սաստիկ վշտացրած կլինեի Մանոնին, եթե զրկեի նրան իմ մասին

մտածելու և ինձ վտանգից զերծ պահելու բավականություն-նից։ Մի քանի րոպե ես հնազանդվեցի նրա ցանկություններին. նրա հոգածությունն ընդունեցի անխոս և ամոթով։ Բայց երբ նա ավարտեց իր քնքուշ խնամքը, ի՜նչպիսի թափով ես սկսեցի իմ փոխադարձ գորովալիր հոգատարությունը։ Ես հանեցի բոլոր զգեստներս և փռեցի նրա տակ, որպեսզի գետինը նվազ կարծր թվա։ Հակառակ իր կամքի, ես ստիպեցի նրան համաձայնել, որ գործադրեմ բոլոր միջոցները՝ նրան հնարավոր հարմարություններ տալու համար։ Իմ տաք համբույրներով և շնչիս ջերմությամբ ես տաքացնում էի նրա ձեռները։ Ամբողջ գիշերը ես անընդհատ հսկեցի նրան և աղերսեցի երկնքին՝ անուշ ու խաղաղ քուն շնորհել։ Օ՜, աստված, որքան բուռն ու անկեղծ էին իմ աղերսանքները, և ինչպիսի անազորույն որոշումով զու վճռեցիր չընդունել դրանք։

Ներեցեք, եթե ինձ սպանող այս պատմությունը ես միայն մի քանի խոսքերով եմ վերջացնում։ Ձեզ կպատմեմ մի աղետի մասին, որի նմանը երբեք չի պատահել. ես ամբողջ իմ կյանքի ընթացքում պիտի ողբամ այն։ Թեպետև ես անդադար դա վառ եմ պահում հիշողությանս մեջ, այնուամենայնիվ, իմ հոգին ցնցվում է սարսափից ամեն անգամ, երբ սկսում եմ պատմել այն։

Գիշերվա մի մասը մենք անցկացրինք հանգիստ։ Ինձ թվում էր, թե իմ անգին սիրուհին քնել է և չի համարձակվում շնչել անգամ, վախենալով, չլինի թե խանգարեմ նրա քունը։ Այդպարագին, երբ շոշափեցի նրա ձեռները, նկատեցի, որ սառն են ու դողդոջուն. ես դրանք իմ կրծքին մոտեցրի, որպեսզի տաքացնեմ։ Նա զգաց այդ շարժումը և ճիգ արեց իմ ձեռները բռնելու և նվազկոտ ձայնով ասաց ինձ, որ իրեն թվում է, թե մոտենում է իր վերջին ժամը։

Սկզբում այս խոսքերը ես ընդունեցի որպես վշտի սովորական արտահայտություն մի մարդու, որը գտնվում է դժբախտության մեջ, և պատասխանեցի միայն սիրո քնքուշ սփոփանքներով։ Սակայն հաճախակի ու արագացած շնչառությունը, լռությունը՝ իմ հարցերին, ձեռների սեղմումը, որոնց մեջ նա շարունակում էր պահել իմ ձեռները, ինձ հաս-

կացրին, որ, իրոք, մոտենում է նրա տառապանքների վերջը։

Ինձնից մի պահանջեք, որ նկարագրեմ իմ զգացածը կամ պատմեմ նրա վերջին խոսքերը։ Ես նրան կորցրի. անգամ իր վերջին շունչը փչելիս՝ նա դեռ իր սիրո նշանները ցուցաբերեց ինձ. ահա այն ամենը, ինչ ես կարող եմ ձեզ հաղորդել այս ճակատագրական ու չարաբաստիկ դեպքի մասին։

Իմ մահը չհետևեց նրա մահին։ Անշուշտ երկինքը գրտնում էր, որ ես դեռ բավականաչափ խստությամբ չեմ պատժվել։ Նա կամեցավ, որ ես այն օրից տաղտկալի ու ողորմելի մի կյանք վարեմ։ Ես հոժարակամ հրաժարվեցի երբևէ ապրել երջանիկ կյանքով։

Քսանչորս ժամից ավելի իմ շրթները հպած պահեցի սիրելի Մանոնիս երեսին ու ձեռներին։ Իմ դիտավորությունն էր մեռնել այնտեղ. սակայն երկրորդ օրվա սկզբին ես մտածեցի, որ իմ մահից հետո նրա մարմինը վայրենի գազանների կեր կդառնա։ Որոշեցի նրան թաղել և գերեզմանի վրա սպասել մահիս։ Ես արդեն այն աստիճան մոտ էի իմ վախճանին՝ սովի ու ցավի ինձ պատճառած թուլության հետևանքով, որ հարկ եղավ մեծ ճիգ գործ դնել՝ ոտքի վրա մնալու համար։ Ստիպված եղա գործածել այն թունդ խմիչքները, որ վերցրել էի հետս. դրանք ինձ տվեցին այնքան ուժ, որքան հարկավոր էր այն տխուր արարողությունը կատարելու համար։ Ինձ համար դժվար չէր փորել հողն այնտեղ, ուր գտնվում էի. դա ավազով ծածկված մի դաշտավայր էր։ Փշրեցի սուսերս, որպեսզի նրանով փորեմ, սակայն այդ ինձ ավելի քիչ օգնեց, քան իմ սեփական ձեռները։ Ես մի լայն փոս փորեցի, այնտեղ տեղավորեցի իմ սրտի կուռքին, նախապես մեծ խնամքով փաթաթելով նրա մարմինն իմ բոլոր զգեստներով, որպեսզի ավազը չպարուրի նրան։ Սակայն, նախքան փոսն իջեցնելը, հազար անգամ համբուրեցի նրան՝ ամենակատարյալ սիրո բուռն կրակով։ Ես նստեցի նրա մոտ. երկար դիտեցի նրան, սիրտ չէի անում փոսը ծածկելու։ Վերջապես իմ ուժերը նորից սկսեցին թուլանալ և, վախենալով, որ կարող եմ դրանցից բոլորովին զրկվել նախքան աշխատանքս ավարտելը, ես առհավետ թաղեցի գետնի ծոցում այն ամենակատարյալ, ամենագեղեցիկ էակին, որը երբևէ ապրել է երկրի վրա։ Այնուհետև

պառկեցի գերեզմանի վրա՝ երեսս դեպի հողը. աչքերս փակեցի այլևս շրացելու դիտավորությամբ, երկնքի օգնությունը պաղատեցի և սկսեցի անհամբեր սպասել մահվան։

Ձեզ անհավատալի կթվա, որ այս ամբողջ արարողության ժամանակ իմ աչքերից ոչ մի արցունք չկաթեց և իմ շրթներից ոչ մի հառաչանք չլսվեց։ Իմ խոր հուսահատությունը և մեռնելու հաստատ որոշումը խափանել էին վհատության ու վշտի բոլոր արտահայտությունները։ Ուստի երկար այս դիրքում չմնացի գերեզմանի վրա և շուտով կորցրեցի այն թույլ գիտակցությունն ու զգացումը, որ դեռ ունեի։

Այն բոլորից հետո, ինչ դուք լսեցիք, իմ պատմության վերջավորությունը նվազ կարևոր է և շարժե, որ նեղություն կրեք այն ունկնդրելու։ Երբ Սիննելիի մարմինը տարել էին քաղաք և խնամքով դնել նրա վերքերը, պարզվել էր, որ ոչ միայն նա չի մեռել, այլ վտանգավոր վերքեր անգամ չի ստացել։ Նա իր հորեղբորը պատմել էր, թե ինչպես է ծագել կռիվը, և նրա մեծահոգությունը դրդել էր նրան անմիջապես հրապարակով խոստովանել իմ մեծահոգության մասին։ Իմ ետևից մարդ էին ուղարկել և իմ անհետացումը Մանոնի հետ՝ կասկած էր հարուցել, որ մենք փախել ենք։ Արդեն չափազանց ուշ էր, որպեսզի հենց այն երեկո ձեռնարկեին ինձ փնտրել, սակայն հաջորդ և մյուս օրը զործադրել էին ինձ հետապնդելու համար։

Ինձ գտել էին Մանոնի գերեզմանի վրա անկենդան, և նրանք, ովքեր ինձ գտել էին այդ վիճակում, տեսնելով գրեթե մերկ ու վերքից արնաքամ, բնավ չէին կասկածել, որ ես կողոպտվել եմ ու սպանվել։ Ինձ փոխադրեցին քաղաք։ Ճանապարհ ընկնելու շարժումից ես ուշքի եկա։ Այն հառաչանքները, որ ես արձակեցի բացելով աչքերս ու կսկիծով տեսնելով, որ տակավին կենդանի եմ, մատնանշեցին, որ դեռ կարելի է օգնություն ցույց տալ. ինձ այդ օգնությունը ցույց տրվեց վերին աստիճանի բարեհաջող։

Այնուամենայնիվ, ինձ մեկուսացրին նեղլիկ մի բանտում։ Դատական քննություն նշանակեցին, և որովհետև Մանոնը չէր հայտնվել, ինձ մեղադրեցին, թե կատաղության ու խանդի մոլեգնքում ես նրան սպանել եմ։ Ես ամենայն անկեղծությամբ պատմեցի ցավալի եղելությունը։ Սիննելին, չնայած այն անհուն վշտին, որի մեջ ընկղմեց նրան իմ պատմությունը, մեծահոգությամբ խնդրեց, որ ինձ ներում շնորհվի, և նրան հաջողվեց այդ ձեռք բերել։

Ես այն աստիճան թույլ էի, որ ստիպված եղան բանտից ինձ ուղղակի տուն տանել և անկողին դնել, ուր երեք ամիս ես մնացի մի դաժան հիվանդության ճիրաններում։ Իմ ատելությունը դեպի կյանքը չէր թուլանում։ Ես անդադար մահ էի աղերսում և երկար ժամանակ համառորեն հրաժարվում էի բոլոր դեղերից։ Սակայն երկինքն ինձ այնքան դաժանությամբ պատժելուց հետո մտադիր էր իմ օգտին ծառայեցնել դրժբախտություններս ու կրած պատիժներս. նա ինձ լուսավորեց իր լույսով, որն իմ մեջ վերարծարծեց ծագմանս դաստիարակության արժանի խոհերը։ Իմ հոգում անզորրությունը վերածնվեց, և այս փոփոխությանը շուտով հետևեց ապաքինում։ Ես բոլորովին անձնատուր եղա պատվո թելադրանքներին և շարունակեցի կատարել իմ փոքր պաշտոնի աշխատանքները՝ սպասելով ֆրանսիական նավերին, որոնք տարին մի անգամ լինում են Ամերիկայի այդ մասում։ Ես որոշեցի վերադառնալ հայրենիք՝ այնտեղ ողջամիտ ու կանոնավոր մի կյանքով քավելու իմ վարմունքի խայտառակությունը։ Սիննելին հոգացել էր իմ անգին սիրուհու մարմինը փոխադրել մի արժանավայել վայր։

Իմ ապաքինումից վեց շաբաթ անց, երբ մի անգամ միայնակ զբոսնում էի ծովափին, տեսա մի նավ, որն առևտրական գործերով գալիս էր Նոր-Օռլեան։ Սկսեցի ուշադրությամբ հետևել նավից դուրս եկող մարդկանց։ Ես ծայր աստիճան զարմացա, երբ դեպի քաղաք դիմող ուղևորների մեջ նկատեցի Տիբերժին։ Իմ հավատարիմ բարեկամը հեռվից ճանաչեց ինձ, չնայած այն փոփոխություններին, որ դրոշմել էր տրրտմությունը իմ դեմքին։ Նա ասաց, որ իր ճանապարհորդության միակ շարժառիթն ինձ տեսնելու ցանկությունն է եղել և դիտավորությունը՝ ինձ համոզելու, որ վերադառնամ Ֆրանսիա։ Երբ ստացել է Հավրից գրած նամակս, նա անձամբ եկել է այդ քաղաքը՝ խնդրածս օգնությունը մատուցելու։ Լսելով իմ մեկնումը, նա խիստ վշտացել է. և իմ ետևից ան-

միջապես կմեկներ, եթե նավ լիներ։ Այնուհետև նա մի քանի ամիս զանազան նավահանգիստներում Ամերիկա գնացող նավ է փնտրել, և, վերջապես, Սեն-Մալոյում այդպիսին գտնելով, որը դեպի Մարտինիկ է նավարկելու, մտել է այդ նավը, հուսալով, թե իրեն դյուրին կլինի Մարտինիկից անցնել Նոր-Օռլեան։ Ճանապարհին իսպանական ծովահենները բռնել են Սեն-Մալոյի նավը և տարել իրենց կղզիներից մեկը, որտեղից նա ճարպկությամբ փախել է. երկար թափառումներից հետո, ի վերջո, հանդիպել է այն փոքր նավին, որը հենց նոր ժամանեց՝ նրան բարեհաջող կերպով ինձ մոտ բերելով։

Ես խոսք չէի գտնում ըստ հարկի իմ շնորհակալությունն արտահայտելու այդքան մեծահոգի ու հավատարիմ բարեկամիս։

Ես նրան առաջնորդեցի իմ տունը։ Նրա անօրինության տակ դրեցի իմ ամբողջ ունեցածը։ Նրան պատմեցի այն ամենը, ինչ պատահել էր ինձ Ֆրանսիայից մեկնելուց հետո։ Եվ որպեսզի նրան մի հաճույք պատճառեմ, որը չէր սպասում, հաղորդեցի, որ նրա՝ երբեմնի իմ սրտում նետած առաքինության սերմերը սկսել են պտուղ տալ, որից նա, անշուշտ, գոհ պիտի մնա։

Նա խոստովանեց, որ այդպիսի քաղցր հավատիացում նրան փոխհատուցում է ճանապարհորդության մեջ կրած բոլոր նեղությունները։

Մենք երկու ամիս միասին անցկացրինք Նոր-Օռլեանում, սպասելով Ֆրանսիայից եկող նավերին, և, վերջապես, ծովդուրս գալով, սրանից երկու շաբաթ առաջ Հավր-դե-Կրաս ժամանեցինք։ Այնտեղից ես մի նամակ գրեցի իմ ընտանիքին։ Մեծ եղբորս պատատխանից իմացա հորս մահվան տխուր լուրը, և դեռ հիմա էլ սարսում եմ, և ոչ առանց հիմքի, որ իմ մոլորություններն արագացրին ծնողիս մահը։ Կալե ուղևորվելու համար հողմը բարենպաստ էր, ես իսկույն նավ նստեցի, որպեսզի գնամ այդ քաղաքից մի քանի մղոն հեռու ապրող իմ մի աղնվական ազգակցի մոտ, ուր, համաձայն իր նամակի, ինձ պիտի սպասի եղբայրս։

ԱԲԲԱ ՊՐԵՎՈՅԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես հայտնի է, գրական փառքը հեղհեղուկ է և անհաստատ. քանի՞-քանի գրողներ ու բանաստեղծներ, որոնց ժամանակակիցները հռչակել են մեծագույն հանճարներ, եկող սերունդները ցած են բերել փառքի գագաթներից և շատ չանցած բոլորովին մոռացվել են։ Նմանապես և որքա՜ն շատ են այնպիսիները, որոնց չեն հասկացել ու գնահատել ժամանակակիցները։ Վախճանվել են անանուն ու անհայտ և մահվանից հետո միայն պատվավոր տեղ են գրավել գրականության պատմության մեջ։

Աբբա Պրևոյին չի կարելի դասել ոչ մեկ, ոչ էլ մյուս շարքը։ Նրա գրական բախտը մի բացառիկ դեպք է. ժամանակակիցները կարդում էին նրա խոշոր վեպերը, ուշադիր ունկնդրում նրա հրապարակախոսությանը։ Բայց արդեն XIX դարի սկզբին այդ վեպերը աստիճանաբար մոռացվեցին, հրապարակախոսությունը հնացավ, և արբա Պրևոյի անունը չէր հիշվի, եթե պատահմամբ, կարծես թե իր հաստափոր վեպերի լուսանցքների վրա, գրած չլիներ մի վիպակ՝ «Ասպետ դե Գրիյոյի ու Մանոն Լեսկոյի պատմությունը»։

Բայց նրա գրական ժառանգության մեջ ծավալով շնչին տեղ գրավող այդ վիպակը, հիրավի, անմահ փառք պարգևեց Պրևոյին ու նրան դասեց համաշխարհային գրականության խոշորագույն ներկայացուցիչների շարքը։

Վանական, զինվոր, գրող, քարոզիչ, արկածախնդիր, գիտնական. ահա այն զանազան հակումները, որ ժամանակակիցները հետևողականորեն հայտնագործել են նրա մեջ։ Գրականության պատմության մեջ Պրևո անունը անքակտելի է դարձել «արբա» մակդիրից, սակայն հոգևորական կոչումը հավանորեն ամենից քիչ էր պատշաճում այդ ըմբոստ, թեթևամիտ ու հրապուրվող մարդուն։

Անտուան Ֆրանսուա Պրևոն ծնվել է 1697 թվականի ապրիլի 1-ին, Արտուա նահանգի Էգեն քաղաքում, բուրժուական մի պատվարժան ընտանիքում, որը տվել է խոշոր պաշտոնյաներ, քահանաներ ու դատավորներ։ Նախնական

կրթություն ստացել է հայրենի քաղաքի հիզվիտական դպրոցում և արդեն վաղ հասակից սկսել է նախապատրաստվել հոգևորական ասպարեզ մտնելու։ Պահանջվող՝ 16 տարեկանին հազիվ հասած, նա ընդունվում է Փարիզի հիզվիտական մի վանք որպես մոնթ։ Այնտեղ շուտով գնահատեցին պատանի Անտուանի արտասովոր ունակությունները և, երկու տարի անց (1715) նրան ուղարկեցին Լա Ֆլեշ փոքրիկ քաղաքը, որտեղ գտնվում էր ժամանակի խոշորագույն կրթական հաստատություններից մեկը՝ Հենրի IV-ի վարժարանը, ուր Պրևոն պետք է ուսումնասիրեր աստվածաբանություն, փիլիսոփայություն և այլ հումանիտար գիտություններ։

Սակայն մի տարի հետո Պրևոն անհայտ պատճառներից դրդված՝ արդեն հեռանում է Լա Ֆլեշից։

Ահա այդ օրվանից էլ սկսվում են նրա անհամար արկածները, որոնք բերնե-բերան ամեն կերպ չափազանցվում ու ծաղկեցվում էին։ Հենց դրա շնորհիվ է, որ նրա անունը կապվեց բազմաթիվ առասպելների հետ։ Պրևոյին վերագրվում էին ամենաանհավանական արարքներ՝ ընդհուպ մինչև հրեշավոր ոճրագործություններ, ինչպես, օրինակ, որ նա, իբր թե, սպանել է իր հորը, ուներ երկու կին և այլն։

Նրա մահն անգամ առիթ տվեց հորինելու մի մռայլ առասպել. ասում էին, որ մի անգամ, իբր թե գյուղում գտնվելիս, Պրևոյի ուշքը գնացել է, և տեղական բուժակը այդ ուշաթափությունն ընդունել է որպես մահ և որոշել հերձել «դիակը»։ Հերձելիս Պրևոն ուշքի է եկել և տեղնուտեղը փշել շունը։

Գրականության պատմաբաններն ստիպված եղան բավական ջանք թափել Պրևոյի կենսագրությունը սին հերյուրանքներից մաքրելու համար. սակայն այն էլ, ինչ մնացել է նրանց ու անվիճելի է, բավական է՝ պատկերացնելու համար, թե որքա՞ն բարդ, խռովահույզ ու հակասական է եղել նրա կյանքը, մանավանդ երիտասարդ տարիներին։

Լա Ֆլեշից մեկնելուց հետո Պրևոն գնում է բանակ՝ որպես հասարակ զինվոր։ Բայց այդ տարիներն աննպաստ էին զինվորական ասպարեզի համար. հենց նոր էր վերջացել «իսպանական ժառանգության» համար մղված բազմամյա պատերազմը, և աստիճանի բարձրացում սպասելու հույս չկար։ Այնուամենայնիվ, Պրևոն մոտ երկու տարի մնաց բանակում, որից հետո (1719) փորձեց վերադառնալ հիզվիտների մոտ, բայց մերժվեց։ Այնուհետև նա որոշեց մեկնել Հռոմ և հիզվիտական միաբանության պետին խնդրել, որպեսզի նա թույլ տա իրեն երկրորդ անգամ մոնթ ընդունելու։ Ճանապարհին հիվանդացավ, ընկավ ծայրահեղ կարիքի մեջ, բայց մի սպա օգնության հասավ, տեղավորեց նրան հիվանդանոց և պարտքով փող տվեց։ Շուտով պարզվեց, որ սպան զեկավարվել է ոչ այնքան մարդասիրությամբ, որքան այդ երիտասարդին բանակ հավաքագրելու հույսով։ Պրևոյին մատուցած աջակցությունը նա համարում էր կանխավճար՝ ի հաշիվ զինվորական ոճիրի, ուստի և սկսեց ստիպել նրան մտնել զինվորական ծառայության։ Հարկադիր զինվորությունից ազատվելու համար Պրևոն փախավ Հոլանդիա, իսկ մի քիչ անց վերադարձավ հայրենի տուն։ Հայրենիքն հենց այդ շրջանում էլ նա ունեցավ այն արկածը, որը և դարձավ նրա նշանավոր վիպակի հիմքը։

Այդ վիպակի հերոսի նման Պրևոն նույնպես որոշեց հետևել իր սիրուհուն, որին ձերբակալել էր ոստիկանությունը։ Բայց ճանապարհին հիվանդացավ, ետ մնաց կալանավորների խմբից ու ընդմիշտ կորցրեց աղջկա հետքը։ Սիրուհու կորստից առաջացած վիշտն ու հուսահատությունը մղեցին Պրևոյին մենակության, և նա կրկին մտավ վանք, սակայն ոչ թե հիզվիտների, այլ բենեդիկտյանների, որոնք հռչակվել էին իրենց գիտական, մասնավորապես պատմագիտական աշխատություններով։

Մի տարի մոնթություն անելուց հետո Պրևոն կուսակրոնության ուխտ է անում (1721)։

Սակայն այդ ժամանակ գրած մի նամակում նա ասում է, որ իրեն պետքական չի զգում վանքի համար. «Չի կարելի լինեստովանել, որ ես ոչ մի չափով պիտանի չեմ վանականության համար, և բոլորը, ովքեր գիտեն իմ ձեռնադրության պատմությունը, երբեք լավ պատուր չեն ակնկալում դրանից»[1]։ Այնուամենայնիվ, Պրևոն չանաց կոտրել իրեն, համակերպվել, մոռանալ վիշտը՝ խորանալով գիտության մեջ։ Եվ նա սկսեց մի կողմից լրացնել իր գիտելիքները, մյուս կողմից՝ դասեր տալ։ Չնայած դրան, վանական ապրելակերպը ճնշում է նրան, նա կարոտում էր անկախությունը, և վանահայրերի հետ նրա հարաբերությունները հետզհետե ավելի վատանում են։

Բավական է ասել, որ յոթ տարվա ընթացքում (1721—1728) Պրևոն ութ անգամ մենաստանից մենաստան անցավ և ոչ մեկում չկարողացավ մնալ։

Սակավ պերճախոս չէ նաև մի այլ հանգամանք։ Հենց այդ ժամանակ էլ սկիզբ է առնում Պրևոյի գրական ստեղծագործությունը։ Բլան-Մանթ և Սեն-Ժերմեն-դե-Պրե վանքերում նա գրում է «Աշխարհիկ կյանքից հեռացած տոհմիկ մարդու հիշատակարանը» վեպի առաջին չորս հատորները, որոնց առաջին երկուսը լույս տեսան 1728 թ. սկզբին և հռչակեցին նրա անունը։

Երրորդ ու չորրորդ հատորների լույս տեսնելը համընկավ Պրևոյի կյանքում կատարված մի մեծ շրջադարձի հետ. նա թաքուն փախավ վանքից ու մեկնեց Փարիզ։ Բենեդիկտյան հայրերը փորձեցին կոծկել այդ սկանդալը և համոզել նրան, որ վերադառնա։ Բայց ապարդյուն. ուստի և դիմեցին ոստիկանությանը ու խնդրեցին ձերբակալել փախստական հոգևորականին, իսկ 1728 թ. նոյեմբերի 6-ին տրվեց նրան ձերբակալելու հրամանը։ Հետաքրքրական է, որ բենեդիկտյանների ներկայացրած գանգատի մեջ արդեն հիշատակվում է, որ Պրևոն Փարիզում այնքան աղմուկ հանած «Տոհմիկ մարդու հիշատակարան»-ի հեղինակն է։ Ուղիղ մի քանի օր անց՝ նոյեմբերի 19-ին, գրաքննիչն ստորագրեց այդ նույն վեպի 3-րդ և 4-րդ հատորները տպագրելու թույլտվությունը։

Հենց որ Պրևոն իմացավ, որ ինքը ձերբակալելու վտանգի տակ է, շտապեց հեռանալ հայրենիքից և անցավ Անգլիա։ Այստեղ էլ սկիզբ առավ նոր արկածների, ինչպես նաև բեղմնավոր գրական գործունեության մի նոր շրջան։

1. Harrisse. L'abbé Prévost. P., 1896, p. 15.

Պրևոն 1729-ից մինչև 1734 թվականները անցկացրից օտարության մեջ։ Որոշ ժամանակ նա դարձավ մի անգլիացի արիստոկրատի որդու դաստիարակը, սակայն ավելի մեծ ժամանակ և ուշադրություն նվիրում էր գրական աշխատանքին։

Պրևոն 1731-ին մեկնեց Հոլանդիա, տանելով իր հետ հավանորեն արդեն լրիվ ավարտած «Ասպետ դե Գրիյոյի ու Մանոն Լեսկոյի պատմությունը», որ մտադիր էր առաջարկել Ամստերդամի հրատարակիչներին։ Սակայն հոլանդացի հրատարակիչները, նկատի ունենալով «Տոհմիկ մարդու հիշատակարան»-ի բացառիկ հաջողությունը, գերադասեցին հեղինակից ստանալ դրա շարունակությունը։ Դրամական կարիք ունենալով, Պրևոն հանձն առավ գրել «Հիշատակարան»-ի կա երկու հատոր, թեև թվում էր, թե այդ վեպը շարունակելու պետք չունի։ Ելնելով առևտրական նկատառումներից, այդ երկու հատորներին կցվեց ևս մի հատոր, որը հենց «Ասպետ դե Գրիյոյի ու Մանոն Լեսկոյի պատմությունն» էր. ըստ որում, հեղինակը ընթերցողին ուղղած առաջաբանում ստիպված էր խոստովանել, որ այդ պատմությունը ոչ մի կերպ կապված չէ «Հիշատակարան»-ում տեղ գտած դեպքերի հետ։

Այսպիսով Պրևոյի անունն անմահացրած վիպակը առաջին անգամ լույս տեսավ 1731 թվի ամռանը՝ որպես լրացում այժմ մոռացության տրված «Տոհմիկ մարդու հիշատակարան»-ի։

Այդ ժամանակ արբա Պրևոն արդեն մեծ անուն էր հանել։ «Տոհմիկ մարդու հիշատակարանը» և դրան հաջորդած վեպերը մեծ հաջողություն էին ունեցել ժամանակակիցների մոտ։

Պրևոյի երկերի ժողովրդականության պատճառը ամենից առաջ դրանց գրավչությունն էր։ Նրա գրքերի էջերը լի են խիստ հետաքրքրական դեպքերով՝ առանցքումներով, սպանություններով, հետապնդումներով ու զարմանալի զուգադիպություններով։ Գործողությունը ծավալվում է խորհրդավոր գեղանափոքերում, գրչակներում, կուսական անտառներում ու հեռավոր երկրներում։ Գործող անձանց մեջ միշտ կա մի «հանցագործ»՝ մոլլ, առեղծվածային ու չարիք գործող մարդ։

Արբա Պրևոն հակված է ի չարը գործադրել խորհրդավորությունն ու սարսափները, և դա երբեմն ծավալվող դեպքերին անճշմարտացի բնույթ է տալիս։ Սակայն նրա վեպերի անվիճելի արժանիքը այն է, որ դրանք գրել է մի խորաթափանց հոգեբան, մի գրող, որը կարող է ճշմարտացի վերարտադրել անգամ անճշմարտացի պայմանների մեջ դրված մարդկանց զգացումներն ու արարքները։

Պրևոյի վեպերի արկածային բնույթը որոշ չափով հարաղատացնում է նրան ռեալիստական «խարեբայական» վեպերի հեղինակների, մասնավորապես Լրսաժի հետ. Բայց դժվար չէ նկատել Պրևոյի տարբերությունն այդ հեղինակներից. խարեբայական վեպում դեպքերը ծավալվում են «ստորին» միջավայրում, և հերոսները ձգտում են ձեռք բերել միայն նյութական, առարկական բարիքներ, մինչդեռ Պրևոյի հերոսները նախ և առաջ սրտի ու երևակայության թելադրանքներով ապրող ռոմանտիկներ ու անրջողներ են։

Մյուս կողմից, Պրևոն, անկասկած, կրել է նաև այսպես կոչված «ծերբ-

ծերուն» վեպի ազդեցությունը, որտեղ հերոսները նույնպես ունենում են բազմաթիվ, երբեմն ֆանտաստիկ արկածներ, ըստ որում, բոլոր բախումների հիմքը նմանապես սերն է։

Պրևոյի և այդ հեղինակների էական տարբերությունն այն է, որ նրա հերոսները շատ ավելի սակավ ռացիոնալիստ են, անձնատուր չեն լինում մանրակրկիտ ինքնավերլուծման, շատ ավելի լիարյուն են, կենսալի, «մարմնեղեն»։

Ընթերցողներին հրապուրում էին նաև այն նոր գծերը, որոնցով Պրևոն օժտում էր իր հերոսներին. նրա վեպերում հանդես են գալիս մարդիկ՝ տոգորված տիտանական, ամենակուլ կրքերով, որոնց դեմ պայքարելը մարդու ուժերից վեր է։ Եվ այդ կրքերի մեջ տիրապետող դիրք է գրավում սերը։

«Սերը մոլեգին է, անարգար, դաժան. նա պատրաստ է կատարելու ամենայն ծայրահեղություններ, անձնատուր է լինում դրանց առանց նվազագույն զղջման։ Աղատագրվեցեք սիրուց, և դուք կդառնաք համարյա աբատներից գերծ մարդը»[1], — ասում է Տոհմիկ մարդը իր սանին։ Սակայն խոսքերն անզոր են։ Այդ գիտե և Տոհմիկ մարդը։ Ինչպես ուրիշ շատ ընտրյալներ, նա ինքը անձամբ զգացել է սիրո անհաղթահարելի իշխանությունը։

Արբա Պրևոյի վեպերում սերը մի ճակատագրական, տարերային, անհաղթահարելի կիրք է, մեծ մասամբ ողբերգական, որը մարդուն հասցնում է հուսահատության ու կործանման, երբեմն մղում է նրան սոսկալի հանցագործություններին։ Դրա հետ միասին Պրևոյի հերոսները տեսնում են սիրո մեջ գերագույն երանավետություն. ընտրյալներին է միայն վիճակված զգալ այդ, և այդ երանավետության համար մարդը պատրաստ է ամեն տեսակ զոհողության։

«Աներկբա է, որ կան իրար համար ստեղծված սրտեր, որոնք երբեք և ոչ օրի չէին սիրի, եթե միմյանց հանդիպելու բախտ չունենային։ Բավական է այդպիսի սրտերը պատահեն իրար, անմիջապես զգում են, որ միմյանց համար են ստեղծված, որ նրանց երջանկությունը միայն ու միայն իրարից չհեռանալու մեջ է։ Մի ինչ-որ թաքուն ուժ դրդում է նրանց իրար սիրելու։ Նրանք կարիք չունեն հավաստիացումների, փորձությունների, երդումների. նրանց մեջ հանկարծակի ծնվում է փոխադարձ վստահություն, որը և դրդում է անձնվիրաբար միմյանց նվիրվելուս[2] («Տոհմիկ մարդու հիշատակարանը», հ. 1)։

Պրևոյի վեպերի հուզական կողմը նրանց մեծ ժողովրդականություն վայելելու պատճառներից մեկն էր։

Որպես հոգեբան, Պրևոն ամբողջովին գտնվում է կլասիցիզմի գրաշրջանի մեծ դրամատուրգների՝ Կոռնելի ու Ռասինի աղդեցության տակ, որոնց ողբերգությունների մեջ նույնպես գերիշխում են անհաղթահարելի կրքեր։ Բայց այնտեղ զգացմունքները ավելի վերացական են և համար-

[1]. P. Hazard. Etudes critiques sur l'abbe Prévost. Chicago (1929). p. 21.

[2]. Նույն տեղը, էջ 21։

վում են դիցաբանական հերոսների կամ պատմական ականավոր գործիչների (արքաների, զորավարների) բախտաբաժինը. իսկ Պրեսլի վեպերում կիրքը մոլեգնում է հասարակության մեջ ավելի համեստ դիրք ունեցող մարդկանց սրտերում. հենց դրա շնորհիվ էլ այդ մարդիկ ընդհանուր մակարդակից վեր են բարձրանում։ Այդ պատճառով էլ Պրեսլի հերոսների կիրքը բախվում է մարդկային կյանքի սովորական գործոններին, այսինքն՝ նյութական հանգամանքներին և ընտանեկան հարաբերություններին։

1731—1739 թվականներին աբբա Պրևոն գրում է իր երկրորդ մեծ վեպը՝ «Անգլիական փիլիսոփան կամ Կրոմվելի ապօրինի զավակի՝ պարոն Կլելենդի պատմությունը, գրված նրա ձեռքով, որը անգլիերենից թարգմանել է «Տոնմիկ մարդու հիշատակարան»-ի հեղինակը»։

Վեպը լի է զարմանահրաշ արկածներով ու զարհուրելի դեպքերով։ Կլելենդը՝ Կրոմվելի ապօրինի զավակը, հորից հալածված և անհամար տառապանքների մատնված, սաստիկ սիրում է լորդ Աբսմինատերի դուստր Ֆանիին։ Սակայն հանգամանքները բաժանում են սիրահարներին։ Լորդ Աբսմինատերը ստանում է Ամերիկայի անգլիական գաղութների նահանգապետի պաշտոնը և դստեր հետ մեկնում այնտեղ։ Կլելենդը շտապում է սիրուհու ետևից, բայց երկար ժամանակ չի կարողանում գտնել։ Հասնելով Մարտինիկա կղզին, նա իմանում է, որ Աբսմինատերը հենց նոր իր դստեր հետ մեկնել է Կուբա։ Բայց Կլելենդը այնտեղ էլ չի գտնում իր սիրուհուն և իմանում է, որ հայրը նրան տարել է Ֆլորիդա։ Կլելենդը դարձյալ սկսում է որոնել և, ի վերջո, հորն ու դստերը գտնում է։ Սրանք ընկել էին վայրենիների ձեռքը և մահվան սպառնալիքի տակ էին։

Ահա այս ձևով էլ զարգանում են դեպքերը վեպի ութ հատորներում։ Դեպքերի անհավանականությամբ հանդերձ, հեղինակը կարողանում է գրավիչ ու ճշմարտացի վերարտադրել իր հերոսների ապրումները և ընթերցողների մեջ համակրանք հարուցել նրանց ողբերգական ճակատագրի հանդեպ։

Պրևոն 1733 թվականին Լոնդոնում հիմնում է «Թեր և դեմ» անունով մի շաբաթաթերթ, որի նպատակն է ընթերցողներին ծանոթացնել Անգլիայի մշակութային կյանքի առավելապես նշանակալի երևույթներին՝ նրա գիտությանը, քաղաքական կառուցվածքին, օրենքներին և այլն։ Շաբաթաթերթում առանձնապես մեծ ուշադրություն է դարձվում անգլիական գրականությանը։ Քանի որ այդ ժամանակ անգլիական բուրժուազիան ավելի հասուն դասակարգ էր, քան ֆրանսիականը, ապա Ֆրանսիայում հետաքրքրությամբ հետևում էին անգլիացիների հասարակական ու գրական կյանքին։ Աբբա Պրևոն կարողացավ օրինակելի հիմքերի վրա դնել շաբաթաթերթը, ինչպես և վերնագիրն էր շեշտում, թերթը ձգտում էր բազմակողմանիորեն լուսաբանել նյութը և առավելապես անկողմնակալ լինել։ Այնտեղ տպագրվող լուրերի արժանահավատությունը, անաչառ տոնը, քննադատական ելույթների հիմնավոր լինելը ժամանակակիցներին մեծ հարգանք էին ներշնչում այդ օրգանի հանդեպ։ Բավական է ասել, որ Վոլտերն անգամ ձգտում էր, որ իր ստեղծագործությունների մասին նպաստավոր կարծիք հայտնվի նրա էջերում։ Դրա հետ միասին Պրևոն ջանում էր շաբաթաթերթերը զարձնել հետաքրքրական ու հանրամատչելի, և դա նպաստում էր, որ նա տարածում ունենա թե՛ ազնվականների և թե՛ քաղքենիների շրջանում։

Շաբաթաթերթը հրատարակվեց մինչև 1740 թվականը և նշանակալից դեր կատարեց անգլիական ու ֆրանսիական գրականությունների մերձեցման գործում։

1734 թվականին Պրևոն հայրենիք վերադառնալու հնարավորություն ստացավ. պապը ներում էր շնորհել նրան, պայմանով, որ աբբան մոնթի քնությունը տա։ Ֆրանսիա վերադառնալուց հետո Պրևոն սկսեց հրատարակել իր երկրորդ մեծ վեպը՝ «Քիլերինի վանահայրը. բարոյական պատմություն։ Այս երկի գլխավոր հերոսը իոլանդական քահանա է՝ կուզ ու հաշմանդամ, բացառիկ բարեխիղճ ու ազնիվ մի մարդ, միշտ պատրաստ անձնվիրություն։ Նա մասնակցում է իր երկու եղբայրների և քրոջ փոթորկահույզ կյանքին, որպեսզի բարոյապես աստար լինի նրանց, օգնի, որ նրանք կշտամբանեն իրենց խոտոզ կրքերը և զիտակցեն սնփական սիալները։

1736 թ. ֆրանսիական խոշորագույն մեծավորներից մեկը՝ իշխան Կոնտին, Պրևոյին հրավիրեց իր շքախումբը որպես պալատական քահանա։ Աբբան լոկ անվանապես էր վարում այդ պաշտոնը, որը կապված չէր որևէ պարտավորության հետ։ Թեև դա ոչ մի եկամուտ չէր տալիս, սակայն շքախմբի քահանայի դրությունը հնարավորություն էր ընձեռում նրան ապրել մենաստանից դուրս։ Իր ժամանակի խոշոր գրողներից մեկը լինելու հոշակը նրա առաջ բաց արեց բարձրաշխարհիկ հասարակության գրական սալոնների դռները. նա ունեցավ բազմաթիվ բարեկամներ, մեծարողներ, նամակագրական կապ հաստատեց ականավոր շատ ժամանակակիցների, հատկապես Վոլտերի հետ։ Սակայն նրա նյութական դրությունը մնաց ողբալի։ Վոլտերին գրած մի նամակում (1740) Պրևոն տրտնջում է գրամական դժվարություններից, ոռնիկ չի ստանում, պարտքերն աճում են։ Պրևոն խնդրում է Վոլտերին միջնորդել Պրուսիայի Ֆրիդրիխ արքայի առաջ, որպեսզի նա որևէ պաշտոն տա իրեն, սակայն, շատ չանցած, հրաժարվում է մեկնել Բեռլին՝ մասամբ ուղևորության համար միջոցներ չունենալու պատճառով։

Հենց այդ ժամանակ էլ Պրևոյի ճակատին գրված էր մի անգամ ևս դառնալ վտարանդի։ Այդ տարիներին Ֆրանսիայում լայնորեն տարածված չին ձեռագիր հանդեսներ. դրանք հաղորդում էին ամեն տեսակ լուրեր, շշուկներ, բարձր դասին վերաբերող բամբասանքներ, որոնք հաճախ նույնիսկ չէին համապատասխանում իրականությանը։ Ճարպիկ գործարաններ՝ այսպես կոչված journalistes à la main ծածուկ բազմացնում էին այդ ձեռագիր հանդեսները և ուղարկում բաժանորդներին։ Պրևոն անգամ ուշադրություն էր ունեցել օգնելու այդ ընդհատակյա լրագրողներից մեկին՝ գրական նյութը մշակելու։ Աղդեցիկ մարդկանցից մեկը իրեն գրպարտված համարեց այդ թերթում, լրագրողը ձերբակալվեց, սկսվեց հետաքննություն, որից պարզվեց, որ Պրևոն մասնակցում է հանդեսը խմբագրելուն։ Ոստիկանապետը առաջարկեց նրան հեռանալ Ֆրանսիայից։ Աբբա Պրևոն մեկուկես տարի տարաբախտ մնաց Բելգիայում ու Ֆրանկֆուրտում։

Հայրենիք վերադառնալուց հետո Պրևոյի կյանքը մտավ խաղաղ հունի

մեջ. նրա փառքը խիստ տարածված էր, հաջորդել էին հոգեկան անդորրի ու հարաբերական բարեկեցության տարիներ։ Բայց նրա ստեղծագործական թափը թուլացավ։ Պրևոն, որ առանց այն էլ շատ բան էր արել իր հայրենակիցներին անգլիական մշակույթին ծանոթացնելու համար, այժմ սկսեց թարգմանել Ռիչարդսոնի վեպերը, որ այդ ժամանակ ագահությամբ կարդում էր բովանդակ Եվրոպան։ 1751 թվականին նա հրատարակեց «Կլարիսա»-ը, իսկ «Գրանդիսոնը» նրա թարգմանությամբ լույս տեսավ արդեն մահվանից հետո՝ 1775-ին։ Պրևոյի հիանալի թարգմանությունները պակաս տարածում չունեցան, քան նրանց բնագրերը։ Հետաքրքրական է, որ իր վեպերում երկարաբանություններ թույլ տված Պրևոն Ռիչարդսոնի երկերում կատարել է գեղեցիկ կրճատումներ և դրանով իսկ մեծ արտահայտություն ու բարեհնչություն տվել նրան։

Բացի վերոհիշյալ վեպերից, աբբա Պրևոն մեծ աշխատանք թափեց՝ կազմելու ժամանակին խիստ տարածված և մեծածավալ «Ընդհանուր պատմություն ճանապարհորդություններին» երկը, որ սկսեց լույս ընծայել 1746 թվականից։ Սրա առաջին յոթ հատորը ոչ այլ ինչ է, եթե ոչ Ջոն Դրիևի անդլերեն աշխատության ազատական թարգմանություն։ Այդ աշխատությունը լույս է տեսնում Լոնդոնում 1745—1747 թվականներին, որի հրատարակիչը գրավաճառ Ասթլին էր։ Անգլերեն հրատարակությունը յոթերորդ հատորից դադարեց, գրանից հետո Պրևոն արդեն ինքնուրույն կերպով կազմեց հաջորդ ութ հատորները, որոնց վերջինը լույս տեսավ 1759 թվին։

Այս հրատարակությունը մեծ հաջողություն ունեցավ. ընթերցողների լայն շրջաններ դրանով ծանոթացան հեռավոր երկրների, տարբեր ժողովուրդների նիստ ու կացին և բարքերին։ Պրևոյին իրեն էլ մշտապես գրավում էին անծանոթ երկրները։ Ինչպես տեսանք, նա շատ էր ճամփորդել, և այդ թափառումների պատճառը ոչ միայն անհրաժեշտությունն էր, այլև օտար, հեռավոր երկրներով հետաքրքրվելը։ Այս գիծը Պրևոյին դարձնում է ռոմանտիկների նախակարապետը, որոնց ստեղծագործության մեջ էկզոտիկան այնքան զգալի տեղ էր գրավում։

Մինչև կյանքի վերջին օրը Պրևոն գրական աշխատանքից չկտրվեց։ Մահը վրա հասավ, երբ նա կազմում էր Կոնդե և Կոնտի իշխանական տոհմերի պատմությունը։ Նա մեռավ սրտի պայթյունից 1763 թ. նոյեմբերի 25-ին, Շանտիլիի մոտերքը զբոսնելու ժամանակ։

Ինչպես վերև ասացինք, «Աստված և Գրիյոյի և Մանոն Լեսկոյի պատմությունը» առաջին անգամ հրատարակվեց 1731-ին Հոլանդիայում, որպես «Տոհմիկ մարդու հիշատակարան»-ի յոթերորդ հատորը։ Ֆրանսիայում Պրևոյի գլուխ-գործոցը միանգամից ըստ արժանվույն չդնահատվեց։ Հետաքրքիր է, որ Փարիզի հրատարակիչ այրի տիկին Դելոնը, որ շտապել էր վերատպել «Հիշատակարան»-ի 5-րդ և 6-րդ հատորները, «Մանոն Լեսկոն» չավելացրեց դրանց։ Չնայած Հոլանդիայում դրա ունեցած ազմկալի հաջողությանն ու հոլանդական հանդեսների դրվատական կարծիքներին, ֆրանսիական հրատարակիչները 1732 թվականին էլ դա չտպագրեցին։ Եվ առաջին անգամ վիպակը Ֆրանսիայում լույս տեսավ 1733-ին, Ռուանում՝ իբրև

մի ինքնուրույն աշխատություն («Հիշատակարան»-ից անկախ), որը կրում էր «Ամատերդամ» նշումը և որի տիտղոսաթղթերի վրա գրված էր՝ «Երկասիրություն Պարոն Դ***-ից»։

Գիրքը հսկայական հաջողություն ունեցավ։ «Բոլորը խուժում էին դրա վրա, ինչպես թիթեռները՝ բոցի», — ասում է ժամանակակից գրող ու փաստաբան Մաթիե Մարեն[1]։

«Փարիզի արքունական ու քաղաքային թերթը» հետևյալ լուրն է տպում 1733-ի հունիսի 21-ին.

«Վերջերս լույս տեսավ «Տոհմիկ մարդու հիշատակարան»-ի նոր հատորը։ Գիրքը գրված է այնպիսի վարպետությամբ ու այնքան է հետաքրքրական, որ նույնիսկ կարգին մարդիկ համակրում են խարդախ մարդուն ու փոզոցային աղջկանց»։

Դրանից քիչ անց, հոկտեմբերի 3-ին, նույն թերթում կարելի էր կարդալ.

«Վերջերս այստեղ գրված է «Մանոն Լեսկոյի ու ասպետ դե Գրիյոյի պատմությունը», որը «Տոհմիկ մարդու հիշատակարան»-ի շարունակությունն է։ Հերոսը խաբեբայի մեկն է, հերոսուհին՝ անառակ կին, և, այնուհետև, հեղինակը, չգիտես ինչպես, կարողացել է շնորհով մարդկանց համակրանք ներշնչել նրանց հանդեպ։ Այդ հեղինակը գրում է հիանալի. նա արձակի մեջ այն է, ինչ Վոլտերը չափածոյում»։

Սակայն, շատ չանցած, իշխանությունը հրաման է արձակում հավաքել գրքերն ու ոչնչացնել։ Պահպանվել է մի փաստաթուղթ՝ փարիզյան մի գրավաճառից հինգ և մի ուրիշից երկու օրինակ բռնագրավելու վերաբերյալ։

«Մանոն Լեսկոյի պատմությանը» կարելի է որոշ բան ավելացնել,— գրել է նույն թերթը հոկտեմբերի 12-ին։— Այս գրքույկը, որ նոր էր ընդհանուր ուշադրություն գրավել, վերջերս արգելվեց։ Բացի այն, որ այստեղ պատվարժան մարդկանց վերագրվում են նրանց ոչ վայել արարքներ, մոլությունն ու անառակությունը այնպես է նկարագրել հեղինակը, որ պատշաճ զվարճանք չեն առաջացնում»։

Այս լուրերի մեջ Պրևոյի անունը չի հիշատակված, այնպես որ լայն հասարակությունը հավանորեն չէր իմանում, թե ով է ազմուկ հանած գրքի հեղինակը։

Սակայն այդ ժամանակ հայտնի իրավաբան ու գրող ակադեմիկոս Բուշիին (Bouhier) գրած մի նամակում Մարին տալիս է հեղինակի անունը։ Մի քանի հատված թերթերը այդ նամակներից, քանի որ դրանք պերճախոս կերպով ցույց են տալիս, թե ինչ պատկերացում էին կազմել Պրևոյի մասին նրա ժամանակակիցները։

Փարիզ, 1773, դեկտեմբերի 1

«...Այս նախկին բենեդիկտյանը տկարամիտ մարդ է. վերջերս նա գրել է մի նողկալի գրքույկ՝ «Մանոն Լեսկոյի պատմությունը» վերնագրով։ Գրքի հերոսուհին Ամատերդամում արգելափակված մի պոռնիկ է, որին շրթայա-

[1] Harrisse. L'abbé Prévost, p. 177.

կապ ուղարկում են Միսխասիպի։ Գրքույկը ծախվում է Փարիզում, որի վրա այնպես էին նեսվում, ինչպես Բիբեռները կրակին։ Հենց Փարիզում էլ արժեր վառել թե՛ գրքույկը, թե՛ հեղինակին, թեև նրա գրելակերպը վատ չէ»։

Փարիզ, 1773, դեկտեմբերի 8

«Կարդացե՞լ եք արդյոք «Մանոն Լեսկոն», այստեղ ընդամենը մի հաջող համեմատություն կա. աղջիկն այնքան է սիրուն, որ կարող է հեթանոսությունը վերականգնել աշխարհում»։

Փարիզ, 1773, դեկտեմբերի 15

«Թերթեցեք «Մանոն Լեսկոն», այնուհետև գցեք կրակը. բայց մի անգամ պետք է կարդալ, իսկ եթե ոչ՝ զետեղեցեք պրիապոսների բաժինը, որ նրա պատշաճ տեղն է»[1]։

Գիրքը վաճառքից հանելն, իհարկե, չէր կարող տապալել նրա հաջողությունը, և ժամանակակիցները վեպը մեծ եռանդով կարդում էին Ֆրանսիա ներմուծվող հոլանդական բազմաթիվ հրատարակություններով։

Այս գիրքը որպես անբարոյական գրված արգելելը այն ժամանակաշրջանում, երբ բարքերը խիստ ընկած էին, այժմ անհասկանալի է թվում։ Բայց գուցե հենց այդ բարոյազանցությունն էլ դարձավ հեղինակի հիմնական գաղափարը թերագնահատելու ու չհասկանալու պատճառը. ժամանակակիցները Պրևոյի վեպում տեսնում էին միայն երկու անառակ երիտասարդների թերևամիտ արկածների պատմությունը։ Հենց այդպես էլ Ա. Գերցենը բացատրել է, թե ինչու Պրևոյի գիրքը թերագնահատել են ժամանակակիցները։

Գրքի արգելումը Պրևոյին մղեց պաշտպանելու իր երկը սեփական հանդեսում։ Օգտվելով այն բանից, որ գիրքը անստորագիր էր լույս տեսել և հանդեսում էլ հոդվածն անստորագիր էր տպվում, Պրևոն համարձակվեց տալ իր երկասիրության գնահատականը։ Նրբամտորեն վերլուծելով վեպը, Պրևոն ջանաց մեղմացնել նրա թողած տպավորությունը և ետ մղել այն կշտամբանքները, թե իբրև ինքը «անբարոյական» գիրք է գրել։

Ահա թե ինչ է գրել Պրևոն.

«Հասարակությունը մեծ հաճույքով կարդաց «Տոհմիկ մարդու հիշատակարան»-ի վերջին հատորը, որ պարունակում է ասպետ դե Գրիյոյի ու Մանոն Լեսկոյի արկածները։

Մենք այստեղ տեսնում ենք փայլուն ու վերին աստիճանի գրավիչ ընդունակություններով օժտված մի երիտասարդ, որը հափշտակված է իր սիրած գրված մի գեղատի կնոջ հանդեպ տածած խելահեղ կրքով ու թափառական անառակ կյանքը գերազանցում է այն բոլոր բարիքներից, որ խոստանում են նրան իր շնորհներն ու ծագումը։ Նա սիրո տարաբախտ զոհն է և նախօրոք տեսնում է իրեն սպասող ձախորդությունները, սակայն հեռու է գրանից խույս տալու համար որևէ բան ձեռնարկելու մտքից։ Նա լիովի կրում է այդ ձախորդությունները, թաղվում դրանց մեջ, բայց, այնուամենայնիվ, անտեսում է այն միջոցները, որոնք կարող էին օգնել նրան ավելի լավ դիրք գրավելու։ Մի խոսքով, այդ երիտասարդը և՛ արատավոր է, և՛ առաքինի, բարեմտորեն մտածող, բայց վատ գործող. համակրելի է իր մտածելակերպով ու զզվելի՝ իր արարքներով։ Սա մի եզակի բնավորություն է։

Ավելի եզակի է Մանոն Լեսկոյի բնավորությունը։ Նա գիտե, թե ինչ բան է առաքինությունը, նույնիսկ գնահատում է այն և, այնուամենայնիվ, անարժան բաներ է անում։ Նա ասպիսի սիրում է ասպետ դե Գրիյոյին, գերադասում է նրան մի հարուստ ֆինանսիստից։ Ինչպիսի արվեստ էր պահանջվում՝ ընթերցողին գրավելու և համակրանք հարուցելու նրա մեջ այն աղետալի ձախորդությունների նկատմամբ, որ ապրում է այդ ապականված աղջիկը։

Թեև երկուսն էլ անառակ են, բայց մարդ խղճում է նրանց, որովհետև տեսնում է, որ այդ սանձարձակությունը առաջանում է թուլակամությունից և բուռն կրքից, մանավանդ որ նրանք ներքուստ դատապարտում են իրենց վարքը ու խոստովանում, թե որքան պարսավելի է դա։

Հետևաբար, չարիք նկարագրելով հանդերձ, հեղինակը բնավ էլ չարիք չի ուսուցանում։ Նա պատկերում է խելահեղ կրքի ազդեցությունը, որ անօգուտ է դարձնում բանականությունը, երբ մարդ գժբախտություն ունի ամբողջովին անձնատուր լինելու այդ կրքին։ Այդպիսի կիրքը թեև չի կարող սրտում ամբողջովին լռեցնել առաքինությունը, այնուամենայնիվ, խանգարում է իրականում հետևել այդ առաքինությանը։ Մի խոսքով, այդ ստեղծագործությունը երևան է հանում ցսփության պատճառած բոլոր վտանգները։ Չի լինի այնպիսի մի երիտասարդ, այնպիսի մի աղջիկ, որը ցանկանա նմանվել դե Գրիյոյին կամ նրա սիրուհուն։ Նրանք անառակ են, սակայն տանջվում են զղջումից ու վշտերից։

Բայց հիանալի է ասպետ բարեկամ, առաքինի քահանա Տիբերժի բնավորությունը։ Դա մի իմաստուն, բարեպաշտ ու ասպետասեր մարդ է, քննքշասիրտ ու մեծահոգի բարեկամ, ընկերոջ մոլորությունների համար մշտապես մորմոքող անձ։ Որքան գրավիչ է ասպետասիրությունը, երբ ուղեկցում է մի այդպիսի սքանչելի բնավորության։

Ես ոչինչ չեմ ասի այդ երկի ոճի մասին։ Այդտեղ ոչ գռեհկություն կա, ոչ վերամբարձություն, ոչ էլ սոփեստական գատողություններ. այդտեղ գրիչի առաջնորդողը բնականությունն է։ Ինչքան ողորմելի է թվում դրա կողքին ճոռոմ և իրականությունը գունազարդող գրողների ոճը։ Այստեղ հեղինակը չի ընկնում սրամտության կամ այդպիսին հորջորջվողի ետևից։ Սա ոչ թե լակոնական պրկված ոճ է, այլ սահուն, հագեցած ու արտահայտիչ»։

Վիպակը բան տարի մնաց արգելքի տակ։ Միայն 1753 թվականին արգելքը վերացվեց, և լույս տեսավ նոր հրատարակություն՝ երկու օրյակով, բազմաթիվ, սակայն էությունը չփոխող ուղղումներով և հավելյալ գլխագրով։

Այդ օրվանից «Մանոն Լեսկոն» հաստատ տեղ գրավեց համաշխարհային գրականության ամենաակնառու գործերի մեջ։

[1] Harrisse. L'abbé Prévost, p. 177.

Ֆրանսիայում այդ գիրքը լույս տեսավ իսկապես անհամար անգամ՝ և՛ նշանավոր նկարիչների պատկերազարդումներով լի թանկագին հրատարակություններով, և՛ մասսայական էժանագին տիրաժներով, և՛ լայն լուսանցքներ ունեցող մեծածավալ հատորների ձևով, և՛ գրպանի պլաստիկ գրքույկներով, և՛ «ակադեմիական» հրատարակությամբ՝ նախաբաններով, ծանոթագրություններով, բիբլիոգրաֆիական տեղեկատուներով, տարբերակներով և այլն։

Լույս տեսան բազմաթիվ հոդվածներ (երբեմն որպես նախաբան), որոնց հեղինակները տարբեր տեսակետներից էին մեկնաբանում վեպը և ջանում կռահել գլխավոր հերոսուհու թովչանքի գաղտնիքը։

Հակիրճ մի ակնարկում հնարավոր չէ թվել ֆրանսիական քննադատների ու գրողների բոլոր կարծիքները։ Նշենք միայն ամենանշանակալիները։

Պոլ դը Սեն-Վիկտորը գրում է. «Կան անպարկեշտ գրքեր, որոնցով հիանում ենք՝ չնայելով նրանց կեղտին, բայց դրա հետ միասին նաև ցավում ենք, որ չենք կարող մաքրել կեղտոտ էջերը։ «Մանոն Լեսկոն» մի զարմանալի բացառություն է. այդ վիպակը զուր է գալիս հենց իր անպարկեշտությամբ, և մենք բնավ չենք ուզենա չքմեղացնել նրա հերոսուհուն։ Եթե Մանոնը այդչափ հանցավոր և այդքան անբարոյական չլիներ, ապա այլևս ինքը չէր լինի։ Կեղտի բիծը սաղում է այդ թովուն աղջկան ինչպես խալը։ Դա այն տարբերանշանն է, որով ճանաչում են նրան սիրեկանները։ Հարկ չկա տատանվել ընտրելու այն բառը, որով պետք է հատկանշել այդ ստոր ու զմայլելի արարածին, նա «լիքը» է բառի ամենաանեղուր իմաստով»։ «Գերմանական բանաստեղծ Ունիդայի նման՝ սա էլ հոգի չունի[1]»։

Հուսեն (Houssaye) շեշտելով վիպակի ինքնակենսագրական արժանահավատությունը, ասում է, որ Պրևոն պատկերել է իրեն այդ երկասիրության մեջ երկու անգամ՝ ի դեմս Գրիյոյի (իր կիրքը) և Տիբերժի (իր խիղճը)։ «Աբբա Պրևոն արդարև եղել է մերթ դե Գրիյո, մերթ՝ Տիբերժ. այս երկու բնավորությունների մեջ վերին աստիճանի ճշմարտացի արտահայտված են երկու նախակիզբ, որոնք անընդհատ պայքարում էին նրա բոցավառ, սակայն թույլ սրտում։ Դե Գրիյոն ու Տիբերժը նշանակում են գործողություն ու հակազդեցություն, մակընթացություն և տեղատվություն, վայրի ձիու նման քառասմբակ արշավող անխոհեմություն և բաշից նրան բռնող, զսպող ու հեռացնող բանականություն[2]»։ «Այս վիպակում տեսնում ենք ամբողջ Պրևոյին, նրա ամբողջ տաղանդն ու սիրտը»[3]։

Ալեքսանդր Դյումա-որդին Պրևոյի վիպակի համար գրած հայտնի նախաբանում ասում է, թե չի կարելի կշտամբել գրողներին, որ անառակություն նկարագրելիս խրախուսում են դա. եթե անառակություն չլիներ, ասում է նա, այդ անառակությունները նկարագրող գրողներ ևս չէին լինի։ Դյուման ընդգծում է, որ Պրևոյի վիպակում, ինչպես և ամեն մի կատարյալ ստեղծագործության մեջ, վառ արտացոլվել է դարաշրջանի ոգին։ «Մանոն Լեսկոյի պատմությունը, ինչպես որ կա, փոխադրեցեք մի ուրիշ դարաշրջան և այլ բարքերի պայմաններ, նա իսկույն կկորցնի իր իմաստը, — ասում է նա և անմիջապես առաջարկում։— Այն զգացմունքները, որ նկարագրված են այդտեղ և անբակտելի են մարդկային սրտից, այսինքն՝ մշտապես անփոփոխ գոյություն ունեցողից, կմնան նույնքան ճշմարտացի, սակայն նկարագրվող փաստերը մերթ-մերթ կզայրացնեն մեզ իրենց անճշմարտացիությամբ»։ Դյուման հավատում է, որ եթե դե Գրիյոյի հայրը, Տիբերժը, անառակ ծերունիները և վեպի մյուս անձինք Ռեգենտության շրջանի ցայտուն ներկայացուցիչներն են, ապա Մանոնը բոլոր ժամանակներում գոյություն ունեցող տիպ է։ «Դու դեռատիություն ես, դու զգայականություն ես, դու տոփանք ես, դու տղամարդկանց ուրախությունն ես ու հավերժական գայթակղությունը։ Դու նույնիսկ սիրում էիր, որքան, իհարկե, կարող է սիրել քեզ նմանը, այսինքն՝ սիրում էիր, ցանկանալով սիրուց ստանալ միայն հաճույք և օգուտ։ Հենց որ հարկ էր լինում որևէ բան զոհաբերել, դու խուսափում էիր դրանից»։ Իսկ ասպետի մասին Դյուման ասում է. «Զոհաբերության, անձնազոհության և ներողամտության ինչպիսի՜ անսպառ աղբյուր։ Այս հոգոտը դառնում է ապերախտ զավակ, խոստմնադրուժ բարեկամ, խաբեբա ու մարդասպան։ Սակայն ամեն ինչ ներում ենք նրան. չէ՞ որ նա սիրում է։ Նա դավաճանում է բոլորին, Մանոնին՝ երբեք։ Ոչ մի բոպե չի դադարում նրա մասին մտածելուց։ Չի լինի մի կարգին մարդ, որը լսելով նրա ձախորդությունների պատմությունը, ձեռք չմեկնի նրան, եթե չասենք ավելին, որ կարող է նույնիսկ նախանձել։ Որովհետև ով քեզ չի սիրել, Մանոն, չի զգացել սիրո բոլոր խորությունները։ Բայց դու գիտես, Մանոն, որ այդ մարդը շատ ավելի լավ է քեզնից, հազարապատիկ լավ։ Ամեն բանից զրկվելուց հետո միայն դու սկսեցիր հասկանալ, թե ինչպիսի մարդ է նա, և այս կետում դու ամբողջովին կին ես։ Մինչդեռ նա այնքան լավ է ճանաչում քեզ և այնպես է տատապում դրանից։ Կասկածելի ապրումներ ունենալով քո մշտական դավաճանությունների առթիվ, նա տանջվում է ոչ միայն այն բանից, որ զրկվում է քեզ ունենալու հրճվանքից և ոչ միայն այն պատճառով, որ դու այդ հրճվանքը ուրիշին ես մատուցում, այլ որովհետև նա գիտե, որ ինչպիսին էլ ուզում է լինի քո մեղսակիցը, միևնույն է, այդ հրճվանքը դու տալիս ես նրան»։ Դրա հետ նաև Դյուման նկատում է, որ Մանոնի նման կանանց սիրում ու փառաբանում են, քանի դեռ նրանք երիտասարդ են։ «Բարոյականությունը, որ դու ոտնակոխ ես անում, պարտավորությունները, որ դու արհամարհում ես, վաղ թե ուշ իրենց իրավունքներին կտիրանան, և դու, քո հերթին ոտնատակ տրված, արհամարհված ու նշավակված, կփշրվես, դիպչելով այն բանին, ինչը նույնքան հավերժական է, որքան դու, կփշրվես դիպչելով ընտանիքին, աշխատանքին, համեստությանը ու սիրուն»[1]։

Մոպասանը տվել է Մանոնի կերպարի նուրբ վերլուծությունը Լոնետ հրա-

---

[1] Paul de Saint—Victor. Hommes et dieux. P., 1880, p. 479, 481.

[2] Histoire de Manon.. P., Jouaust, 1874, p. VII.

[3] Նույն տեղը, էջ XXVI.

[1] „Histoire du chevalier des Grieux...“ P., Glady frères. 1875. p. XIX.

տարակուսության առաջաբանում։ Սկսելով այն բանից, որ կինը ստեղծված է միայն սիրո ու մայրության համար, Մոպասանն ասում է, որ «գրողները մեղ թողել են միայն երեք-չորս սքանչելի կանացի կերպար, որոնք ապրում են մեր մեջ որպես հուշ, ասես մենք ճանաչել ենք այդ կանանց, և այնքան շոշափելի կերպով, որ կենդանի են թվում»։ Հիշատակելով Վերգիլիոսի Դիդոնին, Շեքսպիրի Ջուլիետին, Բեռնարդեն դը Սեն-Պիերի Վերժինիին, նա շարունակում է. «Եվ վերջապես Մանոն Լեսկոն՝ բոլորից ամենականացին, պարզամտորեն խաբեբա, գրաժան, սիրող, հուզվող, սրամիտ, վտանգավոր ու թվիլ։ Հմայքով ու բնածին խարդավանանքով համակված այդ կերպարի մեջ հեղինակը կարծես մարմնավորել է այն ամենը, ինչ ամենագրավիչն է, գերիշը և ստորը կանանց մեջ։ Մանոնը կին է բառի բուն նշանակությամբ, հենց այնպիսին, ինչպիսին միշտ եղել է և կլինի կինը»։ «Եվ որքա՜ն անկեղծ է այդ պոռնիկը իր բոլոր խաբեբայություններում, որքան անենեղ է իր անազնվության մեջ»։ «Սիրո մեջ նա գազանիկ է, ի բեռ խորամանկ գազանիկ՝ բոլորովին զուրկ նուրբ զգացմունքներից կամ ավելի ճիշտ՝ ամենայն ամոթից։ Եվ, այնուամենայնիվ, նա սիրում է «իր ասպետին», բայց իր ձևով, ինչպես կարող է խղճից զուրկ արարածը միայն սիրել»։ «Ոչ մի կանացի կերպար չի կերտված այնպիսի նրբությամբ ու կատարելությամբ, ինչպես այս. ոչ մի կին այնքան կանացի չի եղել, այդ աստիճան համակված չի եղել կանացի նախասկզբի այնքան առինքնող, այնքան վտանգավոր ու այնքան ուխտադրուժ խաբեությամբ»[1]։

* * *

Արբա Պրևոն «Ասպետ դե Գրիյոյի ու Մանոն Լեսկոյի պատմության» մեջ քննարկում է ճակատագրական, ամենակուլ սիրո թեման, մի թեմա, որ, ինչպես տեսանք, տիրապետող է նրա ստեղծագործությունների մեջ։ Սակայն ի տարբերություն Պրևոյի բարդ ու խճճված ֆաբուլա ունեցող մեծածավալ վեպերի, «Մանոն Լեսկոն» աչքի է ընկնում բացառիկ կուռ և հավասարակշռված կոմպոզիցիայով։ Թերևս դրա պատճառը վիպակի ինքնակենսագրական բնույթն է. հեղինակի կողմից խորապես ապրված դրաման բավարար նյութ է եղել և թույլ է տվել նրան հրաժարվել մտացածին դրություններ ու դեպքեր կուտակելուց։

Պրևոն ստեղծել է «ընկած աղջկա» մի այնպիսի գերիշ կերպար, որը ընթերցողների գիտակցության մեջ խկուլն ստվերում է իր սիրեցյալ ասպետին։ Դրա ապացույցն է առաջին հայացքից մանր, սակայն խիստ պերճախոս մի փաստ. արդեն անցած դարի սկզբին հրատարակիչներն սկսեցին կամայականորեն «սրբագրել» վեպի վերնագիրը։ «Ասպետ դե Գրիյոյի և Մանոն Լեսկոյի պատմությունը» դարձավ «Մանոն Լեսկոյի և ասպետ դե Գրիյոյի պատմությունն», իսկ տարիների ընթացքում հերոսուհին դե Գրիյոյին բոլորովին դուրս հանեց տիտղոսաթերթից. վիպակն սկսեց կոչվել պարզապես «Մանոն Լեսկո»։

Վերջին տարիներս միայն ֆրանսիական հրատարակիչները վերադարձան սկզբնական, հեղինակի տված վերնագրին։ Անունների տեղափոխությունը կարող է մանրուք թվալ, մինչդեռ իրականում այստեղ շոշափվում է գլխավոր հերոսի հարցը, որի ողբերգությունն էլ մտադրվել է պատմել մեզ հեղինակը։ Եվ զուր չէ իհարկե, որ Պրևոն գրել է նախ՝ դե Գրիյոյի անունը. չէ՞ որ հենց դե Գրիյոն է վիպակի ողբերգական հերոսը և ոչ թե Մանոնը։ Դրան կարելի է առարկել, ասելով, թե վեպում կան երկու հերոս, որոնք կապված են զգացմունքների ընդհանրությամբ և անբաժան են իրարից, ինչպես անբաժան են, օրինակ, Ռոմեոն և Ջուլիետը, Տրիստանն ու Իզոլդան և հանրահայտ ստեղծագործությունների ուրիշ շատ պերսոնաժներ։ Սակայն ճիշտ չի լինի այդ առարկությունը. և՛ Շեքսպիրի ողբերգության մեջ, և՛ միջնադարյան վեպում մենք տեսնում ենք երկու հերոս՝ հավասարապես ազնիվ, հավասարապես անձնազոհ և, հիրավի, հոգեկան մի ամբողջություն կազմող։ Նրանք ապրում են միևնույն, երկուսի համար էլ ընդհանուր ողբերգություն։ Հավասարապես այդպես են ըմբռնում դե Գրիյոյի ու Մանոնի կոնֆլիկտը նաև այն քննադատները, որոնք խոսում են Մանոնի բարոյական մաքրության մասին և այս տեսակետից հավասարեցնում են նրան դե Գրիյոյին։

Մինչդեռ Պրևոյի պատմած դեպքերում կոնֆլիկտը ասպետի ու նրա սիրուհու բնավորությունների խոր տարբերությունն է։

Եթե դե Գրիյոն նույնքան բարոյազանց լիներ, ինչպես Մանոնը, ապա նրանց հանդիպումը ողբերգական հետևանք չէր ունենա։ Միացնելով իր բախտը Մանոնի հետ, նա կդառնար մի բարգավաճող սուտենյոր և, նկատի ունենալով Մանոնի արտաքին գրավչությունը, բարեկամները կապրեին հոգսից ու կարիքից անտեղյակ։ Ի դեպ, հենց այսպիսի ուղի են թելադրում ասպետին և՛ Մանոնի եղբայրը, և՛ հենց ինքը Մանոնը։

Սակայն ամբողջ հարցն այն է, որ դե Գրիյոն ու Մանոնը խիստ տարբեր խառնվածքներ են. նրանց բարոյական էությունը, մտավոր պատկերը ընդհանրություն քիչ ունեն։ Դե Գրիյոյի համար ողբերգությունն այն է, որ հնարավոր չէ Մանոնի հետ իրագործել սիրո այն բարձր իդեալը, որը միայն կարող է բավարարել իրեն. իսկ Մանոնի ամբողջ ողբերգությունը նյութական բարիքների պակասն է։

Հեղինակի ցանկությամբ պատմությունը առաջ է տարվում դե Գրիյոյի անունից։ Պատումի ինքնակենսագրական ձևը Պրևոյին թույլ է տալիս սպառիչ խորությամբ և ճշմարտացիությամբ բացել մեր առաջ հերոսի ներքնաշխարհը. նրանց հանդիպման ճակատագրական բնույթը շեշտվում է դրա զուտ պատահական լինելով, իսկ վայրկենապես բռնկված կիրքը ցույց է տալիս, որ նրա զգացմունքները բնավ ռացիոնալ չեն։ Ճիշտ այդպես հանկարծակի է կիրքը ծնվում միջնադարյան «Տրիստան և Իզոլդա» վեպի հերոսների սրտում։ Բայց այնտեղ զգացմունքը սկիզբ է առնում երիտասարդների խմած սիրահեղուկի ազդեցությամբ։ Պրևոյի վեպում չկա այդպիսի «նյութական-

[1] Լոնետ (Launette) հրատարակության նախաբան, Փարիզ, 1885։ Թարգմ. Վ. Գ. Դմիտրիևի (Монассан. собр. соч., т. XIII. М., 1950, стр. 231)։

ցած» կախարդություն, դե Գրիյոն հաղթված է ոչ թե կախարդական խմիչքից, այլ անծանոթ կնոջ արտաքին թովչանքից։ Դե Գրիյոյի մղումը դեպի Մանոնը բացառապես զգայական է և առաջացել է աղջկա ոչ թե հոգեկան արժանիքներից, այլ արտաքին գրավչությունից։ Այդ կրքի հանկարծակիությունն ինքնին ցույց է տալիս, որ հիմքը զուտ զգայական է. դե Գրիյոյի դեպի Մանոնն ունեցած ցանկությունը բռնկվում է առաջին անգամ նրանց տեսնելիս, նախքան թեկուզ մակերեսայնորեն նրա հետ ծանոթանալը։

Դե Գրիյոյի հափշտակվելու զգայական հիմքը ավելի ակներև է արտահայտվում երկրորդ անգամ Մանոնին վարժարանում հանդիպելիս։ Եթե իջևանում հանդիպելիս, դեռ Մանոնին չճանաչելով, դե Գրիյոն կարող էր ենթադրել, որ նրա արտաքին հմայքին համապատասխանում է և բարոյական կատարելությունը, ապա հիմա, Մանոնի դավաճանությունից և հարուստ հովանավորի մոտ գնալուց հետո, դե Գրիյոն արդեն չի կարող մոլորվել։

Նշենք նաև, որ առաջին հանդիպման ժամանակ նա դեռ շատ երիտասարդ էր, կյանքի ուղին ընտրելու համար միանգամայն ազատ, իսկ երկրորդ հանդիպման պահին, երկու տարի անց, նա արդեն դարձել է ոչ միայն կյանքում ավելի փորձված մարդ, այլև հասարակության ու սեփական խղճի հանդեպ որոշ պարտավորություն ստանձնած։ Ուրեմն դե Գրիյոյի երկրորդ «անկումը» շատ ավելի լուրջ ու խոր է առաջինից, իսկ Մանոնի երկրորդ «հաղթանակը» ի տարբերություն առաջինի, որ պատահական է և նրա կամքից անկախ, կանխամտածված է ու ավելի համոզիչ։

Դե Գրիյոյի բնածին ազնվությունը և իդեալիզմը խանգարում են նրան տեսնելու Մանոնին այնպես, ինչպես է։ Միայն պայծառամտության սակավաթիվ բոպեներին է, և այն էլ սիրուհու բացակայության ժամանակ, երբ դե Գրիյոն գիտակցում է իր բարոյական անկումը, որն առավել խոր է ապրում, որովհետև նրա համոզմամբ՝ պայքարը նրա ուժերից վեր է ու անհնարին, քանի որ մարդու կամքը ազատ չէ։

Ֆրանսիական գրականագետները, մասնավորապես Պոլ Հազարը, շեշտում են, որ դե Գրիյոյի աշխարհայացքում խիստ արտահայտվել է յանսենիզմի ազդեցությունը։ Հոլանդացի աստվածաբան Յանսենը (1585—1638) սովորեցնում էր, որ մարդու կամքը բարին ու չարը ընտրելու մեջ ազատ չէ։ Միայն նախախնամության օգնությունը, միայն աստվածային բարեբախտությունը ամրապնդում է մարդուն և ուղղում նրան դեպի բարին։ XVII—XVIII դարերում յանսենիզմը Ֆրանսիայում լայն տարածում ունեցավ ոչ միայն աստվածաբանական շրջանների, այլև հասարակության մեջ։ Յանսենիզմի կողմնակիցներից կարելի է թվել այնպիսի ականավոր մտածողների ու գրողների, ինչպիսիներն են՝ Պասկալը, Առնոն, Ռասինը և ուրիշները։ Պրևոյի վեպում յանսենիզմի ազդեցությունը առանձնապես նկատվում է դե Գրիյոյի փիլիսոփայական դատողությունների մեջ։

Սիրո իր վեհ իդեալներին հավատարիմ ասպետը Մանոնին վերաբերվում է որպես կանացիության մաքուր մարմնացման։ Հարկ է նշել, որ դե Գրիյոն ոչինչ չի ասում մեզ Մանոնի ֆիզիկական կերպարանքի, դիմագծերի մասին։ Նրա համար Մանոնը բացարձակություն է, կատարելության բոլոր գծերով օժտված։

Եվ որպես իսկական ասպետ, դե Գրիյոն իր կուռքին է զոհաբերում այն ամենը, ինչ ունի՝ բարի անունը, հասարակական դիրքը, ընտանիքը, կարիերան, նյութական բարեկեցությունը. նա պատրաստ է, եթե պետք լինի, զոհաբերել և իր կյանքը։

Մանոնի կերպարը իր գեղարվեստական արժանիքներով համաշխարհային գրականության ամենակատարյալ կերտվածքներից է։ Հեղինակը կարողացել է այնպիսի համոզչությամբ իր հերոսուհու մեջ ի մի բերել արտաքին հմայքը և ներքին սահմանափակությունը, որ ընթերցողը շարունակ գրտնըվում է հակադիր զգացմունքների սահմանագծի վրա՝ մերթ հիանում է, մերթ զայրանում նրա վրա։

Ճիշտ է, չի կարելի մոռանալ, որ Մանոնի կերպարը մենք ընկալում ենք դե Գրիյոյի ասածներից՝ ամենակողմնակալ պատմողից։ Դե Գրիյոն ջանում է միշտ արդարացնել Մանոնին և սակավադեպ վայրկյաններին է միայն, որ քիչ թե շատ գիտակցում է նրա թերությունները։

Դե Գրիյոն բնականաբար պատկերում է Մանոնին այնպես, ինչպես տեսել է նրան իրենց հանդիպումների շրջանում, այլ կերպ ասած՝ նկարագրում է լավ կողմից։ Մենք ոչինչ չգիտենք ոչ նրա անցյալի, ոչ էլ դե Գրիյոյի բացակայությանը՝ հարուստ հաճախորդների տներում վարած նրա կյանքի մասին, որովհետև պատմողն ինքն էլ չի իմանում դա։

Իր ամբողջ անկեղծությամբ ու ճշմարտացիությամբ հանդերձ դե Գրիյոն խիստ իդեալականացնում է իր սիրուհուն։ Օրինակ, նա ասում է, թե հենց որ առաջին անգամ Ամիյենում հանդիպեց Մանոնին, իրեն թվաց, թե «նրա զգացմունքները իմից պակաս չեն բորբոքված»։ Մինչդեռ իրականում Մանոնը համաձայնեց փախչել հենց նոր ծանոթացած երիտասարդի հետ նախ և առաջ այն պատճառով, որ ամեն գնով ուզում էր ազատվել վանքից, ուր որոշել էին տեղավորել նրան ծնողները «հակառակ իր կամքի, անկասկած, արդեն երևան եկած հաճույքների նրա հակումները սանձահարելու համար»։ Հետևաբար, չի կարելի խոսել Մանոնի մեջ հանկարծ ծագած զգացմունքի մասին։ Մանոնն անմիջապես հասկացավ, թե ինչ օգուտ կարող է քաղել երիտասարդ ու հարուստ ազնվականի հանդիպելուց։ Դե Գրիյոն ինքը նշում է, որ աղջիկը (այդ ժամանակ նոր թևակոխած տասնյոթ տարին) շատ ավելի փորձված էր իրենից։

Մանոնի ընտանիքի մասին մենք ոչինչ չգիտենք։ Վեպի առաջին տարբերակում հեղինակն ասում էր, որ Մանոնը սերում է 'ոչ «տոհմիկ ընտանիքից»։ Երկրորդ տարբերակում (1753) ավելի որոշակի է խոսում — նա սերում էր «սովորական ընտանիքից»։ Պրևոն հավանորեն այդ ուղղումն արել էր ի հաճույս այն ժամանակի արիստոկրատական ընթերցողների, որոնց անհավանական կարող էր թվալ ու վիրավորական, որ իրենց շրջանից անառակ կին է դուրս եկել։ Սակայն այդ «ուղղումը» ոչինչ չի փոխում մեզ համար. էականն այն է, որ ծնողները չէին կարողանում հաղթահարել աղջկա վատ հակումները։

Մանոնը որևէ բարոյական դավանանք չունի, թույլ զարգացած մտքի տեր է և չափազանց նեղ, քաղաքնիական տեսադաշտ ունի։ Հետևաբար, սխալ է այն հավաստումը, որ իբր թե այդ վեպում տիրապետում է «մարդկային առավելագույնի» հասկացությունը, չխոսելով արդեն այն մասին, որ գեղեցիկին բնավ էլ անխուսափելիորեն զուգակից չէ հանրաճանաչ էթիկական նորմաների խախտումը — «մարդկային առավելագույնը»՝ արդուզարդ, բնթրիքներ, թատրոններ, զվարճություններ, Մանոնին խիստ պրիմիտիվ մի բան է թվում։ Ստեղծագործական նախասկիզբը, անգամ զուտ կանացի ոլորտում, խորթ է Մանոնին։ Չի կարելի պատկերացնել նրան որպես ընտանիքի մայր, անձնվեր կին, երեխաների դաստիարակ, հոգատար տանտիկին։ Ավելին, Մանոնը կրում է իր մեջ քայքայիչ ակտիվ ուժ. այն ամենը, ինչ մերձենում է նրան, խաթարվում է։ Անգամ Մանոնի ծառաները, որոնք դիտում են դե Գրիյոյի հետ վարած նրա կյանքը, վարակվում են վատ օրինակից ու կողոպտում իրենց տերերին, ինչպես տիրուհին է կողոպտում իր հաճախորդներին։

Մանոնն անընդունակ է երջանկություն պատճառել իրեն սիրող մարդուն. նա չի կարող համատեղ բարեկեցություն հիմնել անգամ այնպիսի անսասան հիմքի վրա, ինչպիսին է դե Գրիյոյի անսահման սերը։

Նրան խորթ է նաև աղգակցական որևէ զգացմունք։ Ի տարբերություն դե Գրիյոյի, որը շարունակ մտովի վերադառնում է իր հոր, եղբոր, մանկության ընկերոջ մոտ, Մանոնը բնավ չի հիշում իր ընտանիքը, չի խոսում նրա մասին։ Նա ընկերուհիներ էլ չունի։ Այն ժամանակ, երբ դե Գրիյոյի կողքին, եթե ոչ ֆիզիկապես, ապա գոնե հոգով ներկա է ընկերը՝ Տիբերժը, Մանոնի մոտ ոչ ոք չկա, նա բոլորովին միայնակ է։ Նրա հետ բարեկամություն անելու հոգ չկա։

Անհրաժեշտ է նշել, որ Պրևոյի վիպակում բոլոր դրական անձիք երևան են գալիս դե Գրիյոյի կողմից (հայրը, եղբայրը, Տիբերժը, պարոն դը Տ.-ն, ընդհուպ մինչև արգելարանի բանտապահը), իսկ բոլոր բացասական անձիք՝ Մանոնի կողմից (եղբայրը, իրար հաջորդող հաճախորդները)։ Մանոնը ասես իրեն է ձգում այն ամենը, ինչ արատավոր է։ Հատկանշական է, որ վեպում պատկերված Մանոնի բոլոր «երկրպագուները» գալիս են նրա մոտ միայն ստոր մղումներից դրդված. նրանք հիմք չունեն տարակուսելու Մանոնի դյուրամատչելի լինելուն։ Եվ նրանց մեջ չկա մեկը, որը անկեղծ զգացմունք տածի նրա հանդեպ։ Վերջին հանգամանքը՝ դե Գրիյոյի արժանի սխալան չունենալը, համոզչությունից զրկում է որոշ քննադատների այն փորձը, որով նրանք Մանոնի «ֆիզիկական դավաճանությունները» հակադրում են «հոգևոր հավատարմությանը»։

Ճիշտ է, Մանոնի վարքը Ամերիկայում պակաս դատապարտելի է, քան հայրենիքում։ Բայց հազիվ թե դրա մեջ զղջման կամ բնավորության բնական էվոլյուցիայի հետևանք կարելի է տեսնել։ Այդ դարաշրջանում Ամերիկա մեկնելը, սայլակով երկար ժամանակ Ֆրանսիայով գնալը, առագաստանավով երկու ամիս նավարկելը, կյանքի դաժան պայմանները նոր Աշխարհում, կալանավորների նվաստացած դրությունը, ամեն տեսակ զրկանքները չէին

կարող չխախտել Մանոնի հոգեկան ու ֆիզիկական ուժերը։ Ամերիկա է հասնում նա արդեն որպես ուրիշ կին՝ տանջված, ուժասպառ, հուսահատված, նախկին անհոգությունն ու թեթևամտությունը կորցրած։

Պրևոյի վիպակում աչքի է ընկնում կենցաղային գծերի բացառիկ մանրազնին նկարագրություն։ Գործողությունը տեղի է ունենում Ռեգենտության շրջանում (1715—1723), երբ ֆրանսիական հասարակության բարքերը խիստ անկաշկանդ էին։ Լյուդովիկոս XIV-ի երկարատև թագավորության վերջին տարիներին արքունիքում իշխում էր խստության ու սուտ բարեպաշտության ոգին, և դա անդրադառնում էր կյանքի ամբողջ կառուցվածքի վրա։ Իր որդուց ու թոռից ավելի ապրած Լյուդովիկոս XIV-ի մահվանից հետո գահը ժառանգեց փոքրահասակ ծոռը՝ Լյուդովիկոս XV-ը, իսկ փաստորեն կառավարող դարձավ Ֆիլիպ Օռլեանցին։ Կենսուրախ ու թեթևամիտ ռեգենտի օրոք անմիջապես ռեակցիա սկսվեց Ֆրանսիայում զառամած արքայի ժամանակ տիրապետող խստաշունչ ոգու դեմ։ Ֆրանսիական հասարակությունը ազատ շունչ քաշեց և աղատություն տվեց ապրելու պապակին, ուրախությանն ու հաճույքներին։

Արքա Պրևոն բացառիկ ճշգրտությամբ վերարտադրել է իր վեպում այդ ժամանակի կենցաղային շատ գծեր։ Ռեգենտության շրջանի պատմաբանները միաբերան հավաստում են, որ այնպիսի մանրամասնություններ, ինչպես աբսորականներին Ամերիկա ուղարկելու կարգն է, խաղատների գտնվելու տեղն ու բարքերը, ոստիկանության, բանտերի, ճաշարանների և այլ վայրերի կարգուկանոնը, մի խոսքով բոլոր աննշան մանրամասնությունները համապատասխանում են իրականությանը։ Հեղինակը նվազագույն շեղում իսկ չի կատարում այն ամենից, ինչին ականատես է եղել։ Բացարձակ ճշմարտացիությամբ է վերարտադրում նա այդ ժամանակի պատկերը։

Բայց դա չի նշանակում, որ Պրևոյի պատկերած կոնֆլիկտը բնորոշ է միայն տվյալ դարաշրջանի համար, որովհետև դե Գրիյոյի և Մանոնի երջանկության խոչընդոտները ոչ միայն բխում են Ռեգենտության շրջանի սոցիալական կարգերից, այլև Մանոնի բնավորությունից։

Տասնութերորդ դարի գրականությունը լի է այնպիսի երկերով, որոնց մեջ իրար սիրող երիտասարդները իրենց ճանապարհին հանդիպում են այնպիսի խոչընդոտների, որոնք հիմնված են արիստոկրատական կամ բուրժուական նախապաշարումների վրա։ Հիշենք թեկուզ «Նոր Էլոիզը», որտեղ Ժյուլիի և Սեն-Պրեի երջանկությունը խորտակվում է լոկ այն բանից, որ Սեն-Պրեն պլեբեյ է։ Ասպետ դե Գրիյոյի ողբերգության հիմքը բոլորովին այլ պատճառներ ունի, և դրա պատասխանատվությունը ոչ մի դեպքում չի կարող դրվել նրա շրջապատի, մասնավորապես հոր վրա։ Դե Գրիյոյի հայրը ընդվզում է իր որդու և Մանոնի ամուսնության դեմ ոչ թե այն պատճառով, որ Մանոնը հասարակ ընտանիքից է, այլ որովհետև նա բարոյապես խաթարված էակ է և չի կարող իր որդուն երջանկություն պարգևել։ Դե Գրիյոյի հայրը կենսափորձ ունեցող մարդ է և կարողանում է մարդկանց ճանաչել. և՛ Մանոնի փախուստը ասպետի հետ, որին հազիվ մի փոքր ծանոթացել էր, և՛ այն հանգամանքները, որոնց բերմամբ տեղի է ունեցել այդ ծանոթությունը, ու,

թերևս, հատկապես Մանոնի դավաճանությունը, որ խարդավանեց իր սիրեկանին, հենց որ հասկացավ, թե նա փող չունի իրեն խնամելու համար, այս բոլոր փաստերը դե Գրիյոյի հորը Մանոնի մասին տվին լրիվ պատկերացում և այդ ամուսնությանը դեմ լինելու բոլոր հիմքերը։ Ոչ միայն Ռեգենտության, այլև որևէ այլ ժամանակաշրջանում չի կարելի պատկերացնել այնպիսի ծնողներ, որոնք հավանություն տային տասնյոթամյա որդուն՝ կապվելու իր բախտը մի անառակ, գող ու խարդախ կնոջ հետ։

Մանոնի նման կնոջը չէր կարող ընդունել ո՛չ արիստոկրատական, ո՛չ բուրժուական, ո՛չ էլ գեղջկական ընտանիքը։ Մանոնի բարոյազանցությունը առաջ է եկել ոչ թե չքավորությունից, այլ բարոյական որևէ հիմունք չունենալուց։ Վերում ակնարկություն անգամ չկա, որ որևէ մեկը գայթակղեցրել ու փչացրել է նրան։ Մանոնի անբարոյականությունը հենց նրա խառնվածքից է բխում։ Եթե նա տոհմիկ, հարուստ ընտանիքի կին լիներ, մեկ է՝ նույնպես բարոյազանց կլիներ, միայն այն տարբերությամբ, որ այլ ձև կունենար։

Ջանալ արդարացնել Մանոնին և մեղմացնել, ստվերել նրա խոր ապականությունը, նշանակում է նվազեցնել այդ կերպարի հակասականությունը, յուրօրինականությունն ու նշանակելիությունը, հետևաբար և թերագնահատել հեղինակի հոգեբանական խորաթափանցությունն ու գրական վարպետությունը։

Դե Գրիյոյից մեծ՝ Տիբերժին հեղինակը պատկերել է որպես օրինակելի անձնվեր ընկեր։ Վաղուց է նկատված, որ գրական անձիք, մանավանդ XVIII դարի գրականության մեջ նվազ գունագեղ են, միշտ էլ բացասականներից «տաղտկալի»։ Սակայն Տիբերժի վարքի խոհեմությունն ու անշեղ հետևողականությունը բնավ էլ նրա կերպարը չեն դարձնում աղոտ ու տափակ։ Տիբերժի համոզմունքներն անխախտ են, բայց նա միաժամանակ ներող է դե Գրիյոյի հանդեպ խիստ է նա, բայց միաժամանակ և մարդկային։ Եթե նա լիներ միայն մի շոր, սահմանափակ իմաստակ, ձանձրալի բարոյախոսություն անելու պատրաստ, դե Գրիյոն այդպես չէր գնահատի նրան։ Տիբերժը իսկական, մեծահոգի ընկեր է, երբեք չի նահանջում իր թուլակամ ընկերոջից։ Նրա հավատարմությունն արտահայտվում է տարբեր ձևով. և՛ վեճերի, և՛ խելքի գալու ու ապնվության, և՛ աշխատանքի ուղին վերադառնալու, և՛ այն բանակցությունների միջնորդը լինելու, որոնք կարող են օգտակար լինել դե Գրիյոյին, և՛ նյութական օգնություն մատուցելու մեջ։ Նրա անձնվիրությունը հասնում է հերոսության. ընկերոջը փրկելու համար նա անձնազոհաբար շտապում է նրա ետևից դեպի հեռավոր Ամերիկա, իսկ այն տարիներին այդ ուղևորությունը մի քանի ամիս էր տևում և կապված էր մեծ դժվարությունների ու ռիսկի հետ։

Եվ դե Գրիյոն բարձր է գնահատում Տիբերժի բարեկամությունը, հավատացած է, որ ոչ մի փորձություն չի կարող խորտակել այն։ Տիբերժը միակ մարդն է, որի հետ դե Գրիյոն կարող է անկեղծ լինել ամբողջովին, և հենց նրա հետ ունեցած վիճաբանությունների ընթացքում փորձում է քննել իր ապրումներն ու իրեն տանջող հարցերի պատասխանը գտնել։ Այդ վիճաբանությունների ընթացքում բարեկամները կանգնած են բոլորովին տար-

բեր տեսակետների վրա, բայց դա չի խանգարում, որ նրանք հասկանան միմյանց (մանավանդ Տիբերժը՝ դե Գրիյոյին)։ Տիբերժի դատողությունները միանգամայն անընդունելի են դե Գրիյոյի համար, որովհետև պարունակում են ոչ միայն իր գործելակերպի դատապարտում, այլև իր պատիր երջանկության կատարյալ բացասում։ Եվ այնուամենայնիվ, ոչ այլ որի, եթե ոչ Տիբերժին է բաց անում ասպետն իր սիրտը, քանի որ գիտե, թե նրանից կլսի ոչ միայն հանդիմանություն, այլև համակրանք, ըմբռնում ու աջակցություն։

Անցողակի նկատենք, որ ասպետը անգամ փորձ չի անում երբևէ խոսելու Մանոնի հետ այն նյութերի մասին, որ շոշափում է Տիբերժի հետ ունեցած վիճաբանություններում։

Մանոնին հանդիպելուց առաջ դե Գրիյոն ըստ երևույթին միանգամայն համամիտ էր Տիբերժի հայացքներին. համոզմունքների այս ընդհանրության վրա էլ հիմնված է նրանց բարեկամությունն ու հարգանքը։ Դե Գրիյոյի ու Տիբերժի տարակարծությունը ժամանակավոր երևույթ է, և շատ հավանական է, որ հենց զգաբի նրանց բաժանող ուժի ներգործությունը, ապա նրանց հայացքները, եթե նորից ամբողջովին չհամընկնեն էլ, համենայն դեպս, զգալապես իրար կմոտենան։ Արսեն Հուսեի սրամիտ դիտողությամբ՝ Տիբերժը ասպետ դե Գրիյոյի խիղճն է։

Գրական վարպետությունը, որով գրված է «Ասպետ դե Գրիյոյի ու Մանոն Լեսկոյի պատմությունը», այս փոքրիկ վեպը դասում է ոչ միայն ֆրանսիական, այլև համաշխարհային գրականության մեծագույն գլուխ գործոցների շարքը։ Նրա ոճը աչքի է զարնում գերող պարզությամբ ու ներդաշնակությամբ. լեզուն ճիշտ է, հստակ ու սահուն և չի զիջում կլասիցիզմի ու լուսավորության դարաշրջանի ֆրանսիական արձակի լավագույն նմուշներին. դե Գրիյոյի քաշած փորձանքների ու տառապանքների պատմությունը գերում է իր անկեղծությամբ, զերծ է արվեստականությունից, ճոռոմությունից, չափազանցումներից, սակայն արտաքին զսպվածության տակ միշտ զգացվում է եռացող կիրքը։

Վիպակը կատարյալ է նաև կոմպոզիցիայի տեսակետից. հեղինակն անմիջապես ընթերցողին մտցնում է իրադարձությունների ընթացքի մեջ, և մեր ուշադրությունը չի թուլանում մինչև վերջին տողերը[1]։

Սակայն, արբա Պրևոյի հիմնական ծառայությունը անշուշտ երկու, իսկապես, որ անմահ կերպար ստեղծելն է։

Ասպետ դե Գրիյոն անդավաճան սիրո, անձնազոհության ու անսահման ներողամտության տիպար է։ Հեղինակը այնպիսի համոզչությամբ է պատկերում մեզ հերոսի տանջալի ու բարդ ապրումները, որ մենք ներում ենք նրան իր բոլոր անկումների համար ու շարունակում հավատալ նրա ազնվությանն ու բարոյական մաքրությանը։

---

[1] *Ոճաբանական մի հետաքրքիր վերլուծություն է տրված Ռոդիեի աշխատության մեջ* (Rodder. Prévost. L'homme et l'œuvre. P., 1955)։ *Տե՛ս նաև Ե. Լոկինդ.* Семинарий по французской стилистике. Ч. I. Проза. Л., 1960.

Իր գեղարվեստական կատարելությամբ Մանոնի կերպարը հավասարը չունի ամբողջ համաշխարհային գրականության մեջ։ Հեղինակը կարողացել է այդ մանրամիտ, անսիրտ, ոահմանափակ ու ապականված կնոջն օժտել այնպիսի գերող հմայքով, որ մենք մոռանում ենք նրա թերություններն ու պատրաստ ենք հիանալ նրա վրա ոչ պակաս, քան դե Գրիյոյի։ Արսեն Հուսեն նկատում է, որ ինչքան էլ սիրելի ունենա Մանոնը, գրանք ոչինչ են սրտամաշ եղողների այն բազմության համեմատությամբ, որոնց Մանոնի ոտքերն է նետում արբա Պրևոն։

Եվ արդարև, երկու հարյուրամյակ անցնելուց հետո էլ Մանոնը նույնքան թովիչ է, գրքի էջերից նույն կերպ է լսվում նրա ծիծաղը, նույն ձևով էլ առինքնում է մեզ նրա խորամանկ, առեղծվածային հայացքը։

Ն. ԳՈՒՆՈՅ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի նախաբանը 5

Առաջին մաս 9

Երկրորդ մաս 112

Աբբա Պրևոյի կյանքն ու ստեղծագործությունը 197

Ծանոթագրություններ 219

Աբբա Պրևո

ՄԱՆՈՆ ԼԵՍԿՈ

Խմբագիր՝ Գ. Վ. Վիրապյան
Նկարիչ՝ Խ. Հ. Գյուլամիրյան
Գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան
Տեխն. խմբագիր՝ Վ. Ս. Խալաթյան
Վերատուգող սրբագրիչ՝ Լ. Մ. Ջաբյան